

Մարտի 2 Երամեան

ՃԵՐՄԱԿ ՔԱՂԱՔԻՆ ԳՈՅՆՆԵՐԸ



Հալէպ - 2026

Մարտի 2 Երամեան

ՃԵՐՄԱԿ ՔԱՂԱՔԻՆ
ԳՈՅՆԵՐԸ

Հալեպ - 2026

**Սոյն հատորը կը հրատարակուի
Մեկենասութեամբ՝
Սարգիս եւ Ռոպէր Մինասեաններու
Ի Յիշատակ Իրենց Նոր՝ Ալպէր Մինասեանի:**

**Նրատարակութիւն՝ «Գանձասար» շաբաթաթերթի
Նալէպ, 2026**

ՆԵՐԱԾԱԿԱՆ

«Գանձասար»-ի հիմնադրման օրերէն, թերթի էջերուն մէջ ծաղկուն գրիչ մը եղած է Մարուշ Երամեան, որ իր արծարծած տարաբնոյթ հարցերով, մերթ քննարկած, մերթ սկարագրած երեւոյթներով, նոր խօսք, իւրայատուկ գոյն բերած է սուրիահայ մամուլին ու հարագատ գաւկի հետեւողականութեամբ աշխատակցած թերթին՝ տարաբնոյթ պայմաններու մէջ:

Բանաստեղծ, արձակագիր Մարուշ Երամեանի, վերջին քանի մը տարիներուն, «Գանձասար»-ի մէջ «Պրիսմակէս» ենթավերնագրին տակ ստորագրած 200-ը անցնող ակնարկները վառ վկայութիւնն են այն պորտալարին, որ ամբօրէն կապեց Մարուշը հալէպահայ կեանքին:

Այս ակնարկները, իրենց գրական արժէքով եւ վկայագրական նշանակութեամբ, կը գերազանցեն շաբաթաթերթի շրջանակը եւ կը նկրտին հասնիլ ընթերցման աւելի լայն միջավայրի: Ահա թէ ինչո՞ւ անոնցմէ փունջ մը կը հրատարակենք առանձին հատորով:

Հատորը կը բաժնուի երկու հիմնական մասերու: Առաջինը՝ «Ակնարկներ», կը ներկայացնէ հեղինակին ընդհանրական մտորումները՝ արուեստի Էութեան, պատերազմի եւ խաղաղութեան հակադրութեան, հայրենիքէն հեռու ապրող հայու հոգեկան վիճակին եւ սփիւռքեան ինքնութեան նրբերանգներուն մասին: Այս էջերուն մէջ Մարուշ Երամեան կը խօսի ոչ միայն որպէս մտածող, այլեւ որպէս զգայուն վկայ, որուն համար բառը միջոց է հասկնալու աշխարհը, իմաստաւորելու ապրուած ժամանակը եւ անոր մէջ՝ մարդուն տեղն ու դերը: «Կրնա՞նք ամբողջ ազգով, իրապէ՞ս ամբողջ ազգով միանալ, մոռցած մեր տարակարծութիւնները, մոռցած մեր չհաւանութիւնները, մոռցած մեր տկարութիւնները, նոյնիսկ մոռցած մեր այսօրուան հաճոյքները, մոռցած այս բոլորը, կրնա՞նք միանալ յանուն շատ աւելի մեծ իրականութեան մը (չեմ ըսեր՝ գաղափարի մը), որ հողն է, որ հայրենիքն է», կը հարցնէ հեղինակը՝ ընթերցողը եւս իր մտորումներուն մասնակից դարձնելով:

Հատորի երկրորդ բաժինը՝ «Հալէպեան Խճանկար» խորագիրով, կը կազմէ անոր յուշագրական առանցքը: Այստեղ հեղինակը առանձնայատուկ շերտութեամբ Հալէպի հայկական երանգապնակը կը ներկայացնէ: Յիշողութիւնը կը դառնայ կամուրջ անցեալի եւ ներկայի միջեւ: Հեղինակը կը յիշէ թաղեր, կառոյցներ, դպրոցական տարիներ, ուսուցիչներ եւ մարդիկ, որոնք ճերմակ քաղաքը վառ գոյներով կը ներկեն: Հատորին էջերը ընթերցողը կը հրաւիրեն մօտենալու ոչ միայն գրողին, այլ նաեւ իր մէջ ապրող այն յիշողութեան, որ անհատական ըլլալով հանդերձ, խորապէս հաւաքական է:

Մարուշ Երամեանի գրութիւնները աչքի կը գարնեն իրենց զգայունութեամբ եւ ճշմարտախօսութեամբ: Ան կը գրէ առանց գարդարելու, բայց նաեւ առանց խնայելու գեղեցկութիւնը, որովհետեւ գրելը ստեղծագործական աշխատանք է իրեն համար:

Այս հատորին Հալէպի մէջ հրատարակուիլը խորհրդանշական իմաստ ունի: Ան վերադարձ մըն է իր սկզբնաղբիւրին միաժամանակ՝ փոխանցում մը ապագային: Հեղինակը Հալէպի մասին կը խօսի շերտութեամբ ու այն յոյսով, որ «շինուող պատերուն հետ Հալէպի թաղերէն հեռացած տաքուկ մթնոլորտը վերադառնայ եւ կրկին շունչ տայ հին քաղաքին»:

Այս առիթով շնորհակալութիւն կը յայտնենք տիարք Սարգիս եւ Ռոպէր Մինասեաններուն, որոնք սիրայօժար ստանձնեցին սոյն գիրքի մեկենասութիւնը՝ իրենց ներդրումը բերելով հալէպահայ գրական անդաստանի հարստացման:

*Խմբագրութիւն «Գանձասար»-ի
Հալէպ, 19 Փետրուար 2026*

ԱԿՆԱՐԿՆԵՐ



ԱՌՕՐԵԱՅ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Առաւօտեան սուրճին հետ դիմատետրը թերթելը, բարեկամներուս, դասընկերներուս եւ ծանօթներուս լուրերը կարդալը օրս եռանդով կը լեցնեն, մանաւանդ երբ կը մտածեմ՝ իրենց բոլոր ըրածներուն քով իմ ըրածները ի՞նչ են որ... եւ կը ծրագրեմ աւելին ընել:

Վերջերս սակայն «վերջերս, ըստ պատմութեան կամ ժամանակի հաշուարկին վերջին մէկ վայրկեանը=քառորդ դարը» անասելի բռնութիւններու, անարդար դեպքերու, քաղաքական սրիկայութիւններու եւ քաղաքականօրէն զօրաւորին ապիկար կտրիութեան անկասելի «շքերթ»-ի մը ժամանակը դարձեր է:

Ընդմիջումներ կը պատահին նաեւ, երբ կեանքը բնականին վերադառնալու խոստում կը թուի:

Կը թուի միայն, որովհետեւ ահա նո՛ր թափով եւ աւելի՛ սաստկութեամբ կը սկսի կրկնութիւնը նոյն այդ շքերթին:

Ի՞նչ ընել:

Երբեմն կը մտածեմ՝ իրապէ՛ս անիծեալ ենք, որ այսքան բան կը պատահի մեզի. շարդը, տեղահանութիւնը, սովետական կարգերը եւ ի վերջոյ փոքրիկ Յայաստան մը, որ կը խոստանար դրախտ ըլլալ, գոնէ մեզի համար:

Միայն մենք չենք սակայն այս շքերթին զոհերը: Ամբողջ մարդկութիւնը ի՞նք է:

Բայց ինչո՞ւ: Ինչո՞ւ այսքան բրտութիւն: Ո՞ր մնաց մարդուն քաղաքակրթութիւնը 21-րդ դարու շեմին: Ա՞յս է, այսպէ՛ս եւ այսքա՛ն է մեր՝ մարդ արարածին յառաջացումը, գիտութեան նուաճումը:

Ի՞նչ ընենք: Ի՞նչ կ'ընեն մարդիկ, երբ կը զրկուին ապրելու նուազագոյն պայմաններէն, աւելին՝ արժանապատուութեամբ ապրելու պայմաններէն:

Ի՞նչ տարբերութիւն, թէ ո՛վ է երկրին ղեկավարը, թէ ո՛ր կուսակցութիւնն է իշխողը, թէ ի՞նչ կրօնական համոզումներ կը տիրեն: Կարելորդ՝ մարդը, պարզ, սովորական մարդը արժանապատիւ կերպով կարենայ աշխատիլ, ապրիլ եւ ապրեցնել նախ իր ընտանիքը, ապա իր շրջապատը, քաղաքը, երկիրը...

Այնքա՛ն հարցեր կան աշխարհի ճակատագիրը որոշող քանի մը մեծ երկիրներու մէջ, այնքա՛ն հարցեր կան երկրագունդի ապագային շուրջ՝ կլիմայական փոփոխութիւններէն, մինչեւ աղբերու կուտակումին հարցը:

Ոչ ոք սակայն ուշք կը դարձնէ նման եւ շա՛տ աւելի հարցերու: Ինչո՞ւ:

* * *

Կար ատեն, երբ կը զարմանայի, թե Նշան Պէշիկթաշլեան, որ Փարիզ կ'ապրեր, Փարիզի տղոց խումբէն չէր եւ տարիքով ամենէն մեծն էր, կը զարմանայի թէ ինչո՞ւ անոնց նման չի գրեր իր կեանքին, ամէնօրեայ դժուարութիւններուն մասին, կամ կրամ Զայկազի նման ջարդի անցած ճամբաներուն մասին:

Նշան Պէշիկթաշլեան ընդհանրապէս գրեր է իր գիւղի հեքիաթներուն մասին, գիւղի աւանդութիւններուն, հաւատալիքներուն մասին, որոնք գոյութիւն ունեին ջարդերէն առաջ: Ինչո՞ւ:

Նոր է որ կը հասկնամ, որովհետեւ ահա ես ալ կը լսեմ վերջին ահաւոր դէպքերը, բայց կը գրեմ այլ բան...

* * *

Թէեւ աչքերս գիրքիս վրայ են, իբր թէ կը կարդամ, բայց միտքս Չարմիկին հետ է.

– Թերթը լոյս պիտի տեսնե՞ այս շաբաթ,– կը հարցնեմ քաշուելով, միտքէս:

Լուրերը այնքան ծանր են, որ չեմ կրնար գրել, բայց եթէ թերթը լոյս պիտի տեսնէ, պէ՛տք է գրեմ:

– Տիկին Մարուշ, այսպէս ամէն շաբաթ որ կը գրէք «Գանձասար»-ին, կը վճարուի՞ք:

– Ոչ,– կ'ըսեմ պարզօրէն:

– Իրապէ՞ս,– շա՛տ կը զարմանայ խօսակիցս,– ինչո՞ւ կը գրէք ուրեմն:

Զիմա ես է որ շա՛տ կը զարմանամ:

– Զաղաքիս, ծննդավայրիս միակ թերթն է, հոն չապրելով նուազագոյնն է որ կրնամ ընել,– կ'ըսեմ կրկին պարզօրէն:

Գիտեմ որ ծանր պայմաններու մէջ չխենթանալու համար, հաւասարակշռութիւնը պահելու կ'երեւի միակ ձեւը կարելիին չափ սովորականը՝ լրութիւնը պահելն է, բան մը որ մեծ կամք կը պահանջէ:

– Թերթը լոյս պիտի տեսնե՞:

Պէտք է հաճելի, ուրախ, կամ յիշատակներ արթնցնող բան մը գրեմ: Բայց գրիչս չի հնազանդիր:

* * *

Ֆաուստը իր հոգին ծախեց սատանային, անսահման գիտելիք եւ երիտասարդի աւիւն ունենալու համար: Կէօթէի այս գիրքը լոյս տեսեր է 1808 թուականին:

Վարպետը իր հոգին ծախեց («Վարպետը եւ Մարկարիթան») Մարկարիթայի սիրոյն: Միքայէլ Պուլկաքովի գիրքը լոյս տեսեր էր 1966-ին:

Ատտի Լարուն իր հոգին ծախեց-տուաւ Մութին “The Invisible Life of Addie LaRue”, որ զինք փրկէ պարտադրուած ամուսնութենէ մը: Victoria E. Schwab-ի գրիչով այս գիրքը հրատարակուեր է ԱՄՆ, 2020 թուականին:

Այլ երկիրներու գրականութեան մէջ եւս հաւանաբար նոյն նիւթին շուրջ գրուած գրական երկեր կան:

Այդ երկերէն ո՛չ մէկը սակայն կ’ըսէ, թէ սատանան ի՞նչ ըրաւ, կամ ի՞նչ կ’ընէ ընդհանրապէս իր առած-գողցած հոգիներով:

Եթէ յիշած վեպերուս առաջին երկուքը տղամարդ հերոսներ ունին, որոնք համաձայնութիւն կնքեր են իրենց անձնական շահերուն համար, երրորդ վեպին հերոսը երիտասարդ աղջիկ մըն է, որ իր հոգին կու տայ, մարդկային ամենէն էական ազատութեան՝ ընտրելու ազատութեան համար. կին է, չունի այդ ազատութիւնը, մանաւանդ 1700-ականներու արեւմտեան աշխարհին մէջ: Եւ ատիկա ունենալու համար պէ՛տք է Մութին հետ դաշինք կնքէ:

Այսքանը, նոյնիսկ անձնական շահու դրդապատճառը հասկնալի է, որովհետեւ այդ հերոսները, որոնք տերն են իրենց հոգիին, միայն այդ՝ իրենց ունեցածն է որ գրաւի կը դնեն. անոնց որոշումը ուրիշներու կեանքին համար սպառնալիք չէ՛:

* * *

Եւ կը յիշեմ, կրկին ու կրկին, որ միշտ եւ ամէն ժամանակներու մէջ, ամենէն մեծ մեղքերը գործուած են կեանքի էական հաւատալիքներուն՝ հայրենիքի, կրօնքի եւ սիրոյ անունով, իբր թէ անոնց համար:





ԱՐՈՒԵՍՏ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄ



Միշտ ալ արուեստը, իր բոլոր դրսեւորումներով, եղեր է ամբողջ մարդկութիւնը միացնող ազդակ, նոյնիսկ կեանքի ամենէն դժուար պայմաններուն՝ պատերազմներուն ընթացքին: Համաշխարհային երկրորդ պատերազմին, զինուորները քաջալերելու համար երգիչ-երգչուհիներ կը շրջէին բանակատեղիները եւ իրենց ելոյթներով կը քաջալերէին պատերազմող զինուորները:

Նկարիչներ շատ յաճախ նկարելով պատերազմի դժխեմութիւնները, կրցած են թերեւս մէկ առ հարիւր համեմատութեամբ ոչ թէ ամոքել ցաւերը, այլ խելքի բերել պատերազմողները:

Այսօր նման բան անկարելի կը թուի:

Այսօր արուեստը ինք զոհ դարձած է պատերազմին:

Ուքրանիա-Ռուսիա պատերազմին որպէս Ռուսիոյ վրայ ճնշումի միջոց, Եւրոպան սկսած է հեռացնել այն մեծ երաժիշտները՝ ղեկավարներ թէ երգիչներ, որոնք մինչ այդ Եւրոպայի տարբեր քաղաքներու սիմֆոնիք նուագախումբերուն կամ օփերայի տուններուն հպարտութիւնն էին:

Տակաւին՝ համալսարանական ծրագրերէն սկսած են հանուիլ բոլոր այն հեղինակները, որոնք ռուս եղած են, առանց նկատի առնելու անոնց մեծութիւնը, ինչպէս օրինակ Տոսթոյեւսկի եւ ուրիշներ:

Ասով Եւրոպան ամբողջ աշխարհին կ'երելի որպէս ամենայնտամնաց հաւաքականութիւնը, որ կը շարունակէ ապրիլ, կամ վերադարձած է ապրելու իր մութ դարերուն մէջ, դժբախտաբար:

Նման կեցուածք բնաւ սպասելի չէր Եւրոպայէն, որուն ամբողջ աշխարհը կը նայէր որպէս արուեստներու եւ գրականութեան ռահվիրայ կամ սատարող:

Հարցերուն տեղեակ խօսնակներ եւ քաղաքական մասնագետներ շատ լաւ գիտեն այս բոլորին տուն տուող պատճառները, ազատօրէն եւ առանց վախի կը յայտարարեն զանոնք, սակայն Եւրոպան, ինչպէս միշտ խուլ եւ համր կը դառնայ, երբ հարցերը իր սրտով չըլլան, ինչպէս Արցախեան 44-օրեայ պատերազմին, կամ անկէ առաջ՝ Պաղեստինի պայքարին ընթացքին, այս անգամ եւս, տարբեր պատճառներով, ոչ միայն լուռ կը մնայ, այլեւ կ'ընդունի տգետի հագուստ հագնիլ, հասնելու համար իր նպատակներուն, որոնք միայն ու միայն շահ կը հետապնդեն:

Տակաւին երկու տասնամեակ միայն անցած է այն օրէն, երբ Թալիպանի զինուորները 2001 թուականին կրօնի անունով ականահարեցին Աֆղանիստանի Պամիյան շրջանի շատ հին՝ 6-րդ

դարու եւ շատ մեծ երկու Պուտտաներու կոթողները (մէկը 54,8 մէթր, իսկ երկրորդը 37,8 մէթր), գրկելով աշխարհն ու գալիք սերունդները հին պատմութեան կարելոր իրագործումներէն մէկէն: Թեւ այսօր, վերատիրապետելէ ետք Աֆղանիստանի, Թալիպան իր իսկ կործանած Պուտտաներու վայրը բացած է զբօսաշրջիկներու համար, որոնք պիտի տեսնեն հսկայ խոռոչները ականուած Պուտտաներուն: Անհեթեթութիւն պարզապէս:

Իսկ դեռ վերջերս ճիհատիստներն ու ազերիները ի՛նչ հրճուանքով աւերեցին Ղազանչեցոց տաճարը. ո՞ր քաղաքակիրթ մարդուն ձեռքը պիտի չդողար նման կոթող աւերելու համար... Այսպէս չէ՞ որ կը կորսնցնենք մեր մարդկայնութիւնը, երբ կը դադրինք արուեստը տեսնելէ եւ գնահատելէ:

Ի՞նչ տարբերութիւն ուրեմն այսօրուան Եւրոպային եւ Թալիպանի վայրագ զինուորներու կեցուածքներուն միջեւ: Եթէ Թալիպան քարեղէն կոթողներ քանդեց, Եւրոպա այսօր ոգեղէնն է, որ կը քանդէ:

Դժբախտաբար նման կեցուածքներ մեզ՝ հայերս բնաւ չեն զարմացներ, մենք որ անընդհատ կը կերտենք եւ անընդհատ ականատես կ'ըլլանք մեր աշխատանքի քանդումին: Մեր վանքերն ու եկեղեցիները, Անին իր բազմաթիւ կոթողներով, Ջուղայի խաչքարերը եւ շատ ու շատ կոթողներ կը շարունակեն թիրախ մնալ վայրագութեան:


Միւս կողմէ սակայն ինչպէ՞ս չգնահատել Իրանի Իսլամական պետութիւնը, որ կը գուրգուրայ, կը խնամէ եւ կը նորոգէ իր հողերուն վրայ գտնուող հայկական վանքերն ու կոթողները: Մարդիկ գիտակից են, որ նման կոթողներ միայն շահ կ'ապահովեն իրենց, զբօսաշրջիկներու աւելի եւ աւելի մեծ թիւ մը գրաւելով:

Իրան սակայն իր այս կեցուածքով թեւ պետք էր օրինակ հանդիսանար գոնէ իսլամական աշխարհին, կը մնայ զարտուղի երեւոյթ մը նորօրեայ պատմութեան մէջ:

Յետոյ սրտի ահաւոր փոթորիկով կը դիտենք մսխուող կեանքերը ու կը մտածենք՝ գոնէ թող մնան երիտասարդները, որոնցմէ եկող սերունդներուն մէջ անպայմա՛ն պիտի ըլլան երաժիշտներ, գրագէտներ, արուեստագէտներ եւ ստեղծեն արուեստի նոր կոթողներ: Բայց պէ՛տք է ըլլան, մնան երիտասարդները, որոնք ահա արդէն քանի տարի է, քանի տասնամեակ եւ քանի դար, ի գուր կը գոհուին:



ԱՄՆԴՈՒԹԻՆՆԵՐ



Աշխարհը պատմութիւններով լեցուն է, պատմութիւններ, որոնց յաճախ դժուար է հաւատալ, ահա թէ ինչո՛ւ անոնք «պատմութիւն» կը կոչուին, աւելի՛ հեքիաթ, այսինքն՝ անիրական, ոչ իրապաշտ, յոյսով լեցուն եւ յաճախ՝ յուսահատութեամբ:

Կար ժամանակ, երբ հրաշքներ կային. ո՞ր գացին, ո՞ր կորսուեցան այդ ամենօրեայ հրաշքները, որոնք հրաշք չեն, պարզապէս մեր անցեալին քաղցր յուշերն են, մեր անցեալին մոռցուած ցաւերը եւ չմոռցուող ուրախութիւնները, որոնք յաճախ այնքա՛ն փոքր բաներով կը յայտնուին:

Հեքիաթային քաղաք մը կար, հեքիաթային ոչ միայն իր գեղեցկութեամբ, այլ իր բնակիչներով, որոնք ազնիւ էին, աշխատասեր եւ հիւրասեր, կը սիրէին արժանապատիւ կեանքով ապրիլ, թէեւ այնքան ալ հարուստ չըլլային:

Եւ ինչպէս ամէն գեղեցիկ բան, որ քիչերէ կը գնահատուի, բայց շատ շատեր կը նախանձին անոր, այդպէս եղաւ նաեւ այդ հեքիաթային քաղաքին համար, որ նախ ենթարկուեցաւ երկրաշարժի, յետոյ՝ հրդեհներու, եւ երբ տեսան որ կարելի չէ ծունկի բերել քաղաքն ու բնակիչներուն ազնուութիւնը, պատերազմներ ծագեցան հոն, – կա՞ր ծագեցուցին, կամ ծագեցուեցան բառ, – եւ քաղաքը հիմնայատակ կործանեցին:

Բայց բնակիչներուն եութիւնը կարելի չեղաւ փոխել կամ ի սպառ ջնջել, եւ ճիշդ ատոր համար ալ քաղաքը կրկին անգամ հաստատեց իր հեքիաթային բնոյթը:

Ի՞նչ ուժ էր, որ գանոնք, այդ բնակիչները կը պահէր այդպէս ազնիւ, աշխատասեր եւ արժանապատուութեամբ ապրող. միայն Կաղանդի շրջանի՞ն անոնք այդպէս էին, – որովհետեւ հեքիաթին հերոսներն էին, – թէ՞ միշտ այդպէս եղեր էին, նոյնիսկ ամէնէն տաք օրերուն, կամ ամէնէն անջուր եւ անհաց օրերուն:

Կ՛երելի ա՛յս է պատճառը, այդ հեքիաթային քաղաքին մէջ ապրած ըլլալս է պատճառը, որ շատ կը սիրեմ հեքիաթներ գրել ու կը կարծեմ, որ եթէ տարին գոնէ մէկ հեքիաթ գրեմ, հեքիաթները կը փրկուին եւ անոնց հաւատացողներուն կասկածը կը չքանայ:

Շատ կան, չէ՞, հեքիաթներ գրուած մեծերու համար: Այդպէս էին Հանս Զրիստիան Անտերսընի հեքիաթները, այդպէս էին Կրիմ եղբայրներուն հեքիաթները, բոլորն ալ մեծերու համար, իսկ փոքրերուն ... շատ անյարմար պիտի ըլլային, մինչեւ որ մէկը կամ մէկեր փոխեցին դէպքերը եւ պատշաճեցուցին զանոնք փոքրերուն:

Հեքիաթները սակայն մեր մէջ են, մանաւանդ՝ Կաղանդի օրերուն. ուրկէ՞ եկած են, մե՞նք դրած ենք այդ հեքիաթները մեր օրերուն մէջ:

Անշո՛ւշտ մենք, առանց անդրադառնալու սակայն:

Հիմա ո՞ր եւ անոնք, այդ հեքիաթները:

Մեր աւանդութիւններուն մէջ:

Իսկ աւանդութիւնները երկու տեսակ են՝ ընդհանրականը, որ մեր ազգին, մեր վայրին – այս պարագային Արեւմտահայաստանի աւանդութիւններն են, իսկ երկրորդը՝ մեզմէ իւրաքանչիւրին ընտանեկան

աւանդութիւնն է, որուն չենք անդրադառնար, բայց որ այնքա՛ն ազդեցութիւն ունեցած է մեր մանկութեան վրայ եւ կը շարունակէ ունենալ մեր գաւակներուն եւ թոռներուն վրայ:

Ծնողքիս տունը փաշա մանղալ մը կար, որ դեր չունէր, պարզապէս անկին մը դրուէր-մոռցուէր էր. իր այդ մոռցուած գոյութիւնը շարունակեց նաեւ ի՛մ տանս մէջ. յետոյ զայն ձեղունը հանեցի, ուր աւելի մոռցուեցաւ, մինչեւ որ օր մը որոշեցի վար բերել զայն Կաղանդի ծառին եւ զարդարանքներուն հետ եւ օգտագործել՝ մէջը շիշ մը գինի եւ շուրջը նշեղէնով լեցուն փոքրիկ տոպրակներ դնելով:

Տոպրակները մայրս կարեց-պատրաստեց: Այնքան ընդունելութիւն գտաւ նշեղէնի այդ հսկայ ամանը, որ գաւակներս որոշեցին.

– Տարի մը ե՛ս կը լեցնեմ եւ Լարային տունը կը տանիմ, յաջորդ տարին ի՛նք կը լեցնէ եւ իմ տունը կը բերէ, – ըսաւ Արան:

Յետոյ կեսուրս տեսաւ որ թոռները որքա՛ն կը սիրէին այդ մանղալը, իր ունեցածն ալ տուաւ մեզի: Տղոցս ուրախութիւնը անսահման էր, հիմա երկուքն ալ ունէին իրենց փաշա մանղալները:

Այլ աւանդութիւն-ուրախութիւն մըն էր ծառին զարդերը պատրաստելը, անշուշտ ձեռայիններ ընելով եւ ամէն տարի նորութիւն մը ստեղծելով. այդ նորութեան մէջ գաւակներս ալ դեր ունէին՝ իրե՛նք կը պրպտէին, կ’որոշէին եւ յետոյ միասին կ’իրագործէինք:

Աւանդութիւն էր նաեւ թագածել միսը, որ Կաղանդի մեր սեղանին գլխաւոր տեսակն ու զարդն էր միաժամանակ:

Յետոյ կար Նոր Տարուան առաւօտներուն խաղաղութեան մէջ հանգիստ նստած նեսքաՖէ խմելն ու... ծայրայեղօրէն գոհ ըլլալը: Նոր Տարին ոչ միայն նոր ծրագրեր կը բերէր իր հետ, այլեւ մեզ կը պարուրէր իր տաք շունչով, – հակառակ պաղ օդին, – մեր աչքերուն առջեւէն կը տողանցէին մեր օրհնութիւնները եւ կարծես երջանկութիւնը կը թելածէր տան մէջ, Կաղանդի ծառին շուրջ:

Ըիշդ է, որ այդ բոլորը անցեալ դարձան, բայց անոնց յիշատակը այնքան թարմ մնացած է, որ ամէն Կաղանդի գաւակներս կը փորձեն ստեղծել նոյն այդ մթնոլորտը, ստեղծել իրե՛նց ընտանեկան աւանդութիւնները, իսկ ես կը գոհանամ, յուշերուս մէջ պարուրուած, իրենց կեանքը դիտելով եւ աղօթելով իրենց բարօրութեան համար:

Ամէն տարի Կաղանդի հեքիաթ մը, ուր ոչ թէ Կաղանդ Պապան մեզմէ իւրաքանչիւրի սրտին փափաքը կը կատարէ, – անշուշտ եթէ հաւատանք իրեն, – այլ մեզմէ իւրաքանչիւրը իր կողքինի սրտին փափաքը կը կատարէ:

Իսկ ի՞նչ կը կարծէք որ ըլլայ մեր սրտի փափաքը...

Դուք չեմ գիտեր թէ ի՛նչ կը կարծէք, ես կը կարծեմ, թէ մեզմէ իւրաքանչիւրը պիտի փափաքի ունենալ անկեղծ եւ մտերիմ բարեկամներ եւ համերաշխ ու սիրով լեցուն ընտանիք. ոչ թէ շատ-շատ նուէրներ, այլ համերաշխութիւն, ուր կարելի ըլլայ տարբեր կարծիքներ ունենալ, բայց յարգել զիրար, մնալ բարեկամ, մնալ ընտանիք:

Եւ Կաղանդի այս հեքիաթն ու աւանդութիւնները պատմել ու ապրիլ ամբողջ տարուան ընթացքին:



Ջարդի հարիւր տարին լրանալուն քանի մը տարի մնացեր էր, բայց մենք արդէն մոռցեր էինք արեան հետ մեզի հասած այդ ծանր ապրումը, շնորհիւ մեզ հիւրընկալած Միջին Արեւելքի արաբական երկիրներու պետութիւններուն, բայց մանաւանդ անոնց բարի եւ հիւրընկալ ժողովուրդներու ասպնջականութեան:

Մեր հայրենիքը եւս, թօթափած լուծերուն ծանրագոյնը, սկսեր էր շնչել ու ապրիլ, փորձելով արժանապատիւ կեանքի մը պայմանները ստեղծել ժողովուրդին համար:

Բայց ժամանակը կարծես ներողամիտ չէր մեզի հանդէպ՝ *«Ինչո՞ւ վատութիւն կ'ընէ ինձի, երբ ես չարիք չեմ ըրած իրեն»* կ'ըսէ առածը: Մենք ի՞նչ ըրած էինք այսքան վատութիւն ստանալու համար:

Եթէ միայն նկատի առնենք մէկ կողմէ մեր ստեղծագործական հսկայ կարողութիւնը, միւս կողմէ մեր նոյնքան հսկայ ինքնահաւանութիւնը, թերեւս հասկնանք թէ ինչո՞ւ ժամանակը միշտ ալ ներողամիտ չէ եղած մեզի հանդէպ:

Աւելի քան կէս դարէ ի վեր, 1974-ի Պէյրութի քաղաքացիական պատերազմէն մինչեւ այսօր, երբ պահ մը վերանայինք պատմութեան, կը տեսնենք թէ ո՛ր ալ որ գտնուեր ենք, մանաւանդ Միջին Արեւելքի մէջ, աղետներու դէմ յանդիման կեցեր ենք:

Կար ժամանակ, երբ մեր տուներուն խաղաղութեան մէջ նստած, այլ երկիրներու աղետներուն լուրերը մտիկ կ'ընէինք, ու յետոյ կը դառնայինք ետ մեր խաղաղ ամօրեային: Այսօր մենք դարձեր ենք լուր, ուրիշներ մտիկ կ'ընեն մեր լուրերը, յետոյ կը շարունակեն իրենց ամօրեան:

Սկիզբը Պէյրութն էր, յետոյ՝ Պարսկաստանը, ապա տնտեսական անկումը, յետոյ Սուրիոյ պատերազմը, յետոյ կրկին Պէյրութ, ապա՝ Արցախ:

Գաղթականներու հսկայ հոսք մը դուրս եկաւ այս երկիրներէն, ցրուելու համար տարբեր երկիրներ, նուազագոյնի իջեցնելով մեր հաւաքական կեանքի առողջ եւ ուժեղ վիճակը, որմէ թէեւ յաճախ կը գանգատէինք՝ *«Սփիւռքի մէջ չենք կրնար հայ ապրիլ»*, այսօր սակայն կը տեսնենք թէ հայօրէն ապրեր էինք, կառուցեր էինք, ստեղծեր էինք, եւ իրենց պատկանելիութեան գիտակից սերունդներ հասեր էին:

Անշուշտ կացութիւնը այլ էր «Արեւմտեան կողմն աշխարհի», ուր ճերմակ ջարդը, լուռ եւ աննշմար, իր ակերը կը գործեր:

Պէյրութի օրերէն իսկ կրկին սկսած էր գաղթը մէկ երկրէն միւսը: Յաճախ կատակով ըսուած է՝ եթէ Ամերիկայէն ալ անդին երթալիք տեղ ըլլար, կ'երթայինք:

Բայց գացողները ընդհանրապէս գացած են իրենց աչքը ետեւ ձգած, որովհետեւ ո՛ր ալ որ հասեր են, իրենց նախկին կեանքը փնտռեր են:

Գաղթական ըլլալը վիճակ է, որուն բնաւ պիտի չուզէինք վերադառնալ: Ա՛յս է պատճառը հաւանաբար, որ շատեր նախընտրեցին մնալ իրենց ապրած քաղաքներուն մէջ, հակառակ անտանելի կացութիւններուն, որոնք կը նսեմանային կարծեք գաղթականի վիճակին հետ բաղդատուելով:

Կարգ մը երկիրներու մէջ որքան ալ երկար ապրէին եկուորները, «գաղթական» անունը կ'ապած կը մնար իրենց, մինչ այլ երկիրներ բնաւ չեն օգտագործեր այդ բառը եւ եկողը ինքզինք անմիջապէս կը զգայ մէկը երկրի քաղաքացիներէն:

Բայց...

Բայց գաղթականը մարդ է, որ կորսնցուցեր է իր ինքնութիւնը, իր լեզուն, իր վայրը, նոր վայրին մերուելու իր ճիգին մէջ: Նոյնիսկ եթէ չի կրեր «գաղթական» անունը, իր հոգին սակայն դիւրաւ չի կրնար մոռնալ իր ապրած վիճակը, թէեւ կ'ուզէ մոռնալ, մանաւանդ մոռնալ պատճառները, որոնք զինք բերած են ուր որ է այսօր:

Ժամանակը սակայն շատ արագ կը թաւալի, գաղթականը կը դառնայ քաղաքացի, կը դառնայ այլ երկրի մը քաղաքացի: Ինչ որ կը կարծէինք թէ մեր մենաշնորհն է՝ սփիւռքահայ ըլլալ նոյնիսկ մեր հայրենիքին մէջ, դարձաւ յանկարծ աշխարհի կէս ժողովուրդներուն վիճակը: Կարծէք վերադարձանք Բաբելոնի խառնակութեան եւ անշուշտ սկսանք չհասկնալ զիրար. աւելի՛ չհասկնալ զիրար, որովհետեւ սկիզբէն իսկ կային նախ լեզուներու, ապա ինքնութիւններու տարբերութիւնները:


Կը յիշեմ տասնամեակներ առաջ, երբ հայ տանտիկին մը կ'երթար թաղի իսլամ նպարավաճառէն գնում ընելու, հայերէնով կ'ըսեր ուզածը, մարդը կը հասկնար, արաբերէն կը պատասխանէր եւ կու տար կնոջ ուզածները: Լեզուն խոչընդոտ չէր, որովհետեւ մարդկային հասկացողութիւն մը կար նոյն թաղը ապրող տարբեր ազգի եւ տարբեր կրօնի մարդոց միջեւ:

Անհամար թիւով մարդիկ ձգեցին իրենց տուները եւ գացին տարբեր ուղղութիւններով, նոր տուններու մէջ, նոր թաղերու մէջ, նոր լեզուներու մէջ ապահովութիւն փնտռելով: Զունեցան նախկին, տարիներու աշխատանքով կերտուած տուններու շքեղութիւնը. որքան ալ համեմատական ըլլայ այդ բառը, իւրաքանչիւրին համար «իր տունը պալատ է»: Շրջան մը ետք սակայն անդրադարձան, որ սկսեցին գոհանալ ամենէն եականով եւ նշմարեցին որ շատ աւելի հանգիստ է այդպէս ապրիլը: Դրական արդիւնք, շատ նման ճեմարանական օրերու մեր թեւաւոր խօսքին՝ «այրած սրտի մխիթարանք»-ին: Իւրաքանչիւր գաղթող նաեւ նոր լեզու մը սորվէր էր, հակառակ վաղուց անցած ըլլալուն սորվելու տարիքը:

Այլ դրական երեւոյթ մըն էր այն, որ մարդիկ սկսան գրել-նկարել-քանդակել, մէկ խօսքով՝ ստեղծագործութեամբ արտայայտել գաղթականի իրենց հոգեվիճակը. թէեւ տխուր է նման արուեստը, բայց արուեստ ըլլալէ չի դադրիր:

Եւ գաղթականը, հակառակ իր դժիւստ ամօրեային, կը սնանի աւելի լաւ ամօրեայի մը հեռանկարով, կը սեղմէ շրթները եւ կը լծուի այդ աշխատանքին:

ԴԱՍԸՆԿԵՐՍ ՏԻԳՐԱՆԸ



Ռիչըրտ Թընկըրեան

Եթէ մականունը այսքան իւրայատուկ չըլլար, հաւանաբար միտքէս չանցնէի իսկ, որ այս Ռիչըրտը իմ տարիներու դասընկերս Տիգրանն է: Բայց Թընկըրեան մականունով մէկ ընտանիք կար Յալէպի մէջ, այն ալ Տիգրանին ընտանիքն էր՝ մայրը, հայրը եւ երկու եղբայրները:

Թընկըրեանները եկած են Արեւմտահայաստանէն՝ Պոլսէն. իրենց մասին գրուած գիրքի մը մէջ կ'ըսուի, թէ անոնց տոհմը կը սկսի 1700-ականներէն եւ կը հաշուէ արուեստագետներ, դիւանագետներ, թարգմաններ եւ կրօնաւորներ:

Արուեստագետներու ընտանիք էին. հայրը՝ Անդրանիկը քանդակագործ էր, իսկ մայրը՝ «Շանէլ»-ի ձեւաւորող: Տիգրանն ալ, մեծ եղբայրը՝ Յարութն ալ կը գծէին, կը նկարէին եւ գրեթէ միշտ ներկայ էին Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի պարբերաթերթին՝ «Ծիլեր»-ուն մէջ, որուն խմբագրական խորհուրդին մաս կը կազմէր Տիգրանը:

Ինչպէս յաճախ կը պատահի, երկրորդականը աւարտելէ ետք Յալէպի Քարէն Եփփէ Ճեմարանին տաքուկ յարկին տակ, մեզմէ իւրաքանչիւրը գնաց իր ուսումին, գնաց իր կեանքը փնտռելու: Եւ ինչպէս յաճախ՝ բոլորս կորսնցուցինք զիրար կեանքի թոհուրոհին մէջ:

Կեանքը սակայն երբեմն, ըստ իր քմահաճոյքին, կարծես ուզելով մեր պատանութիւնը յիշեցնել մեզի եւ ժպիտ տալ գորշ օրերու մէջ, մեզ իրարու դէմ կը հանէ: Այդպէս էր որ տասնամեակներ ետք հանդիպեցայ մտերիմ ընկերուհիիս Լիային, սիրելի Անի Բարսեղեանին, մինչ ուրիշներու, ինչպէս Ֆիմիին, Մարալին կամ Սեդային դպրոցէն ետք տակաւին չեմ հանդիպած: Չեմ տխրիր, որովհետեւ վստահ եմ, որ օր մը կրկին պիտի հանդիպինք:

Այդպէս էր նաեւ որ օր մը, շատ անակնկալ ձեւով հանդիպեցայ Տիգրանին... ձայնով:

– LinkedIn-ը բերաւ անունդ եւ թիւդ,– զանգեց Տիգրանը, որուն ձայնը բնաւ չէր փոխուած դպրոցի օրերէն:

Իմ գիտցած Տիգրանն էր՝ համեստ, մեղմախօս եւ համբերատար: Պարզապէս ձայնին մէջ տխրութիւն մը կար, որ նախապէս հոն չէր: «Արդեօք ինչերէ՞ անցած է» մտածեցի եւ տխրեցայ իրեն համար. բոլորս ալ շա՛տ բաներէ անցանք մեր շրջանաւարտութենէն մինչեւ այսօր:

Անկէ ետք յաճախ կը խօսէինք. ներկայ համացանցային դիւրութիւնները հաճելի կը դարձնեն կապուիլը հեռաւոր բարեկամներու հետ: Այդ գրոյցներուն ընթացքին պատմեց իր

աշխատանքին մասին, որ այսօր իր կեանքին գլխաւոր հաճոյքը, գրադումն ու հպարտութիւնը կը կազմէ:

Եւ ինչպէ՞ս հպարտ չըլլայ, երբ Յալէպէն ելած երիտասարդ որպէս, այսօր կը կենայ իր ասպարեզին լաւագոյն, մէկ ձեռքի մատներուն վրայ հաշուուող քանի մը մասնագետներու շարքին:

Մասնագիտութեամբ թէեւ ճարտարապետ, բայց ասպարեզով մանրակերտեր շինելու վարպետներէն մէկն է Տիգրան, որ պատուերներ կը ստանայ աշխարհի չորս անկիւններէն եւ որուն անունն ու գործը, իր Tenguerian դժուար մականունով երեւցած են New York Times-ի (The Master Model Maker, by Julie Satow for NYT) եւ Architectural Digest-ի նման բարձրամակարդակ, մասնագիտական եւ աշխարհատարած հանդէսներու մէջ, կամ ամերիկեան «60 min.» հեռատեսիլի յայտագրով:

Իրն են օրինակ Նիւ Եորք քաղաքի Empire State Building-ի, «Եանքի Սթատիում»-ի, Նիւ Եորքի շատ ինքնուրոյն շէնքերու եւ Պըն Լատենի մենատան մանրակերտերը: Ասոնք շատ փոքր օրինակներն են այն բոլոր գործերուն, որոնք աստիճան առ աստիճան զինք բարձրացուցած են, հասցնելով այսօրուան պատուանդանին:

Այս աշխատանքներէն իւրաքանչիւրը իր վրայ կը կրէ Տիգրանին հմուտ մատներուն եւ բժախնդիր խառնուածքին հետքերը, որոնք տարբեր կը դարձնեն եւ ամբողջովին այլ որակ կու տան այդ աշխատանքներուն, եւ կը ստիպեն մարդիկ, որ իրեն դիմեն, երբ կատարեալ մանրակերտ մը ունենալու ձգտին:

– Բայց գիտե՞ս, – կ'ըսէ, – օրերով եւ տարիներով Շաբաթ-Կիրակի չեմ ունեցած, արձակուրդի չեմ գացած. միայն աշխատեր եմ, եւ աշխատեր եմ ինքնամոռաց նուիրումով:

Եթէ այդպէս չըլլար, ինք այլ մասնագետներէ տարբեր պիտի չըլլար:

Արուեստագետի իր նուրբ հոգին նաեւ ուշադիր է դիմացինին հանդէպ եւ ներքին զգացողութեամբ կրնայ հասկնալ զայն, թափանցել անոր հոգիին խորը: Յետոյ տալ ակելին, քան իրմէ պահանջուածը:

Կը յիշեմ, որ պատանութեան տարիներուս տարօրէն հմայուած էի դասական պալէով եւ ձեւ մը կը փնտռէի այդ հմայքս յագեցնելու: Սովետական գրադարանը (Քուաթլի փողոց, Յալէպ) ինչ թերթ ու հանդէս որ գար, կը գնէի, հոն գտնուած պալէի լուրերը կարդալու եւ լուսանկարները վայելելու համար: Կը գնէի նաեւ ռուսական պալէի մեծ անուններուն նուիրուած գիրքերը, ինչպէս Կալինա

Ուլանովայի կամ Մայա Փլիսեցքայայի մասին գրուած հատորները, որոնք նաեւ նկարներով հարուստ էին:

Այդ շրջանին էր, որ Տիգրան կարծեմ Մայա Փլիսեցքայայի «Կարապը»-էն հատուած մը նկարեր էր եւ նուիրեց ինծի: Ընդունել էի մեծ հաճոյքով եւ ննջարանիս պատէն կախեր գայն:

Տարիներ ետք մտածեցի՝ բայց ինչպէ՞ս գիտցաւ, որ այնքան շատ կը սիրէի պալէն: Այդ օրերուն երկուքս ալ այնքան սակաւախօս էինք տակաւին: Երբ հարցուցի, պարզօրէն ըսաւ.

– Չեմ գիտեր, զգացեր էի...

Հալէպի պատերազմէն շահտ առաջ Տիգրան Նիւ Եորք գացեր էր:

Պատերազմի տարիներուն այնքան մարդ գաղթեց, որ Հալէպի գաղութը գրեթէ պարպուեցաւ: Ոչ միայն գաղութը պարպուեցաւ, այլ նաեւ գաղթողները տկարացուցին համախմբումով գոյացած մեր զօրութիւնը, իսկ ուր որ գացին, համախմբում չկար, եւ մնացին ձուլումի ճիրաններուն մէջ բռնուած:

Այդ երեւոյթին դրական ու գեղեցիկ կողմն ալ կայ. կը մտածեմ՝ երբեմն շատ լաւ է գաղթելը, ինչպէս օրինակ Նանոր Սերայտարեանին պարագային (դուստրը Յովիկ եւ Յասմիկ Սերայտարեաններուն), որ ԱՄՆ գաղթելէ ետք ջութակի մէջ շատ մեծ յառաջդիմութիւն ցուցաբերեց եւ կարելոր յաջողութիւններու հասաւ, որովհետեւ իր բնածին տաղանդը պարարտ հող գտաւ եւ գայն ոռոգող երաժիշտ-դաստիարակներ, ճիշդ ինչպէս Բարտի Միլասեան նախ Երեւանի, ապա ԱՄՆ-ի մէջ (դուստրը Միհրան եւ Այտա Միլասեաններուն) մեծ յաջողութեան հասաւ:

Նոյնն է Տիգրանին պարագան. եթէ ԱՄՆ հաստատուած չըլլար, պիտի կարենա՞ր ունենալ ասպարեզին ա՛յս յաջողութիւնը, պիտի ըլլա՞ր պահանջը նման մանրակերտեր պատրաստելու: Որովհետեւ մեր կողմերը՝ Արեւելքի մէջ շինարարութիւնը յաճախ կ'ընթանայ առանց քարտեզներու, ալ ուր մնաց մանրակերտեր պատրաստելու անհրաժեշտութիւնը:

Բայց Տիգրան պատանի տարիքէն, տակաւին միայն 14 տարեկան, ամառները Պէյրութ կ'երթար եւ իր զարմիկներէն մէկուն՝ Յակոբ Աթէշեանի ճարտարապետական գրասենեակին մէջ կ'աշխատէր, մանրակերտեր պատրաստելով, մինչ մենք բոլորս «կը հանգստանայինք» ամբողջ տարուան մեր «չարչարանքէն»՝ դաս սորվելէն:

Այդ տարիներուն, երբ շատ հաւանաբար տակաւին սկսած չէր մանրակերտեր պատրաստելու «նորոյթը» ԱՄՆ-ի մէջ, Պէյրութ, ըլլալով այդ ժամանակուան «Փըթի Փաղի»-ն, հաւանաբար նման

աշխատանքներ կ'ըլլային, «ՄԷկը ՄԷուտական Արաբիոյ մԷջ կառուցուելիք շէնքի մը համար էր», կ'ըսեր Տիգրան, որ արդէն փորձ եւ փորձառութիւն ձեռք կը ձգէր իր ասպարէզին համար, երբ մենք լողաւազաններ եւ ակումբներ կ'երթայինք մեր օրերը «վայելելու»:

«Այդ տարիքիդ երբ բան մը կ'ընես, քեզի կը թուի թէ ամէն մարդ ալ կրնայ նոյնը ընել. բայց երբ գործիդ համար կը սկսին վճարել քեզի, կը զգաս որ կեանքիդ կարելոր մէկ անկիւնադարձին առջեւ կը գտնուիս»:

Բայց օրերը ցոյց տուին, որ այդքան ալ հեշտ չէ իր ըրածը եւ թէ ամէն մարդ չէ որ կրնայ ընել: Առաւել՝ իր արուեստագետի խառնուածքն ու ուշադրութիւնը խօսակիցներուն հանդէպ ըսել տուած են իր կարելոր աշխատակիցներէն մէկուն՝ Քէնէթ Թրէքըրի (ճարտարապետական HOK ընկերութեան Նիւ Եորքի գրասենեակի ձեւաւորումի տնօրէն) *«Ան իսկական նկարիչ արուեստագետ է. գիտէ թէ ծիշդ ինչ պէտք է ինձի համար, ինչ ձեւի վերացականութիւն: Նաեւ՝ բնաւ իր ժամկետերը չի խախտեր: Մենք գիրար լռութեամբ հասկնալու ունակութիւնը ունինք»:*


Երբեմն կը մտածեմ՝ իրապէ՞ս այդքան շատ պահանջ կայ շէնքերու մանրակերտեր պատրաստելու, որ Տիգրանը մինչեւ այսօր, արդէն աւելի քան քառասուն տարի նոյն ասպարէզին մէջ է եւ կը շարունակէ նոյն թափով: Մեզի համար մանրակերտերը շատ-շատ ինքնաշարժներու փոքր չափի խաղալիքներն էին՝ matchbox կոչուած այդ շատ հմայիչ օթօները, որոնցմէ անհաշիւ թիւով ուներ զարմիկս, եւ որոնց իւրաքանչիւրը իր գոյնով, մոտելով եւ չափով գոց գիտեր:

Կային նաեւ տիկնիկներու փոքր տուները, որոնց նկարները միայն տեսեր էի եւ շատ գեղեցիկ գտեր:

Բայց շէնքերու մանրակերտե՞ր, ո՛չ, չէի հասկնար նպատակը: «Նիւ Եորք Թայմզ»-ի յօդուածը կը բացատրէ.

«Բայց անոնց աշխատանքը մանկական խաղ չէ. ճարտարապետները մանրակերտեր կը պատուիրեն, որպէսզի երբ իրենց ծրագիրը հանրութեան ներկայացնեն, մէկ կողմէ կարենան նիւթականը հայթայթողներ գտնել, միւս կողմէ գրաւել հաւանական յաճախորդներ, որոնք բազմաթիւ միլիոններ պիտի վճարեն ունենալու համար բնակարան մը, որ տակաւին չէ իսկ կառուցուած»:

Տարօրէն հպարտ եմ այս խիստ համեստ դասընկերովս, որ այսօր իր ասպարէզին մէջ միջազգային հռչակ ունի՝ Richard Tenguerian.



ԴԱՍԸՆԿԵՐԱ ՉԷՐ

Թեև դասընկերս չէր, բայց Յարութը ծանօթ էր ամբողջ ճեմարանին մէջ իր քանդակագործի հռչակով եւ լռակեացութեամբ: Եթէ նայէիր դեմքին, կը զգայիր որ իր աշխարհին մէջ է, բայց երբե՛ք չէիր կրնար գիտնալ, թէ ի՛նչ կը մտածէ, ի՛նչ ծրագրեր կ'որոճայ: Յետոյ, եթէ հետեւէիր իր աշխատանքներուն, տեղ մը, ձեռով մը պիտի տեսնէիր իր յաջորդ գործը:

Արուեստագետներու ընտանիքի մը առաջին զաւակը, մեծցած է արուեստով եւ կենցաղավարութեամբ յագեցած մթնոլորտի մը մէջ: Այս երկրորդը մանաւանդ այնքան հագուագիւտ բան էր մեզի համար, որ անմիջապէս աչքի կը զարներ իր ծայրայեղօրէն քաղաքավար խառնուածքը:

Իր եղբօր Տիգրանին պէս, ինք եւս ներկայ էր «Ծիլեր»-ուն իւրաքանչիւր թիւին մէջ կա՛մ երգիծանկարներով, կա՛մ իր նոր քանդակին լուսանկարով: Կը նկարագարդէր մեր գրութիւնները նաեւ: Կը յիշեմ, որ «Նամակ Միրէյ Մաթեոյին» խորագրով պատմուածք մը գրեր էի եւ Յարութը այդ ֆրանսացի երգչուհիին, – որ այն օրերուն շատ հռչակաւոր էր եւ մեր շատ սիրելի երգչուհին, – դիմանկարը գծեր էր խորագրին կողքին:

Քանի մը դասարան մեծ էր ինձմէ: Երբ աւարտեց Զարէն Եփփէ Ազգային ճեմարանը, մեր սիրելի ճեմարանը, ա՛լ չիմացայ իր մասին: Գիտէի որ աւանդապահ ընտանիքէ մը կու գար եւ կը մտածէի թէ ինչպէ՛ս պիտի շարունակէ քանդակագործութիւնը այսքան նորօրեայ գործիքներու մէջ...

Յետոյ տեսայ իր LinkedIn-ի էջը, ուր Յարութ յստակօրէն գրեր է թէ ի՛նչ կ'ընէ այսօր իր արուեստով.

«Ծաղրանկարը ինձի համար արուեստի աշխարհի մտնելու սեմն էր: Քանի որ ես արդէն ունէի ծաղրանկարչութեան հակում եւ կիրք, սկսայ փնտռել ուղիներ, որոնց միջոցով երգիծանքը կարելի ըլլար կիրարկել նկարչութեան եւ քանդակագործութեան մէջ: Միջոցներ կը փնտռէի արուեստի յաճախ առանձին ներկայացուող երեսակները միաձուլելու համար:

Դասական ճանապարհներէ գալով, կարելի է ըսել, որ իմ արուեստը կը կատարելագործէ ժամանակակից արուեստի եւ երգիծանկարչութեան միախառնումը, փորձ մըն է նոր բառապաշար ստեղծելու եւ նոր տարածք նուաճելու, հարուստ աւանդութիւններու եւ նորարարական արուեստի կիրարկումին մէջ:

Օգտագործելով քանդակային հեռանկարը եւ ձեւի խեղաթիւրումով յատկանշուած երգիծանկարչութիւնը, կը փորձեմ ակնդիրը հեռացնել կեանքի գրգռիչ երեւոյթներէն եւ հիասթափութիւններէն, ու դրական հանդիպումներու պատուհաններ բանալ:

Ես գոյները կ'օգտագործեմ ստեղծելու համար որոշ ապրումներ եւ տրամադրութիւններ, որոնք կը վերաբերին գործերուս մէջ գտնուող բնորոշներուն կամ վիճակներուն: Օրինակ՝ վարդագոյնը տազնապի համար, կանաչը՝ հանգստութեան համար եւ այլն: Կրճնահարուածներս

կ'օգտագործեն խաչածեւ թերնիք, եռատարածք (3D) խորութիւն նադորդելու նկարներուս, ինչպէս նաեւ յղում տալու Վան Կոկին»:

Երբ տեսայ իր վերջին շրջանի քանդակները, անկեղծօրէն հիացայ ոչ միայն իր ստեղծագործ ոգիով, այլ նաեւ ժամանակին հետ քայլ պահելու իր կարողութեամբ. իր նոր քանդակները, նախ փոքր չափի, Յարութը կ'իրագործէ 3D printer-ով, ապա, ըստ չափի եւ ըստ պահանջի, կ'իրագործէ իսկական չափով քանդակներ: Եւ ոչ միայն:

Իր նոր շրջանի շարքը ունի շատ հետաքրքրական մտայղացումներ, որոնց թեման եթէ արդիական է, միջոցը սակայն ներշնչուած է մեր խաչքարերու նախշերէն: Ասոր վառ օրինակն է «Գովաբանութիւն Խաչքարի» (Tribute to Khachkar) աշխատանքը:

Երբ կը խօսինք արուեստի մասին, յաճախ կը զգանք թէ բառերը բաւարար չեն նկարագրելու համար ոչ թէ արուեստի գործը ինք, այլ անոր մեր վրայ ձգած ազդեցութիւնը, որ թէեւ շատ ենթակայական է՝ իւրաքանչիւրը ըստ իր եութեան, – եութիւն բառը այստեղ ամբողջ բարդ համակարգ մըն է հոգեբանութեան, խառնուածքի, զարգացումի եւ այլն, – սակայն կը մնան կարգ մը ընդհանրութիւններ, որոնք կը կապեն ա կ'նդիւրները եւ կը նկարագրեն արուեստը:

Այստեղ կրնամ ձեզի նկարագրել Յարութին գործերը, որոնք իրապէս արդիական են, ճիշդ իր ըսած ձեւով՝ միջոցներու միաձուլումով: Առնենք օրինակ իր «Քոչարի»-ն:

Պղնձածոյլ իրար ագուցուած խաչերու ամբողջութիւն մը, որ իր մէջ կը կրէ հայկական նախշերու քնքշութիւնը, միաժամանակ հսկայ ուժ մը՝ հաւաքականութեան ուժը պարփակելով:

Կամ առնենք «Կռունկ»-ը, որ պատկերներու յաջորդականութիւն մըն է, Կոմիտասեան Կռունկին հնչիւններով. տեսերիզ մը, որուն սկիզբի գրութեան մէջ Յարութ կ'ըսէ.

«Նաւասարդը հայերուն ամենէն սիրելի տօնն էր, հին ժամանակներէն տօնուած, որուն ընթացքին պարեր, երգեր, մրցումներ տեղի կ'ունենային՝ ձիարշաւ, ըմբշամարտ, նշանառութիւն, ջուրի խաղեր, բախտագուշակութիւն, կենդանիներ կը գենէին եւ այլն. ուտելիքն ալ մեծ տեղ կը գրաւէր այդ տօնին ընթացքին»:

«Չայեր, որոնք հեռու եղած են հայրենիքէն, մանաւանդ Նոր Տարուան առիթով անպայման կ'ուզէին իմանալ իրենց սիրելիներուն մասին. իսկ կռունկը, որ գաղթող թռչուն մըն է, դարձեր էր ւաւետաբերը պանդուխտներուն. ամէն անգամ որ կռունկ մը տեսնէին երկնքին վրայ, իրենց կը թուէր թէ անպայման լուրեր բերած էր իրենց սիրելիներէն»:

«Չայերը կռունկին շատ երգեր, տաղեր եւ բանաստեղծութիւններ նուիրած են, իսկ նկարներու այս շարքը իմ հայեցողութեամբ կռունկին պատասխանն է իրեն տրուած հարցերուն», կ'ըսէ արուեստագետը:

Պատկերացուցե՛ք թե քանի՛ քանիներ կ'այցելեն Յարութ Թընկըրեանի կայքէջը. այդ այցելուներուն մեծամասնութիւնը հայ չէ, բայց հմայուած արուեստի գործերով կը կարդայ ներկայացուածը եւ անուղղակի կերպով այնքան բան կ'իմանայ մեր մասին: Արուեստի զօրութիւններէն մէկն ալ այս է՝ ըսել ու պատմել առանց բառի, համոզել առանց վիճելու, երբեմն նոյնիսկ ընկալողին առանց գիտակցութեան:

«Կռունկ»-ը 1,42 վայրկեան տեւողութեամբ տեսերիզ մըն է, շարք մը իրար յաջորդող 16 նկարներու, որոնց խորագրերը արդէն երբ քով-քովի դրուին, մեր՝ սփիւռքահայու այսօրուան կեանքին մասին կարճ պատմուածքի մը երեւոյթը կը ստանան, այսպէս.

Տունէն լուր կա՞յ, կռունկ, խորոված, կրակէն անելի տաք, կարդացուելու սպասող գաւաթներ, ոչխարը կ'որոշէ խորովածին տեսակը, մրցումէն առաջ կառանել (parking), թոշակառուն, ի՞մ ուղիս թէ մայրուղին, երիտասարդ աղջիկներ, միասնութիւն բազմազանութեան մէջ, խաղին յաղթել (ճատրակ) բայց պատերազմը կորսնցնել, կը մրցի՞ն թէ կը կռուին, ո՞ր է հաւատքը, պար, Վարդավառ, երագել...

Այլ գեղեցիկ գործ մըն է «Սաղմոս 23» գեղանկարը:

Իր բոլոր նկարներուն մէջ կը զգացուի թաքուն երգիծանք մը, որ վառ գոյներուն միացած պայծառութիւն կու տայ, թէեւ ներկայացուածը երբեմն որպէս նիւթ այնքան ալ պայծառ չըլլար, ինչպէս է պարագան «Կռունկ» պատկերաշարին:

Նկարներէն անկախ, վերջերս Յարութ իր քանդակները կ'իրագործէ թուայնացումի միջոցով եւ կը ցուցադրէ զանոնք պաստառին վրայ, քանդակին չորս կողմը պտըտելով այնպէս, որ ակնդիրը կ'ունենայ այն տպաւորութիւնը, թէ ինք քանդակին շուրջ կը դառնայ:

Այլ հետաքրքրական գործ մըն է «Պատմական Հայր» թուայնացուած քանդակը՝ կարշմբումն կերպար մը, որ ձեռքին ունի մեր յաւերժութեան նշանը:

Յարութ Թընկըրեան Հալէպի համալսարանի երկրաչափական կաճառը (Civil Engineering) անարտելէ ետք, գերազանց գնահատանքով անարտեր է նաեւ Նիւ Եորքի նշանաւոր New York Academy of Art-ը, քանդակագործութեան մագիստրոսական աստիճան ստանալով, 2000 թուականին:

Կ'արժէ այցելել Յարութ Թընկըրեանի գործերը LinkedIn-ի մէջ (Harout Tenguerian) եւ ծանօթանալ այս անունին, որ իրապէ՛ս ժամանակին հետ քայլ պահող արուեստագետ մըն է, արժանի անելի լայն ճանաչումի:



«ՅՈՒՇԵՐՍ»

Անայիս, Ե. Աւերիսեան

Այսօրվան այս օրերուն ի՞նչ կայ աւելի գօտեպնդիչ, քան ներկայացումը մեր քիչ ծանօթ գրագիտուհիներէն մէկուն՝ Անայիսի «Յուշերս» հատորին, ուր կը գտնենք Պոլսոյ Նախեղեռնեան կեանքը իր մանրամասնութիւններով, իր կարեւոր դերակատարներով, մանաւանդ՝ մոռացութեան մէջ մնացած կիներով եւ անոնց ներդրումին մասին խօսքով՝ այդ կարեւոր շրջանին:

Վերջին երկու դարերուն «մանր» որակուած գրականութիւնը՝ յուշագրութիւն, օրագրութիւն, Նամակագրութիւն, պաշտօնապէս մտաւ գրականութեան մեծ դարպասէն ներս, մանաւանդ արեւմտեան կողմն աշխարհի, ուր հրատարակիչներ մեծ թափով կը հրատարակէն Նման գործեր, հռչակաւոր գրագետներու, կամ կարեւոր իրադարձութիւններու ականատեսներու կողմէ գրուած:

Մեր գրականութեան մէջ համեմատաբար մեծ է թիւը հրատարակուած Նամակագրութիւններուն եւ յուշերուն, իսկ օրագրութիւնները՝ ոչ այնքան, թե՛ քիչ գրուած ըլլալու, թե՛ հրատարակուած չըլլալու պատճառներով: Կը յիշեմ տեսած ըլլալ ձեռագիր պատերազմի օրագրութիւնը Նայիրի Չարեանին, Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի պահոցներուն մէջ: Մինչեւ օրս չէ հրատարակուած այդ ձեռագիրը, չեմ գիտեր ինչու:

Բայց պէտք է նկատի առնել, որ «մանր» որակուած այս գրականութիւնը իր մէջ կը պահէ այնպիսի մանրամասնութիւններ, որոնց այլ տեղ չենք կրնար հանդիպիլ, մանաւանդ կիներուն առնչուած:

Պոլսահայ կեանքի մանրամասնութիւնները ամփոփող գանձարան մըն է Անայիսի «Յուշերս» հատորը, որ հրատարակուեր է Փարիզ, իր մահէն տարի մը առաջ՝ 1949-ին:

Անայիս ծածկանունն է Եւփիմէ կամ Եփրիմէ Չօպանեան-Աւետիսեանի, հեռաւոր զարմուհին Արշակ Չօպանեանի: Ծներ է Կ. Պոլիս, ակնցի ծնողներէ, 20 Փետրուար 1872-ին եւ մահացեր ու թաղուեր Փարիզ, 4 Օգոստոս 1950-ին:

Նախակրթութիւնը ստացեր է Մաքրուհեաց վարժարանէն ներս, ապա՝ ֆրանսացի գրագիտուհի տիկին Ֆուրէի անձնական դպրոցէն ներս:

Հայերէնը կատարելագործելու համար մասնաւոր դասեր առեր է Թովմաս Թերզեան եւ Խորէն ՆարՊէյ բանաստեղծներէն:

Բազմաթիւ յօդուածներ ունի պոլսահայ թէ սփիւռքահայ թերթերուն մէջ ցրուած: Բանաստեղծութիւնները ամփոփուած են «Այգ եւ Վերջալոյս» հատորին մէջ:

Չիս խորապէս կը հետաքրքրէն, Նոյնպէս կը տպաւորեն տակաւին 19-րդ դարուն պոլսահայ կիներու կեցուածքը,

աշխատանքն ու ծառայութիւնը, որոնց մանրամասնութիւնները կը գտնենք այս հատորին մէջ:

Արտաքին Գործոց Նախարարութեան խորհրդակալն նշանաւոր Արթին Պէյ Տատեանի դուստրը՝ Էօթէնի Զանըմ եղեր Է Ապտիւլ Զամիտի կանանոցին թարգմանը եւ «*Եւրոպայէն եկող օգոստափառ հիւրերը ինք կ'առաջնորդէր կանանոց՝ Վալիտէ Սուլթանուհիին մօտ*» (Էջ 63):

Հայուհիները իրենց վստահելի եւ հաւատարիմ խառնուածքին պատճառով յաճախ կարելոր պաշտօններ վարեր են կանանոցէն ներս.

«Ամէնէն վերջին ընդունելութիւնը եղած է Աւստրիոյ գահաժառանգին եւ իր կնոջ Պոլիս այցելելուն: Էօթէնի Զանըմ երկար տտունով, կապոյտ սնդուսէ հագուստով, որ Սուլթանուհի Վալիտէին ծառայողներուն համազգեստն է, կանանոցի դռնէն առաջնորդած էր Ստեֆանի իշխանուհին մինչեւ աթոռը Վալիտէ սուլթանուհիին, հագած ճերմակ պարեգօտ մը մարգարիտներով քանուած»:

Այդ ճամբորդութենէն վերադարձէն քիչ ետք պատահեր էր Աւստրիոյ իշխանին սպանութիւնը, որ սկզբնակետը հանդիսացեր էր Զամաշխարհային Ա. Պատերազմին:

«Գերմանիոյ կայսեր Պոլիս այցելութեան միջոցին եւս Էօթէնի Զանըմ ըրած է թարգմանութիւնը կանանոցի այցելութեան: ...Նկատի առնելու պարագայ մըն է, թէ Պոլսոյ բարձր ընկերութեան մէջ յոյն, հրեայ, լըվանթէն շատ մը աչքառու լեզուագետ տիկիներ գտնուելուն հակառակ, միշտ կայսերական կանանոցին իբր թարգման հայ կին մը նշանակուած է»:

«Ապտիւլ Մեծիտի ժամանակ հայուհի մը, դիրքով ու ձիրքերով նշանաւոր, թէեւ անուս՝ Ալեմ հանըմ Րէիգեան, Վալիտէ սուլթանուհիին մօտը յաճախ գտնուելով, երբ օտար հիւր մը հարէմը այցելէր, ան կ'ընէ եղեր կարգադրութիւնները, առանց սակայն մասնաւորաբար թարգմանի պաշտօն կատարելու: Յետոյ Ապտիւլ Ազիզի ատեն, երբ Նափոլէոն Գ. եւ Էօթէնի կայսրուհին Պոլիս այցելէր են, կայսերական կանանոցին թարգման նշանակուէր Է տիկին Յովհաննէս Պէյ Ալլահվերտի, հայ հռովմեական ընտանիքէ շատ մեծ տիկին մը, որ կայսրուհիին յաճախ կանանոց այցելութեանց միշտ ընկերակցեր է անոր, նոյնիսկ երբ կայսրուհին փափաքեր է թրքական բաղնիք մտնել»:

«Մեկնելու պահուն օգոստափառ հիւրը ջերմ համակրանք յայտներ է հայ տիկնոջ եւ անոր իբրեւ յիշատակ զոյգ մը սուտակէ թանկագին օղ նուիրեր է»:

«Իսկ Ապտիւլ Զամիտի ատեն այդ կանանոցի թարգմանութեան

պաշտօնը նախ վարեր է պատերազմական նախարարութեան խորհրդական Վահան Էֆէնտիի գաւակը, որ եղբօր աղջիկը կ'ըլլայ տիկին Տիւսափին, օրհորդ Արաքսի Վահան, վերջէն տիկին Յովհաննէս Կիւլպէնկեան: Սակայն տկարութեան պատճառով ան չէ կրցած շարունակել այդ պաշտօնը եւ անոր յաջորդած է օրհորդ Էօժէնի Տատեան, որ վերջէն ամուսնացած էր տոքթ. Նազաշեանի հետ»:*

Այս բոլորը կարդալէ ետք կը մտածեմ՝ կարելի է Նոյնիսկ գիրք մը գրել բացայայտելով հայ տիկնոջ դերը Օսմանեան կայսրութեան վերջին շրջանին, արքունի շրջանակին մէջ: Պետք է խոստովանիլ նաեւ, որ այն տիկիները, որոնք մինչեւ 1915 մահացեր են կամ գաղթեր երկրէն դուրս – թէեւ բնաւ պատճառ չեն ունեցեր գաղթելու – բախտաւոր եղեր են վայելելու համար հայերուն ունեցած դիրքը, առանց ստիպուած ըլլալու կենալ իրենց միտքն ու հոգին 1915-էն ետք ահաւոր չարչարանքի մատնող «ինչո՞ւ»-ին դէմ:

Ինչպէս բոլոր մեծատիրական երկիրներու մէջ, Պոլսոյ մէջ եւս արքայական ճոխութեան կողքին, կինը ահաւոր ջքաւորութիւն ապրեր է եւ լռութեան մատնուեր: Այստեղ եւս հայ կինը փայլեր է իր գորովագութ սրտով եւ մեծահոգութեամբ:

Անայիս կը պատմէ, թէ առաջին հայ տիկինը, որ զբաղեր է բարեսիրութեամբ, եղեր է Աբրահամ փաշա Զարա-Քէհեայի մայրը՝ տիկին Եպրուիի Զարա-Քէհեա, որ իր գուրգուրանքին տակ առեր է ազգին տունը, «այսինքն Ետի-Գուլէի Ս. Փրկչեան հիւանդանոցը (որ մինչեւ այսօր կը գործէ)»:

Շատ հետաքրքրական է իմանալ, որ այս մեծ տիկնոջ աղջիկը, որ է նաեւ Աբրահամ փաշայի քոյրը, եղած է մայրը Պօղոս փաշա Նուպարի: Այլ խօսքով Պօղոս Նուպար փաշա կու գար ընտանիքէ մը, ուր բարեսիրութիւնը սովորական առօրեայի մը մաս կը կազմէր: Չարմանալի չէ ուրեմն, որ Պօղոս Նուպար փաշա ինք եւս մտածած ըլլայ բարեսիրութեան մասին եւ հիմնած Սփիւռքի բարեսիրական ամենէն մեծ միութիւններէն մէկը՝ Յայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը:

1908-ի խանդավառութեան մէջ, երբ հայերը հանդիսութիւն մը կազմակերպած են «ազատութիւնը» տօնախմբելու համար թուրք երեւելիներու ներկայութեամբ, հազիւ 8-9 տարեկան թրքուիի Պալքիս, «*հայերէն մաքուր, վճիտ առողջանութեամբ կ'ասմունքէ.*

Ազատ Աստուածն այն օրից

երբ հաճեցաւ շունչ փչել

Իմ հողանիւթ շինուածքիս...» (Էջ 137):

Իր յուշերուն մէջ կը տողանցեն հանդիպումները Կոմիտաս Վարդապետին հետ, որ նոր եկած է Պոլիս: Անոր շատեր ծանօթ

չեն տակաւին եւ... թերահաւատ են իր կարողութեան հանդէպ. Փանոս Թերլէմեզեանին հետ, որ հեղինակուիին տան պատշգամէն երեւոյճ տեսարանը եկեր է նկարելու, Գրիգոր Չօհրապին հետ, որ բարի մտածումներով խորհրդարանին առաջարկեր է հայ տղոց մուտքը բանակէն ներս *«ենթադրելով թէ այդ հաւասարութեան միջոց մը պիտի ըլլայ թուրքերուն հետ եւ մանաւանդ կարծելով թէ այդպիսով թուրք բանակին մէջ քաղաքակրթութիւն մտցնել կարելի կ'ըլլայ»*... Չօհրա՛պ, Չօհրա՛պ, որ հակառակ դիւանագետ ըլլալուն, միւնչեւ վերջ ալ կը հաւատար, թէ կարելի է բարի կամեցողութիւն դնել երկու ժողովուրդներու յարաբերութեան մէջ. բայց չարաչար սխալելով, շատ սուղ վճարեր է իր մարդկայնութեան գինը...

Իսկ այն օրերու ներքին գործոց նախարար Թալաաթ պէյ, հայ գիրերու գիւտին հազար հինգ հարիւր ամեակին նուիրուած հանդիսութեան իր բանախօսութեան մէջ կ'ըսէ.

«Մենք յեղափոխութիւնը մեր հայ եղբայրներէն սորվեցանք. անոնք մեզ արթնցուցին, ազատութեան ճամբան ցոյց տուին» (Էջ 203): Դասը շատ լաւ սորված ըլլալու էր Թալաաթ, երբ փաշա եղեր էր...

Ատանայի ջարդերէն փրկուած աղջիկներու որբանոց-վարժարանի մը մէջ ուսուցիչ էր Դանիէլ Վարուժան, իսկ Անայիսին արտօսութիւն տրուեր էր, որպէս օգնական ինսամակալ մարմնոյն, ներկայ ըլլալ այդ դասերուն:

«Սեղանին առջեւ նստած է Դանիէլ Վարուժան, գրականութեան ուսուցիչը, զոր սանուհիները կը պաշտէին: Համակրելի էր այդ երիտասարդ ուսուցիչը, որ քերթողի լուսաւետ ցուրքեր կը կրէր գլխուն շուրջը: Ամէնէն պարզ բացատրութիւնը կարծես փայլուն նշանակութիւն մը կ'առնէր անոր բերնին մէջ: Իր բանաստեղծութիւններուն հմայքը կը ծածանէր դասարանին մէջ եւ գեղարուեստական նօթ մը կու տար դասաւանդութեան: Տիկին Սրբուհի Տիւսափի գործերուն մասին կը խօսեր ան, մանաւանդ Մայտային եւ դրուագներ կը կարդար»:

Այս եւ նման տողերու առջեւ մեր մեծերը, որոնք մեծ էին նախ եւ յետոյ՝ նահատակ, յանկարծ միս ու ոսկոր կը հագնին, կը դառնան իրապէ՛ս ապրած մարդիկ, որոնց խօսքը շունչ կ'առնէ եւ զիրենք աւելի սիրելի կը դարձնէ մեզի:

Անհունօրէն տպաւորիչ են Անայիսի նկարագրութիւնները Հայաստանի Առաջին Հանրապետութեան լուրին առջեւ, փսփսուքներու տարածումէն ետք, Կիրակնօրեայ պատարագին, Առաքելոցի ընթացքին.

«Ու յանկարծ պատարագիչը, ծանր ծանր շեշտելով, ձայնով մը որ քիչ մը կը դողդղար, երկիւղած լռութեան մէջ աղաղակեց.

Եւ Չհանրապետութիւն Յայրոց...» (Էջ 242):

Այս գիրքին էջերուն մէջ կը գտնենք Յայ Կարմիր Խաչին հիմնադրութիւնը տողթ. Բարսեղեանի եւ իր խօսեցեալ Արուսեակ Փանոսեանի ջանքերով:

Կը գտնենք մանաւանդ «Յայ Կանանց Լիկա»-ին եւ անոր ընդմէջէն «Յայ Կին» շաբաթական հանդէսին հիմնադրութեան պատումը. առաջին ժողովին հրաւիրուեր են *«բոլոր աչքառու հայ տիկիները եւ օրհորդները, որոնք մեծ կամ միջին անուն մը շինած էին»* (Էջ 261):

«Յայ Կանանց Լիկային լաւագոյն ձեռնարկներէն մէկը եղաւ մղել սրամիտ ու երիտասարդ կարող գրագիտուհի տիկին Յայկանոյշ Մարքը հիմնելու շաբաթական հանդէս մը, որ կոչուի «Յայ Կին» եւ ըլլայ օրկանը Լիկային:... Լիկային քայքայումէն յետոյ եւս 15 տարիներ «Յայ Կին»-ը պահեց իր եզական տեղը հայ լրագրութեան մէջ. եւ թերեւս ցարդ մնար ան, ի մեծ գոհունակութիւն հայ մտաւորականութեան, եթէ տխուր դաւադրութեան մը գոհ գացած չըլլար եւ խափանուած ի սպառ»:


Միշտ եւ ամէն ժամանակներուն մէջ՝ դաւաճանութիւնը, մեր գլխաւոր ախտը, կը շարունակէ շատ թանկ արժէլ մեր երկրին եւ հաւաքական կեանքին համար:

Կարելոր այլ տեղեկութիւն մըն է այն, որ Ռուսմանիոյ մայրաքաղաքէն քանի մը ժամ հեռու գտնուող Սթրուսկայի մէջ ունեցած ենք որբանոց մը 1924-ին, ուր կը խնամուէին 200-է աւելի որբեր եւ որուն տնօրէն եղած է Պ. Սրենց: *«Յին գաղութէն հայ դղեակատերեր կը հոգային տարեկան պետքերուն մեծ մասը, ինչպէս վառելափայտ, ածուխ, պահածոյ եւ այլն, իսկ Պուքրէշի մէջ կար խնամակալ մարմին մը եւ տիկնանց միութիւն մը, որ հանգանակութիւններով, հանդէսներով եւ այլն կ'օժանդակէր այս հաստատութեան»:*

«Դժբախտները աշխարհի զօրութիւններն են» ըսեր է Ռոպէսփիէռ: Արդեօ՞ք մենք ալ նոյն այդ զօրութիւններուն կը պատկանինք, որ դժբախտութիւնները չեն լքեր մեր ազգը, թե՞ մենք է որ կը վազենք անոնց ետեւէն...

Թանկագին յուշերով ծանրաբեռն այս էջերը կարծես փառք կու տան, որ հակառակ այս բոլորին, կը շարունակենք ու կը մնանք: Կը մնանք արժանիքներու եւ ցաւի մեր բեռը արժանապատիւ կերպով կրելով ու երբեմն անհատ-աստղերով փայլք տալով միջազգային երկնքին:

***Օսմանեան կայսրութեան օրերուն կիներուն անունը չտալու համար իրենց ամուսնոյն անունով կը յիշէին: Այսինքն՝ Յովհաննէսին տիկինը:**



**ԴԻՄԱՏԵՏՐԻ ՄԱՍԻՆ՝
ԱՆԿԵՂԾՕՐԷՆ**

Բոլորս ալ, այս կամ այն չափով, մոլի դարձած ենք դիմատետրին կամ/եւ ընկերային այլ ցանցերու, շատ յաճախ կը խօսինք – ես ալ մէջը ըլլալով այդ խօսողներուն, հակառակ անոր որ շատ լաւ գիտենք, թէ ընդհանուր առմամբ ժամանակի կորուստ է՝ արագ-արագ դարձնել պաստառը եւ դիտել, միայն դիտել, շատ անգամ այդ իսկ մակերեսայնօրէն ընելով – գիտենք նաեւ թէ մեր յոռի գիծերը «զարգացնելու» արագ միջոց է դիմատետրը, ինչպէս դիրահաւա-տուֆիւնը ամէն ժխտականի, բամբասանքը, ծայրայեղ ազատութիւնը ըսել-գրելու ինչ որ մեր միտքէն կ'անցնի եւ այլն: Հակառակ այս բոլորին... կը շարունակենք մեր մոլութիւնը:

Ասոնց կողքին սակայն ընկերային ցանցերը լաւ բաներ ալ կը տրամադրեն մեզի. եթէ մէկ կողմէ գրականութեան պատմութենէն գրեթէ ջնջեցին նամակագրութեան արուեստը, միւս կողմէ առիթ տուին, որ մարդիկ իրենց ամէնէն կարելոր հարցերը արագ տեղ հասցնելու միջոց ունենան, կարելոր նամակներ արագ կերպով յղեն, եթէ թերթերը դժուար հասանելի են, կարելի է զանոնք ընկերային կայքերու ընդմէջէն ընթերցել եւ այլն:

Գիտենք որ մնայուն էջեր կան, հաստատուն հերթականութեամբ նորոգուող: Անշուշտ այդ էջերը ի՛մ նախասիրութիւններուն համեմատ կազմեր են իմ «պատ»-ը, բայց նորութիւններ եւս յաճախ կը յայտնուին այդ պատին վրայ:

Այդ էջերը, մանաւանդ անոնց խմբագիրները, ճիշդ թարգմանութեամբ՝ ղեկավարները admin-ները (administrate), գրեթէ բոլորը իրենց լաւագոյնը կ'ընեն, ինչպէս որ սովորական աշխատանքի մէջ լաւ աշխատողը իր լաւագոյնը պիտի ըներ, որովհետեւ այդ էջերուն պատասխանատուներուն համար աշխատանք է էջի մը ղեկավար ըլլալը, որուն միջոցով շահ կ'ապահովեն:

ՖՊ-ի էջերուն մեծամասնութիւնը հաճոյքի բնոյթ կը կրէ, բայց կան դաստիարակող, բան սորվեցնող, ճաշակ ջամբող էջեր նաեւ:

Նման էջ մըն է օրինակ Սոնիա Թաշճեանի Արեւմտահայաստանի խոհանոցին նուիրուած էջը (որուն անդրադարձեր եմ «Պահեցողութիւն» յօդուածով), որ ո՛չ միայն կը պեղէ մոռցուած խոհագրերը մեր կորուսեալ հայրենիքին, այլ զանոնք փորձարկելէ ետք, կը հրամցնէ ընթերցողներուն:

Այլ հաճելի եւ օգտաշատ էջ մըն է Վալանս (Ֆրանսա) բնակող հայաստանցի անասնաբոյժ տիկնոջ մը՝ Կարինէ Օհանեանի ջանքերով սկսուած «Համեղ Մենյու» էջը, որ թէեւ նուիրուած է խոհանոցին, սակայն ուր ամէն առաւօտ, բարի լոյսի մաղթանքէն

առաջ անպայման կը կարդանք գրական հատուած մը, որ կը կապուի մարդկային ազնուութեան եւ կը յորդորէ ընթերցողները որ ըլլան ազնիւ, բարեհամբոյր եւ օգտակար դառնան իրենց շուրջիներուն, ինչպէս եւ որքան որ կրնան:

Իսկ ամէն գիշեր «գիշեր բարի»-ի մաղթանքին կ'ընկերանայ բանաստեղծութիւն մը, որ, վստահ եմ, այս էջին բոլոր համակիրները, բանաստեղծութիւն սիրեն թէ ոչ, կը կարդան: Կա՞յ անելի արագ միջոց գրական ճաշակ եւ քերթողութեան սեր տարածելու... անկեղծօրէն, իմ միտքէն պիտի չանցնէր խոհանոցին նուիրուած էջ մը դարձնել նաեւ ընթերցումի, մանաւանդ քերթողական ընթերցումի միջոց:

Անահիտ Սարգիսեան իր էջը միշտ թարմ կը պահէ նոր թէ հին ստեղծագործութիւններով, որոնք նոյնիսկ եթէ ծանր, դժխեմ նիւթի մը մասին ըլլան, իրենց պայծառութեամբ կը պայծառացնեն ընթերցողին օրը նաեւ: Կա՞յ անելի հաճելի ընթերցում, ծանր օրուան մը յոգնութենէն ետք:

ու չհասկցար
թէ ինչպէ՞ս
յանկա՛րծ
այսքան շուտ
հասար այն տարիքին
երբ չե՛ս յիշեր՝
թէ առտուան դեղահատը
կլլա՞ծ ես
կամ ոչ
իմ կարծիքովս
այդ դեղահատը
շատո՞նց
կլլա՞ծ ես

Տակաւին կան հայերէնին նուիրուած բազմաթիւ էջեր, որոնք թեթեւօրէն, երգիծանքով եւ կարճ հատուածներով հայերէնի իմացութիւն կը փորձեն ջամբել դիտորդներուն. դիտորդ կ'ըսեմ, որովհետեւ վստահ չեմ որ դիմատետրը թերթողները բոլորն ալ կը կարդան հրամցուածը...

Նման էջ մըն է «հայերէն blog»-ը, որ տեղ կու տայ ինչպէս երեք գրողներու, նաեւ ու թերեւս ալ անելի՛ սկսնակներու, անկախ իրենց տարիքէն, քաջալերական տարածք մը ապահովելով արեւմտահայերէնով արտայայտուող նորերուն համար:

Մարի Մերտիսանեան («Գանձասար»-ի նախկին խմբագրուի)

ամեն օր դիմատետրի իր պատուհանէն բարի լոյս կը մաղթէ, սուրճի կը հրաւիրէ եւ անպայման գրական հատուած մը կը կցէ իր մաղթանքներուն, ինչպէս օրինակ 20 Դեկտեմբեր 2022-ին գրածը.

*«Բարի լոյս, ուշացա՛յ, բայց «Աղուոր բաներ» բերի
ԱՂՈՒՐ ԲԱՆԵՐ*

*Աղուոր բաներ կը պատահին
Աղուոր բաներ երբ պատահին
ջութակ մը հին
Կը թօթափէ իր խուլ փոշին
կը նուագէ
մեր մանկութեան երգերէն մին
Աղուոր բաներ կը պատահին
Աղուոր բաներ երբ պատահին
վտակ մը հին
որուն հունն է ցամքեր չորցեր
դարերն ի վեր
կ'արթննայ իր չոր թմբիրէն
ու կը հոսի գլգլալէն
Աղուոր բաներ կը պատահին
Աղուոր բաներ երբ պատահին
մենք միատեղ
կը նայինք լոյս հորիզոնին
ու պատրաստ ենք
վերապրելու մեր կեանքը հին
Աղուոր բաներ երբ պատահին
Աղուոր բաներ կը պատահին
Չահրատ»*

Նոյնքան հաճելի եւ օգտաշատ էջ մըն է Սիւզի Խշուաճեան-Փիլաւճեանի էջը, որ իր կարճ – ամեն մարդ չէ որ կ'ուզէ համեմատաբար երկար գրութիւններ կարդալ – եւ դիպուկ խօսքերով կը գրաւէ դիմատետրի ընթերցողը:

Տակաւին կայ Յարութ Թօփճեանի էջը, որ երբեմն մեկնութիւններ կ'ընէ Աստուածաշունչէն առնուած խօսքի մը, կամ կը բացայայտէ գրութիւն մը:

Օրաթերթերու ընթերցողներուն սուագումին հետ, քաղաքական դէպքերու մասին մանաւանդ իրենց կարծիքը յայտնող անձեր կ'օգնեն, որ դիմատետրի ընթերցողները կարենան կողմնորոշուիլ այդ դէպքերուն հանդէպ, կամ գոնէ՝ ճիշդը իմանալ – ճիշդը՝ ըստ իրենց նախընտրած անձին: Այսպիսի կարելոր դեր ունին Արա

Սանճեանն ու Վարդան Մատթեոսեանը, երկուքն ալ համալսարանի դասախօս դոկտորներ, որոնք կարելի անաչառութեամբ կը գրեն դէպքերու, երեւոյթներու եւ հարցերու մասին:

Թերեւս առարկողներ ըլլան, որ դիմատետրը շատ յեղեղուկ կամ անլուրջ տարածք է, նման գրութիւններու համար:

Ընդունինք թէ ոչ, այսօր դիմատետրն է եւ ընկերային այլ ցանցերը, որոնք վերցուցած են օրաթերթերուն դերը, անլուրջ թէ ոչ: Մեզի կը մնայ լաւագոյնս եւ առաւելագոյնս օգտուիլ անոնց տուած առիթներէն:

Օրինակ Սանճեանի վերջին՝ 2 Յունիս 2024-ի «Հոգեւորականներ եւ Զարոգչական Բեւեռացում» գրութիւնը կ'ըսէ.

«Այն օրուրնէ ի վեր՝ շուրջ մէկ ամիս առաջ, երբ Գերշ. Բագրատ արք. Գալստանեան որոշեց ոտքով-գլխով ընդգրկուիլ Հայաստանի քաղաքական բեւեռացած յորձանուտին մէջ ու համաձայնեցաւ պաշտօնապէս գլխաւորել վարչապետ Նիկոլ Փաշինեանը իշխանագրկելու միտով շարժման հերթական փուլը, զանգուածային լրատուամիջոցներով ու սոցիալական ցանցերով սկսան քարոզուիլ երկու հակոտնեայ Բագրատ սրբազանները. մէկը՝ հրեշտականման, միւսը՝ խտացած գոյներով բացասական ու վտանգաւոր:

Պարզ է, որ այս երկու իրարամերժ տարբերակները սփռողներէն շա՛տ քիչերն են, որ սրբազանը մօտիկէն լաւ ճանչնալու պատեհութիւնը ունեցած են, եւ իւրաքանչիւրին քարոզած Բագրատ արքեպիսկոպոսը աւելի շատ իր յոյսերուն կամ մտահոգութիւններուն արտացոլանքն է»:

Միտք բանին՝ Ա. Բագրատ սրբ. Գալստանեանին մասին եղած թեր ու դէմ կարծիքները նորութիւն չեն մեզի համար, Բ. Հայ եկեղեցին անկարող է պահպանել ակնածանքը եւ պաշտպանել բարձրաստիճան հոգեւորականները քննադատութեւն:

Որմէ կրնանք հասկնալ, թէ պէտք է մի՛շտ իրապաշտօրէն դատենք երեւոյթները եւ չկորսնցնենք մեր էական սկզբունքները:

Որպէս եզրակացութիւն ըսեմ՝ լաւ կ'ըլլայ որ այս անունները պահենք, մանաւանդ՝ ճի՛շդ ընտրենք ուղիները, որպէսզի մեր ամենօրեայ «պարտադիր» դեգերումները դիմատետրի այգիներուն մէջ հաճելիին հետ նաեւ օգտաշատ ըլլան:



**ԹՈՒՂԹԵՐՈՒՄ
ԿԱՐԵԻՈՐՈՒԹԻՒՆԸ**

Աստուած իմ, որքա՞ն անցեր է ահաւոր երկրաշարժներէն, բայց մենք ահա կը վերադառնանք, կամ կը փորձենք վերադառնալ մեր առօրեային: Կեանքը սակայն, բոլոր պարագաներուն ալ, կը շարունակուի: Ուրեմն մենք եւս, հաւաքելով մեր ոյժերը որքան որ կրնանք, կը շարունակենք:

* * *

Քանի մը շաբաթ առաջ գաղութին երեց տիկիներէն մէկը պատմեց, որ ունեցած բոլոր լուսանկարները պատռեր է եւ ձերբագատեր անոնցմէ:

Շրջան մը առաջ մայրս ալ նոյն «աշխատանք»-ին ձեռնարկեր էր. հազիւ կրցեր էի մեր տոհմին նկարները փրկել այդ «աշխատանք»-էն:

Աւելի երիտասարդ օրիորդ մը կ'ըսէր թէ կարդացած է այն գաղափարը, որ եգիպտահայոց մէջ իրապէս մեծ է թիւը լուսանկարիչ-ներուն. ինչո՞ւ հարցումին կը պատասխանէր՝ երկու պատճառներով՝ նախ շատ դիւրին է գաղթել, աշխատանքը՝ լուսանկարի մեքենան հետը տանիլ այլ երկիր մը, եւ հոն նոր աշխատանքի ձեռնարկել, եւ երկրորդ՝ լուսանկարելը ամենէն ապահով, արագ եւ հաղորդական միջոցն է կեանքը վաւերագրելու, մենք որ եղեռնէն ետք մեր անցեալի կեանքը վաւերագրող ոչինչ կրցանք բերել մեզի հետ: Այս առիթով կ'արժէ նշել, որ շատ լաւ ձեռնարկ է «Յուշամատեան» կայքէջը (<https://www.houshamadyan.org/>), ուր կը հաւաքուին մեր անցեալի փաստաթուղթերն ու լուսանկարները:

Այս երկուքին միջեւ եթէ բաղդատութիւն մը ընենք, կը նշանակե՞ր ուրեմն որ այսօրուան կեանքը հոս, Եգիպտոսի, կամ արեւմտեան այլ երկրի մը մէջ ապահով է (փառք Տիրոջ), հետեւաբար պետք չունինք լուսանկարներով հաստատելու մեր ապրածը, հետեւաբար կրնանք ձերբագատիլ անոնցմէ, մանաւանդ որ մեր նոր սերունդները լաւագոյն եւ կենդանի վաւերագրումն են մեր պատմութեան:

Ասիկա տեսակետ մըն է անշուշտ:

Այլ գաղութ մը այլ տիկին մը՝ Քարմա Էքմէքճի կը գրէր, համացանցի իր էջին բաւական հին փաստաթուղթ մը տեղադրած.

«Ասիկա ներքող մըն է, գրուած մեծ մեծ հօրս համար, գոր մայրս՝ հնաբան մը, գտած է հին թուղթերու մէջ: Կը հրաւիրեմ բոլոր անոնց, որոնք արաբերէն կրնան կարդալ, կարդալու այս գիրը: Կը հաւատամ, որ մեր նախնիքը մեր էութիւնը կը բնորոշեն. բնաւ պետք չէ մոռնանք թէ ուրկէ՛ կու գանք: Ես հպարտ եմ իրաքեան, սուրիական, լիբանանեան արմատներովս, հայկական ժառանգութեամբս եւ ընտանիքիս հանրային ծառայութեան ոգիով»:

«Մեծ մեծ հայրս՝ Տիրոջ Էքմէքճեան, MBE (Member of the Order

of the British Empire), Պէրուի Ամերիկեան Համալսարանէն 1901-ի շրջանաւարտ է, մետալակիր Բրիտանական Կայսրութեան, ծառայած է Իրաքի եւ շրջանին մէջ»:

«Գուրգուրացէ՛ք ձեր ունեցած նամակներուն, թուղթերուն, լուսանկարներուն եւ փաստաթուղթերուն վրայ: Կը յուսամ, որ օր մը մեր զաւակները եւս պիտի գնահատեն մեր փաստաթուղթերը եւ գուրգուրան անոնց վրայ»:

Եթէ չըլլար այս փաստաթուղթը, այդ երիտասարդ տիկինը պիտի չիմանար իր մեծ մեծ հօր նուաճումները, որոնք ոչ միայն հպարտութիւն կը ներշնչեն իրեն, այլ նաեւ կը մղեն, որ ինք եւս ապրի ծառայութեան եւ կատարելութեան հասնելու նոյն ոգիով:

Հետաքրքրականը սակայն այս մէկ-երկու միջադէպերուն միաժամանակ ըլլալն է. մէկ կողմէ երեցները իրենց ունեցածը կը փճացնեն, միւս կողմէ երիտասարդներ կը պեղեն իրենց արմատները եւ կը գուրգուրան ամենէն փոքր թուղթի կտորին վրայ իսկ: Ինչպէ՞ս բացատրել ասիկա:

Սակայն յստակ է, որ լուսանկարները, փաստաթուղթերն ու նամակները, որքան ալ անհատական-ընտանեկան ըլլան, միաժամանակ մաս կը կազմեն միջավայրին, մաս կը կազմեն գաղութներու պատմութեան եւ կը հաստատեն մեր ընտանիքներուն հինէն եկող սերունդներուն շարունակականութիւնը, թէեւ սփիւռքահայերուս ջախջախիչ մեծամասնութեան պապերը Յեղասպանութենէն ճողոպրած մարդիկ են:

Արեւմտեան աշխարհին մէջ այնքա՛ն կարեւորութիւն կը տրուի ընտանեկան ծառին, որ յատուկ գործակալութիւններ կան, որոնք տրուած փոքր տուեալներուն վրայ կը փորձեն բաւական ետ երթալ ընտանիքի մը պատմութեան մէջ եւ հասնիլ արմատներուն, այս աշխատանքին համար բաւական մեծ գումարներ գանձելով:

Իսկ Էլլիս կղզիի թանգարանին մէջ (ԱՄՆ, Նիւ Եորք) յատուկ բաժին մը կայ, արխիւ մը, որ նուիրուած է Ամերիկա գաղթած մարդոց տուեալներուն, որոնց կարելի է հասնիլ համացանցային էջը երթալով:

Որովհետեւ երկու թէ աւելի դար առաջ Ամերիկա մտնելու համար արտօնութիւն կամ վիզա առնելու պէտք չկար. կը բաւեր նաւ մը ճարել, երկու ամիս ճամբորդել, հասնիլ Ամերիկայի «դուռը», հերթի կանգնիլ, անունը արձանագրել եւ... «դրախտավայր» մտնել:

Պատահական անուն մը կը գրեմ կայքէջի պաստառին վրայ՝ ճոն Պալաքեան եւ քանի մը երկվայրկեան ետք կը գտնեմ

հետեւեալը.

Անուն հասնելու թուական նաու անուն վերջին բնակավայր ճոն Պալաքեան 1955 Queen Of Bermuda Թուրքիա Մենք, եթէ ուզենք իսկ, պիտի ունենա՞նք տեղ մը, ուր կարենանք փնտռել մեր պապերուն մանրամասնութիւնները: Ուրեմն աւելի լաւ չէ՞ այսօր պահել ի՞նչ որ ունինք, քան վաղը փնտռել բան մը, որ կրնայ վերջնականապէս կորսուած ըլլալ:

Մեր գաղութներուն նոր շրջանի պատմութիւնը, այսինքն 1920-էն ետքի պատմութիւնը չէ գրուած, չի գրուիր, բացի անհատական քանի մը փորձերէ, որոնք ընդհանրապէս կը բւեւեռուին միութեանական կամ կուսակցական դէպքերու վրայ:

Իսկ ընտանիքներու պատմութիւններուն ընդհանրապէս շատեր չեն անդրադառնար:


Ժամանակին գեղեցիկ սովորութիւն մը ունէինք՝ իւրաքանչիւր հարսի օժիտին մէջ, ամէնէն աչքառու տեղը դնել Աստուածաշունչ մը: Աւելի լաւը սակայն այն էր, որ ընտանեկան Աստուածաշունչը կը փոխանցուէր անդրանիկ արու գաւակին: Ասիկա կարելոր էր, որովհետեւ այդ Գիրքերուն մէջ, Յին եւ Նոր Կտակարաններուն միջեւ գտնուող քանի մը պարապ էջերուն վրայ կ'արձանագրուէր տոհմին պատմութիւնը՝ ծնողներուն անուններն ու ծննդեան թուականները, պսակուողներուն անուններն ու պսակի թուականները եւ մեռնողներուն անուններն ու մահուան թուականները: Ընտանեկան տոհմածառը պահելու պարզ եւ գեղեցիկ սովորութիւն: Նոյնիսկ հայատառ թրքերէն աստուածաշունչերուն մէջ կը գտնենք նման արձանագրութիւններ, հայատառ գրի առնուած:

Այսօր վստահ չեմ, թէ այս սովորութիւնը տակաւին կը շարունակուի:

Թէեւ երիտասարդներուն համար խորթ է «պահելու» գաղափարը, որովհետեւ «ամէն բան, նոյնիսկ անձդ ինք կարելի է թուայնացնել», բայց եթէ չունենանք ատաղձը, այլ խօսքով՝ պահած չըլլանք մեր լուսանկարներն ու փաստաթուղթերը, ի՞նչը պիտի թուայնացնենք. ի վերջոյ ի՞նչ որ թուայնացուած կը գտնենք համացանցին վրայ, օր մը մէկը հոն տեղադրած պետք է ըլլայ:

Բոլորս ալ կ'աշխատինք այնպէս, որ մեզմէ վերջ գոնէ բարի անուն մը մնայ: Լուսանկարները, թուղթերն ու փաստաթուղթերը այդ բարի անունին կամ մեր կեանքի վաստակին ապացոյցներն են: Կ'ուզէք՝ թուայնացուցէք, շատ աւելի լաւ, բայց որեւէ ձեւով պահեցէ՛ք եւ գուրգուրացէ՛ք անոնց վրայ:

ԻՆՉ ԿՐՆԱՆՔ ԸՆԵԼ



Վերջին ամիսներուն, մանաւանդ Արցախի պարպումէն եւ պաղեստինեան պատերազմի սկսելէն ետք, շատ տարբեր երկիրներէ եւ տարբեր ազգութեան պատկանող ժողովուրդներէ յաճախ կը լսենք այս խօսքը՝ «*ես մէկ հոգի եմ, միևնա՛յս ի՞նչ կրնամ ընել աշխարհի այս իրարանցումին մէջ*», որ խորքին մէջ դասալքութեան թունդ արտայայտութիւն է:

Այնքա՛ն բան կայ ընելիք. օրինակ չե՛ն պաղեստինցիները, որոնք իրենց պայքարին սկիզբէն, երբ տեսան թէ աշխարհի նոր համակարգը լրատուական ծանուցումներով կ'ընթանայ, կրցան ծանուցողական այնպիսի ցանց մը ստեղծել իրենց դատին համար, որ այսօր աշխարհը ոտքի կանգնէր է գիրենք, իրենց հողը եւ այդ հողին վրայ արժանապատիւ կերպով ապրելու իրենց իրաւունքը պաշտպանելու:

Շատ բան կայ ընելիք մեզի համար. մենք, մեր փոքր թիւով (թէկուզ Սփիւռքը եւս հաշուելով՝ տասը միլիոն, իրենց քանի՞ միլիոնին դէմ, դո՛ւք հաշուեցէք) եւ մանր համարուող քայլերով, կրնա՛նք շատ բան ընել:

Առաջինը, որուն մասին պէտք է մտածենք, համացանցն է, իր շատ մեծ հասողութեամբ եւ ազդելու մեծ ուժով:

Ա. «Կուկըլ»-ի վրայ մեր վայրերուն անունները ամէն օր կը փոխուին թշնամի կայքերու կողմէ. նոյնիսկ Երեւանի սրտին վրայ գտնուող կառոյցները որպէս ազերիական վայրեր կը ներկայացուին: Հետեւող, պատկան կողմերը զգուշացնող եւ իրազեկող բանակի մը պէտք ունինք, որովհետեւ իրենք մեծ թիւով, մեծ լրջութեամբ եւ ջանասիրութեամբ ձեռնարկեր են այս աշխատանքին: Այս մասին գրած է հայաստանաբնակ սփիւռքահայ երիտասարդ մը՝ Ա. Գ. Երամեան.

«Այս անգամ Աբովեան 17 հասցէին անունին հարցն է, ինչպէս կը տեսնէք լուսանկարին մէջ. ամէն մարդ պէ՛տք է մտածէ թէ ի՞նչ կրնայ ընել. մէկը պէտք է կապ հաստատէ Google-ի մէջ հայ աշխատողներու հետ եւ Երեւանի ու այլ մարզերու անունները փոխելու կարելիութիւնը փակէ այդ տարածքին մէջ: Եթէ չհամագործակցինք Google-ի հետ, կը կորսնցնենք Google Զարտէզներու ճակատամարտը: Կը խնդրեմ որ տարածէք եւ այս աշխատանքը դարձնէք առցանց պատերազմի առաջնահերթութիւնը»:

Բ. Թրքական ապրանքը նոյնիսկ մեր վրայ «կը քալեցնեն», եւ մենք, տեղեակ չըլլալով, որպէս հայկական կը գնենք եւ կը տարածենք:

Ասոր որպէս օրինակ Աննա Մկրտչեանի Էջէն Գոհար Ասատրեանի գրութիւնը ձեր ուշադրութեան կը յանձնեմ, որովհետեւ իրապէ՛ս մեծամասնութիւնը տեղեակ չէ կատարուածէն.

«ԲԱՅԱՌԷՔ ԱՅՍ ԿՏՈՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՁԵՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ:

ԻՆՉՈ՞՞

Որովհետեւ

1. Այս կտորները արտադրուում են Թուրքիայում՝ Հայաստանի

մշակոյթին հետ որելէ կապ չունեն:

2. Իրենց մէջ չեն ներառում կամ մասամբ են ներառում հայկական որելէ նախշ (մասամբ ներառում են, որովհետեւ մի ձեւ պիտի արդարացուի իրենց գոյութիւնը մեր շուկայում):

3. Սա պատկանում է թշնամու կողմից կիրառուող «փափուկ» գէնքի դասին, ինչպէս նրանց կողմից նկարահանուող տարատեսակ հայկականը աղաւաղած ֆիլմերը:

4. Այս անճաշակութիւնը մի՛ անուանէք տարագի կտոր (տարագ նշանակում է որելէ տարածաշրջանը խորհրդանշող հագուստ, իսկ սա ո՛չ տարածաշրջան է խորհրդանշում, ոչ էլ դրանով կարելի է հագուստ կարել):

5. Աղաւաղուած տեղեկութիւն պարունակող անճաշակութեամբ հենց փոքրուց երեխաների աչքը մի՛ սովորեցրէք այս լաթի գոյութեանը իրենց առօրեայում:

6. Այս կտորները թշնամին օգտագործում է իր միջոցառումների ժամանակ՝ իբրեւ ազգային տարր պարունակող կտոր ու եթէ այդ միջոցառման ժամանակ որելէ հայ մօտենայ ու հարցնի՝ ինչո՞ւ էք մեր տարագի կտորը փռել ձեր սեղանին, կը ստանայ հետեւեալ պատասխանը՝ Սա արտադրում ենք մենք մեր ազգային նախշերով: Կը կարողանա՞ք ապացուցել, որ դա մերն է, ո՛չ, որովհետեւ նախ արտադրող երկիրը Թուրքիան է, երկրորդ՝ այդ կտորի մէջ մեր մշակոյթից ոչինչ կայ:

7. Պարտադիր ականջալուր եղէ՞ք մասնագէտների կարծիքին»:

Գ. Մեր երաժշտութիւնը ազատօրէն կ'օգտագործուի թէ՛ թուրքերու, թէ՛ ազերիներու կողմէ. ո՞վ տեր պիտի կանգնի անոր եւ ո՞վ պիտի զգուշացնէ հանրային կարծիքը:

Դ. Ուշադրութիւն դարձնել թէ ի՞նչ կը ցուցադրուի թանգարաններու մէջ, եւ կարելիութեան պարագային այդ ցուցադրութիւնները տանիլ միջազգային թանգարաններ: Օրինակ. 30 Հոկտեմբերին Մոսկուայի Պուշկինի անուան թանգարանին մէջ տեղի ունեցած է շատ կարեւոր ցուցադրութիւն մը, որ կը կրէ «Ուրարտուի Թագաւորութիւնը. Հին Հայաստանի Ժառանգութիւնը. Ուրաշտու-Հարմինուա- Արմինա» խորագիրը եւ ուր ցուցադրուած են այնպիսի կարեւոր նմոյշներ, ինչպէս Երեւան քաղաքի ծննդեան վկայականը հանդիսացող Սարգուրի Բ. արքայի սեպագիր արձանագրութիւնը:

Երեբունի թանգարանի տնօրէն Միքայէլ Պատալեան բացման նախորդող մամլոյ ասուլիսին ընթացքին ըսած է.

«Այս ցուցադրութիւնը կը ցոյացնէ Հայաստանի նախա- ուրարտական, ուրարտական եւ յետուրարտական շրջաններու ժառանգութիւնը»:

Բացման յաջորդ օրը՝ 31 Հոկտեմբերին Պատալեան ելոյթ ունեցել է դասախօսութեամբ մը՝ «Ուրարտուի Պետական Կրօնը» խորագիրով:

Այս ցուցադրությունը բաց է մինչև 28 Յունուար 2024:

Հարց պիտի տաք, թե ի՞նչ կրկանք ընել. կրկանք այս մասին եղած թղթակցությունը թարգմանել՝ անգլերենի, ֆրանսերենի, արաբերենի եւ քանի մը այլ լեզուներու (թղթակցությունը երկար եւ բարդ է) եւ զայն ղնել մեր դիմատետրեան էջերուն, որպէսզի մեզմէ իւրաքանչիւրին բարեկամները եւս կարդան: Ի վերջոյ նման գրութիւններով չէ՞ նաեւ որ միջազգային կարծիք կը ձեւաւորուի:

Ե. Մեր ծնողներուն, մեծ ծնողներուն եւ պապերուն լուսանկարները հաւաքել, տուեալները արձանագրել, դիմատետրի էջին ղնել եւ յետոյ դրկել «Յուշամատեան» կայքէջին, պահ տալու համար, նկատի առնելով որ գրեթէ մեր բոլորին նախահայրերը Արեւմտահայաստանէն կու գան, միջոց մը եւս հաստատելու մեր ծննդավայրերուն պատկանելիութիւնը:

2. Արցախի պարպումին տխուր առիթով կարգ մը նամակներ յղուեցան միջազգային որոշ կառոյցներ. այդ նամակները գտնել, եւ զանոնք կրկին-կրկին հրատարակել կայքէջերու մէջ:

Է. Մեր թշնամիներէն – մանաւանդ ազերիներէն – կարելոր թիւ մը որպէս հայ ելոյթ կ'ունենայ, որովհետեւ լաւ հայերէն գիտէ. անոնք տարբեր միջոցներ կ'օգտագործեն երբեմն մեր գրառումները ջնջելու, երբեմն վատ բաներ գրելու հայերու էջերուն, երբեմն ժխտականօրէն արտայայտուելու Արցախի մասին եւ կրկնելու ինչ որ իրենց նախագահը առիթ չի փախցներ կրկնելու: Հետեւաբար հետեւիլ նման գրառումներու եւ պէտք եղածը ձեռնարկել:

Ը. Միջազգային հրապարակին վրայ կան տարբեր մասնագիտութիւններու տեր բազմաթիւ հայեր, որոնց կարելի է լծել ծանուցողական կառքին, Արցախի վերջին պարպումին վաւերական պատկերը կարենալ տալու եւ համոզելու աշխարհին, որ այ՞դ է ճշմարտութիւնը, եւ ոչ՝ ազերիական սուտերով յագեցած իրենց լսածն ու տեսածը:

Կը յիշէք, չէ՞, թե ի՞նչ մեծ արշաւ կազմակերպած էր Զիմ Զարտաշեան Եղեռնի հարիւրամեակին, մինակը, մինչեւ ծայր օգտագործելով իր բոլոր լծակները:


Այս բոլորը հակակշռել պէտք է:

Բայց նախ պէտք է ծանօթ ըլլանք իրերու եւութեան, ծանօթ ըլլանք մեր համաշխարհային դէմքերուն, գիտնանք անոնց հասնելու եւ զիրենք համոզելու միջոցները, ապա կազմակերպուիք, միակամ ըլլանք եւ գիտնանք թե ե՞րբ ի՞նչ պէտք է ընենք:

Կրկանք համաձայն ըլլալ կամ ոչ, բայց եթէ այս ցանկէն իւրաքանչիւրս երկու կէտ իրագործէ, թերեւս դրական արդիւնքներու հասնիք:

Լաւ է ուշ, քան՝ երբեք...:

ԼԵԶՈՒՆ ԵՒ ԱՅԼ ՆԱՐՑԵՐ



Ամեն անգամ որ առիթը կը ներկայանայ, այս հարցումը կու տամ մտաւորականներու՝ բարեկամներ ըլլան անոնք, կամ այցելու դասախօսներ, որոնց մեծամասնութիւնը սակայն կարծես տակաւին մտածած իսկ չէ անոր մասին. թերեւս անոնք կարիքը չեն զգացած մտածելու, կամ անհրաժեշտ չէ իրենց համար ասիկա:

Բոլորն ալ սակայն հարցումը հետաքրքրական կը գտնեն (թէեւ ավելի շատ եւութեանական հարցում է, քան՝ հետաքրքրական) եւ կը փորձեն պատասխանել անոր:

Ի՞նչ է հարցումը:

Եթէ Սփիւռքի նոր սերունդը վերջնականապէս կորսնցնէ լեզուն՝ հայերէնը, ինչո՞վ պիտի արտայայտէ իր ինքնութիւնը, իր «հայ»-ութիւնը, ի՞նչն է որ պիտի արտայայտէ իր ինքնութիւնը:

Առաջինը՝ հիւր դասախօս մը, երկար մտածելէ ետք ըսաւ, թէ role model-ներու մէջ պէտք է փնտռել ատիկա եւ որպէս օրինակ տուաւ Զիմ Զարտաշեանի անունը:

Կ'ընդունինք որ Զ.Զ.-ը այսօր ծանուցողական լաւ միջոցներէն մէկն է մեզի համար, սակայն կրնա՞յ որպէս տիպար ծառայել: Մտածելու նիւթ է:

Երկրորդը, որուն տուի հարցումը, այսպիսի պատասխաններ տուաւ.

«Մեր ներկայ իրականութեան մէջ լաւ հայ երեւալու եւ ոչ՝ ըլլալու մարմաջը կայ: Ի վերջոյ սփիւռքահայը կ'ուզէ լեզուին տեր կանգնիլ եւ պատրաստ է անոր»:

«Գոյութեան քաշկռտուք, եւ կտակ՝ Հայաստան թաղուելու»:

Եւ որպէս լուծում առաջարկեց.

«Լեզուն չարաչար գործածել, խօսիլ եւ գրել ներկայի եւ ապագայի մասին հայերէնով, անցեալը յիշել, բայց ոչ ծամծմել, ավելցնել ուսուցիչներու թիւը եւ յատկացուած գումարները, խօսիլ ու գրել թէ հայը ինչպէ՛ս ապրեցաւ եւ ոչ թէ միայն ինչպէս ջարդուեցաւ»:

«Արեւմտահայերէնը պէ՛տք է պահպանուի. պէտք չունիմ ո՛չ պետական որոշումի, ոչ ալ կաթողիկոսի կոնդակին: Տէր կանգնիլը մէ՛ր ճիտին պարտքն է»:

Բայց երբ հարցուցի՝ «Ինչպէ՞ս», պատասխան չտուաւ:

Հասկնալի է, որ այս մտաւորականին համար ալ նիւթը ամբողջովին նոր էր եւ տուեալ պահուն էր միայն որ սկսած էր մտածել անոր մասին: Ըսեմ նաեւ, որ իր լրագրական աշխատանքը օտար լեզուով տանող անհատ մըն է:

Երրորդ մտաւորականը, որ հակառակ իր աշխա-

տանքին, կը շարունակէ հայերէն մտածել եւ արեւմտահայերէն գրել (երկու գիրքի հեղինակ), որուն ամերիկեան մտածողութիւնը կ'օգնէ իրեն հարցին ուղղակիօրէն անդրադառնալու եւ կարելի պատասխան մը տալու, առանց անոր շուրջ դառնալու, հետեւեալը ըսաւ.

«Լեզուն... այո՛... արեւմտահայերէնին վիճակը լաւ չէ, թէւ հիմա իմ գաւակներս կը զգան դրականութիւնը ժամանակին հայերէն սորված ըլլալու – ե՛ս է որ ամէն օր կը դասաւանդէի գրելն ու կարդալը եւ իրենք մի՛շտ կը դժգոհէին– թէւ շատ կարեւոր է լեզուն, բայց... ի՞նչ կը մնայ լեզուն վերջ... Յեղասպանութիւնը... երբ ամէն Ապրիլ 24-ի բոլոր հայերը անխտիր փողոց կ'իջնեն. Յեղասպանութիւնը», կրկնեց արդէն հաստատօրէն:

Մեր ուրախութիւնը մեծ էր, երբ ԱՄՆ-ի Ներկայացուցիչներու Տան կողմէ Զայոց Յեղասպանութիւնը ընդունելու որոշումը յայտարարուեցաւ (405 թեր եւ 11 դէմ): Զակառակ մեր ընդհանուր գինովութեան, կարգ մը սթափ մտաւորականներ կը գիտակցին եւ կը նշեն, թէ մեր դատը տակաւին շատ երկար ճամբայ ունի կտրելիք:

«Ճամբայ ելլողը կը հասնի» կ'ըսէ ժողովուրդը: Ո՞ր պիտի մնայ մեր ինքնութիւնը, երբ երջանիկ օր մը ազգով-տակով հասնինք: Եւ՝ ո՞ր պիտի հասնինք արդեօք, գիտե՞նք, մտածե՞ր ենք, բայց մանաւանդ ծրագիր ունի՞նք:

Այսօր մեր երիտասարդները՝ անոնք, որոնք օտար համալսարաններ կ'երթան, մանաւանդ անոնք, որոնք կուսակցական չեն, որեւէ կուսակցութեան չեն պատկանիր եւ որոնց մտածողութիւնը սահմանափակ չէ, անկեղծօրէն՝ ձանձրացեր են մեր սուգի պատմութիւններէն, եւ կը նեղանան մեր՝ *«Մենք տարբեր ենք, մենք մեծ ենք»* եւ այլ նման խօսքերէ, որովհետեւ կը տեսնեն մեր այսօրուան վիճակը, ըլլայ Զայաստանի, ըլլայ Սփիւռքի մէջ. մանաւանդ Զայաստանի մէջ, ուր պետութեան գործունեութիւնը ո՛չ մէկ ձեւով կը համապատասխանէ մեր պատկերացումներուն, կարծես կ'աշխատի հակառակ մեր ոգիին:

–Ա՞յս է ձեր ըսած մեծ հայը...– կ'ըսեն մեր երիտասարդները եւ անդին կը նային:

Երբ անդին կը նային, օտարին հետ ամուսնութիւնը շատ դիւրին կ'ըլլայ, որուն հետեւանքով եկող սերունդները կը սկսին կամաց-կամաց լուծուիլ:

Այսօր Արտեմ Փաթափութեանէն ետք, արդէն ունինք երկրորդ նոպելեան դափնեկիր մը՝ Տարօն Աճեմօղլուն:

Փաթափութեանին հայրը գրագետ է՝ Սարգիս Վահագն, իսկ

Աճեմօղլուին մայրը՝ բանաստեղծուհի Իրմա Աճեմեան: Կը նշանակէ՞ թէ այսօր բոլոր գրագետ-գրագիտուհիներն ու բանաստեղծ-բանաստեղծուհիները յոյս կրնան ունենալ, թէ օր մը իրենց զաւակը եւս...

Գրագետ-գրագիտուհիներուն եւ բանաստեղծ-բանաստեղծուհիներուն համար վստահ եմ որ այս չէ հարցը, այլ այն՝ թէ հայութիւնը այս երկու դափնեկիրներուն կեանքին վրայ ի՞նչ ազդեցութիւն ունեցած է եւ կրնայ տակաւին ունենալ:


Փաթափութեան, հակառակ իր դժուար մականունին, որ անսովոր է նաեւ մեզի՝ հայերուս համար, չէ՛ փոխած իր մականունը, իսկ Աճեմօղլուն, հակառակ իր թրքացուած մականունին, կը շարունակէ որպէս հայ ճանչցուիլ:

Այս դափնեկիրները, իրարմէ մէկ տարի տարբերութեամբ, ամբողջովին նոր երեւոյթ են մեզի համար, մեր ազգին համար, որ ճանչցուեր է որպէս մշակութային, ստեղծագործ ժողովուրդ, վաղուց մոռցած ըլլալով իր դիւանագիտական կարողութիւնները, որոնք օր մը Տիգրան Մեծ հզօր արքան տուեր են մեր եւ համաշխարհային պատմութեան:

Կը նշանակէ՞ թէ որակական փոփոխութեան մը սկսած է ենթարկուիլ մեր ծինը, դէպի գիտութիւն, թէեւ ատիկա սկիզբէն իսկ կար, վկայ մեծ թիւը հայերուն, որոնց կը պարտի աշխարհը իր կարեւորագոյն գիւտերէն շատեր, ինչպէս MRI-ի գործիքը կամ գունաւոր հեռատեսիլը, թուելու համար երկուքը միայն: Սակայն զգալի է երիտասարդութեան հոսքը դէպի գիտութիւն:

Եւ ատիկա լաւ երեւոյթ է անկասկած: Կը մնայ ինքնութեան եութիւնը ճշդել, լեզուէն ետք:





ԽԱՊՈՒՆ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Խառն ամուսնությունները, արեւմտահայերէնի հարցերուն հետ կը մնան թեժ եւ էական հարցեր մեզի համար: Սիրտ մաշեցնող հարցեր, որոնք կը դառնան մեր գրեթէ բոլոր հանդիպումներուն առանցքը:

– Եթէ զաւակներդ ալ օտարներու հետ ամուսնանան...

Կրնայ ըլլալ. ոչ ոք պաշտպանուած է այս ախտին դէմ, որովհետեւ հակադէղը տակաւին չենք գտած:

Բայց այսքանը չէր գրուեր եթէ ականատես վկան եղած չըլլայի հայ երիտասարդի մը հայ ընտանիք կազմելու ճիգերուն:

Այդ հայ երիտասարդը, հակառակ լրիւ օտար շրջապատի մը մէջ ապրած ըլլալուն, ճիգ չէր խնայեր ծանօթանալու եւ կապուելու հայ աղջկայ մը հետ, ընտանիք կազմելու համար:

Բայց քանի մը հայ աղջիկներու հետ ունեցած փորձառութիւնը ցոյց տուաւ, որ հայ օրիորդը ընդհանրապէս մէկ ու միակողմանի դիտանկիւն ունի՝ թեկնածուին հարստութեան չափը, որուն հետեւանքով հայ երիտասարդը ինքզինքին իրաւունք կու տայ «ընտրելու շուկային լաւագոյնը»՝ գեղադէմ եւ գեղամարմին հայուհի մը:

Յետեւա՞նքը:

Ճիշդ գուշակեցիք՝ օտար ամուսնություններ, կամ՝ ամուսնալուծումներ:

Պարզ տրամաբանութեամբ՝ եթէ հայ օրիորդը չի գիտեր գնահատել էական արժանիքներ (որոնց մաս չի կազմեր գերհարստութիւնը), ուրեմն երիտասարդները կ'ուղղուին հոն, ուր կը գնահատուին իրենց արժանիքները: Գրեթէ նոյն պատճառներով է, որ հայ երիտասարդները կ'ուղղուին այլ դաւանանքներու, մանաւանդ անոնցմէ մէկուն, զոր խորքին մէջ աղանդաւորական կը համարենք մենք՝ մորմոսականութեան:

Ըսել չէ անշուշտ, որ բոլոր երիտասարդուհիները նոյն ախտէն կը տառապին, բայց, ինչպէս հայաստանցիք կ'ըսեն՝ «*լաւերը ջրի երես չեն*»: Այս երիտասարդուհիները, ի չգոյէ հայ երիտասարդներու, որոնք օտար ամուսնություններ կնքեր են, կը դատապարտուին կամ միակ ապրելու, կամ իրենք եւս օտար ամուսնություններ կը կնքեն:

Այս բոլորը տեսական կարծիքներ չեն, մտացածին հեքիաթներ չեն. իրապէ՛ս տեղի ունեցած դէպքեր են:

Մեզի համար դժբախտութիւն է այն, որ տարբեր դաւանանքներու եւ տարբեր ազգերու երիտասարդներ ճիգ չեն խնայեր հայ աղջիկներուն տիրանալու համար, մանաւանդ Սփիւռքի

մէջ, տարբեր պատճառներով.

Ա. Հայերը իրենց մէջ ձուլելու եւ անոց հարստութեան տիրելու համար, ինչպէս է պարագան Եգիպտոսի ղպտիներուն.

Բ. Հայ աղջիկները գեղանի են, տանտիկին են, ընտանիքին տեր կանգնող են, աշխատասեր են եւ այլն.

Գ. Արեւելքի պարագային՝ քրիստոնեայ աղջիկները իսլամացնելու համար:

Մեր թապուներէն մէկն է ասիկա, որուն մասին ընդհանրապէս կը զգուշանանք խօսելէ, կամ ալ պարզապէս ա՛լ յոյս չունինք, որ խօսելով կրնանք բան մը փոխել, հետեւաբար կը լռենք:

Բայց եթէ լուծումներ փնտռել կ'ուզենք – կրնանք նաեւ չգտնել – պէ՛տք է արծարծենք այս հարցը, որ հարց ըլլալէ շատ աւելի անդին է, դարձեր է ցաւ, սրտմաշուք եւ հոգին հիւժող ախտ:

«Արեւելք»-ի (Իսթանպուլ) մէջ լոյս տեսած Ալպեր Զէշիշի յօդուածը՝ «Մտորումներ Պոլսահայոց Խառն Ամուսնութիւններուն Մասին» ճիշդ այս հարցին կ'անդրադառնայ, բայց այնտեղ նկատի առնուած է միայն պոլսահայոց պարագան, որ կարգ մը կէտերու մէջ շատ նման է այլ գաղութներու պարագային, ինչպէս օրինակ գաղութներու աւանդական մթնոլորտն ու անոր հակադրուող «այլ»-ին «արդիականութիւնը»:

«Այլը» գլխաւոր, թերեւս միակ եւ բազմաճանկ խոչընդոտն է այս հարցին, որ ոչ միայն ուշացեր ենք արծարծելու, այլ մանաւանդ լուծելու: Այսօր չի՛ բաւեր խօսիլ այդ մասին: Այսօր արագ, հիմնաւոր, էական լուծումներ պէտք են:

Այս օրերուն, երբ Արցախը բռնկած է եւ անոր հրդեհով բռնկած է Սփիւռքը, թերեւս շատերու համար անհետեթ թուի այս հարցը բարձրացնելը:

Բայց մեր պայքարը նաե՛ւ թուի պայքար է. ճիշդ է որ շատ մեծ անուններ ունինք միջազգային երկնակամարին վրայ, մշակութային, արուեստի, գրականութեան եւ գիտութեան ոլորտներուն մէջ, բայց անունով ո՛չ հող կ'ազատագրուի, ո՛չ հող կը պահուի: Ճիշդ է նաեւ, որ միշտ փոքր եղեր է մեր թիւը, բայց միշտ եղեր ենք պայքարող ժողովուրդ: Եթէ դարերու ընթացքին կորսնցուցեր ենք մեր մարտունակութիւնը, այսօր իրաւունք չունինք թիւ կորսնցնելու:

Օտար ամուսնութիւն կը նշանակէ աւանդութիւններէ հեռացում, լեզուական նահանջ, իսկ այս երկուքը իրենք են, որոնք իրենց մէջ կը կրեն մեր՝ հայու «տեսակ»-ը: Չի՛ բաւեր լեզուի մասին գեղեցիկ յօդուածներ ստորագրել, պէտք է քաջաբար ընդունինք մեր

պարտութիւնը եւ յետոյ նոր թափով լծուինք մեր հարցերուն լուծումներ գտնելու աշխատանքին:

Այլէր Քէշիշի յօդուածը կարծես արդարացումներ կը փնտռէ, օտար ամուսնութիւններու պատճառները թուելով պատճառաբանութիւններ կը ներկայացնէ:

Ի՞նչ ընէ սակայն:

Իրապէ՛ս դժուար կը թուի, մանաւանդ ամուսնութիւններու պարագան: «Սէրը ազգութիւն չի ճանչնար»: Ի՞նչ լաւ պիտի ըլլար, եթէ սիրոյ բազմաթիւ հեքիաթներն ու պատմութիւնները «And they lived happily ever after» բառերով չվերջանային, այլ վարագոյրը կամացուկ մը վերցնէին ever after-ին վրայէն ու տեսնէինք թէ ինչե՛ր տեղի կ'ունենան իրական կեանքին մէջ:

Ի՞նչ ընել ուրեմն:

Պեղել: Պեղել երեւոյթը իր ամբողջութեամբ, մաքրել արդարացումներու հողը, պատճառները դիտել որպէս պատճառ եւ ոչ՝ պատճառաբանութիւն, եւ ամենէն կարելորդ՝ աշխատանքը սկսիլ սերունդին մանուկ տարիքէն:

Ամուսնութեան մասին խօսի՞լ մանուկ տարիքէն:

Սիրո՛յ մասին խօսիլ եւ զօրացնել (կամ սերմանել) մանուկին մտածելու կարողութիւնը:

Մտածելը պիտի հասնի գիտակցութեան. Մանուկը, պատանին, ի վերջոյ պիտի հասկնայ թէ ինչո՞ւ հայերէնի դասերը պէտք է լաւ սորվի, պէտք է գուրգուրայ իր հայութեան վրայ եւ ինչո՞ւ հայ կողակիցով ընտանիք պէտք է կազմէ:

«Այս բոլորը պարապ բաներ են...»:

Յաճախ մեր առօրեան ալ պարապ բաներէ կազմուած կ'ըլլայ՝ կողակիցին հետ հայերէնով վիճիլ, միասնաբար Վահէ Պերպերեան, Փիեր Շամմասեան կամ Գրիգոր Սաթամեան դիտել, նոյն անեկդոտը լսելով ծիծաղիլ, զաւակներուն հայկական անուններ տալ եւ հայկական հեքիաթներ պատմել, եթէ տակաւին հեքիաթ պատմող մայրեր եւ մեծ մայրեր կան:

Երբեմն կը մտածեմ՝ հարիւր տարի եւ անլի ապրեցանք, երբ, ըստ պայմաններուն, պէտք էր մեռնէինք. հարիւր տարի եւ անլի ապրեցանք, որովհետեւ մեզի տրուածն ու մեր ունեցածը գուրգուրացինք, փոխանցուած ջահը վառ պահեցինք: Հարիւր եւ անլի տարի ետք նոր հարիւրը կը սկսի ներկայէն. կրնայ չսկսիլ, որովհետեւ դպրոցներ կը փակուին, խառն ամուսնութիւններէ ծնած մանուկներ կը կորսնցնեն հայու տեսակին նոյնիսկ արտաքինը, գանկին ձեւէն մինչեւ մորթին գոյնը:

Ինչո՞ւ այս առօրեական հմայքը այլով: Առօրեական կ'ըսեմ, որովհետեւ առօրեայէն դուրս, երբ կը խօսինք ազգ-ոգի-հայութիւն նիւթերուն շուրջ, ընդհանրապէս մեր կեցուածքը լրիւ տարբեր է՝ հայ ենք 100%, կու տանք մեր ունեցածն ու ունեցածէն անելին, պատրաստ ենք զոհուիլ այս սուրբ եռեակին համար՝ հայ ոգի, հայութիւն, հայրենիք:

Ի՞նչ կը պատահի ուրեմն, երբ առօրեային դառնանք:

-Չայկական դպրոցներուն ծրագիրը շատ ծանր է, շատ խճողուած է, արդիական չէ, հայերէնի ուսուցչուհիները լաւ չեն...

-Ինչպէ՞ս ընտրութիւն ընեմ մէկ, երկու, շատ-շատ երեք թեկնածուներու միջեւ. հարիւր օտարին մէջէն շատ անելի դիւրին է ընտրութիւն կատարելը:

-Մեր մակարդակին համեմատ ուրկէ՞ թեկնածու գտնենք մեր աղջկան համար...

Ասոնցմէ մէկ քանին ընդունելի պատճառներ են, մնացեալը՝ պատճառաբանութիւն:

Բայց չեմ կրնար չյիշել Խաչատուր Աբովեան, Դանիէլ Վարուժան, Ռուբէն Սեւակ, Արամ Խաչատուրեան, Գառզու, Գուրգէն Մահարի, մինչեւ ժամանակակից հայեր, ինչպէս՝ Արմէն Չախնազարեան եւ շատ ու շատ անուններ:

Ինչո՞ւ այս անունները կողք կողքի կը դնենք, ի՞նչ է անոնց հասարակ յայտարարը:

Օտար կողակիցը:

Այս դէմքերը սակայն չափանիշ չեն, այլ՝ բացառութիւն:

Երեք կարեւոր կէտերով թերեւս կարելի ըլլայ լուծում մը գտնել.

1- Նոր սերունդին հետ աշխատելու խիստ ուսումնասիրուած ծրագիր ստեղծել:

2- Այլին հետ յարաբերելու ձեւ որդեգրել, չիյնալու համար երկու ծայրայեղութիւններէն մէկուն՝ ընկերային փակուածութեան կամ լրիւ այլի հմայքին յանձնուելուն վիհը:

3- Գիտակցութիւն արթնցնել:

Ասոնց կարելի է երկար եւ հանգամանալի ձեւով անդրադառնալ:

1-Նոր սերունդին հետ աշխատելու խիստ ուսումնասիրուած ծրագրի գոյութեան եւ յաջողութեան պարագային (կրնայ նաեւ ձախողութեան մատնուիլ), երկրորդ եւ երրորդ կէտերը կիսով լուծուած կրնան համարուիլ:

Այս եութեանական հարցին մասին կրնայինք խօսելու պետք չունենալ, եթէ խառն ամուսնութիւններու մեծ տոկոս մը չըլլար մեր գաղութներէն ներս, ինչ որ կը հաստատէ մեր շատ ուշացած ըլլալը

այս կարելոր ինդրին լուծումներ գտնելու համար:

Ընտանիք մը եթէ հայկական ամօրեայ եւ կենցաղ ունի, արդէն ինքնաբերաբար հայկական կենսաձեւով եւ մթնոլորտի մէջ կը դաստիարակէ իր զաւակները:

Այս ծրագրին մէջ, հայկականութեան կողքին այլ կէտերու ալ կարելի է անդրադառնալ, ինչպէս օրինակ կողակից մը ընտրելու սկզբունքներ, կեանքի երազներ, հարցում հարցնելու, մտածելու, մտիկ ընելու, իմանալու եւ նման ունակութիւններ:

Նման աշխատանք կը տարուի դպրոցէն դուրս ակումբներու, կամ կանոնաւոր հերթականութիւն ունեցող հաւաքներու ընթացքին, ինչպէս սկաուտական շարժում, կիրակնօրեայ դպրոց եւ այլն:

Հաւանաբար շատ դժուար ըլլայ այս բոլորը ջամբել այնպիսի սերունդի մը, որ մանկութենէն իսկ cyber խաղերով տարուած, ոչ միայն կեդրոնանալու հարց ունի, այլ նաեւ անփոյթ է եւ անտարբեր: Հակառակ դժուարութեան, ի հեճուկս դժուարութեան, պարտաւոր ենք արագօրէն լուծումներու հասնիլ, որովհետեւ խառն ամուսնութիւններու պատճառով է որ մեր ինքնութիւնը սկսած է ձեւափոխուիլ:

2-Այլին հետ յարաբերելու ձեւ

Չապրիլ հայրենի հողին վրայ, խեղդուիլ օտարութեան մէջ, լեզուէն մինչեւ հեռատեսիլ, իսկ գիշերները, երբ նստիլ հեռատեսիլին առջեւ ու յիշել – կամ չյիշել – որ հայ ես... դժուար բան է, շատ դժուար:

«Փարիզի տղաք»-ը առաջիններն էին, որ ապրեցան այս դժուարութիւնը դեռ 1930-ականներուն, գրեցին այդ մասին, բայց հոգեկան տառապանքը, յաճախ մարմնականի վերածուած, զգեստնեց զիրենք:

Այսօր թէեւ աւելի զօրաւոր եւ գիտակ արդիական բոլոր միջոցներուն, մեր ներքին գրահը հիմնական ճաքեր ունի, որովհետեւ չունեցանք այլին հետ յարաբերելու կայուն ուղի մը:

3-Գիտակցութիւն

«Կրկնութիւնը մայրն է ամէն գիտութեան»,

«Գիտութիւնը մայրն է ամէն իմացումի»,

«Գիտակցութիւնը մայրն է բոլոր դժուարութիւններու յաղթահարումին»:

Դժուար է, շատ դժուար, բայց՝ կարելի աշխատանք:



ԽԵՆԹՈՒԹԵԱՆ ԵԶՐԻՆ



–Գոնէ Շուշին չտային,– կ’ըսեմ ու կը կրկնեմ բարկութեամբ, ցաւով, անկարողութեան ճնշիչ համոզումով, բարկութենէս խենթանալով,– գոնէ Շուշին մնար մեզի...

Ասիկա եւ 1400 հայկական անձնագիր բաժնուած հայերէն գիտցող ազերիներուն. բաժնողն ալ անշուշտ որ հայ մը, զօրավար է, ինչ է չեմ գիտեր. սա մարդը գիշերը կրնա՞յ քնանալ. ա՛յս ալ չեմ գիտեր: Ա՛յս մէկը գոնէ սատկի:

Ինչպէ՞ս կը դիմանանք ազգովին, տունով-տեղով, չեմ գիտեր: Որքա՞ն բան չեմ գիտեր: Եւ կրկին ՆԷՆԷ Հայկանուշիս խօսքը.

«Էշ իկէնք էս աշխրորքը, քուռակ մընէրթինք...»

Թեւ լաւ գիտեմ, որ ՊԵՏԶ Է հաւատամ երկրիս ու ժողովուրդիս տոկունութեան:

Եթէ ես ըլլամ Փաշինեանի վիճակին մէջ, վստահ որ հոգեկան հաւասարակշռութիւնս կը կորսնցնեմ՝ մէկ կողմէ Փութինին սպառնալիք-պարտադրանքները, միւս կողմէ ժողովուրդին պահանջը, դեռ «դաւաճան» կոչուիլը... Ինչպէ՞ս կը դիմանայ, չեմ գիտեր:

«Նոր հարիւրամեակի սեմին մեր խորհրդանիշը պիտի ըլլայ արծիւը, մեր նախնիներու փառքին ընկերակից արծիւը, որ իր թւերուն վրայ կը կրէ անցեալի հզօրութիւնը եւ այսօր՝ մե՛ր խոստումը ապագայի մը համար, ուր պիտի կենանք որպէս նո՛ր հայեր՝ զօրաւոր, հպարտ եւ վրէժխնդիր:

Ա՛լ արցունք պիտի չունենանք:

Մեր յոյսը մեր բազուկին վրայ կը դնենք եւ կը հաւատանք որ մերն է ապագան, մենք, հայ պատանին ու երիտասարդը, ո՛ւր որ ալ ըլլանք»:

Չեմ կրնար կարդալ, չեմ կրնար լուրերը մտիկ ընել, չեմ կրնար զոհուածներուն պատկերները տեսնել, չեմ կրնար մանաւանդ անոնց մայրերուն աչքերուն նայիլ, չեմ կրնար անոնց գրածները կարդալ, որովհետեւ երբ կը գրէին, չէին գիտեր որ պիտի մեռնին, գիտէին որ կրնան մեռնիլ, բայց չէին հաւատար որ զոհ պիտի երթան այնքան անարգ մղումներու. չեմ կրնար անոնց նայուածքին առջեւ յանցաւոր չզգալ, չեմ կրնար ինքզինքս մահապատիժ արժանի չնկատել, չեմ կրնար մտածել վաղուան մասին, չեմ կրնար մտածել մատենադարանի մասին եւ հրդեհ չտեսնել, չեմ կրնար յիշել օփերային մէջ վայելած ելոյթներուս եւ չմտածել քանդումի մասին, չեմ կրնար բառերուն ստիպել որ գեղեցիկ չըլլան, չեմ կրնար անոնց ստիպել որ խօսին ճշմարտութիւնը, ամբողջ ճշմարտութիւնը եւ միայն ճշմարտութիւնը որ անխօսելի է, որ այնքան տգեղ է, մինչ բառերը կ’ուզեն տաք ըլլալ, չեմ կրնար ստիպել բառերուն որ արիւնի չափ տաք չըլլան, որ թշնամիին մտածումներուն պէս պաղ չըլլան, որ անոնց ծրագրերուն պէս դաժան չըլլան եւ անոնց կիրթ ու եւրոպականացած վարմունքին պէս կեղծ ու լկտի չըլլան...

Չեմ կրնար օրը սկսիլ սովորականին պես, բան չեղածի պես, չեմ կրնար առաջուան պես գործիս մեջ մոռնալ մանր-մունր հոգերը, չեմ կրնար մոռնալ չմտածելը, չեմ կրնար մոռնալ մտածելը, չեմ կրնար հասկնալ որ այս բոլորը անօգուտ են, որովհետեւ չեմ կրնար մոռնալ համոզումս անօգուտ ըլլալուն, չեմ կրնար մոռնալ անկարողութիւնս, չեմ կրնար մոռնալ անկարողութիւնս, չեմ կրնար մոռնալ մանաւանդ անկարողութիւնս որ ահա քանի՞ օր է, քանի՞ շաբաթ, քանի՞ ամիս կ'ուտէ զիս սոված եւ վայրենացած գազանի պես ու չի կշտանար:

Չեմ կրնար չլսել գերիներուն լռած ճիչը եւ անոնց մեջ իմս՝ ի՞նչ ընեմ, ի՞նչ կրնամ ընել, ի՞նչ պետք է ընեմ...

Եւ յետոյ, ամենէն յետոյ չեմ կրնար մոռնալ բառերուն դաւաճանութիւնը՝ բառով խաբեցին, բառով համաձայնեցան, բառով համոզեցին, բառով վատնեցին ամէն սրբութիւն... իսկ աշխարհը բառով կը միսիթարէ, իբր թէ բառով կը լուծէ, բառով տէր կը կանգնի...

Ես ինչպէ՞ս «կրնամ» ըսեմ:

Մնացեր է միայն «չեմ կրնար»-ը:

Եւ ասիկա մեծագոյնն է իմ, քու, մեր պարտութիւններուն:

Եթէ գիտակցութիւնը (consciousness) կրօնք չունի, հաւատք չունի, իտեալ չունի, սեռ չունի, ցեղ չունի, մորթի գոյն չունի, տարիք չունի, ազգ չունի,

Եւ եթէ մենք, որպէս մարդ, գիտակցութիւն ենք,

Ուրեմն թուրքը ի՞նչ է, անգիտակից խաժամո՞ւժ, անասուններէն մէկ ոտք բարձր հաւաքականութի՞ւն:

Ո՛չ. ծայրայեղօրէն գիտակցուած, ծրագրուած եւ իրագործուող միտք:

Գրեր էի՝ «Երբեւէ մտածե՞ր ենք, թէ թուրքը, իր ամենէն մեծէն միջեւ ամենէն փոքրը որքա՞ն հայրենասէր է, թէկուզ երբեմն կամ յաճախ ատիկա կ'ըլլայ ճնշումով եւ բռնութեամբ: Ի՞ր երկիրը մեծցնելու, հարստացնելու եւ զօրացնելու համար թուրքը միջոցներուն միջեւ խտրութիւն չի դնէր: Նոյնը կ'ընէ Ամերիկան, քիչ մը աւելի խորամանկութեամբ, քիչ մը աւելի աշխարհի աչքերուն փոշի ցանելով, քիչ մը աւելի այլ ազգեր ու երկիրներ իր հաշուոյն «աշխատցնելով»... Ի՞ր երկրի շահերուն համար»:

Եթէ մենք, որպէս հայ, գիտակցութիւնը ունենանք թուրքին կարողութեան եւ մոռնանք մեր սնապարծութիւնը, թերեւս կարենանք յոյս սնուցել օր մը տիրանալու մեր իրաւունքներուն:

Ա՛լ բաց աչքերով նայելու ենք հարցերուն եւ բաց միտքով քննարկելու ենք իրավիճակը, ապա թէ ոչ յոյս չկայ մեզմէ:

«Գերմանացիները նոյնիսկ բացայայտ օգնել են թուրքերին, հրահանգաւորել, պաշտպանել, նոյնիսկ խրախուսել: Տէ՛ր Աստուած, ես ամաչում եմ այդ ամենի համար: Ի հարկէ, գերմանացի

որոշ մտաւորականներ քննադատել են իշխանութիւններին, բայց նրանց ձայնը մարել է՝ ինչպէս արդար մտնը սանձակոտոր փոթորկից»:

«Գրիչն աւելի զօրեղ պիտի լինի, քան սուրը, սակայն տարեց-տարի աւելի քիչ եմ հաւատում այդ լաւ գաղափարին»:

Սալար Ապտո

Սպարտակ Ղարաբաղցեան բան մը գրեր էր ՖՊ-ին վրայ, ուր կ'ըսեր՝ «Լեռները թոյլերին չեն սիրում»: Իսկ ես կ'ըսեմ.

Այո՛, լեռները թոյլերուն չեն սիրեր.

Իսկ մենք, որ վաղուց

Շա՛տ վաղուց լեռները քաշուեցանք

Չի առիժասիրտ էինք

Եւ բնաւ թոյլ

Կը սիրէինք մեր ազատութիւնը այնքան

Որքան վանք կառուցելն ու ապրիլը

Հաշտ ու խաղաղ մեր լեռներուն մէջ

Մեր լեռներուն հետ

Յետոյ լեռներէն իջանք

Լեռները տուինք

Որո՞ւ սակայն

Մեզմէ աւելի՞ առիժասիրտ մարդոց

Որոնք տափաստանները ունէին որպէս հայրենիք

Որոնք ոտաբոպիկ եկան

Եւ այսօր աշխարհի քիթին բերնին

Քարոզներ կը կարդան

Լեռները լռեցին

Արցունքը դարձաւ ամպ ու մառախուղ

Արցունքը դարձաւ մեր կորսուած արիութիւնը

Դարձաւ նոր արհաւիրք:

Իսկ Հրաչեայ Բեգլարեան (1934-2009), դեռ աւելի քան տասնամեակ մը առաջ ըսած է, կարծես յայտնատեսութեամբ.

«Երէկ Ղարսդ, Անիդ, Վանդ,

Այսօր ահա Նախիջեւանդ,

Հերթը հասաւ Ղարաբաղիդ.

Թէ որ դա էլ ձեռքից առան,

Ո՞նց կը պահես Երեւանդ...

Քեզ եմ ասում, ի՛մ Ղարաբաղ,

Ուշանում է Աւարայրդ...»:

Ուշացեր ենք եւ կը շարունակենք ամբողջս միասին ուշանալ: Մինչեւ ե՞րբ:



**ԿԱՌՈՒՅՈՂ ԵՒ ՔԱՆԴՈՂ
ՑԵՂԵՐ**

Կամ՝ ստեղծող ազգեր եւ յափշտակող ցեղեր:

Յեղերն ալ կ'ունենան իրենց հաւաքական անհատականութիւնը, կամ խառնուածքը, կամ յատկութիւնները, մանաւանդ երբ իրենք զիրենք մշակած չեն եւ կը շարունակեն կենալ քաղաքակրթութեան ամենացած աստիճանին վրայ:

Անշուշտ պետք է միշտ ի մտի ունենալ, որ քաղաքակրթութիւնը միայն ու մանաւանդ արտաքինը չէ, որովհետեւ կան կարգ մը ցեղեր, որոնք վստահած իրենց արտաքին «քաղաքակրթութեան» (ճի՛շդ այդ ըսել ուզեցի՝ շեշտը կրթութեան վրայ դնելով), կ'ուզեն հաւատացնել աշխարհին, թէ իրենք եւս քաղաքակիրթ են այնքան, որքան ըսենք Ֆրանսան կամ Անգլիան:

Պահ մը շուրջերնիս դիտենք՝ ամէն կողմ քանդում է.

Սուրիան՝ ֆիզիքապէս քանդուած,

Լիբանանը՝ ֆիզիքապէս եւ տնտեսապէս քանդուած,

Արցախի մէջ իրականացեր է մեր ամէնէն ծանր մղձաւանջը,

Ասիկա մեզի՝ հայերուս համար:

Արաբական աշխարհին մէջ՝ Իրաքը, Սուրիան, Լիբանանը, Լիպիան զոհ են չեն գիտեր ինչ դաւադրութեան:

Եթէ մտածենք որ այս բոլորը քաղաքականութիւն են, պիտի տեսնենք թէ աշխարհի մնացեալ երկիրներն ալ քանդուած են, այս անգամ բնութեան աղէտներէն՝ Մաուրիի (Յաուայ) հրդեհներէն սկսեալ մինչեւ Մարոքի երկրաշարժը. աղէտներ, որոնց բնոյթը մեծ հարցադրումներ ստեղծած է այսօր մարդոց միտքերուն մէջ:

Քաղաքական տակնուվրայութեան եւ բնութեան աղէտներու այս զուգորդումը զուգադիպութի՞ն է:

Անդրադարձայ որ երբ մենք ամէն օր, ամէն ժամ ու պահ դիմատետրին վրայ կը գրենք, հաւատալով որ ա՛յս ալ պայքարի ձեւ մըն է, ու կը գրենք մանաւանդ հայերէն, իրենք, այդ քանդող ցեղերը, որոնք գոնէ հայերէն կարդալ չեն գիտեր, չեն իմանար գրուածը. իսկ երբ անգլերէն կը գրենք, անգլերէն գիտցող օտարները չե՛ն ուզեր կարդալ, չե՛ն հետաքրքրուած թէ ի՛նչ կը գրենք, ի՛նչ կ'ըսենք:

Հետեւաբար, ապարդիւն է այսքան ներուժ վատնել դիմատետրին մէջ հայերէն գրելով այսօրուան հարցերուն, մեր ազգին եութեանական վիճակին մասին:

Եթէ իրապէ՛ս ըսելիք ունինք, եթէ մեր ըսելիքը հիմնաւորուած է հանդարտ դատողութեան եւ կիրթ ներկայացումի վրայ,

անպայմանօրէն – կը յուսանք – տեղ կը հասնի, կը գտնէ միջազգային ընթերցող ա՛յն հասարակութիւնը, որուն ձայնը կրնայ բան մը փոխել կացութեան վիճակէն:

Հարկաւոր է թշնամիին հետ ի՛ր լեզուով խօսիլ՝ ուժով = զէնք + դրամ. կամ՝ դիւանագիտութեամբ, քաղաքականութիւն խաղալով. միայն այդ պարագային է որ թերեւս արդիւնքի մը հասնինք:

Օրինակ՝ Իսրայէլ տակաւին ուշքի չէկած իր կրած պաղեստինեան ծանր յարձակումներէն, այդ իրարանցումին մէջ մտածեց նաեւ Սուրիոյ՝ Դամասկոսի եւ Հալէպի օդակայանները կրկին ռմբակոծել եւ անգործածելի դարձնել, կ'երեւի վախնալով որ Սուրիան կրնայ օգնութեան հասնիլ Պաղեստինի պայքարին, մոռցած որ երկիրը տակաւին իր վերքերէն չէ բուժուած... Եթէ թոյլ տան, եթէ հանգիստ ձգեն երկիրը իր ժողովուրդին...

Բայց ուշադրութիւն դարձուցա՞ծ էք, թէ վերջերս դէպքերը ինչպիսի՛ հզօր արագութեամբ կ'ընթանան, կարծես չեն ուզեր աշխարհի մարդոց առիթ տալ, որ մտածեն անոնց մասին, հասկնան թէ «բանն ինչու՞մն է», նախապատրաստուին:

Մեր ամբողջ կեանքին ընթացքին կառուցող եղեր ենք, եղեր ենք գեղեցիկին սիրահար եւ վեհին՝ գործակից: Եւ կողոպտուեր ենք, ջարդուեր ենք, վտարուեր ենք մեր իսկ երկրէն, բայց...

Տարօրինակ ազգ ենք՝ ամէն անգամ վերընձիւղուեր ենք ու շարունակուեր ենք ոչ միայն ապրիլ, այլեւ փայլիլ հոն, ուր որ գացեր ենք ապրելու:

Տասնամեակ մը առաջ այս բոլորը հպարտութեամբ պիտի գրէի. այսօր ցաւով եւ քիչ մըն ալ ամօթով կը գրեմ:

Միջանկեալ պատմեմ, որ այն օրերուն, երբ Յակոբ Միքայէլեան Հալէպի մէջ Միջին Արեւելքի ներկայացուցիչն էր դեղագործական ICI անգլիական ընկերութեան, ատենը անգամ մը անգլիացի մասնագէտներ կը հիւրընկալէր: Այդ անգամուն ալ զուգադիպեր է, որ թատրոն պիտի երթար, եւ եկած հիւրը հետը տարեր է: Բեմադրութիւնը Թումանեանի երեք թէ չորս հեքիաթներն են եղեր: Ներկայացումը դիտելէ ետք հիւրը դարձեր է Միքայէլեանին.

– Ձեր հեքիաթներուն բոլո՞ր հերոսներն ալ անխելք են...

Պատկերացուցէ՛ք «Անխելք Մարդը» կամ «Կիկոսի Մահը»...

Եթէ անդրադառնանք, իրաւ է մարդուն դիտարկումը:

– Պարզապէս շատ բարի են, – ըսեր է Միքայէլեան:

Կարելի է բարի ըլլալ բարիին, ազնիւին, քեզ հոգացողին հանդէպ, բայց թշնամիի՞ն:

«Մէկ երեսդ ապտակողին միւս երեսդ դարձո՛ւր», կ'ըսէ Աւետարանը մեր Տէր Յիսուս Զրիստոսի անունով: Բայց հայ քահանային տուած պատասխանին նման, երբ զինք ապտակողը լաւ մը ծեծեր է, որովհետեւ՝ «Յիսուս չըսաւ թէ միւս երեսդ ապտակելէն ետք ի՞նչ պէտք է ընես. Աստուած մեզի խելք տուեր է որ մտածենք...»:

Այս բոլորը ըսի եւ պատմեցի, որպէսզի ըսեմ, թէ ինչո՞ւ այսօր ամօթով կը նայիմ մեր «վերընծիւղուող ազգ»-ին, որովհետեւ կարելի չէ՛ այսքան համբերող ըլլալ, այսքան միամիտ ըլլալ տրուած խոստումներուն հաւատալու չափ, այսքան անգամ կրկին ու կրկին նոյն փոսը իյնալ:

Բայց հայու արիւնս չ'ընդունի որ այս իրողութիւնը եւ կը պատճառաբանէ՝ այդ բոլոր դաւաճանները տուարով գնուած մարդիկ ըլլալու են...

Ինչպէ՞ս ընդունիմ, որ ազգս, այսքա՛ն կենսափորձէ ետք, շարունակէ շարդուիլ, իր հողերէն վտարուիլ ...

Կա՞ն մեզի չափ եւ մեզի նման կենսափորձ ունեցող ազգեր:

Կա՞ն, դո՛ւք ալ գիտէք թէ ո՛ր ազգերը: Եւ ի՞նչ կ'ընեն այդ ազգերը:


Մէկը իր ողջակիզումէն ետք կ'ըսէ՝ *«Ա՛յ երբեք, ա՛յ թնաւ...»:*

Եւ կ'ընէ:

Միւսը ըսելու պէտքն իսկ չի զգար, այլ ըրած է, կ'ընէ եւ կը շարունակէ ընել, իրաւամբ «բացատրելով» աշխարհին, թէ «ազատութիւն կամ մահ» ըսուածը լոգունգ չէ միայն:



ՆԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԵՐ



Ձեռագիր հայերեն գրող այսօր գրեթե չկայ, թերեւս միայն 1% մը. թերեւս, որովհետեւ ամեն մարդ համակարգիչով, թապլեթով կամ բջիջայինով կը գրէ իր գրելիքը, եթէ գրէ անշուշտ:

Մեր գլխաւոր մտահոգութիւնը, հայերեն գրելու կողքին, ճիշդ ուղղագրութեամբ գրելն է այսօր: Բայց կար ժամանակ, երբ ամենէն բնական բանն էր ճշգրիտ ուղղագրութեամբ հայերեն գրելը. հարցը՝ ձեռագրին գեղեցկութիւնն էր:

Այդ ուղղութեամբ բազմաթիւ գիրքեր հրատարակուած են եւ յօդուածներ գրուած, անցեալ դարու երկրորդ կեսերուն, Յայաստանի, ինչպէս եւ Սփիւռքի մէջ լոյս տեսած, երբ խիստ աշխոյժ էր հրատարակչական գործը:

Հայերեն գատ եւրոպական այլ երկիրներու մէջ եւս ձեռագրի գեղեցկութեան մեծ կարեւորութիւն տրուել է, ինչպէս կը տեսնենք 1948-ին Փարիզի մէջ հրատարակուած գիրքէն՝ «L'Écriture et son Dessin» (Գրութիւնը եւ իր գծագրական ոճը), Ռընէ Մունշի հեղինակութեամբ, «Թեքնիք եւ մասնագիտական ուսուցում» որպէս: Հեղինակը փրոֆէսոր եղած է կրաֆիք արուեստներու:

Հեղինակը իր խօսքը կը սկսի ամենէն հին «գիր»-երէն, որոնք քարայրներու պատերուն երեւցած գծանկարներ են, հասնելու համար աղթարքի (zodiak) նշաններուն եւ դեղագործական խորհրդանշաններու, որոնցմէ ետք կը սկսի անդրադառնալ լատիներէն տառերուն:

Հայերէն գիրերուն նուիրուած առաջին գիրքը (առաջինը ա՛յս գրադարանին մէջ) կու գայ Երեւանէն, Հենրիկ Մնացականեանի հեղինակութեամբ՝ «Հայկական Գեղարուեստական եւ Տպագրական Տառատեսակներ» (Հայպետհրատ – Հայկական Պետական Հրատարակչութիւն – 1955): Հատորին խմբագիրը հռչակաւոր գեղանկարիչ Յակոբ Կոչոյեանն է, որ իր «Խմբագրի Կողմից» հակիրճ ներածութեան մէջ կ'ըսէ.

«Նման այլոյմի ստեղծումն ու հրատարակումը ունին կարեւոր նշանակութիւն՝ օգնում են գիրք ձեւաւորող նկարիչ-տառագիրներին, գեղարուեստական եւ տեխնիկական խմբագիրներին եւ փոլիկրաֆ աշխատողներին՝ բարձրացնելու գրքի մշակոյթը: Այլոյմը մեծ օժանդակութիւն ցոյց կը տայ նաեւ ակումբային գծով աշխատողներին եւ պատի թերթեր ձեւաւորողներին»:

Ըստ հեղինակին, սովորական տպագիր գրութիւններուն առաջին օրինակները պատրաստուել են 16-րդ դարուն, իսկ մեծ

տարածում գտած «Արամեան» տառատեսակները – նաեւ համակարգիչի ստեղծարարներուն համար – 1855 թուականին ստեղծուեր են ճանիկ Արամեանի կողմէ (հոսկէ՝ տառատեսակին անուանումը):

Նոյն այդ ժամանակաշրջանին է, որ ստեղծուեր են շարք մը այլ տառատեսակներ, որոնցմէ են «վիեննական տառատեսակներ»-ը:

Յեղիսակը կ'ըսէ, թէ տպագրական տառատեսակներու կառուցման համար շատ յարմար է քառակուսիներով աշխատիլը, ապա կու տայ քանի մը շատ հետաքրքրական օրինակներ:

Յենրիկ Մնացականեանի հեղինակութեամբ այլ հատոր մը եւս լոյս տեսեր է 1972 թուականին («Յայաստան» հրատարակչութիւն, Երեւան), «Յայկական Տառատեսակներ» խորագրով, որուն յառաջաբանը գրեր է Կարօ Տիրատուրեան:

Յեղիսակը կը բացատրէ.

«Գրականութեան եւ մշակոյթի աննախընթաց վերելքը հրամայական պահանջ է դրել մեր հանրապետութեան տառագիր նկարիչների առջեւ՝ ստեղծելու բազմազան եւ ժամանակակից տառատեսակներ, բարձրացնելով գրքերի, ամսագրերի, աֆիշների եւ այլ ձեւաւորումների գեղարուեստական որակը»:

Մեր ձեռքին տակ եղած յաջորդ հատորը, որ նուիրուած է հայկական տառերուն, հրատարակուեր է 1963 թուականին, դարձեալ Յայպետհրատի կողմէ, Երեւանի մէջ, Կարօ Տիրատուրեանի հեղինակութեամբ, եւ կը կոչուի «Յայոց Գիրը, Գեղարուեստական Տառածելեր»: Յատորը նուիրուած է «Մեսրոպ Մաշտոցի Անմահ Յիշատակին»:

Այս գիրքին յառաջաբանը գրեր է Մարտիրոս Սարեան.

«Գրքի ձեւաւորման կրաֆիքական արուեստը, որպէս նկարչութեան մի առանձնայատուկ ճիւղ, շարունակ աւելի եւ աւելի մեծ ճանաչում է գտնում մեր հասարակութեան լայն շրջաններում»:

Իսկ հեղինակը ինք յստակօրէն կը բնութագրէ հայկական տառերը եւ կ'ըսէ.

«Դարերի փորձութիւններով են անցել ու դիմացել մեսրոպեան նշանագրերը: Ունենալով կուռ կառուցուածք, հաւասարակշռուածութիւն, ծաւալների հրաշալի բաշխում, մեսրոպեան գրերը նպատակային եւ ինքնօրինակ լուծումներով իրենց ոսկեայ բաժանումներն են գտել տառապատկերներում:... Բանաստեղծական են, ճկուն ու սլացիկ, միաժամանակ պիրկ ու

անդրդուելի»:

«Յետագայ դարերի մեր գրիչները, ծաղկողները, վիճաբորդները ստեղծելով իրենց անհատական ոճը, չեն հեռացել ու խորթացել մեսրոպեան գրերից: Նրանց ստեղծած ու մշակած գեղագիր թռչնատառերի, կենդանագրերի, որմնագրերի, ծաղկատառերի, ոճատառերի, գարդատառերի հիմքում ընկած է մեսրոպեան հրաշալի տառերի նկարագիրը»:

Գիրքը կը պարունակէ չորս հարիւր (400) տառատեսակ:

Սփիւռքէն եւս ունեցեր ենք տառատեսակներով հետաքրքրութիւն ցուցաբերած արուեստագետներ, ինչպէս Օսնիկ Աւետիսեան քանդակագործը (Գահիրէ), որ երկու հատոր ունի այս նիւթին շուրջ: Առաջինը հրատարակուած՝ 1946-ին, Գահիրէ, «Փորձ մը Տպագրական Տառերու Բարեփոխութեան եւ Արդիականացման», իսկ երկրորդը՝ փոքրիկ գրքոյկ մը՝ «Յայ Տպագրական Նոր Մանրագիրը», հրատարակուած՝ 1968-ին, Պէյրութ:

Շահան Պերպերեան շատ երկար յօդուած մը նուիրեր է առաջին գիրքին, անոր կարելորութեան համար, լոյս տեսած «Անի» հանդէսին մէջ, Յունուար 1947-ին (Ա. տարի, թիւ 10, էջ 547-554):

«Ներկայ հատորով հրապարակուած բարեփոխեալ Այբուբենի յօրինումը արձանագրուած է Եգիպտոսի Խառն Դատարաններու Վերաքննիչ Ատեանի առջեւ, Աղեքսանդրիա, Գիւտերու Դիւանատան մէջ, 13 Օգոստոս 1946-ին, թիւ 371/48 a դասաւորում (տպագրական տառեր)», կը կարդանք հատորին վերջաւորութեան:

Երկրորդ գրքոյկը տպուած է առաջարկուած նոր, մանրագիր, նորածոյլ տառերով:

Այս գրքոյկին յառաջաբանը սեղմ պատմութիւնն է Սփիւռքի մէջ հայերէն տառերու ստեղծումին, ձուլման եւ օգտագործումին, որոնք միշտ ալ հանդիպեր են բազմաթիւ եւ բազմաբնոյթ խոչընդոտներու:

Երեւանի Մշակոյթի Նախարարութեան կազմակերպած «Նոր Տառատեսակներ» մրցումին (1958 Նոյեմբեր) Օ. Աւետիսեանի նախագիծը արժանացեր է մասնաւոր յիշատակութեան, որուն որպէս արդիւնք դատակազմը կը յանձնարարէ կազմակերպիչներուն գնել այդ տառերը:

Բայց կարգ մը խոչընդոտներու պատճառով այդ առաջարկը չէ իրագործուած:

Աւետիսեան ինք կը ձեռնարկէ իր նոր տառերու ձուլման, բայց կրկին խոչընդոտներու կը հանդիպի, մինչեւ որ *«հալէպաքնակ*

անուանի ակնաքոյժ եւ մտաւորական տորթ. Ռոպեր Ճէպէճեանի քաջալերանքով եւ աջակցութեամբ կարելի եղաւ գլուխ հանել տառահայրերու փորագրութեամբ, մէկ շարք տառամայրերու շինութեան գործը, հալէպահայ վարպետ փորագրիչ Վարդավառ Չոլաքեանի խանդավառ եւ յամառ ջանքերով»:

Ապա Օ. Աւետիսեան կը ներկայացնէ «Յայ Տպագրական Մանրագիրերուն Թերութիւնները» եւ «Նոր Մանրագրին Յատկութիւնները», երկու գլուխներու մէջ:

1969-ին Երեւանի մէջ լոյս կը տեսնէ «Յաւելուած Յայկական ՍՍՐ Տպարաններուն Գործածուող Տառատեսակների Քաթալոկ», թիւ 2:

Վերջին գիրքը որ մեր հաւաքածոյին մէջ է, Յայկ Ն. Գործակալեանի «Յայկական Տառատեսակներ» հատորն է, հրատարակուած 1973-ին, որպէս Յայկական ՍՍՐ Գիտութիւններու Ակադեմիայի հրատարակութիւն:

Այս գիրքին յառաջաբանը եւս Մարտիրոս Սարեանի գրիչով է.

«Ամէնից առաջ ընդգծենք, որ հայկական տառերը զարմանալիօրէն դրսեւորում են հայ ժողովրդի բազմադարեան մշակոյթի ոգին: Եւ պատահական չպէտք է համարել, որ խոր հետաքրքրութիւն դէպի մեր տառատեսակները յառաջ է եկել, երբ այսպիսի լրջութեամբ է դրուել ազգային մշակոյթի ժառանգութեան օգտագործման պատմական խնդիրը»,- կ'ըսէ մեծ գեղանկարիչը:

Այստեղ, ի տարբերութիւն նախկին հատորներուն, կան «Յայկական քարտեզագրական տառատեսակներ», թիւով 14, «որոնց շնորհիւ,- կ'ըսէ Մ. Սարեան,- հայկական քարտեզագրութեան մշակոյթը հասաւ լատինական հարուստ տառատեսակների տեսակաշարին եւ հնարաւորութիւն եղաւ Ս. Տ. Երեմեանի «Յայաստանը Ըստ Աշխարհացոյցի» քարտեզների տպագրութիւնը»:

Յայկական տառը գեղարուեստական հրաշալի պատկեր է, մեր ժողովուրդի նկարագիրը, բնաւորութիւնն ու պատմութիւնը խտացնող լուռ վկայ, որուն երբեմն գոնէ պէտք է ձայն տալ եւ ուշադրութեամբ ունկնդիր ըլլալ:





ՄԵՆՔ ԵՒ ԻՐԵՆՔ

«Նիգիփի պիստակի այգիները» գրեր էր այդ կինը, որովհետեւ չէր գիտեր, որ իսկական պիստակի այգիները Յալէպի շրջակայքը կը գտնուին, չէր գիտեր նաեւ, որ Յալէպի՝ պիստակն է նշանաւորը եւ ճիշդ այդպէս ալ կը ճանչցուի՝ pistach d’Alep, Յալէպի կարմիր հողին մէջ դարերով աճեցուած ու նրբացած, այսօր հասած միջազգային շուկաներ, ուր սուղ ու կրակ գիներով կը վաճառուի:

Բայց իրենք «Նիգիփի պիստակի այգիները» կ’ըսեն ու կը կրկնեն, թէւ չեն գիտեր, որ կրկնութիւնը մայրն է գիտութեան, բայց շատ լաւ գիտեն, որ կրկնութիւնը սուտերը կը լուայ, կը խաշէ, քլոր կը դնէ ու յետոյ արեւին տակ, ամէնուն աչքին առջեւ կը փռէ, առանց հոգալու արեան բիծերը, որոնք հակառակ քլորին դեռ հոն են եւ որոնք առանց ձայնի,– հագագ չունին կտրուած-մորթուած կոկորդներուն մէջ,– ճշմարտութիւնը կը պոռան:

Բայց իրենք ուրիշ շատ բաներ ալ գիտեն. օրինակ՝ *la vrai verite n’existe pas* (իսկական ճշմարտութիւն գոյութիւն չունի), եւ գիտեն, թէ «յաղթանակի պէս բան մըն է շատ ըլլալը», եւ գիտեն սարսափեցնելու դասեր տալ իրենց նորածին մանուկներուն, մինչ մեր արիւնը, սերունդէ սերունդ ահ ու սարսափ կը փոխադրէ:

Գիտեն նաեւ, որ տիրապետելու ամէնէն արագ միջոցը վախն է:

Եւ գիտեն, որ իրենց համար երկու գերագունութիւն կայ՝ հաւատք եւ սեռ, եւ այս երկուքը բաւարար են զիրենք տիրապետուած պահելու իրենց մեծերէն՝ *«Ձեզի Ալլահն ու քածերը. ծառայեցէ՛ք առաջինին եւ վայելեցէ՛ք երկրորդը, եւ որպէս իսկական հաւատացեալներ արժանի կ’ըլլաք ճէննէթին»*:

Այս բոլորը չէի գիտեր. արդէն իրենց հետ այնքան ալ հաղորդակցութիւն չունէիք. մեր թաղերուն մէջ խաղաղ կ’ապրէիք եւ կը հաւատայիք, որ Յիսուսը հայ է անշուշտ: Կ’ապրէիք սորվելով հայօրէն ապրիլ, եւ կ’ապրէիք սորվելով ստեղծագործել:

Այս բոլորին մասին մտածեցի դիտելով ոչ շատ հռչակաւոր քարթունգ մը՝ “The story of Ferdinand”, մանկական գիրքի մը հիման վրայ պատրաստուած:

Փոքրիկ սպանացի ցուլ մը, այնքա՛ն տարբեր մնացեալ ցուլերէն, որոնք կը սիրեն իրենց կոտոշները իրարու գարնել, կռուտիլ... բայց ոչ Ֆերտինանտը. ան կը սիրէ ծառի մը տակ կենալ, վայելել տեսարանը եւ ծաղիկներէն հոտ քաշել:

Կեանքը սակայն այդպէս չէ դժբախտաբար. Ֆերտինանտի մանկութիւնը շատ արագ իր աւարտը կը գտնէ. զինք կը տանին արեւա, ցլամարտի մասնակցելու:

Այնքա՛ն տարբեր մնացեալէն... արդեօ՞ք այստեղ է գաղտնիքը մեր բոլոր ձախողութիւններուն, սկիզբէն, էն գլխից, ինչպէս կ’ըսեն մեր արեւելահայ եղբայրները:

«Յայկը առաւ իր ընտանիքը եւ քաշուեցաւ բարձր լեռները Բէլին հետ պատերազմելէ ետք, որովհետեւ կ’ուզէր խաղաղութեամբ ապրիլ»:

Բայց ո՞վ պիտի ուզէ խաղաղութեամբ ապրիլ, եւ ինչո՞ւ խաղաղութեամբ

ապրիլ, երբ կարելի է յարձակիլ, առնել, տիրել, քանդել, տեր դառնալ ամեն ինչի. եւ այս բոլորը այնքա՛ն դիւրին միջոցով՝ վախ սփռելով:

Կ'ըսուի թէ մարդոց կեանքը պատահարներու հիւսուածք մըն է: Արդեօ՞ք ասիկա ճիշդ է նաեւ ազգերու, ժողովուրդներու եւ երկիրներու պարագային: Ինչո՞ւ օրինակ Յայկը, Բելին յաղթելէ ետք, լեռները քաշուեցաւ: Եթէ Յայկը մնար, տիրէր Բելի ունեցուածքին, ամեն պահու զգացներ իր գերակայութիւնը, թերեւս մեր երկրին, մեր հայրենիքին ուղին այսօր ամբողջովին տարբեր ըլլար:

Քանի մը տարի առաջ հայրենի մտաւորական մը, ամենայն համոզուածութեամբ կ'ըսէր.

«Մենք ուզում ենք մեր պախչէն նստենք, վանք սարքենք»:

Ո՞վ պիտի ըսէր հայրենի այդ մտաւորականին, թէ պախչէն նստելու եւ վանք սարքելու համար, նախ պետք է խաղաղութիւն ապահովել, իսկ խաղաղութիւնը կ'ապահովեն ո՛չ թէ վանք սարքելով, այլ բերդ կառուցելով եւ բանակ պահելով:

Կը յիշէ՞ք Դերենիկը, որ լացակումած կու գայ մօրը.

«Գլուխս պատռեց դրացի Ալին»:

Եւ կը յիշէ՞ք մօր, ՅԱՅ մօր ապրումները.

«Քաջ մօրն հոգւոյն մէջ վիհեր կը բացուին

Լեցուած ամօթով. գըգուել կըրթի՞չ է

Սըրտին վրայ՝ յաղթուած ճակատն երկչոտին»:

Բայց յետոյ, միայն պահ մը տատամսելէ ետք կը յիշէ՞ք թէ ինչպէ՛ս կը գոռայ տղուն վրայ.

«Դուրս... մինչեւ որ յաղթած՝

Արիւններդ անոր արեամբ չըմաքրին,

Այսօր տուն չես գար: Մատնիչ՝ ինամքներուս,

Միթէ՞ վարսակի հացով սընար... Դուրս»:

Այսքան պարզ իրականութիւն մը, զոր իրենք շատ-շատ լաւ հասկցեր են եւ սորվեր, այնքան լաւ, որ ոչ միայն ականջի օղ դարձեր է այդ իրականութիւնը, այլ անցեր է արեան մէջ, դարձեր է մասնիկ մը իրենց ծիներէն, եւ այսօր իրենց գերակայութիւնը կ'ապահովէ շատ յառաջադէմ երկիրներու վրայ:

Պիտի ըսեք՝ ասիկա գերակայութիւն չէ, այլ՝ քաղաքականութիւն, դիւանագիտութիւն: Գիտե՛մ: Բայց այդ ալ մաս կը կազմէ իրենց ծիներուն, այդ ալ մաս կը կազմէ իրենց գիւնանոցին:

Կ'երեւի պետք է միայն ուժի միջոցով ցոյց տալ մեր մշակութային գերակայութիւնը, որովհետեւ հակառակ ամեն բանի, մշակոյթի եւ արուեստի առումներով իրապէ՛ս գերակայութիւն ունինք, *«մենք մեզ ո՛չ մէկից չենք գերադասում, բայց մեզ էլ գիտենք»:* Մեր գիտնալը բաւարար չէ, բնա՛ւ բաւարար չէ, պետք է մեր շուրջիներն ալ գիտնան, պետք է մենք, ուժի գօրութեամբ գիտցնենք. այլապէս մեր գերակայութիւնը մեզ պիտի խեղդէ մեր գերակայութեան մէջ:



ՄԵՐ ԽՈՂԱՆՈՅԸ



Ապրիլ Է. ամբողջ ազգով-տակով կրկին կ'իյնանք չապրուած, բայց արիւնով մեզի անցած յիշողութիւններուն գիրկը, կրկին կը տառապինք մարդկային անմարդկութեան ի տես, կրկին ցաւով կը հաստատենք, թէ «պատմութիւնը ինքզինք կը կրկնէ» եւ անկարող բարկութեամբ մը կը մտածենք՝ տակաւին մինչեւ ե՞րբ, Տէ՛ր Աստուած:

Միւս կողմէ կը մտածեմ, թէ ի՞նչ կրցած ենք փրկել, աւելի ճիշդը՝ իրենք, Ջարդի սերունդը ի՞նչ կրցած է փրկել իր տունէն, հողէն, մանաւանդ մշակոյթէն:

Անշուշտ կարելի չէր որեւէ նիւթեղէն իր վերցնել, վերցնողներն ալ իրենց կեանքին համար նոյն այդ իրերով վճարած են յաճախ: Բացի քանի մը դէպքերէ, ինչպէս է «Մշոյ ճառընտիր»-ի պարագան, երբ հակառակ ծանրութեան, կարելի եղած է փրկել զայն, գրեթէ ոչինչ, կամ շատ փոքր տոկոս մը միայն կարելի եղած է փրկել մեր մշակութային իրերէն:

Բարեբախտաբար մշակոյթի աննիւթեղէն բաժինը շատ աւելի դիրին եղած է փրկել. այդ «փրկուած»-ներէն մէկն ալ մեր խոհանոցն է անշուշտ:

Երբ «մեր» կ'ըսեմ, անշուշտ որ հայկական խոհանոցը ըսել կ'ուզեմ, այդ խոհանոցին ամբողջութիւնը:

Հայկական խոհանոցը, սակայն, միածել կամ միանման չէ, այլ կը տարբերի երկրէ երկիր. հոն ուր հայեր գաղթեր են, ստիպուած եղեր են համակերպիլ շատ երեւոյթներու կողքին նաեւ տեղական խոհանոցին, մանաւանդ երբ մեր ուզած նիւթերը գրեթէ անգտանելի էին կարգ մը երկիրներու մէջ: Հայկական խոհանոցը տարբեր է նաեւ Հայաստանի մէջ:

Մեր «բարեսիրտ» դրացիները, ինչպէս ամէն բանի ուզած են տեր ելլել – յաճախ նաեւ յաջողելով – շարունակ ճիգ կը թափեն տեր դառնալու նաեւ հայկական խոհանոցին, որուն կերակրատեսակներուն մեծ մասը թրքական անուններ ունի:

Թեոդիկ, իր նշանաւոր «Ամենուն Տարեցոյցը»-ի Ա. տարուան՝ 1907-ի հատորին մէջ այս մասին հաճելի գրութիւն մը ունի, «Գրական մրցում» անուան տակ, ուր կը յիշէ սմբուկով ճաշերու 26 տեսակներ, բոլորն ալ թրքական անուններով եւ կ'ըսէ.

«Ասոնցմէ դուրս, մասնաւորներու ճաշակին համեմատ ուրիշ կերպ պատրաստուածներ թերեւս գտնուին: Մենք այս 26-ին ցուցակը միայն ներկայացնելով մեր ընթերցողներուն, կ'առաջարկենք ճարել կամ հնարել բոլորին ալ պատշաճ սիրուն հայերէն անունները (գաւառիկ յորջորջումներէն ալ օգտուելով, եթէ երբեք կան), պայմանաւ, որ բարդութեան օրինաց եւ

Ներդաշնակութեան դէմ մեղանչում չըլլան նորակերտ բառերը: Մինչեւ 1908 Ապրիլի սկիզբ՝ 26 բառերը լաւագոյն ստեղծողին ու տպագրատունս խրկողին պիտի նուիրենք օրինակ մը Մ. Նուպարեանի ֆրանսահայ գեղեցիկ Բառգիրքէն»:

(Կը տեսնէք, թէ հարիր եւ աւելի տարիներ առաջ հայերէնս ալ տարբեր էր մեր այսօրուան խօսածէն):

Ապա, ներկայացնելով ընթերցողներուն նոր ստեղծած եւ իրեն «խրկած» բառերը, կ'ըսէ.

«Վանէն Տիգրան Չիթճեանին ճաշացուցակն եթէ ոչ մրցանակի, գոնէ՝ մերձենակի արժանի կրնայ նկատուիլ: Յարգելի բանասէրը զանց էր ըրած միայն հինգ կերակուր»: Յետոյ կը ներկայացնէ նոր բառերը, որոնցմէ աստղանիշ կրողները, կ'ըսէ, «գաւառիկ յորջորջում» են, այսինքն գաւառական բառեր են, հաւանաբար բարբառներու մէջ օգտագործուող.

Բիւլաւով սմբկեղինձ

Բիւռէ (կաթով) սմբկալափ

Էկոռաթօս (ճիշդը՝ gratin) հացամոք

Թաւա տապկած*

Թաւա (մածուկով) մածնէ տապկած*, մածնամպած

Թիւրլիլ պեսամպած, ջբուռ*

Թուրշի թթուուտ

Չօփ քէպապի խիլխորով*

Պայըլտը ուշքաթափ*

Պէորէք (հաւկիթով) սմբկածաղ

Պէորէք (մաքարոնով) ծաղդդմած սմբուկով

Տոլմա (բրինձով) սմբկալիցք

Րէչէլ (ռուբով) սմբկանոյշ

Քարնը եարըք սմբուկի փորբաց

Քէպապ (սալաթա) սմբկաղցան

Քըզարթմա սմբկախորով

Օթուրթմա տուտուզիկ*

Կը կարդանք այս ոչ-ամբողջական ցանկը եւ կը մտածենք՝ բայց ինչո՞ւ այս անունները տարածում չեն գտած մեր մէջ, օրինակ սմբկեղինձը, սմբկալափը, սմբուկի փորբացը, կամ ուշքաթափը, սմբկաղցանն ու սմբկախորովը, բոլորն ալ բաւական հաճելի անուններ...

Կը մտածենք եւ տխրութեամբ կը հաստատենք, որ իր հողին վրայ ապրող ժողովուրդ մը յաճախ ուշադիր չըլլար լեզուին, որովհետեւ հողը կայ, որուն վրայ ինք ամուր ոտքերով հաստատուած է, մինչ Սփիւռքի մէջ, օրինակ, մեր լեզուն

դարձած է հող, որուն վրայ կը փորձենք հաստատուն կենալ, մեր ինքնութիւնը հաստատել: Այս է պատճառը, որ մեզմէ շատ շատեր անկախութեան սկիզբի տարիներուն զարմանքով դիտեցին հայրենի ժողովուրդին անփութութիւնը լեզուին հանդէպ: Ի վերջոյ Արեւմտահայաստանը մեր երկիրն էր, մեր պապենական հողերն էին, եւ եթէ մեր կերակուրներուն անունները թրքերէն էին, ասիկա ոչինչ կը փոխէր իրականութենէն:

Այսօր, սակայն, անզօր բարկութեամբ կը դիտենք, թէ ինչպէ՛ս վստահելով այդ անուններուն, մեր ճաշատեսակներն իսկ կը խլուին մեզմէ եւ կը դառնան «իրենցը»:

Վերջերս սակայն Երեւանի կարգ մը ճաշարաններ, ինչպէս «Պրիոշ» սրճարանն ու «Լուսիկ Ագուլեցի» տուն թանգարանին սրճարան-ճաշարանը, սկսած են հայկական անուններով իսկական հայկական ճաշատեսակներ հրամցնել, բաներ, որոնք ամբողջովին նորութիւն են մեզի համար, որովհետեւ վաղուց դուրս ինկած են մեր առօրեայ ճաշատեսակներու ցանկէն:

Միսիթարեան հմուտ պատմագետ Յայր Վարդան Յացունիի բազմաթիւ հեղինակութիւններէն մէկը շատ հետաքրքրական է՝ «Ճաշեր եւ Խնճոյք Յին Յայաստանի Մէջ», Ս. Ղազար մայրավանքը տպուած, 1912 թուականին:

Գիրքը կը սկսի շտեմարան-ամբար-մառան բառերէն՝ առաջինը՝ ընդհանուր պարէնի համար, երկրորդը՝ արմտիքի, իսկ երրորդը՝ միայն գինիի յատուկ. դժբախտաբար սակայն այսօր այս բառերը կորսնցուցած են իրենց իմաստի նուրբ տարբերութիւնները. մնացեր է մառանը, այն ալ միայն կարգ մը գաղութներու մէջ գործածուող:

Այս գիրքը հսկայ շտեմարան մըն է մեր տոհմիկ աւանդութիւններուն եւ իր ծածօքին տակ կը պահէ ոչ միայն անունները զուտ հայկական ճաշատեսակներուն, այլ նաեւ կ'ըսէ անոնց պատրաստութեան եղանակն ու ճաշակելու ե՛րբ յարմար ըլլալը. օրինակ գլուխ մը յատկացուած է պարզ մահկանացուներու ճաշերուն, այլ գլուխ մը՝ վանականներու ընթրիքին, ուրիշ մը՝ պահոցի եւ ուտիքի օրերու տարբեր ճաշատեսակներու մասին եւ այլն:

Հակառակ իր խիստ հետաքրքրական ըլլալուն, այս աշխատասիրութիւնը այսօր մոռացութեան մատնուած է:

Այս բոլորը կ'ըսուի եւ կը գրուի միայն ու միայն յիշեցնելու համար, թէ որքա՛ն դիւրացած է մեզմէ մեր աննիւթեղէն մշակոյթն իսկ խլելը, սկսելով մեր լեզուէն, հասնելու համար մեր խոհանոցին:

Անդրադառնալը թերեւս սկիզբ մը կ'ըլլայ մեր մշակոյթին եւ լեզուին հանդէպ շատ անելի գուրգուրանք դրսեւորելու:



ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Ո՞ր է մեր կեանքի առաջին յիշողութիւնը. ի՞նչ է ամենէն առաջին այն դէպքը, որուն կրնայ հասնիլ մեր յիշողութիւնը:

Ու եթէ հասնիք մեր այդ առաջին յիշողութեան, կը մտածենք՝ ո՞ր պահուած էր, ինչո՞ւ մինչեւ հիմա չէի անդրադարձած անոր:

Յիշողութիւնը կը շարունակէ մնալ գիտական առեղծուածներէն մէկը, հակառակ որ այնտեղ մեծաթիւ բացայայտումներ եղած են:

Այդ բացայայտումները հետաքրքրական դիտումներ կ'ընեն. մեր յուշերը, ըստ իրենց բնոյթին, ուղեղին տարբեր կեդրոններուն մէջ կ'ամբարուին, գլխաւորաբար հիփոկամբուսի (hippocampus) եւ ամիկտալայի (amygdala) մէջ:

Ասոնք ուղեղին մէջտեղը գտնուող եւ իրարու հանդիպակաց երկու կետեր են:

Առաջինին մէջ կ'ամբարուին դրուագային յիշողութիւնները, որոնք յետոյ կը դասաւորուին, կազմելու համար մեր կենսագրական յիշողութիւնները:

Երկրորդին մէջ կ'ամբարուին այն յուշերը, որոնք հոգեխոցերու մասին են (trauma). այս յուշերը կը պահուին ոչ որպէս դէպքերու պատում, այլ մեր զգայարաններուն վրայ այդ դէպքերուն ձգած ազդեցութիւնը որպէս, պատկերներու, հոտերու, հնչիւններու, համերու կամ հպումի միջոցով (մեր հինգ զգայարանները):

Յետաքրքրական է, որ մեր ուղեղը ընդհանրապէս կ'ամբարէ յուզիչ, ցնցող կամ ցաւալի դէպքերուն յիշողութիւնը, ատելի քան մեղմ ապրումներու կամ յուզումներու յուշերը:

Նոյնիսկ գրախանութներուն մէջ վերջերս ցուցադրուած գիրքերը մէկ ուղղութիւն ունին կարծես՝ յիշողութիւնը.

Յուցադրուած բազմաթիւ գիրքերուն խորագրերը այս կը հաստատեն՝ “A Memory of Light, Before Your Memory Fades”, “The Memory Police”, նաեւ արաբերէնով՝ «Արդիական Ուղղութիւնները Յիշողութեան Փիլիսոփայութեան Մէջ», «Մարմինդ Ամեն Բան Կը Յիշէ» եւ այլն:

Չարմանալի զուգահեփութեամբ քանի մը տարի առաջ գրուած յօդուած մը այսօր միայն պաստառիս վրայ կրկին երեւցաւ՝ The cult of memory: when history does more harm than good.

Այս վերջին գաղափարին չեմ համոզուած անշուշտ, բայց զայն կը դարձնեմ միտքիս մէջ, վեր-վար կ'ընեմ, պարզապէս տեսնելու համար թէ իրապէս կարելի՞ է նման բան, թէ՞ այս ալ ամերիկացիի մը խելապատակէն ելած, տարբերուելու մարմաջով մէջտեղ նետուած գաղափար մըն է:

Այս վեր-վար ընելու ընթացքին կ'անդրադառնամ, թէ որքա՞ն երեւոյթներ եւ հարցեր կան, որոնց մասին մենք, սփիւռքահայերս, տարուած ապրելու առաջնահերթութեամբ – այս պարագային ապրիլ պետք է հասկնալ նաեւ survive իմաստով – չենք մտածած:

Նախ չենք մտածած մենք մեր մասին որպես հաւաքականութիւն, որ այսօր իր դիմագիծը ունի, թէեւ մանրամասնութիւններուն մէջ կրնան նաեւ տարբերութիւններ ըլլալ մէկ գաղութէն միւսը:

Յետեւաբար կ'անդրադառնամ նաեւ, թէ անձնական յիշողութեան կողքին կայ նաեւ հաւաքական յիշողութիւն կոչուած երեւոյթ մը:

Յիմա զիս հետաքրքրողը հետեւեալն է՝ յիշողութիւնը ո՞ր կ'ամբարուի. ուղեղի՞ն, թէ միտքին մէջ, այս երկուքը ըլլալով իրարու հակոտնեայ, պարզ այն պատճառով, որ մէկը ֆիզիքական է, իսկ միւսը՝ աննիւթեղէն:

Երկու դէպքեր զիս մտորումի կը մղեն. մէկը համացանցէն կարդացուած դէպք մըն է, որ շատ-շատեր առասպել կամ ժողովրդային բանահիւսութիւն որակեր են: Միջոց չունիմ հաստատելու այդ դէպքը, թէեւ կ'ըսուի թէ առնուած է հրատարակուած գիրքէ մը, որուն հեղինակը յարգելի անձ մըն է՝ «Սրտին ծածկագիրը. Օգտագործելով մեր սրտի ներուժին իմաստութիւնը եւ ուժը, հեղինակ՝ Փոլ Փիրսալ (The Heart's Code: Tapping the Wisdom and Power of Our Heart Energy. Paul Pearsall):

Ութ տարեկան աղջիկ մը, որ ստացեր է սպանուած տասը տարեկան աղջկայ մը սիրտը, կը սկսի մղձաւանջներ տեսնել իրական սպանութեան մասին: Աղջիկը հոգեբոյժի մը կը տանին, որ որոշ քննութիւններէ ետք կ'եզրակացնէ, թէ ան վաւերական դէպքի մը մասին է որ կը խօսի: Ոստիկանութեան հետ կապ հաստատելէ ետք կը փաստուի, թէ իսկապէ՛ս նման դէպք պատահած է, եւ մղձաւանջին մէջ երեւցած մարդուն նկարագրութեան վրայ հիմնուելով, կարելի կ'ըլլայ ոճրագործը գտնել եւ ձերբակալել:

Կրնանք հաւատալ կամ ոչ: Բայց կայ գիտական տեսութիւն մը, որ բջիջային յիշողութիւն կը կոչուի, եւ որ կը հաստատէ, թէ մարմնին այլ օրկանները եւս կրնան յիշողութիւններ պահել: Այս վարկածը հաստատելու համար կարգ մը գիտնականներ կը հիմնուին տարբեր օրկաններով պատուաստուած բազմաթիւ անձերու պատումներուն վրայ:

Այս դէպքը կարելի՞ է «սրտի յիշողութիւն» անուանել:

Երկրորդ դէպքը ինձի պատահեցաւ: Յանդեսը Էջադրող Շահէին հետ կ'աշխատէինք. դադարին իրեն հրամցուցի իմ պատրաստած կրկնէփուկներէս (cookies), որոնց մէջ մահլապ համեմը դրեր էի, համեմ մը, որ հալէպահայերուս շատ ծանօթ է եւ գլխաւորապէս կ'օգտագործուի եւ կ'օգտագործուէր այն օրերուն, երբ տակաւին պանիրը տունը կը պատրաստէինք: Պասմա կոչուած պանիրը օր մը աղելէ ետք, կը խաշուէր ջուրի մէջ, ուր մահլապ

կը ղնեինք:

Շահեն առաջին պատանռը համտեսելէ ետք, անմիջապէս հարցուց.

– Պանիրո՞վ է ասիկա:

Կրկնեփուկը պանիրով չէ՛ր:

– Ինչո՞ւ, – հարցուցի, մինչ միտքս աջ-ձախ առնչութիւններ կը փորձեր գտնել:

– Պանիրի համ առի:

Շահեն այն սակաւաթիւ երիտասարդներէն է, որոնք Հայաստան ծնած են, բայց ամուսնացեր են սփիւռքահայ աղջկայ մը հետ եւ Սփիւռքի մէջ կ'ապրին:

Գահիրէի մէջ հայաստանցի հարսերու «Կռունկ» անպաշտօն միութիւնը կայ, որուն միակ «հայաստանցի փեսայ»-ն Շահեն է, կ'ըսենք յաճախ կատակով:

Շահեն մահլապի մասին ալ գաղափար չունէր. նոյնիսկ «հե՞տդ բերած ես Հալէպէն» հարցուց: Բայց Շահէին հայրը Հալէպէն ներգաղթեր է Հայաստան, շատ հաւանաբար հետը տարեր է այդ պանիրին համն ու հոտը եւ կարօտով յիշեր է Հալէպի պասմա պանիրը, մահլապի համով եւ սեւագնդիկով: Շահեն գարմանալի կերպով կը յիշեր այդ համը, հակառակ բնաւ կերած չըլլալուն: Ինչպէ՞ս:

Ասիկա կարելի՞ է կոչել «արեան յիշողութիւն»:

Մենք, որպէս արեւմտահայութեան ժառանգորդ սփիւռքահայեր, կրնանք հաստատել ասիկա մեր հաւաքական յիշողութեան մէջ: Բոլորս ալ – արդէն հինգերորդ սերունդ – առաջին ձեռքէ չէ որ տեսած ենք Ջարդը, այլ լսած ենք անոր մասին: Սակայն մեր զգացած սարսափն ու բարկութիւնը, որոնք վաւերական են, կասկած չունինք, արիւնով մեզի փոխանցուած են եւ կը շարունակեն առողջ պահել անարդարութեան հանդէպ մեր դատը:

Իսկ գիտութիւնը կ'ըսէ՞ թէ ուղեղին, սրտին, կամ հոգիին ո՞ր խորշին մէջ կը պահուի մեր հաւաքական յիշողութիւնը:

Աշխարհի շատ ազգեր եւ ժողովուրդներ ունին, կը պահեն այդ հաւաքական յիշողութիւն-խոցը, ինչպէս Ամերիկայի եւ Քանադայի բնիկները, սեւամորթները եւ հայերը (ինչպէ՞ս բացատրել հրեաներուն «մոռացումը» իրենց հոգեխոցին, որովհետեւ առանց մոռցած ըլլալու ատիկա, չէին կրնար ընել ինչ որ կ'ընեն ներկայիս Պաղեստինի մէջ): Այսօր իսկ այդ խոցը, որ շատ արագ հոգեխոցի կը վերածուի (trauma), կը շարունակէ հոսիլ Արցախի ժողովուրդին եւ պաղեստինցիներուն երակներուն մէջէն, սպառնալով եղծել մարդ արարածին հոգեկան կազմուածքը:

ՅՈՅՄԻ ԵՒ ԻՐԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ



Այսօր կարճ է գիրս, որովհետեւ մեծ է ցաւը, որ կ'ապրիմ ամէն օր, երբեմն՝ անելի ուժգնօրէն:

Երբեւէ ունեցած ենք դէպքերը զգաստ նայուածքով դիտելու սովորութիւն, թէ՛ ատիկա յատկանիշ մըն է, որ սակաւ տրուած է մեզի, որպէս հաւաքականութիւն:

Ընդհանրապէս արագ կը խանդավառուինք դէպքերէն, նոյնքան արագ կը տարուինք խօսքերէն, յետոյ յուսախաբութեան մէջ իյնալու համար: Եւ այս՝ յաճախ, դժբախտաբար:

Պէ՛տք է զգաստ նայուածք ունենանք որպէս հաւաքականութիւն: Չէ՞ որ հաւաքականութիւններն ալ անհատներու պէս երբեմն երազելու եւ յուսալու կարիք ունին, որպէսզի կարելի ըլլայ տանիլ առօրեային դառնութիւնը, որուն չափաբաժինը յաճախ մեր կրելու կարողութենէն վեր եղած է:

«Երազներու մեծ հաւատ կ'ընծայէինք. արդէն ո՞ր լլկուած ազգը երազով չ'ապրիր» գրեր է Բարսեղ Իսպէչերեան իր շարդի յուշագրութեան մէջ:

Կը յիշէ՞ք «Յաղթելու ենք»-ին խանդավառութիւնը, որ կը ծներ հայրենիքին հանդէպ մեր ունեցած հաւատքէն, ինչպէս նաեւ հոնկէ եկած իւրաքանչիւր խապրիկի հանդէպ մեր ունեցած վստահութենէն:

Յետո՞յ: «Յետոյ»-ն շատ ծանր էր, շատ ծանր նստաւ ե՛ւ հայրենիքին, ե՛ւ մեր՝ սփիւռքահայերուս վրայ:

Յուսախաբութիւնը անձնական կեանքին մէջ դժուար յաղթահարելի է, եւ անպայման իր հետեւանքները կ'ունենայ: Իսկ հաւաքական կեանքին մէջ, մտածե՞ր ենք թէ ի՞նչ կը նշանակէ նման վիճակ:

Մեծ եւ ցնցող օրինակ մը կարելի է համարել Եգիպտոսի ապրածը, 1967 թուականին, Եգիպտոս-Իսրայէլ հակամարտութեան ընթացքին:

Այդ օրերուն «Սաութ ուլ-Արապ» (Արաբներու Ձայնը) ձայնասփիւռը մեծ դեր ուներ ժողովուրդին մէջ եռանդ եւ յաղթանակի հպարտութիւն ներշնչելու: Նշանաւոր խօսնակ Ահմետ Սաաիտի խօսքը խանդավառութեան ալիք կը բարձրացներ ժողովուրդին մէջ ամէն օր, պատերազմի մասին տեղեկատուութեամբ. *«Իսրայէլեան տասը օղանաւ վար առինք, քսանէն անելի գրահաւոր խորտակեցինք...»*:

Բանաստեղծ Սալահ Ճահին, որ նաեւ նշանաւոր հանդեսին՝ «Ռոզ ալ-Իւսէֆ»-ի տնօրէնն էր, մօտալուտ յաղթանակին նուիրուած իր քերթուածներով այդ խանդավառութիւնը զենիթի վրայ կը պահեր:

Եւ յանկարծ... իսրայէլեան բանակը արդէն Սուէզի ջրանցքի ափին է...

Անասելի յուսալքում, որ կը հասցնէ ընկճախտի (depression), որուն հետեւանքով շատեր կը մահանան, անոնցմէ ամէնէն նշանաւորը՝ Սալահ Ճահին, նոյն ինքը «յաղթանակի բանաստեղծը»:

Անշուշտ օրուան նախագահը՝ Ապտ ալ-Նասեր հրաժարական կու տայ, բայց ժողովուրդը կը ստիպէ զինք վերադառնալ եւ վերցնել

պատասխանատուութիւնը այդ պարտութեան...

Այս բոլորը կը յիշեմ, որովհետեւ վերջերս յարգելի գրագետ մը, «Ըսէ՛ք» խորագրուած քերթուածիս տակ հետեւեալը գրեր էր.

«Ինչո՞ւ այս ճենճերումը, թէեւ սքանչելի լեզուացայտքով տրուած, երբ տակաւին վերականգնումի յոյսը չէ դադրած շողալէ: Ողբասացութեամբ բան չենք կրնար փոխել. գոնէ խղճա՛ տաղանդիդ, որմով կրնաս յո՛յսի ջահեր վառել»:

Այս խօսքը, հազիւ քանի մը տողերով ըսուած այս «խրատ»-ը երկար մտածել տուաւ ինծի, բազմաթիւ հարցադրումներ ստեղծելով:

Իրապէ՞ս ողբասացութիւն է գրածս, թե՞ բարկութեան ժայթք. բարկութիւն մեր պետութեան դէմ, որ օգտագործեց ժողովուրդին վստահութիւնը, բարկութիւն ժողովուրդին դէմ որ կը լռէ, բարկութիւն մեր դէմ, որ թերեւս կրնայինք բան մը ընել...

Իսկ իրապաշտութի՞ւնը:

Մեր պարագային իրապաշտութիւնը այն է, որ գիտենք թէ սքանչելի մշակոյթ ունինք, բայց գիտենք նաեւ թէ Նոյնքան «սքանչելի» դիւանագիտութիւն չենք ունեցած, չունինք:

Մշակոյթը երկիր կը պահէ, բայց չի կրնար գրաւուած հողերը ետ բերել:

Երբ այսքանը բացայայտօրէն կ'ըսեմ ու կը գրեմ, ողբասա՞ց կը դառնամ արդեօք:

Աւելի լաւ պիտի չըլլա՞յ, որ մեր ճշգրիտ վիճակը իմանանք եւ ըստ այդ լարենք մեր ուժերը, հաւաքենք մեր ամբողջ կարելիութիւնները եւ դէմ դնենք բոլոր այն երեւոյթներուն եւ անձերուն, որոնք դէմ են հայրենիք հասկացութեան. քան՝ յոյսի օրօրներով մրափենք, տարտղնելով մեր ուժերը, ու յետոյ, երբ ցնցումը արթնցնէ մեզ բոլորս, տեսնենք թէ ո՛չ միջոց ունինք, ոչ ալ ժամանակ բան մը փրկելու:

Ուրեմն այսօր մենք, մեր գրագետներով միասին, կը նախընտրենք «յոյսի ջահեր վառել» անելի, քան բաց աչքերով դիտել կացութիւնը, իրականութիւնը, մենք մեզ: Այդպէ՞ս է:

Եթէ գրագետները, մանաւա՛նդ բանաստեղծները ճշմարտութեան երգիչներն են, սպասելի չէ՞ որ ճշմարիտ ցաւը երգեն, քան՝ սին յոյսեր սնանեն: Եթէ Սիամանթօս իր «Կարմիր Լուրեր»-ը փոխանցեց, ողբասա՞ց էր, կամ Վարուժան, որուն «Դիակի Սայլը» մինչեւ այսօր իսկ արթուն կը պահէ Տեղասպանութեան ճենճերող, չմարող ցաւը:

Ե՞րբ հաւաքաբար պիտի ընդունինք ժխտականը, որպէսզի կարենանք դէպի «վարդագոյն այգաբաց» դրական քայլ առնել:

Կարելի՞ է յոյսն ու զգաստ նայուածքը, կամ իրապաշտութիւնը հաւասարակշռել եւ անոնցմով խթանուիլ: Թերեւս: Բայց մենք, որ ծայրայեղութիւններու ժողովուրդ ենք, տակաւին հոն չենք հասած: Եւ այս՝ ըսուած թափանցիկ իրապաշտութեամբ եւ խորունկ ցաւով:



**ՅՈՒՇ, ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ,
ՆԱՆԴԻՊՈՒՄ**

(Տոբթ. Մ. Տարազնեան արուեստագետին հետ)

Չարմանալի բան է յիշողութիւնը, որ տարօրինակ կերպով ինքզինք կը զգացնէ եւ մէջտեղ կ'ելլէ այնպիսի ճամբաներէ, որոնց գոյութեան չենք կասկածիր իսկ:

Արամ Խաչատրեանի թանգարանն եմ. աչքիս կը զարնէ փոքրիկ քանդակ մը, իր պատուանդանին վրայ. գեղեցիկ է, անսովոր, քանի մը «գիծերով» ամբողջացած եւ խորունկ:

Կը գրաւէ զիս անհասկնալի ձեւով. կը մօտենամ, կը կենամ անոր առջեւ, կը դիտեմ... Ի՞նչ կը յիշեմ. կը յիշե՞մ, այդ իսկ յստակ չէ, բայց բան մը այս քանդակին մէջէն կը կապէ զիս իմ անցեալի օրերուս, Քարէն Եփփէ ճեմարանին...

Երբ շփոթս կը շարունակուի, նոր կը մտածեմ կարդալ քանդակագործին անունը՝ Սկրտիչ Տարագճեան:

Անմիջապէս կը պատկերանայ աչքիս բարձր դասարանի այդ լուռ եւ ծանրախոհ աշակերտը, որ իր շուքը կը պարտադրէր բոլորին, առանց ճիգի, պարզապէս ինքզինք ըլլալով:

Այո՛, շատ լաւ կը յիշեմ, երբ պաքալորիայի արդիւնքները ելան, բոլորս շշմեր էինք իր ապահոված գումարով.

– Որոշէր է բժիշկ ըլլալ...

Եւ անշուշտ եղա՛ւ:

Գիտէի՞ որ իր լուռ տիեզերքին մէջ այդքա՛ն արուեստագետ է այդ աշակերտը. նոյնիսկ չեմ գիտեր, թէ արդեօ՞ք մեր դպրոցական ցուցահանդեսներուն իր գործերը կը ցուցադրուէին: Չեմ յիշեր, բայց զգացողութիւնը այս առաջին քանդակէն, շատ զօրեղ է:

Իր այս քանդակը – յետոյ մնացեալներն ալ նոյն տպաւորութիւնը պիտի ձգէին վրաս – ծանօթ եւ մտերիմ էր ինծի: Առեղծուած մը, որ շատ չհասկցայ, բայց ատիկա արգելք չեղաւ որ վայելեմ քանդակը, յետոյ մնացեալները, փնտռեմ արուեստագետ բժիշկին գործերը եւ փորձեմ հասկնալ անոնց խորքը:

Տարագճեանի քանդակները, պարապութիւններու օգտագործումով, կը յիշեցնեն երաժշտութեան մէջ լռութեան պահերու օգտագործումը. այս երկուքը՝ պարապութիւնն ու լռութիւնը, ներկայացուած գործը՝ քանդակ թէ երաժշտութիւն, կը դարձնեն աւելի ցայտուն, ըսելիքը կը դարձնեն աւելի լսելի:

Քանդակները նաեւ հանգիտութիւններ ունին երաժշտութեան հետ, որուն ձայները միջոցին մէջ կը թեւածեն. Տարագճեանի քանդակները եւս թանձրութիւն չունին, այլ կը թեւածեն միջոցին մէջ, հաստատօրէն նստած ըլլալով իրենց պատուանդաններուն վրայ: Ասիկա ըսուած չէ անշուշտ դիմաքանդակներուն եւ կիսանդրիներուն համար:

Մարդկային կեանքին ամենէն խորքային հարցերն ու ցաւերը իրենց արտայայտութիւնը գտած են Տարագճեանի քանդակներուն մէջ. նուագագոյնով առաւելագոյնը ըսելու – ճիշդ արուեստագետին խառնուածքին նման սակաւախօս – գաղտնիքը գեղեցկօրէն բացայայտուած կը գտնենք այդ գործերուն մէջ:

Տարագճեակի գործերը գլխավոր երկու առանցք ունին՝ կիսանդրիներն ու մնացեալը: Կիսանդրիները ընդհանրապես նշանաւոր հայ դեմքեր կը ներկայացնեն, ինչպէս Ազնաւուր, Ա. Խաչատրեան, Ալան Յովհաննէս (երգահան), Արմէն Գարօ, Արշիլ Կորքի, Արամ Մանուկեան, Ուիլիըմ Սարոյեան, Կոմիտաս, Իւսէֆ Քարշ, Պարոյր Սեւակ, Եղիշէ Չարենց, Յակոբ Օշական, Սայաթ Նովա, Դանիէլ Վարուժան, Զրանդ Տիկը եւ այլ հայ թէ օտար դեմքեր:

Մնացեալը շեշտուածօրէն գեղագիտական գործեր են, որոնց հիմքը մարդկային ցաւն է, այս պատճառով ալ անոնք կը «խօսին» թէ՛ հայ, թէ՛ օտար անկողիին: Այդ գործերը կը կրեն զիրենք բացայայտող անուններ, ինչպէս Առաջնորդը, Սեւեռել Զորիզունը, Ընթերցողը, Ձգողութեան Ասպարէզ Կարդալ, Ազատութիւն, Սպասելով Մուսային, Աղետ, Սոնաթա, Կախարդական Սրինգ, Առկախում, Թակարդում, Արդարութեան Պահանջ եւ այլն:

Քանդակներուն միջոցը ընդհանրապէս պրոնզ է (95% պղինձ եւ 5% անագ), երբեմն նաեւ աւելի այժմեական նիւթերու օգտագործումով:

Տարագճեակի գործերը տարածուած են Ամերիկա, Քանադա եւ Զայաստան, յաճախ հանրային վայրերու մէջ գետեղուած:

«Արուեստի գործի մը գլխավոր նպատակն է յուզել միտքը եւ շարժել հոգին», ըսուած է:

Տարագճեակի քանդակները այս երկուքն ալ կ'ընեն՝ կը շարժեն հոգին եւ կը յուզեն միտքը, ստիպելով որ անոնց գեղագիտութեամբ չգոհանայ ընթերցողը, այլ այս քանդակներուն միջոցով մտնէ ինքն իր եւութեան խորքը եւ հոն փնտռէ ներկայացուած հարցադրումներուն պատասխանները:

Տարագճեակն արժանացած է բազմաթիւ մրցանակներու, որոնցմէ կրնանք յիշել Նախագահական շքանշան, Զայաստան 2018-ին, Նարեկացի շքանշան, Զայաստանի Մշակոյթի Նախարարութիւն 2015-ին եւ այլն:

Զանդիպումի փախցուած առիթի մը փոխարէն, հեռակայ գրոյցով կը կապուինք յարգելի բժիշկին եւ սիրելի արուեստագետին հետ:

1. Ժամանակի առումով՝ ինչպէ՞ս կը ներդաշնակուին արուեստագետն ու բժիշկը:

– Թէեւ շատ փոքր տարիքէս արուեստի հանդէպ հետաքրքրութիւն ունէի, բայց երկրորդականի աւարտին գիտական մասնագիտութեան հետեւիլ որոշեցի: Ուսումնական տարիները եւ անոր հետեւած ինքնահաստատման շրջանը, նկատի առնելով նոր երկրի մը ասպարէզը ծայրէն սկսելու պարտաւորութիւնը, թույլ չտուին արուեստով զբաղելու:

Շուրջ 25 տարի առաջ որոշեցի կանոնաւորապէս ազատ ժամեր գտնել ստեղծագործելու նախ՝ նկարչութեան եւ ապա քանդակագործութեան արուեստին մէջ:

Վերջին տարիներուն շաբթուան 4 օրերը բժշկութիւն կ'ընեմ, իսկ մնացեալը, ներառեալ շաբաթավերջը, արուեստի կը նուիրեմ: Եթէ ձեռքով

չեմ աշխատիր՝ միտքով նոր լուծումներ կ'որոնեմ:

2. Տեղի առումով՝ անշուշտ որ արուեստանոց մը ունիք, տա՞ն մեջ, թե այլ վայրի մը մեջ: Այս հարցումս, կը հասկնաք, կը կապուի երկու մասնագիտութիւններու միահիւսումին, եթէ մօտ չըլլան, ինչպէ՞ս հիւսուին:

– Արուեստանոցս տանս մեջ է եւ կ'արտօնէ աշխատիլ ըստ քմայքիս եւ ներշնչումիս:

Բժշկական ծառայութիւնը անշուշտ կը մատուցուի մեր քլինիքէն ներս, գոր կը բաժնեմ տիկնոջս Սալբիին (Յակոբեան) հետ:

3. Ինչպէ՞ս գտաք ձեր ոճը, որ իրապէ՞ս խիստ ինքնուրոյն է:

– Տրուած ըլլալով որ արուեստի մասնագիտական ուսում չեմ ստացած, կը ստեղծագործեմ հետեւելով ներքուստ բխած ուղղութեան:

Նախքան համացանցի ընդհանրացումը, լաւագոյն թանգարանները այցելած եւ արուեստի գործերը տեսած եմ: Այսօր արդէն այդ բոլորը համացանցով հասանելի են: Չանոնք ուսումնասիրելով, անոնց թողած տպաւորութիւնը միախառնուելով, ծնունդ կու տայ ուրոյն ոճի մը:

4. Ազդեցութիւններ կրա՞ծ էք որպէս քանդակագործ. որմէ՞:

– Համբաւաւոր քանատահայ քանդակագործ Արթօ Չաքմաքչեան իմ շատ լաւ բարեկամն էր: Ան յաճախ ցուցմունքներ կու տար, յատկապէս թեքնիք տեսակէտէ: Ի վերջոյ պրոնզեայ քանդակներ պատրաստելը շատ բարդ եւ երկարատեւ գործընթաց մըն է: Այսուհանդերձ իմ եւ անոր ոճը բոլորովին տարբեր են:

5. Յաճախած էք Հալէպի «Սարեան» ակադեմիան, հոն նախ կը գծէի՞ք, թէ ուղղակի քանդակով սկսաք: Ո՞վ էր քանդակի ձեր ուսուցիչը: Ի՞նչ յուշեր կը պահէք Հալէպի «Սարեան» ակադեմիայէն:

– Պետք է խոստովանիմ որ «Սարեան» ակադեմիայի անունը սկսած էի նշել սկզբնական շրջանին, որպէսզի մարդիկ ասելի լուրջի առնեն արուեստս: Խորքին մեջ ես ինքնուս քանդակագործ մըն եմ: Ճշդեք, որ ինքնուսը անուսի համագործ է:

«Սարեան» ակադեմիա յաճախած եմ շատ կարճ ժամանակ մը՝ Չարեհ Գափլանի եւ Արսիւն Չօրեանի օրերուն:

Որպէս փոքրիկ տղայ իրենց ուշադրութեան կ'արժանանայի եւ այդքան միայն:

Գրչաձեւ ածուխի շերտով խաւաքարտին վրայ կ'ընդօրինակէի դիմացս դրուած գաճե արծան մը, կլկլակ մը կամ գոյգ մը գիւղական տրեխներ: Սխալ գիծերը սրբելու համար կը գործածէիք հացի (տոմունի) միջուկը: Ամեն շաբաթ գիս դասի տանող, ինձմէ տարեց զարմիկիս՝ Գեորգին հետ, պետք էր կանգ առնէիք Պապ ալ-Ֆարաճի հայ փռապանին մօտ՝ գնելու համար թարմ, փոքրիկ *պակէթ*, որուն բոյրը անդիմադրելի էր. դասը չաւարտած արդէն զայն խած-խած կերած կ'ըլլայի:

6. Ձեր արուեստին մասին եղած գրութիւններէն մեկուն մեջ ըսուած է. «Սարմիները կը կրեն ... չգարդարուած գեղեցկութիւն, որ կը սնանի էրոսի

Եւ վախի մէջ»: Թերեւս վախը հասկնալի է, որովհետեւ վերջին տասնամեակներուն բոլորս ալ այս կամ այն չափով վախի մէջ կ'ապրինք. բայց ի՞նչ կ'ըսէք էրոսի մասին, դուք դրա՞ծ էք ատիկա ձեր քանդակներուն մէջ:

– Կիրքը եւ վախը բնագոյային են եւ միշտ մաս կազմած են մարդ արարածի էութեան: Երկուքն ալ մարդկութեան գոյատեւման եւ վերարտադրման գրաւականներ են, ուստի շատ բնական է որ անոնք արտացոլուին արուեստի մէջ:

7. Դուք ձեզ սիրո՞ղ, թե՞ մասնագետ քանդակագործ կը համարէք: Ինչո՞ւ:

– Յաճախ կը նշուի թէ արհեստավարժ (professional) արուեստագետը այն է, որ արուեստով իր ապրուստը կ'ապահովէ: Այդ տրամաբանութեամբ՝ Վերնիսաժի նման կրպակներուն մէջ իրենց գործերը վաճառողները արուեստավարժ են:


Իմ պարագաս այդ չէ: Գործերս յաճախ կը վաճառեմ, բայց հաստատութիւններու, թանգարաններու եւ հանրային վայրերու գործերուն համար գումար չեմ գանձեր: Յայաստանի մէջ 12 թանգարաններու եւ հաստատութիւններու մէջ տեղադրուած գործերս նուիրուած են: Զանաւոր մէջ արդէն 4-րդ յուշարձանս պատրաստ է Օթթաուայի մէջ Մայիս ամսուն տեղադրուելու համար: Կ'ենթադրեմ, որ արուեստս սիրողական կարելի չէ անուանել:

8. Վերջերս այցելեցիք Եգիպտոս, ուր հնագիտական կոթողները մեծամասնութեամբ արձաններ են, մանաւանդ Լուքսոր-Ասուանի շրջանը: Ի՞նչ էր ձեր տպաւորութիւնը եւ տարածքը կրցա՞ւ ներշնչել ձեզ:


– Եգիպտոս այցելութիւնս միայն զբօսաշրջութիւն չէր, այլ հազարամեակներու վաղեմութիւն ունեցող մշակոյթը ուսումնասիրել էր:

Հակառակ որ միշտ պատկերները տեսած ենք, բայց կը շշմիս երբ դեմ յանդիման կը գտնուիս այդ կոթողային ճարտարապետութեան եւ քանդակագործութեան: Թանգարանին մէջի դիմաքանդակները հազարամեակներու խորքէն նայելով կարծես քեզի բան մը ըսել կ'ուզեն:

Փարաւոններու խորափոր գերեզմաններու սրահներուն որմնակարները տակաւին կը պահեն իրենց խայտաբղետ գոյները: Չարմանալին այն է, որ անոնք ստեղծուած են առյաւէտ թաքուն եւ անտեսանելի մնալու համար, առ ի յաւերժացում հանգուցեալի հոգիին: Այսօր անոնք լոյս աշխարհի բերուելով, փառաւոններուն անմահանալու տենչը իրականացած կ'ըլլայ, հոգ չէ թէ իրենց երեւակայածէն տարբեր ձեւով:



ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄՈՂ ԱՂԷՏՆԵՐ



Անցեալ շաբթուան գրութիւնս դրկած էի, երբ Յայաստանի դէմ այս նոր պատերազմը պայթեցաւ, ինչպէս շատերս կը սպասէինք արդէն: Ուրիշներ չէին հաւատար, թէւ մէկ առաւել մէկի պատկերը աւելի քան յստակ էր: Նշանաւոր խօսք մը կայ, որ յաճախ կը յիշուի՝ «*Երբ նոյն քայլերը կ'առնես, ինչպէ՞ս կը սպասես որ արդիւնքը տարբեր ըլլայ*»: Եթէ ուրիշներու խրատ տալու համար է, 100 % համոզուած կ'ըլլանք այս խօսքով, բայց երբ կարգը մեզի գայ, կը մոռնանք, նոյն բաները կ'ընենք եւ կը գարմանանք որ նոյն արդիւնքին հասեր ենք, մանաւանդ՝ ժխտական արդիւնքի: Սօստեցող վտանգը շատ աւելի շուտ հասաւ, քան կը կարծէինք եւ կը հաւատայինք:

Իսկ Երեւանի մէջ փառատօսներ կային: Երեւանը Չինաստանի մայրաքաղաքը չէ, որուն Սիշուանը մայրաքաղաք Պեյճինկէն 17 ժամ 25 վայրկեան հեռու ըլլայ: Բայց մենք այդքանէն ալ աւելի հեռու կը զգայինք, որովհետեւ չէինք հաւատար, որ վտանգը իրապէ՛ս մօտ է, որ կրնայ որեւէ պահու խուժել մեր կեանքերէն ներս: Չէինք ուզեր ընդունիլ նաեւ, որ երկիրը իր ճակատագրին լքուած ըլլալ կը թուի:

«Երեւանը անջատ տարածք մըն է կարծես. եւ մինչեւ երեւանցիք մեծ ցնցում մը չապրին, պիտի չկարենան երեւակայել թէ ի՞նչ կրնայ պատահիլ» կ'ըսեն սփիւռքահայ երիտասարդներ, որոնք կ'ապրին ու կ'աշխատին Երեւանի մէջ: Կրնայ պատահի՞լ: Պատահած է արդէն եւ շատ շատեր տազնապի մէջ են՝ ի՞նչ ընել, ինչպէ՞ս դասաւորել առօրեան... Զիմա ի՞նչ ընենք: Ամբողջ երեսուն տարի Սփիւռքը իր կարելին եւ անկարելին ըրաւ Յայաստանի համար, շատ յաճախ «իր բերնէն կտրեց» Յայաստան դրկելու, ինչպէս էր պարագան կարգ մը անգլերէն հանդեսներու, որոնք թէւ շատ կարելոր էին հայ գրականութիւնը տարածելու առումով (RAFT, Ararad), բայց դադրեցան:

Փոխարէնը ի՞նչ ուզեց Սփիւռքը Յայաստանէն. ուզեց որ իր հայրենիքը բարգաւաճ ըլլայ, ուզեց որ ապահով ըլլայ այսօրուան եւ գալիք սերունդներուն համար, – մանաւանդ որ երեք կողմէ թշնամիներով շրջապատուած է, – ուզեց որ այս երկիրը լաւագոյնը ըլլայ իրեն եւ բոլոր հայերուն համար, առանց մենք-դուք-ի, ներս-դուրս-ի, ախպարներու թէ արեւելա-արեւմտա-ի տարբերութիւններուն:

Չեղաւ: Որքան երկիրը գեղեցկացաւ, այնքան թշնամիին ախորժակները գրգռուեցան, այնքան ժողովուրդը մեղկացաւ, ուզեց «իր օրը վայելել»: Ինչպէ՞ս սակայն վայելել այսօրը, առանց վաղուան ապահովութեան: Զիմա ի՞նչ ընենք: Սփիւռքը ինք, որպէս ժողովուրդ, արդէն սպառած է, յոյսի եւ յուսահատութեան միջեւ օրօրուելով: Բարեբախտաբար կան կազմակերպութիւնները, որոնք օրն ի բուն կ'աշխատին բան մը ընելու համար: Զիմա բնաւ պայման չէ որ մենք, որպէս ժողովուրդ գիտնանք թէ անոնք ի՞նչ կ'ընեն, որովհետեւ յաճախ կիսատ-պռատ բաներ գիտնալով, կրնանք խանդավառուիլ եւ... խոչընդոտել աշխատանքները: Չգիտնալը սակայն պայմանաւոր է վստահութեամբ եւ միասնականութեամբ: Ո՞ր են այս երկուքը: Մանաւանդ վստահութիւնը: Կը տեսնէք որ բոլոր հարցադրումները մե՛ր, հայերուս շուրջ կը բեւեռուին:

Ի վերջոյ մեր երկիրը մենք է որ պիտի պահենք եւ ոչ ուրիշները: Բայց, ըստ երեւոյթին, այսքանը այնքան ալ յստակ չէ շատերուս համար, որովհետեւ կը շարունակուին մենք-դուք-ի «կնիկական» վեճերը, ելք չունեցող բարբառնջանքները, մեզ մոլորեցնող ելոյթները: Ի գուր մարդիկ

իրար կը յորդորեն գուսպ ըլլալ. բարեկամուհիս Անահիտ Արամունին գրեր է իր պատին. «Յայտոյախառն, մաղձոտ եւ թունոտ ձեր խօսքերով նախ դուք ձեզի կը վնասէք, որովհետեւ մաղձը ինքնակեղեքող, ինքզինք թունաւորող յատուկութիւն ունի. մաղձը նաեւ ձեզ կը տգեղցնէ, կ'աղձատէ ձեր կերպարը: Մաղձ ու թոյնով դուք նաեւ ձերիններուն կը վնասէք, ձեր գործակից ընկերներուն, կը թունաւորէք միջավայրը: Բաֆֆին, Դեմիրճեանը, Թումանեանը եւ խեղճ ուրիշներ որքան գրեցին, որքան յորդորեցին... անօգուտ: Եթէ շատ չըլլայիք, կարելի էր հեռանալ, ձեզ մեկուսացնել. Բայց շատ էք»:


Պահ մը կը դիտեմ շուրջս, մեր երկրէն մինչեւ շրջակայ երկիրներուն մէջ աւելի քան կէս դար է ի վեր ընթացող պատերազմները: Մտածումը որ կու գայ, կը շանթահարէ զիս՝ կրնա՞յ ըլլալ որ մենք, դարերէ ի վեր սխալ հասկցեր ենք կեանքը, որ խաղաղ եւ արդիւնաբեր առօրեայով ապրիլը չէ, այլ անընդհատ կռիւներ եւ պատերազմներ սարքելով, անհատական թէ հաւաքական կեանքի մէջ, չունեցածին տիրելով: Բայց ո՞վ է ընդհանրապէս որ անընդհատ կ'ուզէ կռիւներով ինքզինք փաստել: Անշուշտ ան, որ ինքնավստահութիւն չունի իր ուժերուն վրայ եւ կռիւ-պատերազմով կ'ուզէ հաստատել ինքզինք, իր պետութիւնն ու իր աթոռը:

Անշուշտ նաեւ սուտերով, իսկ սուտին դէմ դնելը շատ դժուար բան է, որովհետեւ, – եւ այս մէկը դեռ չեմ հասկցած, – մարդիկ եւ հաւաքականութիւններ շատ աւելի արագ հաւատք կ'ընծայեն սուտին, քան ճշմարտութեան: Որքան ալ փորձենք բացատրել եւ տրամաբանական պատճառներ գտնել, այս կրկնուող պատերազմը կը ջլատէ մեզ բոլորս թէ՛ որպէս անհատներ, թէ՛ որպէս ազգ: Երբ 1988-ին Յայաստանի երկրաշարժը աւերեց Սպիտակը, Կիւմրիին եւ ամբողջ գիւղեր, ինծի համար շատ դժուար էր առօրեայ սովորական աշխատանքներս կատարելը:


Չաւակներս փոքր էին տակաւին. ամէն օր գիրենք դպրոց ճամբել կար, ճաշի եւ ընթրիքի պատրաստութիւն կար, առտնին գործերը կային եւ այլն: Բայց ամէն անգամ որ բան մը կ'ընէի, ինձմէ անկախ միտքս կ'երթար երկրաշարժէն վերապրածներուն, որոնց վերքերը որքան ֆիզիքական, նոյնքան եւ աւելի հոգիի խոցեր էին: Արցունքը չէր հոսեր, որովհետեւ գիտէի որ պէ՛տք է շարունակեմ առօրեաս եւ փորձեմ օգնութեան միջոցներ գտնել: 44-օրեայ պատերազմը շատ աւելի ծանր էր իր բերած յոյսով, որ շատ արագ յուսահատութեան վերածուեցաւ, ապա, զոհերուն թիւն ու տարիքը իմանալով, դարձաւ չսպիացող վերք մը, նոյնքան առօրեայական տագնապ ստեղծելով: Չաւակներս մեծցեր էին եւ իւրաքանչիւրը իր կեանքը ուներ արդէն:

Բայց առօրեայի իւրաքանչիւր ժամուն չէի կրնար չյիշել զոհուածներուն մայրերը, որոնց ցաւը չեմ համարձակիր ըսել որ կը հասկնամ. ոչ ոք կրնայ գաւակ (երբեմն՝ գաւակներ) կորսնցուցած մօր մը տառապանքը չափել: Կը խորհէի թէ այդ վերջընթեր պատերազմին ելքը եւ զոհերուն թիւը մեզի համար պիտի ըլլային արթնցնող այն ցնցումը, որ մեզ պիտի դարձներ աւելի խոհեմ, աւելի դիւանագետ, աւելի հեռատես, աւելի լուրջ:

Բայց ահա կրկին նոյն ոլորապտոյտին մէջ ենք. այս անգամ ելքն իսկ յստակ չէ: Ի՞նչ ընել: Հռետորական չէ այս հարցումը, այլ ճիշդ հակառակը՝ օրհասական հարցում մըն է, որուն պատասխանը եթէ ամբողջ հայութիւնը միակամօրէն չգտնէ, այն ալ՝ շատ արագ, յստակ չէ թէ վաղուան օրը ի՞նչ պիտի բերէ մեզի:



**ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԱՄՓՈՓՈՒՄ**



13 Յունիս 2025-ին սկսած Իրան-Իսրայել պատերազմի 10-րդ օրը հետեւեալ յայտարարութիւնը կը լսենք, յայտարարութիւն, որ խորքին մէջ ամփոփում մըն է, սակայն շլմորեցնող եւ քիչ մըն ալ անհասկնալի.

«Իսրայել կը հարուածէ Իրանը, Իրան կը հարուածէ Իսրայելը, Ամերիկա կը հարուածէ Իրանը, Իրան կը հարուածէ Քաթարը, Ամերիկա շնորհակալութիւն կը յայտնէ Իրանին, Իրան ներողութիւն կը խնդրէ Քաթարէն. Քաթար կը միջնորդէ զինադադարի համար, Իսրայել շնորհակալութիւն կը յայտնէ Քաթարին. Քաթար շնորհակալութիւն կը յայտնէ Իրանին, իսկ Ամերիկա կ'աւետէ՝ խաղաղութիւնը սկսաւ...»:

Բան մը հասկցա՞ք...

Ժողովուրդը չի գիտեր ի՞նչ ընել, որո՞ւ դէմ պատերազմիլ՝ փորձանքի՞ն, տգիտութեա՞ն, համաճարակներո՞ւն, սղաճի՞ն թէ անմարդկութեան... Մարդկային պատմութեան մէջ ասկէ աւելի դառն ժամանակաշրջան չէ եղած:

Այս ըսողները կ'երեւի ծանօթ չեն այն օրերուն, երբ Բրիտանական կայսրութեան մէջ մարդու միս... կը վաճառուէր, որովհետեւ... սպանուողները շատ էին, իսկ ուտելիք չկար...

«Սուրիան պարտուեցաւ մամուլի ծամբով, Իրաքը պարտուեցաւ մամուլի ծամբով, Ալճերիան պարտուեցաւ մամուլի ծամբով, Եգիպտոսն ալ պիտի պարտուի մամուլի ծամբով, զինուորական կերպով պարտուելէն առաջ», կ'ըսէ այս օրերուն վիտացող քաղաքական մեկնաբաններէն մէկը: Ինչո՞ւ: Որովհետեւ արաբական բոլոր երկիրները ուշք չդարձուցին մամուլին, մամուլի պատերազմին, որ նորօրեայ զէնքերէն մէկն է, գլխաւորը, եթէ ոչ հզօրագոյնը...

«Սիրելի Ամերիկա, – կ'ըսէ իրանցի դեռատի աղջիկ մը, – անցնող 200 տարիներուն դուն խաղաղութիւն եւ տեմոքրըսի բերիք, շնորհակալ ենք, բայց... հիմա ատենն է որ փոխադարձենք՝ կը խնդրենք որ ա՛լ փոխես արտաքին քաղաքականութիւնդ. դո՛ւրս ելիր այս շրջանէն, դո՛ւրս ելիր Միջին Արեւելքէն. այս երկիրը չի նմանիր Միջին Արեւելքի մնացեալ երկիրներուն. Իրանը կա՛ր, կա՛յ եւ պիտի՛ մնայ... Իրանը չի՛ սիրեր յարձակիլ, քանդել, պատերազմիլ. Իրանի ժողովուրդը խաղաղասէր ժողովուրդ է, ոչ թէ քեզի նման՝ վայրագ, պատերազմներու սիրահար...»:

Պ՛ետք է իմանանք, թէ *«Մարդկային կարեկցանքին անհետ կորսուիլը, բարբարոսութեան մէջ իյնալու եզրին գտնուող մշակոյթի մը առաջին նշաններէն մէկն է»:*

Մարդկային կարեկցանքը սակայն վաղուց է որ անհետ կորսուէր է, նորութիւն չես ըսեր, տիկի՞ն փիլիսոփայ Յաննա Ա.

Սպանիոյ վարչապետը կասեցուցեր է տնտեսական յարաբերութիւնները Իսրայելի հետ...

«Իսրայելի սիրելի՛ համակիր. ծանր լուր մը ունիմ քեզի տալիք. գիտե՞ս թէ ինչ պատահեր է երէկ Նիւ Եորքի մէջ... Չահրան Մամտանի, իսլամ գաղթականը, որ թունդ ընդդիմադիր է սիոնիստականութեան, ընտրուէր է Նիւ Եորքի քաղաքապետ, Նիւ Եորքի մէջ, ուր հրեական մեծ գաղութ կայ եւ ուր 700 հազար հրեայ ընտրութեան մասնակցեր է... Ասիկա ի՞նչ կը նշանակէ. կը նշանակէ թէ կարելոր փոփոխութիւններ տեղի կ'ունենան... Ծճարտութիւնը կը կորսուի՛, կը կորսուի եւ ի վերջոյ ինքզինք

կը գտնէ ո՞ր... զանգուածային գերեզմաններու մէջ...»:

Ինչո՞ւ համար Արեւմուտքի մէջ կան բազմաթիւ կեդրոններ իսլամութիւնն ու արաբականութիւնը ուսումնասիրելու համար, իսկ արաբական երկիրներուն մէջ մէկ հատ նման կեդրոն չկայ: Ինչո՞ւ: Որովհետեւ այնտեղ հաճոյքի կեդրոններ կան միայն...

Այս ամբողջ իրարանցումին մէջ յիմար, անտրամաբանական, անհաւատալի լուր մը շրջան կ'ընէ ընկերային ցանցերուն վրայ՝ Ամերիկայի Քոնկրէսը որոշում գոյացուցեր է H.R.1161-ով նախագահ Թրամփին արտօնութիւն տալու, որ Կրին Լէնտը գնէ եւ անունը փոխէ, թէկուզ Կրին Լէնտը ըսած ըլլայ՝ «Մենք ծախու չենք...»: Եւ նախագահ Թրամփ ի՞նչ անուն որոշեր է Կրին Լէնտին համար... «Կարմիր, Ճերմակ եւ Կապոյտ երկիր» “Red, White, and Blueland”...

«Ամերիկան ներսէն կը քանդուի կոռորորոր» կը ճչայ մէկը, որովհետեւ բոլոր անոնք, որոնք պաշտօնականօրէն կեցութեան իրավիճակ չունին, դուրս դուրս եւ: Ասոր հետեւանքը այն եղեր է, որ սեւ աշխատանք կատարողները պակսեր են... Կրնաք ստեղծուած քառսը պատկերացնել:

Ի՞նչ հետաքրքրական է, որ Իսրայէլ բոլոր միջոցներով փորձեց պաղեստինցիները դուրս քշել երկրէն, բայց հիմա իսրայէլցիները իրենք են, որ գաղթականութեան ցուպը առած դուրս կու գան իրենց խոստացուած երկրէն (promised land)...

«Ինծի եթէ մնար, անցեալները, երբ Իրան հարիւրաւոր ռումբեր կ'արձակէր, մէկն ալ «սխալմամբ» կրնար Աքսա մզկիթին վրայ իյնալ, հիմնայատակ կործանել զայն եւ տեղ պատրաստել Երրորդ Տաճարին համար», կը յայտարարէ հրեայ լկտի քաղաքագետ մը, որ նաեւ պետական պաշտօն ունի:

«Ես գիրենք Իսրայէլէն դուրս կ'ուզեմ տեսնել. ատոր համար կրնանք օգտագործել ամէն միջոց, ինչպէս օրինակ արգիլել բոլոր մարդկային օգնութիւնները. եթէ աշխարհի երկիրները գիրենք շատ կը սիրեն, շատ կը մեղքնան, թող իրենց քով առնեն»: Ասիկա ըսողը՝ Տանիէլա Վայս (Daniella Weiss), թեկնածու է այս տարուան Նոպէլեան... խաղաղութեան մրցանակին, for her decades-long efforts in strengthening Jewish communities and promoting regional stability...: Ասկէ աւելի վաւերական զաւեշտ տեսա՞ծ էք: Բարեբախտաբար տակաւին կա՞ն բաց աչքերով դէպքերը դիտող մարդիկ, որոնք փոթորիկ բարձրացուցեր են ընկերային ցանցերուն վրայ այս խայտառակ թեկնածութեան համար, որ առաջարկուեր էր իսրայէլեան երկու համալսարաններու կողմէ: Զաւանաբար թեկնածութիւնը մերժուի:

Իսկ Քանադայի պետութիւնը ճիգ կը թափէ պաղեստինեան ինքնութիւնը ջնջելու, Պաղեստին ծնած անձերուն արգիլելով Պաղեստինը յիշել իրենց նորոգուած անցագրերուն վրայ, որպէս ծննդավայր: Պատմողը դեռատի քանատուի մըն է, որ Քանադա ծնած իր մեծ մօր օրինակը կը բերէ, ցոյց կու տայ հին անցագրին նկարը, ուր յստակօրէն նշուած է՝ ծննդավայր՝ ալ-Պասսա Պաղեստին եւ կ'ըսէ՝ «Ասկէ ետք Քանադայի մէջ արտօնուած չես Պաղեստին ծնած ըլլալ»:

Սպանիոյ մէջ շրջանէ մը ի վեր խաչմերուկներու լոյսերուն կարմիրին վրայ գրուած է՝ Stop Israel, իսկ կանաչին վրայ՝ Free Palestine: Յիշեցում,

որ ճշմարտութիւն ըլլալուն, թէեւ յիշեցումի պետք չէ կարօտի, բայց դժբախտաբար այդպէս չէ:

Հրեայ թղթակից Կիտեռն Լէվի կ'ըսէ.

«Երեք սկզբունքային պատճառներ, որոնք հրեաները կը մղեն առանց խղճահարութեան ապրելու այս ահաւոր վայրագութեան մէջ.

Ա. Գրեթէ բոլոր իսրայէլցիները, եթէ ոչ բոլորը, խորապէս կը հաւատան, թէ իրենք Աստուծոյ ընտրեալ ազգն են եւ կը տրամաբանեն՝ եթէ Աստուծոյ ընտրեալներն ենք, ուրեմն իրաւունք ունինք մեր ուզածը ընելու:

Բ. Պատմութեան մէջ շատ անելի վայրագ պատերազմներ եղած են. անելի երկար գրաւումներ եղած են, թէեւ այսօր Իսրայէլ իր գրաւումը կրնայ որպէս մրցանիշ դիտել: Բայց չէ՛ եղած պատմութեան մէջ այնպէս, որ գրաւողը ինքզինք ոչ միայն որպէս զոհ ներկայացնէ, այլ որպէս ՄԻԱԿ զոհը ներկայացնէ: Ասիկա պատճառ կը դառնայ որ իւրաքանչիւր հրեայ իր կեանքը հանդարտօրէն, առանց խղճահարութեան շարունակէ:


Գ. Երրորդն ու ամենէն վտանգաւորը՝ հերթականօրէն պաղեստինցիները ներկայացնել որպէս ոչ-մարդկային արարածներ... որովհետեւ եթէ անոնք ան-մարդկային արարածներ են, եթէ անոնք մեզի հաւասար մարդ չեն, ուրեմն մարդկային իրաւանց հարց չի մնար»:

Jeffrey Sachs¹ «Կը կարծեմ թէ կարելոր է գիտնալ, թէ այս պատերազմը ուրկէ՛ կու գայ. անիկա կու գայ Ուաշինկթընէն, ուր 2011 թուականին որոշուած էր գահընկէց ընել նախագահը: Խորքին մէջ սակայն որոշումը կու գար... Երուսաղէմէն, Իսրայէլի պետութեան փափաքը եղած է 25 տարիէ ի վեր. Նեթանիահուն կ'ուզէր Միջին Արեւելքը Իսրայէլի պատկերով «կերտել», քանդելով երկիրը շրջապատող մնացեալ երկիրները, որոնք հակառակ եղած են Ի.ին. Օպամային օրերէն ասիկա որոշուած է, CIA-ի միջոցով ճիհատիսթներ մտցնել երկիրը եւ քառս ստեղծել: Սուրիոյ պատերազմը մէկն է ծրագրուած վեց պատերազմներէն, Լիբանանի, Լիպիոյ, Իրաքի, միակ պատերազմը, որ չպատահեցաւ, Իրանի հետ էր (ինչ որ այսօր արդէն կատարուած իրողութիւն է...): Գործողութիւնը կը կոչուէր operation timber sycamore, որուն համար Ուիքիփետիան կ'ըսէ.

«“Timber sycamore”-ը գէնքի գաղտնի մատակարարման եւ վարժեցման ծրագիր էր, որ կը վարէր ԱՄՆ-ի Կեդրոնական հետախուզական գործակալութիւնը (CIA) եւ որուն կ'աջակցէին Մեծ Բրիտանիայի եւ որոշ արաբական հետախուզական ծառայութիւնները, ինչպէս Սեուտական Արաբիոյ հետախուզութեան ծառայութիւնը: Ծրագրին նպատակն էր Սուրիոյ նախագահը իշխանութենէ հեռացնել»:

Եւ վերջապէս՝ հրեայ երիտասարդ մը նկարեր է դիտելու հարթակ մը (viewing platform), ուր իսրայէլացիք կ'երթան Կազգայի ռմբակոծումները դիտելու... No comment.

¹Ճեֆրի Տէյվիտ Սաքս- ամերիկացի տնտեսագէտ եւ հանրային քաղաքականութեան վերլուծաբան է, փրոֆէսոր Քոլումպիայի համալսարանէն ներս, ուր նախապէս տնօրէն եղեր է: Աշխատեր է կայուն զարգացման եւ տնտեսական զարգացման թեմաներու վրայ:



ՈՐՈՒՎԱՍՏԱՆԻ

Որո՞ւ կամ ինչի՞ վստահիլ:

Գաղափար ունի՞ք Chat GPT կոչուած կիրարկութեան մասին:

Բայց նախքան անոր մասին խօսիլը, թոյլ տուէք յիշեցնել, թէ ոչ շատ հեռու անցեալին, այսինքն 20-րդ դարու կեսերուն, երբ հայ մամուլը բաւական աշխոյժ էր Սփիւռքի մէջ, եւ տակաւին համացանցային լրատուամիջոցները այնքան տարածուած չէին, մարդիկ ի՛նչ անհամբերութեամբ կը սպասէին թերթերուն, ոչ միայն անոնցմէ լուրեր քաղելու, այլեւ մանաւանդ՝ այդ լուրերուն հանդէպ կարծիք կազմելու եւ կեցուածք ճշդելու համար:

Յետոյ հեռատեսիլը եկաւ փոխարինել մամուլը, սփռելով լուրեր, վերլուծումներ ընելով եւ երբեմն նոյնիսկ կարծիք պարտադրելով – անշուշտ այնպիսի միջոցներով, որոնց մէջ բնաւ երեւելի չէ պարտադրանքը:

Յետոյ եկաւ համացանցը: Սկիզբը լաւ էր, դիւրին, արագ եւ հեշտ միջոց էր աշխարհի չորս անկիւններէն, նոյնիսկ ամէնէն հեռու վայրերէն լուրեր լսելու եւ կարծիքներ ստանալու:

Յետոյ, կամաց-կամաց անդրադարձանք, որ համացանցը այնքան ալ վստահելի միջոց չէ, որովհետեւ հոն իրաւն ու սուտը, ճիշդն ու սխալը նոյնքան համոզիչ ձեւով կը ներկայացուին, դժուարացնելով, շատ դժուարացնելով իրաւը սուտէն զատորոշելը:

Եւ հիմա՝ ա՛յս Chat GPT-ին:

Գաղափար ունի՞ք անոր մասին. ես չունեի. ահա թէ ինչպէ՛ս կը բացատրէ համացանցը այս նորութիւնը.

«ChatGPT-ն AI-ով (Արհեստական Բանականութիւն) աշխատող լեզուի կիրարկում մըն է, որ մշակուել է OpenAI-ի (բաց Արհեստական Բանականութիւն) կողմէ եւ որ կարողութիւն ունի մարդու նման գրութիւն մը ստեղծելու, անցեալի գրոյցներու եւ համաթեքստերու վրայ հիմնուելով»:

Այս միջոցով է, որ վերջերս համալսարանի ուսանողներ իրենց աւարտաճառերը կը գրեն, եւ նեղմասնագիտութեան տէր անձէ մը զատ ոչ ոք կրնայ փաստել, թէ ո՛չ թէ ուսանողը, այլ... կիրարկումը ինք է որ գրեր է ամբողջ աւարտաճառը:

Նոյն այս կիրարկումը կրնայ ամէնէն բարդ հարցումներուն պատասխանել, եւ եթէ հարցնողը չգոհանայ պատասխանով, կրնայ աւելի մանրամասն հարցում ուղղել, եւ կիրարկումը, հնազանդ աշակերտի նման կը պատասխանէ այդ եւ յաջորդաբար եկող որեւէ հարցումի, որեւէ նիւթի շուրջ, նոյնիսկ անսպասելի կամուրջներով իրարու առնչելով ամբողջովին անկապ նիւթեր:

Երկու ընկերներ կը գրուցեն.

– Ի՞նչ է այս Chat GPT ըսուածը:

– Օ՛, շատ հաճելի ծրագիր մըն է. ես անով բանաստեղծութիւն

կը գրեմ:

– Իրա՞ն,– կը զարմանայ եւ քիչ մըն ալ կը նեղանայ խօսակիցը գրական այս «խանդավառութեան» ի տես:

– Այո՛, բանաստեղծութիւններ կը գրեմ եւ կը դրկեմ իմ մտերիմ բարեկամին, որ խորհրդական մըն է. մարդը իրապէ՛ս համոզուած է որ ես կը գրեմ այդ քերթուածները:

Գիտութեան նուաճում մը անշուշտ. *«Մերդ մեռնի, գիտութի՛ն»*, պիտի ըսեր հայաստանցին:

Բայց... Եթէ այս այսպէս է, որո՞ն վստահիլ ուրեմն ասկէ ետք. ո՛չ հեռատեսիլէն լսուածը, ո՛չ համացանցէն իմացուածը, ո՛չ իսկ թերթերուն մէջ գրուածը կրնայ վաւերական ըլլալ, ճշմարիտ ըլլալ:

ChatGPT-ի օգտագործումը՝ հարցերուն պատասխանելու, բովանդակութիւն ստեղծելու, կանոնաւորող (code) ծրագրեր եւ այլ սովորական առաջադրանքներ կատարելու համար, ընդհանուր առմամբ անվտանգ է, եթէ ուշադրութիւն դարձնէք ձեր տարածած տեղեկատուութեան: Այս կիրարկումին ետեւ կեցող ընկերութիւնը՝ OpenAI-ը՝ անվտանգութեան բազմաթիւ միջոցներ կ'օգտագործէ, զայն ճիշդ օգտագործելու եւ անկէ ծնած կամ ծնելիք վտանգները նուազագոյնի իջեցնելու համար: Այսպէս կ'ըսէ կիրարկումը ինք, երբ այդ մասին հարցում տաս իրեն: Կարելի՞ է վստահիլ սակայն կիրարկումի մը, որուն գլխաւոր առաջադրութիւնը մարդկային ուղեղը կապկէլն է: Թե՞ արդեօք հարցումը սխալ կը ձեւակերպեմ:

Ինչպէս այլ կիրարկումներ, ChatGPT-ն եւս սկսած է զարգանալ եւ հիմա արդէն կրնայ ինքնուրոյն ձեւով (կարելի՞ է հասկնալ՝ ինքնագլուխ) գրութիւն, պատկերներ, ձայներ, ծրագրային ապահովում եւ այլ թուային միջոցներ (media) արտադրել:

– Յեղափոխական նուաճում մըն է ասիկա գիտութեան մէջ, բայց... կարելի չէ անոր 100% վստահիլ. շատ զգոյշ ըլլալու է, որովհետեւ տեղեկութիւնները որոնք կու տայ, ճիշդ կը հնչեն, բայց թե՛ ընդհանուրին, թե՛ մանրամասնութեան մէջ կրնան ճիշդ չըլլալ,– կ'ըսէ մասնագետ մը:

«Ճիշդ կը հնչեն» խօսքը շատ զիլ կը հնչէ ականջիս, ցաւցնելու չափ զիլ, թէեւ պարզօրէն ըսուած է, եւ կը խտացնէ այս դարուն մեծագոյն թերութիւնը, որ կրնայ նաեւ որպէս յատկութիւն երեւիլ. որովհետեւ այսօր ոչ ոք պատրաստակամ է հարցերուն եւ երեւոյթներուն խորքը հասնելու, խորքայինը նկատի առնելու. գրեթէ ամեն մարդ կը գոհանայ երեւութականով եւ իր ըսելիք-ընելիք-գրելիքը կը հիմնէ անոր վրայ...

Լաւը այն է, որ երբ կը հարցնես նոյնինքն այս կիրարկումին, թէ ի՞նչ են իր յատկութիւններն ու թերութիւնները, ինք ամենայն անկեղծութեամբ կը պատասխանէ.

- Ժամանակի խնայողություն.
- Կը յուշէ այն, ինչ որ հարկաւոր է բան մը սկսելու համար...
- Գրաւոր օգնութիւն.
- Գրելու հետ կապուած բոլոր հարցերուն Chat GPT-ն կրնայ պատասխան տալ.
- Ուսուցում + կատարելագործում.
- Չափէն աւելի վստահութիւն.
- Կը սահմանափակէ ստեղծագործութիւնը.
- Բանագողութիւն:

Այլ հարցում մը ինքզինք կը զգացնէ՝ ի՞նչ է առնչութիւնը ասոր եւ Արհեստական Բանականութեան (Artificial Intelligence), եթէ ընդհանրապէս առնչութիւն կայ:

Նոամ Չոմսքի, հրեայ-ամերիկացի լեզուաբանը, որ նաեւ հիմնադիրներէն մէկն է ճանաչողական գիտութիւններու, քաղաքական աշխոյժ քաղաքագետ մըն է, ընկերային քննադատ մը եւ ընդդիմադիր՝ Իսրայելի պաղեստինեան քաղաքականութեան, կ'ըսէ.

«Մարդուն ուղեղը ChatGPT-ի եւ մնացեալ գործիքներուն նման չէ, որ կրնայ տեղեկատուական հարիւրաւոր թերապայթ կուլ տալ, ամենէն տրամաբանական պատասխանը տալու համար գիտական հարցումի մը»:

«Ճիշդ հակառակը՝ մարդկային ուղեղը արդիւնաւետ եւ նուրբ համակարգ մըն է, որ կրնայ սահմանափակ տուեալներով ալ բանիլ»:

«Յետեւաբար, կ'ըսէ հեղինակը, պետք է դադրիք Արհեստական Բանականութիւն կոչելէ այս կիրարկումը, եւ անոր տանք իր ճշգրիտ ըրածին անունը՝ «բանագողական ծրագիր», որովհետեւ այդ ծրագիրը ոչինչ կը ստեղծէ, պարզապէս կ'ընդօրինակէ արուեստագետներու գործերը եւ կը ձեւափոխէ զանոնք այնքան եւ այնպէս, որ կարելի ըլլայ խուսափիլ իրաւունքներու կանոններէն: Այս ծրագիրը եւրոպացիներուն Ամերիկայի գրաւումէն ետք մտային սեփականութեան մեծագոյն գողութիւնն է» (Noam Chomsky, New York Times - 8 March 2023):

Անշուշտ Չոմսքիի ձայնը հազիւ թէ կը լսուի համաշխարհային «խանդավառութեան» եւ թոհուբոհին մէջ: Մարդիկ կը շարունակեն սքանչանալ նման ծրագրերով եւ օգտագործել զանոնք, առանց անդրադառնալու շատ էական խնդիրի մը՝ վստահութեան...

Պահ մը կը թուի, թէ բոլորս ալ խաղալիքներ ենք այս ծրագրերուն ճանկը ինկած:

Այս բոլորը գիտնալէ ետք՝ որո՞ւ վստահիլ:



ՉԱՐԸ ԵՒ ՄԵՆՔ

Քանի մը օր առաջ յարգելի Յարութ Թօփճեան դիմատետրի իր էջին վրայ գրեր էր «Ինչո՞ւ Չարը» յօդուածը, որ երկու բաժին ուներ՝ Չարին Ճագումը եւ Չարը Մեր Մէջ:

Չարին գոյութիւնը ընդհանրապէս միշտ նեղութիւն պատճառած է ինծի. Թօփճեան իր յօդուածով կարծեք ձայն կու տար այդ նեղութեանս:

Ինք ընդհանրապէս կ'անդրադառնայ չարին Ս. Գրային դիտանկիւնով, բացատրելով չարին գոյութիւնը, եւ իր մտորումները կը սկսի հին յունական փիլիսոփայութենէն՝ հետաքրքրական ձեւով.

«Յոյն հին իմաստասերները, տիեզերքի մասին իրենց ուսումնասիրութեանց ընթացքին տեսան, թէ չարը երեւակայական բան մըն էր եւ չար թուող իրողութիւն մը բարի էր՝ եթէ հարցին մօտենայինք ընդհանուրին շահը նկատի առած:

«Այսպէս, մահը չարիք մը կը թուի մեզի, այսուհանդերձ՝ աշխարհի վրայ, կեանքի գոյատեւման համար անհրաժեշտութիւն մըն է ան ու բարիք մը մարդկութեան: Օրինակի համար, եթէ 7 տարուան ընթացքին ոչ մէկ միջատ մեռնելու ըլլար, գիտնականներու հաշուով՝ մարդկութիւնը այդ 7 տարիները լրանալուն պիտի ջնջուէր երկրիս վրայէն: Բարեբախտաբար թռչունները այնպիսի ջարդ կու տան միջատներուն եւ անոնց անհամար թրթուրներուն, որ մարդկութիւնը կ'ազատի անխուսափելի ոչնչացումէ»:

Կրօնական փիլիսոփայութեան մէջ չարին գոյութիւնը կամ անոր ծագումը նիւթին կը վերագրուի: Ասիկա ճիշդ է մինչեւ այսօր ալ, մանաւանդ երբ գրեթէ ամէն մարդ, բայց շեշտուած կերպով քաղաքական գործիչները, միջոցներուն միջեւ խտրութիւն չեն դնել իրենց նիւթեղէն նպատակներուն հասնելու համար:

Եթէ դիտենք պատմութիւնը, պիտի տեսնենք թէ միշտ այդ եղած է պատերազմներուն պատճառը՝ տիրել ուրիշի ունեցուածքին:

Թերեւս հասկնալի ըլլար այդքանը, եթէ նպատակը իրը պաշտպանել ըլլար. մարդ ի վերջոյ պարտաւոր է իր ունեցածը պաշտպանել, մանաւանդ՝ հողը. այս դիտանկիւնով է որ ըսուած է՝ խաղաղութիւնը պատերազմով պետք է պահել:

Հարցը կը բարդանայ սակայն, երբ ո՛չ թէ խաղաղութիւն պահելու, այլ ուրիշին ունեցածը խլելու նպատակով չարը ի յայտ կու գայ:

Կարելի չէ՞ր որ հայերը շարունակէին իրենց երկրին մէջ ապրիլ, ինչպէս որ ապրեր էին. պէ՞տք էր նման ջարդ մը ծրագրել եւ իրագործել: Բայց պէ՞տք էր հայերուն ձեռքէն խլել իրենց ունեցուածքը, ոտքի պահելու համար օսմանեան պետութիւնը այդ հարստութեամբ:

Նոյնն է պարագան հրեաներու ողջակիզումին, կամ այսօր Պաղեստինի կրած ահաւոր տառապանքներուն: Ի՞նչն է որ կը խանգարէ կողքիները, որ այսքան անմարդկային կերպով

վերաբերին ամբողջ ժողովուրդի մը հետ: Տեղ չունի՞ն իրենց ժողովուրդին համար, որուն սփիւռքը շա՛տ աւելի մեծ թիւ կը կազմէ:

«Մոնիստական (Monism) վարդապետութիւնը կարծեց լուծած ըլլալ չարի ծագման հարցը, երբ յայտարարեց՝ թէ չարի եւ բարիի ստեղծիչը միեւնոյն ուժն է, որ երբեմն բարի բաներ կ'արարչագործէ եւ երբեմն՝ չար» կ'ըսէ Թօփփեան եւ կը շարունակէ.

«Չարի ծագման հարցին մասին աւելի տրամաբանական պատասխան մը գտած է պարսկական կրօնքը իր երկմատեան/ Dualistic/տեսութեամբ»:

«Ան ընդունած է երկու ստեղծիչ ուժեր. Որմիզդ՝ բարիի ստեղծիչը եւ Ահրիման՝ (Ահուրա-Մազդա) չարի ստեղծիչը: Ուստի տիեզերքի մէջ ինչ չափով որ բարի նիւթ կայ, ստեղծուած է բարի աստուծոյ՝ Որմիզդի կողմէ եւ որքան որ չար, վատ ուժ կայ, ստեղծուած է չար աստուծոյ՝ Ահրիմանին կողմէ. ու այս երկու ուժերը տեւապէս պայքարի մէջ են իրարու հետ: Պարսկական այս հաւատքը իրողութեան մէջ բացարձակ երկուութիւն մը չի յայտնէր, որովհետեւ պարսիկներ կը հաւատային, թէ վերջնական յաղթանակը բարի ուժը, այսինքն Որմիզդը պիտի տանէր»:

Կարելի է եզրակացնել, որ չարը «Աստուծոյ տնօրինութիւններուն դէմ ըմբոստացող ուժ մըն է»:

Մարդիկ հակուած են չարին կողմը, պարզապէս որովհետեւ չարը... դիւրին է. նոյնիսկ բամբասանքի նման ամենէն պարզ արարքին մէջ, մարդիկ անմիջապէս կը հաւատան վատին, մինչ եթէ նոյն պահուն մէկը լաւ բան ըսէ, անմիջապէս կը ջրեն ...

Յստակ է նաեւ, որ անհատական չարութիւնը իր չափերով կը տարբերի հաւաքականէն, որ խորքին մէջ պատերազմներու կը տանի: Իսկ պատերազմը մեծագոյն չարիքն է մեր երկրագունդին համար, կասկած չի կրնար ըլլալ:

Այս օրերուն, երբ մեծ երկրի մը ղեկավարը մեծ եւ անհեթեթ յայտարարութիւններ կ'ընէ (մարդուն մէկը հարցուցեր է՝ ինչպէ՞ս հասկցար որ ըսածս սուտ է, պատասխաներ են՝ մեծութենէն), չենք կրնար չյիշել այլ դէմք մը՝ Clarence Budington Kelland, Յանրապետական կուսակցութեան երբեմնի գործադիր տնօրէնը, որ հետեւեալ յայտարարութիւնը ըրեր էր 1943 թուականին, Յամաշխարհային Երկրորդ Պատերազմէն առաջ.

«Խաղաղական ովկիանոսը պէ՛տք է ամերիկեան լիճ ըլլայ»:

Է.Բ. White թղթակիցը շատ հետաքրքրական պատասխան մը կու տայ, որ ի զօրու կը մնայ մինչեւ այսօր նաեւ, այդ նոր յայտարարութիւններուն դիմաց. Ուայթ կը գրէ.

«Խաղաղական ովկիանոսը, վճռականօրէն կ'ըստ Clarence Budington Kelland, պէտք է դառնայ ամերիկեան լիճ: Յասկնալի չէ, թէ ինչո՞ւ պէտք է դառնայ ամերիկեան լիճ, եւ ոչ թէ, ըսենք, չինական կամ ռուսական լիճ: Չինացիները ամերիկացիներէն հազարաւոր տարիներ առաջ ծովափնեայ բնակիչներն էին Խաղաղական

ովկիանոսի երկայնքով, նոյնիսկ հիմա հաւանաբար անոնք կը սիրեն դիտել անոր կապոյտ, երբեմն հանդարտ ջուրերը: Ասիկա կրնայ ջղայնացնել տնօրէնը, որ կը նախընտրէ չհաւատալ թէ այդ «լիճին» դիմացի ափին կրնայ որեւէ այլ կարելոր անձ ըլլալ: Խոցկի ծովը հինգ անգամ աւելի մեծ է պարոն Բէլլընտի Արիզոնա նահանգէն, Ճափոնական ծովը աւելի երկար է, քան իր գրած ամենէն երկար ֆիլմաշարը (որովհետեւ Բէլլընտ նաեւ հեղինակ էր), Դեղին ծովը նոյնքան եւ հաւանաբար աւելի մեծ է, քան Փարամաունթ շէնքը...»:

Այսքանը ըսելէ ետք Ուայթ կը շարունակէ, եւ ա՛յս է հիմնականը այսօր.

«Ինչ որ Բէլլընտի առաջարկած ծրագիրը անհեթեթ, բայց մանաւանդ վտանգաւոր կը դարձնէ, նոյն metastatic ազգայնականութիւնն է, որ աշխարհը միշտ, իր սկիզբէն իսկ պատերազմի մէջ մխրճեր է: Ասիկա հիւանդութեան վերածուեր է արդէն»:

20-րդ դարուն, հայկական ջարդերուն օրերէն իսկ, բարիի եւ չարի պայքարին գաւեշտն է որ կը տեսնենք: Որովհետեւ ի՞նչ իմաստ ունի այդքան բարեսիրական գործերու ձեռնարկելը, խումբեր դրկելը, օգնութիւններ հաւաքելը – մեր ջարդերու օրերուն ալ Ամերիկայի մէջ մեծ գումարներ հաւաքուեցան եւ բազմաթիւ որբանոցներ բացուեցան – երբ շատ աւելի դիւրին եւ նուազ ծախսալից պիտի ըլլար խուսափիլ այդ բոլորէն՝ պատերազմներէն, ջարդերէն...

Չարը դիւրին է, եսասեր է, կեղծաւոր է: Կրնաս դիմադրել բացայայտ թշնամիին, բայց կեղծաւորին հետ ինչպէ՞ս վարուիս:

Թօփճեան կ'եզրակացնէ իր խօսքը չարի մասին.

ա.- Ակներէն է որ չարիքի կարգ մը կերպեր պտուղն են մեր մեղապարտ արարքներուն եւ անհարկի անհոգութեանց.

բ.- Կրնանք վիճիլ թէ բարին իր իմաստը կ'առնէ յարաբերաբար չարին – թէ բարին կը ճանչցուի չարին հետ ներիմաստ հակադրութեամբ, գեղեցկութիւնը՝ տգեղութեան հակադրութեան մէջ եւ այլն.

գ.- Չարը կրնա՛յ, եւ յաճախ առիթներ կը ներկայացնէ մարդուն, իբր փորձաքար անոր կամքին տոկունութեան եւ համբերութեան:

Եւ կ'ըսէ թէ երկու տեսակի չարիք գոյութիւն ունի՝ ֆիզիքական, այսինքն բնութենէն մեզի հասած չարիքները, որոնց մէջ սակայն մենք եւս դեր ունինք, երբ բացարձակապէս յարգանք չունինք բնութեան հանդէպ, եւ բարոյական չարիքները, որոնք արդիւնք են մեր ազատ կամքի ընտրութեան:

Մէկ խօսքով՝ որքան ալ փորձենք ուրիշին վրայ բեռնցել մեր չարութիւնը, մենք՝ մարդիկս, կը մնանք անոր աղբիւրը:



ՊԱՆԵՅՈՂՈՒԹԻՒՆ



Պահքը մեր քաղաքին կարելոր իրադարձութիւններէն մէկն է, աւելի կարելոր քան Կաղանդը, Չատիկը, Լոյսիսկ Ս. Սարգիսի երեք օրերուն ծոմապահութիւնն ու անոր յաջորդող Լախաճաշի «շննդալից» հաւաքները: Թերեւս այս կարելորութիւնը կու գայ այն իրողութենէն, որ հալէպահայ կիներն ու աղջիկները, որոնց մեծամասնութիւնը չէր աշխատեր այն օրերուն, պահեցողութեան քառասուն երկար օրերու ընթացքին ընելիք բան կը գտնեն եւ ատով իսկ կ'ունենան շատ ինքնագոհ վիճակ մը:

– Պա՞հք ես, – կը հարցնեն իրարու ամէն հանդիպումի:

– Այո՛:

– Ես ալ:

Կամ

– Պա՞հք ես:

– Ո՛չ:

– Բա ինչո՞ւ... չէ՛, ես ալ, քոյրերս ալ, եղբօրս կիսն ալ, մամաս, կետուրս, մօրքուրներս... չէ՛, չբռնել չ'ըլլար... մենք ամէն տարի կը բռնենք... չէ՛...

Ասոր անմիջապէս կը յաջորդեն խոհագրերու փոխանակումը կամ՝ «շատ համով էր, բայց չափերը չառի» պոչով սուտը:

Տանտիկինը հպարտօրէն կը ցուցադրէ իր աշխատանքը, ինքզինք գրկելով «պոչով սուտ»-ի չքմեղանքէն: Եւ կը սկսի իրարանցումը.

– Թուղթ-մատիտ կու տա՞ս, գրենք:

– Ես մատիտ ունիմ, միայն թուղթի կտոր մը...

– Աման քա, եղբօրս կիսն ալ ըրեր էր ասկէ. մօրը դրացին եկեր է Պէյրութէն, անկէ առեր էր չափը, բայց իրը քիչ մը աւելի փափուկ էր. դուն կ'երեւի թահինը քիչ դրեր ես...

Պետք է խոստովանիլ, որ Յալէպի կիները կրկան իրապէ՛ս ճոխ սեղան մը բանալ միայն պահեցողութեան յատուկ ճաշատեսակներով եւ քաղցրաւենիքով: Չգիտցողները ճաշի դասընթացքներու կը հետեւին, կամ իրարմէ կը սորվին: Իսկ հարուստները փորձելով կը սորվին, եփել-թափելով չէ, այլ՝ եփելով եւ թափելով, մինչեւ թափելը մոռցուի եւ մնայ միայն եփելը:

Վերջերս հանդիպեցայ պահեցողութեան յատուկ խոհագիրքի մը, հրատարակուած Պէյրութի Յամազգայինին կողմէ, ուր Լախ կը բացատրուի պահեցողութիւնը, ապա քանի մը աղօթքներ կը ներկայացուին, որոնցմէ յետոյ կու գան աւելի քան հարիւր խոհագրեր:

Այդ խոհագրերուն մէջ չէր սակայն, որ ծանօթացայ «հըրվըշտա»-ին.

խարբերոցի բարեկամուհի մը պատմեց, Խարբերոյին վերագրելով հայսերիզի (մաքարոնի) այս տեսակը.

– Շատ փոքր էի. կը յիշեմ որ մայրս հըրվըշտա կը շինէր. կը հաւաքուէին մեծ-մայրս եւ մօրքուրներս, խմոր կը շաղէին, կը բանային ու յետոյ երկար-երկար երիզներ կը կտրէին անկէ: Այդ երիզները լուացքի թելերուն կը փռէին, որ չորնան:

– Արեւի՞ն տակ, – կ’ընդմիջեմ զինք:

Պահ մը կը մտածէ, յետոյ.

– Չեմ յիշեր, – կ’ըսէ, – կը փռէին, կը չորցնէին եւ յետոյ ձմռան համար պահ կը դնէին:

– Զըրվըշտա, – կ’ըսեմ բարձրաձայն, արդեօք առնչութիւն ունի՞ Զալէպի ռըշտէյէին հետ:

– Կրնայ ըլլալ, – կ’ըսէ, – ատոր պէս բան մըն է: Մայրս մածունով հեղուկ մը կը շինէր ու հըրվըշտան մէջը կը դնէր, մինչեւ որ եփելով կակուղնար:

Որքա՞ն տոհմիկ, աւանդական ճաշատեսակներ կորսնցուցեր ենք մեր գաղթին եւ թափառումներուն ընթացքին, եւ որքան նոր տեսակներ որդեգրեր ենք այն վայրերէն, ուր հասեր եւ կայք հաստատեր ենք: Ղափաման մոռցուած մնացեր էր երգի մը մէջ – բարեբախտաբար վերջերս այս կերակրատեսակը զարթօնքի շրջան մը կ’ապրի, թէեւ կը շարունակուի ճաշին անունը գործածուիլ որպէս ձմեռուան դդում– իսկ հըրվըշտան յիշող այսօր գրեթէ չկայ:

Այս առումով Զալէպի Զամագգայինը ութսունական թուականներուն օգտաշատ ձեռնարկներու՝ «Տոհմիկ Օր»-երու շարք մը սկսեր էր. իրախճանքի երեկոներ էին ասոնք, որոնց ընթացքին կ’երգուէին գաւառի մը երգերը, կը պատմուէին անոր անեկդոտները, կը կարդացուէին բարքերն ու սովորութիւնները եւ իւրաքանչիւր տիկնոջ կը տրուէր խմորատիպ փոքրիկ գրքոյկ մը, այդ գաւառին ճաշատեսակները նկարագրող խոհագրեր պարունակող:

Չեմ գիտեր թէ այդ գրքոյկները օգտագործուեցա՞ն, կիներէն գոնէ մաս մը փորձե՞ց այդ տոհմիկ ճաշերէն պատրաստել: Ո՞ւր մնացին այդ գրքոյկները այսօր, երբ նոր գաղթ մը ծայր առած է դարաւոր Զալէպէն, ուր հայերս գրեթէ դար մը ապրեցանք: Որեւէ մէկը մտածե՞ց իր հետ տանիլ այդ փոքրիկ գրքոյկը, որուն մէջ սեղմուած է մեր գաւառներէն մէկն ու մէկը իր խոհանոցով...

– Զարիւր տարի ետք միա՛յն հայկական խոհանոցն ու

հայկական պարերը պիտի մնան, – օր մը ըսաւ փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան, հեռատեսիլէն ցուցադրուած իր մէկ հարցազրոյցին ընթացքին:

Բայց մեր խոհանոցն ալ սկսեր է տժգունիլ, ձուլուելով շուրջի ժողովուրդներու խոհանոցներուն հետ: Ո՞վ պիտի մտածէ վերականգնել մեր գաւառներու խոհանոցները:

Միջինարեւելեան տարբեր խոհանոցները՝ յունական, լիբանանեան, սուրիական, թրքական եւ այլն, սկսեր են մեծ չափով, նոյնիսկ անուններով իրար նմանիլ՝ ցացիքի-ճաճըխ, մուսաքքա, տոլմատես-տոլմա, հերիսա եւ այլն:

Ինձի կը թուի սակայն, որ մեր պահեցողութեան ճաշերն են, որոնց մէջ գրեթէ անխաթար կը պահուի հայկական խոհանոցը, ինչպէս վանայ մշոշ, լոբով (լուբիայով) մշոշ, հովիւի ճաշ, խաշիլ, լոբախաշու ծիրանաչրով եւ այլն:

Հայկական ճաշատեսակներուն եւ անոնց կապուած աւանդութիւններու մասնագէտ մըն է արդէն հայաստանցի դարձած անճարցի Սոնիա Թաշճեանը, որուն կայքէջերն ու գիրքերը իրապէ՛ս մեծ հաճոյքով կը կարդացուին եւ կը կիրարկուին անշուշտ:

Իր «Հայկական Աւանդական Խոհանոց» կայքէջին մէջ ո՛չ միայն խոհագրեր կը գտնենք, բայց մանաւանդ կը ծանօթանանք հայկական աւանդութիւններու եւ սովորութիւններու, ինչպէս օրինակ ընկոյզին տրամադրուած էջը, ուր Թաշճեան կը գրէ.

«Հինէն ի վեր, աւանդական խոհանոցի ճաշերուն համ ու հոտ եւ սննդարարութիւն տուող իւղին կը փոխարինեն տարբեր տեսակի ձէթերը (ծիթաիւղ, արեւածաղիկի ձէթ, կորեկի ձէթ, քունջուլի ձէթ կամ թահին, եւ այլն), հունտերը կամ սերմերը (քունջուլ, կանեփ, արեւածաղիկի կուտ, դդմակուտ եւ այլն), ընկուզեղէնը (ընկոյզ, պիստակ, ծիրանակուտ, կաղին, նուշ եւ այլն)»:

«Որպէս հարուստ իւղատու բնամթերք, ընկոյզը իր իւրայատուկ տեղն ունի մեր առօրեային մէջ: Հայերէնի բառապաշարին մէջ ընկոյզ բառի տարբեր անուանումներն ու արտայայտման նրբերանգները ենթադրել կու տան, որ դեռեւս վաղնջական ժամանակներէն ընկոյզը տարածուած մթերք է մեր կենցաղին՝ բժշկութեան ու սնունդին մէջ. ի դէպ, ան կ'օգտագործուի նաեւ կանաչ վիճակով, ինչպէս կ'օգտագործուին միջնապատերը եւ ինքնին ընկոյզը»:

Այս առիթով Թաշճեան կը մէջբերէ Աճառեանի բառարանէն առնուած հետեւեալ բաժինը.

«Ընկոյզ, ճղոպուր, գուզ, պոպոկ: Նաեւ բորոլ (խոշոր), կակալ

(պատեանի հետ միասին), կաղաղ (կանաչ թաղանթով), կրկիտ կամ քցիփ (միջուկը դժուար էլլող), փուրիս (դիրարբեկ կեղեւով), չունուզ (մէջը փուճ), փառակ կամ տապակ (կէս ընկոյզ), պճեղ (միջուկին քառորդը), ձնձում (ամբողջական միջուկ), քիստ (միջնապատը), մաշկ (միջուկին թաղանթը), խեճեպ (կեղեւը), ընկուզմէջ (միջուկը), արդար ընկոյզ (երբ թարմ է), կթուն (թարմի միջուկը), եւ այլն: Ընկոյզի նմանողութեամբ հնդկընկոյզ (coconut) եւ մշկընկոյզ (nutmeg) բառերը ստեղծուած են, ներմուծուած այս երկու մթերքներուն համար»:

Սպառիչ տեղեկութիւններ տալէ ետք, կը գտնենք նաեւ խոհագրեր, ուր ընկոյզը օգտագործուած է, ընկերացած անունովը այն գաւառներուն, ուրկէ եկած են այդ ճաշատեսակները.

Օրինակ.

- Ընկոյզի հաց / Ակն. Թարմ հացը թաթխել մանրուած ընկոյզին մէջ, տաքցնել, ապա վրան մեղր ծորեցնելով մատուցել:

- Մեղրով պէտրէկ / Չէյթուն. Մանրած ընկոյզն ու մեղրը խառնել, քսել կտրտած լաւաշի վրայ, ոլորել եւ տապկել իւղին մէջ:

- Զալածոշ / Ակն. Մածունը զարնել ալիւրով եւ հաւկիթով, ապա եռացնել: Վրան լեցնել սոխրած, մանրուած ընկոյզ ու փոշի անանուխ: Մատուցել չոր հացով կամ լաւաշով:

- Աւելուկով ապուր / Սասուն. Աւելուկը (կամ այլ բանջար մը) խաշել, ջրքամել: Խաշել ոսպը, խառնել ավելուկը, աղացած ընկոյզ, սխտոր եւ համեմունք:


- Ընկոյզով բազրկանի / Մուսալեռ. Աղալ ընկոյզը, խառնել մանրած սոխ ու սխտոր, համեմունք. մատուցել վրան ձեթ լեցնելով, որպէս թաթխան:

- Թոփիկ. Միջինքին յատուկ կոլուլակ. Պատեան խմորի համար՝ թրջած սիսեռը աղալ, շաղել 1 - 2 խաշած գետնախնձորով. միջուկի համար՝ մանրած սոխ, չամիչ, ընկոյզ, համեմունք: Խմորի գնդիկը տարածել լաթի վրայ, լցնել միջուկով, փակել, լաթը կապել ծրարի նման եւ խաշել աղաջուրի մէջ:


- Խարփուխաշ / Տիգրանակերտ. Աղացած ընկոյզը խառնել եռացող աղաջուրին, ավելցնել սխտոր ու համեմունք, մատուցել չոր լաւաշով:

- Ծնեբեկ / Արցախ. Խաշել ու ջրքամել ծնեբեկը եւ մատուցել ընկոյզի թացանով (աղացած ընկոյզ, սխտոր, սոխ, համեմունք, քացախ, եռացած ջուր):

Կ'անդրադառնաք, չէ՞, թէ իրապէս որքա՞ն տեղեկութիւն կը կրեն իրենց մէջ մեր հայկական ճաշերը, այդպիսով դառնալով մեր կարգ մը ավանդութիւններուն թէեւ անսովոր, բայց ապահով շտեմարանը:



**ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ
ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ**



Պատերազմը անմարդկային, անբարոյական արարք է:

Ո՛չ, պատերազմ սկսիլն է անմարդկային եւ անբարոյական, ո՛վ որ ալ ըլլայ սկսողը, ի՛նչ պատճառներով ալ սկսած ըլլայ պատերազմը, որովհետեւ սպասելի է, որ մարդկութեան զարգացումի ա՛յս հանգրուանին, մարդիկ, մանաւանդ երկիրներու ղեկավարներ, որոնք ինձմէ-քեզմէ աւելի խելացի են, կարենան երկխօսութեամբ հարցերը լուծել. այլապէս, երբ երկիր մը յարձակումի ենթարկուի, անշո՛ւշտ որ պիտի պաշտպանէ ինքզինք եւ... պատերազմը կը դառնայ անխուսափելի:

Այսքանը թերեւս քանի մը դար առաջ էր, երբ երեւոյթները շատ աւելի պարզ էին, քան հիմա: Զիմա ամէն բան այնքան բարդացեր է, որ մենք, ժողովուրդ կոչուածս ա՛լ բան չենք հասկնար:

Կար ժամանակ, երբ պատերազմը իբր թէ ժողովուրդին խաղաղ կեանք մը ապահովելու համար էր. արդէն առածի կարգ անցեր է՝ *«խաղաղ կեանքի համար պետք է պատերազմիլ»*-ը:

Որքան ալ ժողովուրդին համար ըլլար սակայն, նոյն այդ ժողովուրդն էր, միա՛յն այդ ժողովուրդն էր, որ կը զոհուեր:

Այսօր ամէն բան փոխուեր է, բարդացեր է աւելի. միայն մեկ բան մնացեր է անփոփոխ եւ կը կրկնուի նոյնութեամբ՝ ժողովուրդին զոհուիլը:

Կարծես չեն բաւեր գործարաններէն դուրս խուժող կազերուն հետեւանքով կլիմայական փոփոխութիւնները, որոնք ցունամիներու եւ հեղեղներու պատճառ կը դառնան եւ անթիւ-անհամար զոհեր կը խլեն, երկրաշարժներն ու հրաբուխները, որոնք քանի մը վայրկեանի մէջ երկար դարեր կանգուն մնացած կառոյցներ եւ քաղաքներ հիմնայատակ կը քանդեն, կարծես բաւարար չըլլային համավարակներն ու համաճարակները, մարդ արարածը պետք է նաեւ տոկայ ու դիմանայ պատերազմներուն, որոնք անհասկնալի շահեր կը պաշտպանեն եւ անմատչելի հաշիւներով կը գործեն:

Վերջերս մեջտեղ նետուած էր վարկած մը, որ կ'ըսեր թէ աշխարհի վրայ ապրող մարդոց թիւը այնքան բարձրացած է, որ միայն բնական աղէտներով մահերը բաւարար չեն, պետք է նաեւ համաճարակներ եւ պատերազմներ ստեղծել, որ երկրագունդը... չպայթի:

Երկար-երկար կը մտածեմ եւ կարճ խելքովս կը հասնիմ այն եզրակացութեան, որ եթէ պատերազմներուն եւ անոնց ընթացքին օգտագործուող զինամթերքին տրուած հսկայ նիւթականը տրամադրուեր կարելի լուծումներ գտնելու համար բազմացող մարդոց չբաւելիք ցորենին, ուտեստին եւ ջուրին, շատ հաւանաբար

կարելի կ'ըլլար խուսափիլ պատերազմներէն եւ աշխարհը դարձնել ապրելու համար իրապէ՛ս աւելի հաճելի եւ աւելի հանգիստ վայր մը:

Ունինք փոքրաթիւ բայց յստակ օրինակներ, երբ անապատին մէջտեղ բուսած երկիր մը կրցած է ոչ միայն ապրելի դարձնել անապատը, այլ հմայիչ կերպով ընծայել գայն թե՛ հոն աշխատողներուն, թե՛ զբօսաշրջիկներուն:

Ընթերցողը հիմա պիտի մտածե՛ք բայց որքա՛ն միամիտ ես: Թերեւս միամիտ եմ, սակայն լաւ գիտեմ, որ այս բոլորը կը կատարուին ոչ թէ երկրի մը ապահովութեան եւ բարօրութեան համար, բայց «Ես»-ին համար, որուն տիրապետութիւնը իրապէ՛ս անհակակշռելի է, երբ տիրէ մարդ արարածի հոգիին:

Քաղաքագետները, տուեալ պահուն իշխողները եւ նման պաշտօններ ունեցող մարդիկ (յաճախ փոքր, բայց միջավայրին մէջ մեծ թուացող պաշտօններ ունեցողները նաեւ) իրապէ՛ս կարճ յիշողութիւն ունին, որովհետեւ բոլորն ալ հակամետ են մոռնալու կեանքին գերագոյն ու թերեւս միակ ճշմարտութիւնը՝ մահը, որ ո՛չ մէկ հակակշռի կարելի է ենթարկել. կը մոռնան եւ այնպիսի կիրքով կը լծուին պատերազմներ հրահրելու, որ կարելի է միայն զարմանալ:

Բայց կեանքը ճատրակի խաղ մըն է, ուր ուղեղը աշխատցնողը կը շահի, անկախ անկէ թէ իր խաղը մարդկայի՞ն է, թէ ոչ:

Եւ այսպէս, կամաց-կամաց կը վերածուինք բանի մը, որ շա՛տ հեռու է «Եւ Աստուած ստեղծեց մարդը իր պատկերին համաձայն»-էն, մեծերը իրենց խաղալու կիրքին, փոքրերը՝ իրենց տառապանքին սաստկութեան տակ:


Այստեղ կրնայի մէջբերել նաեւ «Բնութիւն»-էն հատուածներ, բայց անկեղծօրէն կը զգամ, որ ի զուր են խօսքերը, որոնք կրկին առատացեր են. բոլոր ՉԼՄ-ները կը խօսին ազդարարութիւններու, սպառնալիքներու եւ պատիժներու մասին, բայց որոնք բոլորը կը մնան խօսք, ապարդիւն խօսք:

Արդեօ՞ք կեանքի օրէնքն է նաեւ, որ ամէն երկիր եւ ամէն ժողովուրդ կրէ իր ճակատագիրը, իրեն հասնելիք տառապանքը, ապա շարունակէ իր երթը:

1975-էն ի վեր ականատես ենք տարբեր պատերազմներու, մանաւանդ Միջին Արեւելքի մէջ՝ Լիբանան, Պարսկաստան, Կիպրոս, Սուրիա: Հիմա՝ Ուքրանիա: Տակաւին չենք խօսիր անհատոյց մնացած դատերու եւ անպատիժ մնացած ոճիրներու մասին:

Ինչպէ՞ս պիտի շարունակենք երթը որպէս մարդ:

Պարզապէս հաւատալով եւ յուսալով:



**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ**

Վահե Օշական նշանաւոր խօսք մը ունի, որ կ'ըսէ.

«Կարծես մարդ ըլլալը շատ դիւրին էր, վրան ալ աւելցաւ հայ մարդ ըլլալու տառապանքը»:

Իսկ ես կ'աւելցնեմ՝ ոչ թէ միայն հայ մարդ ըլլալու տառապանքը, այլ նաեւ սփիւռքահայ ըլլալու, բայց մանաւանդ սփիւռքահայ ԿԻՆ ըլլալու տառապանքը, զոր բոլորս ալ գիտենք եւ ամէն օր նորովի կը հաստատենք:

Տիկիներու նուիրուած ամիս մըն է Հայաստանի մէջ Մարտ 8-էն Ապրիլ 7. գոնէ այս մէկ ամսուն ընթացքին մոռնանք մեր մտահոգութիւնները, կը մտածեմ, եւ գեղեցիկ բաներու մասին մտածենք միայն: Բայց նոյն Վահե Օշական կ'ըսէ՝ *«Երբ ոստիկանն ու քաղաքացին կը կռուին, անբարոյութիւն է մայթին կենալ եւ վարդ ու ծաղիկ երգել»*. ասիկա կ'ըսէ գրագետներուն համար անշուշտ, խօսք մը, որ ճիշդ է նաեւ բոլորիս համար:

Այսօր մենք բոլորս պատմականօրէն այնպիսի ծանր պահեր կ'ապրինք, որ իրապէ՛ս չենք կրնար չմտածել այդ պահերուն մասին, չմտածել մեր հարցերուն մասին:

Մենք շատ լաւ գիտենք, որ մեր առօրեային մէջ, մեզմէ իւրաքանչիւրը կը հանդիպի երկու տեսակի հարցերու.

Ա. Մէկը որ շատ անձնական է, իրեն եւ իր ընտանիքին յատուկ է.

Բ. Երկրորդը՝ որ ընդհանրական է, կը սկսի իր անմիջական շրջապատէն եւ կ'երկարի մինչեւ իր ապրած քաղաք-երկիրն ու հայրենիքը մեզի, սփիւռքահայերուս համար:

Առաջինին մասին չենք կրնար խօսիլ բնականաբար, որովհետեւ անհատական հարցերը իւրաքանչիւրը ինք կը լուծէ, կը փորձէ լուծել եւ եթէ չյաջողի, կը դիմէ թերեւս մտերիմի մը, կամ՝ մասնագետի մը:

Ընդհանրական հարցերն են, որոնք մեզ բոլորս կը մտահոգեն եւ կը մղեն որ անոնց մասին խօսինք, նիւթը արծարծենք եւ փորձենք լուծումներ գտնել: Գոնէ մտածենք անոնց մասին:

Ի՞նչ ընդհանրական հարցեր ունինք Սփիւռքի մեր բոլոր գաղութներուն մէջ.

-Հայերէն լեզուի տկար իմացութիւնը.

-Խառն ամուսնութիւնները.

-Գաղութին նօսրացումը, որ կը տանի մեր կալուածներու հարցին:

Այսօր փոխուած է կացութիւնը. այսօր հայերէնը մեր տղոց մայրենին չէ, որպէսզի անոր վրայ հիմնուելով այլ լեզուներ սորվին: Այսօր անգլերէնը առեր է մայրենիին տեղը. որմէ ետք, կու գայ հայերէնը:

Եթէ ոչ բոլորս, ապա արեւմտեան Սփիւռքի շատ գաղութներու մէջ առկայ է այն գաղափարը, թէ հայերէնը այսօր ո՛չ մէկ ձեւով կրնայ օգտակար դառնալ մեր գաւակներուն, հետեւաբար չ'արժեր այդ լեզուն սորվելու համար ժամանակ եւ ճիգ վատնել:

Թերեւս ճիշդ է, որովհետեւ օրերը փոխուեր են, կեանքը դժուարացեր է եւ աւելորդ բարդացումի կարիք չկայ: Ի վերջոյ Միջին Արեւելքի գաղութներէն գատ՝ Եգիպտոս, Լիբանան, Սուրիա, քիչ մը Իրաք եւ Յորդանան, ոչ մէկ տեղ հայերէնը առօրեայի լեզուն է դժբախտաբար. շատ-շատ մենք ալ պիտի միանանք անոնց...

Բայց... եւ այս բայցը շա՛տ մեծ է – բայց եթէ չըլլայ լեզուն, մեր ինքնութիւնը, մեր հայ ըլլալը ինչո՞վ պիտի արտայայտենք:

Թերեւս ըսե՛ք՝ մեր մականուններուն վերջաւորութեան գտնուող -եան-ով. թերեւս, բայց այդ -եան-ը այսօր վերցուեր է թրքահայոց անուններուն վրայէն: Ուրեմն ատիկա չէ գրաւականը:

Պատկերացուցէ՛ք, Ֆրանսայի մէջ մէկը ոճիւր գործեր է եւ հեռատեսիլէն այդ մասին խօսելով կ'ըսեն՝ ոճրագործը թուրք է, հայկական արմատներով. անշուշտ մենք կը հասկնանք թէ այստեղ երկու տարբեր գոյութիւններ կան՝ ազգութիւն եւ քաղաքացիութիւն. ոճրագործը քաղաքացիութեամբ, փաստորով թուրք է, իսկ ազգութեամբ՝ հայ: Ասիկա դժուար է օտարներուն բացատրելը:

Այսինքն այստեղ դրածս մեր ինքնութեան հարցն է. եթէ հայերէն չենք խօսիր, ինչո՞վ հայ ենք:

- Խառն ամուսնութիւններ:

Ասիկա երկրորդն է մեր հարցերուն: Ինչո՞ւ կարելոր է որ առաջը առնենք այս երեւոյթին:

Ընդհանրապէս սիրոյ արդիւնք են խառն ամուսնութիւնները. երբեմն կը մտածեմ՝ նոյն տեսակին հետ յաճախ դժուար կ'ըլլայ ամուսնական կեանքի համերաշխութիւնը պահել, ալ ո՞ւր մնաց՝ խառն ամուսնութիւններու պարագային:

Սերը սակայն ոչ թէ կը չքանայ, այլ տեսակ կը փոխէ եւ կը դառնայ անելի առարկայական ամուսնութենէն ետք. ճիշդ այդ տեղ է որ կը սկսին հարցերը:

Մեր թիւը, աշխարհի վրայ բոլոր հայերուն թիւը այնքան փոքր է, որ կը դողանք մեր զաւակներուն եւ անոնցմէ գալիք սերունդներուն վրայ:

Յօրեղբայրս, երբ ֆրանսացիները քաշուեր են Սուրիայէն, ինքն ալ անոնց հետ ելեր է եւ Ֆրանսա գացեր: Հոն պսակուեր էր ֆրանսուհիի մը հետ, որմէ ունեցեր է հինգ զաւակ՝ երկու մանչ եւ երեք աղջիկ: Իր հինգ զաւակներէն իւրաքանչիւրը ունի չորս կամ հինգ զաւակ: Երբ վերջին անգամ տեսեր էի զինք, հօրեղբայրս ուներ 19 թոռներ եւ 36 ծոռներ:

5 զաւակ

19 թոռ

36 ծոռ

60 ընդհանուր թիւ

$X 2 = 120$ անձ, որոնք կրնային հայ ըլլալ, եթէ այդ մէկ անձը՝ հօրեղբայրս, հայու մը հետ ամուսնացած ըլլար:

Անշուշտ պիտի ըսե՛ք՝ մենք հայերս երկու, շատ-շատ երեք զաւակ կ'ունենանք, մանաւանդ Սփիւռքի մէջ, ուր կեանքը շա՛տ դժուար է: Ճիշդ է: Բայց երկու զաւակ թէ երեք զաւակ պահելուն մէջ տարբերութիւնը այնքան ալ մեծ չէ:

Ասիկա մեր ընդհանրական հարցերէն մէկն է, բոլոր հայերուս պարագային:

Մեծ ազգերը մեծ պատմութիւն ունին. բայց ունի՞ր նոյնքան մեծ յիշողութիւն:

Մենք միշտ կարծեր ենք, որ մեր յիշողութիւնը ինքնեկ բան մըն է, մանաւանդ ազգային յիշողութիւնը, դպրոցէն ներս, գլխաւորաբար նախակրթարանի հայոց պատմութեան դասերուն հետ մեզի ներշնչուած պէտք է ըլլայ, եւ մենք բնաւ պէտք չունինք անոր մասին մտածելու, որովհետեւ ան, կը կարծենք, կա՛յ մեր էութեան մէջ տեղ մը պահուած...

Ի՞նչ է պատմական յիշողութիւնը, որ իւրաքանչիւր անձի համար անշուշտ տարբեր հասկացողութիւն է:

Մենք տարուան մէջ երկու գլխաւոր տօներ ունինք, խորքին մէջ՝ սգատօներ, մէկը Վարդանանց նահատակութեան օրն է, երկրորդը՝ Մեծ Եղեռնի յիշատակի օրը:

Անշուշտ առաջինին բարոյական յաղթանակը շատ լաւ գիտենք, յաղթանակ էր, որովհետեւ հայերը իրենց ուզածը ըրին – գիտէք, հայերը սկիզբէն եղած են բնիկ լեռնցի՝ յամառ ժողովուրդ – որովհետեւ երբ Յայկը Բելին յաղթեց, առաւ իր ժողովուրդը եւ հեռու լեռները քաշուեցաւ – Յայաստան – որովհետեւ յաղթեր էր, ուզածը կրնար ընել, իսկ իր ուզածը խաղաղ ապրիլ էր իր ժողովուրդին հետ, իր ընտանիքին հետ, ապրիլ հողը մշակելով:

Բայց յաղթեր էր Բելին. ինձի համար իսկապէ՛ս առեղծուած է, թէ ինչո՛ւ Յայկը չտիրեց Բելի աշխարհին, չգրաւեց անոր գահը եւ իր ուժը չպարտադրեց անոնց:

Խորքին մէջ՝ որովհետեւ հայերը իրապէ՛ս խաղաղասեր մարդիկ են, մանաւանդ՝ կենսասեր եւ եւ... փիլիսոփայ, կեանքը կը սիրեն եւ գիտեն որ այդ կեանքը շատ կարճ է, ինչո՛ւ պատերազմներով անցընել զայն, երբ կարելի է խաղաղ ապրիլ, երբ կարելի է արեւը վայելել:

Յայաստան դարձաւ կռուախնձոր. գիտե՞ք ինչու: Ճիշդ է որ փոքր էր եւ դրացիները՝ գլխաւորաբար պարսիկներն ու հռոմէացիները կը մտածէին՝ փոքր երկիր է, դիրութեամբ կրնանք այդ հողերը կցել մեր երկրին... ասիկա երեւցող պատճառն է. չերեւցողը՝ հայուն կենսասեր եւ խաղաղասեր հոգին է, որ կրնայ կեանքը մինչեւ ծայր վայելել – ինչպէս բանաստեղծ մը ըսաւ Արցախի առաջին պատերազմին առիթով՝ *«Մենք կ'ուզենք մեր պաղջէն նստենք, հող մշակենք ու ապրենք ...»*:

Բայց Յայաստանն ու հայութիւնը այսօր, Վարդանանց պատերազմի տօնին եւ Եղեռնի սգահանդեսին կողքին նաեւ Տիգրան Մեծ ունին. մտածե՛ր ենք արդեօք թէ ինչո՛ւ Վարդանանց կը տօնենք, բայց ոչ՝ Տիգրան մեծ Արքայից Արքայի օր. մենք մոռացութեան տուեր ենք այդ Արքան, անոր ըրած մեծ գործերը՝ սխրագործութիւնները, եւ մեզի հետ մեր նոր սերունդը եւս մոռցեր է այդ անունը. եթէ չէ մոռցեր անունը, կը յիշէ միայն Տիգրան Մեծի դրամին վրայ գտնուող դիմանկարը, իր թագով:

Ինչո՛ւ կ'ըսեմ այս բոլորը. որովհետեւ ըսուած է՝ մեծ ազգերը մեծ պատմութիւն ունին. իսկ մենք գիտե՞նք մեր պատմութեան մեծութիւնը, կը յիշե՞նք:

Մեր պատմութիւնը մարդկային ազնիւ հոգիի պատմութիւն ըլլալու կողքին, է՛ նաեւ յաղթանակներու պատմութիւն: Այսօր ո՛ր է այդ պատմութիւնը, մանաւանդ՝ անոր յիշողութիւնը:

ՍՓԻՆՔԷՆ ՉԱՅՆ ՄԸ



Երկար մտածեցի այս գրութիւնս գրելէ առաջ. մտածեցի, ո՛չ թէ որովհետեւ նիւթը կարիք ունէր դասաւորումի, այլ որովհետեւ օրուան դէպքերը եւ գալիքի վախերը այնքան ծանր են, որ կը փորձես մտածելով լուծումներ գտնել, գոնէ ինքզինքիդ համար:

Կը գրեմ որպէս սփիւռքահայ, որ կը շարունակէ ապրիլ Սփիւռքի տարածքին վայրի մը մէջ, որ գրեթէ յաճախ ո՛չ իր ծննդավայրն է, ո՛չ հայրենիքը. (այս առումով երբեմն միտքիս մէջ կը փորձեմ պատկերացնել, թէ ինչպիսի՛ երջանկութիւն պիտի ըլլար ծնիլ եւ ապրիլ մեծ երկրի մը մէջ, որպէս այդ երկրի քաղաքացին եւ խօսիլ այդ երկրին լեզուով):

Սակայն շախշախիչ մեծամասնութիւնը սփիւռքահայերուն խորապէս կապուած է հայրենիքին – շատեր կապուած էին ի սկզբանէ, կա՛մ որովհետեւ Սովետական Յայաստանի իրավիճակը կը համընկնէր իրենց համոզումներուն, կա՛մ որովհետեւ պարզապէս կ'ընդունէին Յայաստանը որպէս իրենց հայրենիքը, անկախ անոր ուղղութենէն եւ ղեկավարութենէն:

Անկախութենէն ետք այդ կապը դարձաւ ընդհանրական եւ շատ զօրաւոր. մարդիկ կ'ընէին ի՛նչ որ կրնային ընել հայրենիքին համար եւ աւելին: Այդ կապը տարիներուն հետ զօրացեր էր այնքան, որ հակառակ Սփիւռքի տարածքին ապրելուն, սփիւռքահայը ա՛լ ուժեղ կը զգար ինքզինք, կը զգար որ իր երկիրն ալ այլ երկիրներու կարգին է, ունի պետականութիւն, բանակ, ճանաչում եւ այլն: Մէկ խօսքով՝ սփիւռքահայուն կռնակը զօրաւոր էր:

Արցախեան պատերազմէն եւ Արցախի պարպումէն ետք շատեր խորունկ ցաւով ըսին՝ *«կռնակնիս կոտորեցաւ»*: Ծի՛շո՛ղ էին. կարծեք այն պատը, որ նաեւ ու մանաւանդ մեր հայրենիքին դարպասն էր եւ անոր ապահովութեան երաշխիքը, մէկ օրէն միւսը փլեր էր ու մենք մնացեր էինք անպատ, գալիք հովերուն դէմ երերացող:

Յետոյ եկաւ զիջումներու ժամանակը: Շատեր բողոքեցին, շատեր բարձրաձայն ընդդիմացան, շատեր ալ... լռեցին: Ըլլալով սփիւռքահայ, որոշ մարդիկ շատ լաւ գիտէն, որ խօսքով՝ թուղթ շերտփով քաղաքականութեան մէջ կարելի չէ մտնել. այդ «խաղը», եթէ կրցանք խաղալ քաղաքականութիւն կոչուող խաղը, շատ-շատ կը համոզէ համոզուիլ ուզողները միայն, թէ ամէն բան լաւ պիտի ըլլայ, որ «Արցախը մերն է»: Անշո՛ւշտ Արցախը մերն է, այդքանը գիտենք, ի՞նչ ընենք սակայն, որ աշխարհը գիտնայ. չի՛ բաւեր որ աշխարհը գիտնայ, չի բաւեր Նոյնիսկ որ քաղաքական աշխարհը գիտնայ, թէ Արցախը հայկական է դարերէ ի վեր, պետք է քաղաքականօրէն ընդունի այս իրողութիւնը եւ ըստ այդ շարժի:

Ի՞նչ կրնանք ընել, որ կացութիւնը փոխուի:

Չենք գիտեր:

Չենք գիտեր, որովհետեւ չունինք այն հեղինակութիւնը, որ ըսէ իր խօսքը, եւ ժողովուրդը անսայ իրեն:

Ահա՛ Սրբազանը սկսաւ պայքարի, բարձրացուց ձայնը եւ կը փորձէ բան մը փոխել:

Շատ շատեր գնահատեցին զինք եւ հետեւեցան իրեն անվերապահօրէն:

Բայց շատեր ալ հին պատմութիւններ մէջտեղ նետեցին, եղած կամ չեղած թերիներ սկսան մատնանիշ ընել եւ անգամ մը եւս մեզ շփոթի մատնեցին:

Կուսակցականը կը հետեւի իր կուսակցութեան դիրքորոշումին: Ոչ-կուսակցականը ի՞նչ ընէ, որո՞ւ հետեւի, ինչի՞ հաւատայ, մանաւանդ երբ մէկ առաւել մէկ-ի հաշիւը պատկերը աւելի եւ աւելի գորշ կը ներկէ:

Կը յիշէ՞ք թէ ի՞նչ թափով եւ խանդավառութեամբ հաւատացեր էինք «յաղթելու ենք» խօսքին, որ յետոյ, ժամանակ անցնելէն ետք իսկ տարօրէն կը խոցէ մեզ:

Իսկ հիմա երբ կ'ըսենք՝ *«ամէն գնով պետք է վերադարձնենք Արցախը, պիտի՛ վերադարձնենք Արցախը»*, չեմ կրնար հարց չտալ՝ ի՞նչ տուեալներու հիման վրայ է, որ այսպէս ինքնավստահ կը խօսինք եւ յայտարարութիւններ կ'ընենք:

Չկասկածիք հայրենիքի հանդէպ հաւատքիս, հայ ժողովուրդին տոկունութեան եւ ապրելու կամքին հանդէպ հաւատքիս. գիտե՛մ թէ ինչպիսի՛ ծանր փուլերէ անցած ենք, գիտեմ թէ ինչպէ՛ս կրկին ու կրկին վերականգնել ենք:

Բայց, կը կարծեմ, ջարդուիլ-վերապրիլը, որ կարծես փակ շրջանակի վերածուեր է մեզի համար, ապրիլ չէ՛: Դեռ քանի՞ անգամ պիտի քշուինք մեր հող-հայրենիէն, դեռ քանի՞ անգամ պիտի վերապրինք, դեռ քանի՞ անգամ պիտի փաստենք մենք մեզի եւ օտարին, որ մենք կը վերապրինք, հակառակ պայմաններուն, հակառակ մեր վրայ դրուած հաւաքական քարին՝ «մէկ հայ, այն ալ թանգարանին մէջ»:

Բայց այսօր մենք չենք ուզեր միայն վերապրիլ, մենք մեր հողերը կ'ուզենք եւ այդ հողերուն վրայ արժանապատիւ կերպով ապրելու իրաւունքը կ'ուզենք:

Այո՛, այս ալ պիտի շրջանցենք, բայց հողը որ տրուեցաւ, որ կը շարունակէ տրուիլ, ինչպէ՞ս պիտի վերադարձնենք:

Կրնա՞նք ամբողջ ազգով, իրապէ՛ս ԱՄԲՈՂԶ ազգով միանալ, մոռցած մեր տարակարծութիւնները, մոռցած մեր չհաւանութիւնները, մոռցած մեր տկարութիւնները, նոյնիսկ մոռցած մեր այսօրուան հաճոյքները, մոռցած այս բոլորը, կրնա՞նք միանալ յանուն շատ աւելի մեծ իրականութեան մը (չեմ ըսեր՝ գաղափարի մը), որ հողն է, որ հայրենիքն է:

Ամբողջ Սփիւռքը, իր թերուղեմ հաւաքականութիւններով, այսօր չունի մէկ առաջնորդ-ղեկավար, որ կարենայ լուսաբանել ժողովուրդը, ո՛չ միայն բացատրել կացութիւնը, այլ նաեւ կարելի ուղիներ նշել, կարելի ձեւեր թելադրել, որ բոլորս մէկ հողի-մէկ ձեռք եղած ոտքի կանգնինք, ըսելու թէ մենք հող չունինք տալիք...

Հայաստանի մէջ իսկ ժողովուրդը կրկին բաժնուեր է: Կարելի էր հասկնալ պառակտումը կուսակցական հարցերու մէջ: Բայց երբ թշնամին դեմդ է, տանդ դնելուն հասեր է, ինչպէ՞ս կարելի է թերուղեմ ըլլալ... Այս է որ սփիւռքահայը չի կրնար հասկնալ, եւ որովհետեւ չի հասկնար, կը լռէ... Կը լռէ մանաւանդ անոր համար, որ գիտէ թէ խօսքով ո՛չ հայրենիք կը պահուի, ո՛չ հայրենի հող կ'ազատագրուի:



**ԿՐՆԱՐՍՄԱՅՐԵՆԻԴ
ԿՈՐՄՆՑՆԵԼ**

Հարցումը կրնայ շատ հռետորական թուիլ, մանաւանդ Միջին Արեւելքի գաղութներու հայերուս համար: Փաստօրէն սակայն բոլորս ալ ականատես կ'ըլլանք իր մայրենին կորսնցնող-կորսնցուցած սերունդներու, արեւմտեան կողմն աշխարհի: Այդ ցաւը դարմանելու համար Սփիւռքի հին եւ կարելոր միութիւններէն մին նոյնիսկ հայերէնը լատինատառով սորվեցնելու ծայրայեղ միջոցին դիմած է:

Բայց հարցումը կը մնայ՝ կրնա՞ս մայրենիդ կորսնցնել, մանաւանդ երբ որպէս սաղմ լսեր ես այդ լեզուով աղօթող մօրդ ձայնը:

Այնպէս կ'երեւի, թէ այլ ազգեր եւս նոյն վտանգին տակ են, որովհետեւ գերմանուհի Սոֆի Հարտա կը գրէ այս մասին բաւական մանրամասն կերպով եւ հարց կու տայ.

– Երկար տարի հեռու ապրելով հայրենիքէն, կրնա՞ք «մոռնալ» մեր մայրենին:

– Բայց այս երեւոյթը յստակ գործընթաց մը չէ:

– Թէ ինչո՞ւ, ե՛րբ եւ ինչպէ՛ս կը կորսնցնենք մեր մայրենի լեզուն, բարդ եւ հակաբնագոյաին իրողութիւն մըն է:

– Պայման չէ որ երկար ատեն հեռացած ըլլանք մեր երկրէն. կը բաւէ որ կապ ունենանք այլ լեզուի մը հետ:

– Երբ կը սկսինք նոր լեզու մը սորվիլ, մայրենին եւ նորը կը սկսին մրցիլ իրարու հետ, – կ'ըսէ Մոնիքա Շմիթ, Էստքսի համալսարանի լեզուաբաններէն մին:

– Մինչեւ 12 տարեկան, փոքրերուն ուղեղը շատ ճկուն է եւ յարմարող, եւ մինչեւ այդ տարիքը փոքրիկները դիւրաւ կրնան մոռնալ իրենց մայրենին, եթէ հեռանան հայրենիքէն:

– Նոյնը չէ մեծերու պարագային, որոնք հազիւ թէ մոռնան իրենց մայրենին, բացի ծայրայեղ պարագաներու մէջ:

Գերմանացիներ, որոնք Համաշխարհային Բ. Պատերազմին հեռացած են երկրէն, մոռացութեան տուած են լեզուն. *«Կարծես Գերմանիան դաւաճանեց ինծի. հիմա Ամերիկան է երկիրս եւ անգլերէնը՝ լեզուս»:*

Հետաքրքրական է սակայն, որ ճիշդ հակառակը տեղի ունեցած է Համաշխարհային Ա. Պատերազմին, ջարդի օրերուն, գաղթական հայերուն համար. անոնք ոչ միայն չեն մոռցած, այլեւ աւելի մեծ կիրքով փարած են իրենց լեզուին, զայն մոռնալու վախէն սարսափած:

– Նոյն լեզուն խօսող երկրացիներուն հետ յարաբերութիւնը կրնայ հարցերը բարդացնել, որովհետեւ քիչ մղոններ կան մէկ լեզուով հաղորդակցելու, երբ բոլորն ալ երկու լեզուները գիտեն: Արդիւնքը՝ խառնածին լեզու մը:

– Մէկ լեզուէն միւսը անցնիլը անշուշտ մոռնալ չի նշանակեր:

– Շատերու համար մայրենին սերտօրէն առնչուած է մեր ներքին, խորունկ ինքնութեան, յուշերուն եւ անձի գիտակցութեան, ինչպէս հայերուն, գոնէ նախկին սերունդի հայերուն համար:

Մայրենի լեզուն, ընդհանրապէս բոլորին համար ալ, սերտօրէն առնչուած է ներքին, խորունկ ինքնութեան, անհատական յուշերու եւ անձին գիտակցութեան, իսկ հայերուն, մասնաւորաբար սփռուած հայերուն համար, որոնք կորսնցուցած են հողը, լեզուի եւ ինքնութեան կապը շատ անելի եական եւ զօրաւոր կը դառնայ:

Այսօր սակայն, գոնէ կարգ մը գաղութներու մէջ, «ներքին, խորունկ ինքնութիւն»-ը եթէ ոչ անհասկնալի, ապա անտեղի եւ անօգուտ բան մըն է, մանաւանդ բան մը, որ ըստ իրենց, բնաւ չի կապուիր լեզուին:

Բայց եթէ չի կապուիր լեզուին, ո՞ր է ուրեմն այն վայրը, ուր ինքնութիւնը ինքզինք կը մտածէ, հետեւաբար նաեւ կ'արտայայտէ. մանաւանդ կ'արտայայտէ:

Ասիկա հարցադրում մըն է, որ եթէ մտածուած է, բայց ձեւաբանուած չէ, հետեւաբար ամէն անգամ որ կը հնչէ, լսողները նոր կը սկսին մտածել անոր մասին:

Սակայն երրորդ բաղադրիչ մը եւս կայ այս խնդիրին մէջ՝ կենսածելը. որովհետեւ այս երեքը՝ ինքնութիւն-լեզու-կենսածել, տեղ մը առնչուած են իրարու, անտեսանելի բայց սերտ կապերով, որոնք երբ անջատուին, թերեւս շփոթ յառաջացնեն, բան մը որ իր կարգին կ'արգիլէ լեզուին տիրապետումը:

Բայց յուսադրիչ է իմանալը, որ, լեզուաբանի մը դիտանկիւնով եւ հաստատումով, «լեզուն գէշ գիտնալու» հարց չի կրնար ըլլալ:

Ջարդերուն ամենէն բուռն օրերուն, կարգ մը հայեր, միսիոնարներու օգնութեամբ կրցած էին ազատիլ եւ Ամերիկա հասնիլ. անոնցմէ որոշ թիւ մը անմիջապէս հեռացած էր հայութենէն, շատ արագ որդեգրած էր տեղական լեզուն եւ կենսածելը այնքան, որ անոնց զաւակները շատ ուշ, յաճախ ծնողքին (մանաւանդ հօր) մահէն ետք միայն իմացած են իրենց հայ ըլլալը:

Շատ խօսուած է իսլամացած հայերու, թուրքերու եւ քիւրտերու հետ ստիպողաբար ամուսնացած եւ, եթէ ոչ ինքնութիւնը, ապա լեզուն մոռցած աղջիկներու եւ կիներու մասին. սակայն Ամերիկայի տարածքին ինքնակամ կերպով հայութենէն հեռացած հայերու մասին գրեթէ ոչինչ գիտենք:

Յստակ է, որ այս հայերուն համար, լեզուն անխզելիօրէն կը կապուի յիշատակներուն, եւ որովհետեւ այդ յիշատակները վերապրելու համար ՇԱՏ դժխեմ են, զանոնք դուրս կը դնեն իրենց ետեւէն, եւ անզգալաբար – որովհետեւ կապուած են իրարու – լեզուն եւս դուրս կու գայ եւ մոռացութեան

կը տրուի:

Յայտուն օրինակ մըն է ամերիկահայ նշանաւոր բանաստեղծ-արձակագիր Փիթըր Պալաքեանը, որ խօսելով իր բանաստեղծի սկիզբներուն մասին, կը պատմէ.

«Այս պատմութիւնը չէր խօսուած ընտանիքիս մէջ (ակնարկելով ջարդին եւ տեղահանութեան). պահուած էր ծածկոցի տակ. իրականութեան մէջ ասիկա լռուած պատմութիւն մըն էր: Մօրենական մեծ մայրս, որ ինձի համար հոգեւոր առաջնորդ մը եղած է, մահուան ճամբաներէն վերապրած մը եղած է: Կորսնցուցեր է իր ամբողջ ընտանիքը, բացի երկու փոքրիկ դուստրերէն: Սերած է կերպասի եւ մետաքսի վաճառականութեամբ զբաղող ընտանիքէ մը, Օսմանական պետութեան հարաւարելիքէն՝ Տիարպէքիէն, այսօր պատմական Յայաստանի մէջ»:

«Մեծ մօրս պատմութիւնը իմացած եմ փշրանքներով, որոնք գլխուս մէջ կարծես կը պարէին երբ փոքր էի եւ չէի հասկնար թէ ի՞նչ ընեմ անոնցմով: Պարզապէս պահ տուած եմ այդ բոլոր մանրամասնութիւնները, եւ հասուննալէ ետք, երբ սկսայ մտածել կեանքի, պատմութեան, մշակոյթի եւ ընտանիքի մասին, այդ մանրամասնութիւնները խուժեցին միտքիս եւ ազդեցին լեզուիս եւ քերթողութեանս վրայ: Զերթուածներուս մէջ մեծ մայրս սկսաւ յայտնուիլ որպէս տիպար, ձայն եւ ուրուական...»:

Անշուշտ գիտենք, որ Փիթըր Պալաքեան, եղբօրորդին է նշանաւոր Գրիգոր Ծ. Վրդ. Պալաքեանի, հեղինակը՝ «Յայ Գողգոթան» երկհատոր յուշերուն... հայերէն չի գիտեր, չէ սորված, իր ընտանիքին մէջ չէ խօսուած այդ լեզուով. բայց ինք, իր երկու նոյնքան նշանաւոր հօրաքոյրներուն՝ Նոնա Պալաքեանի եւ Աննա Պալաքեանի հետ (երկուքն ալ դասախօս եղած են Նիւ Եորքի համալսարանին մէջ), երբե՛ք չ'ուրանար իր հայկական ծնունդը, ընդհակառակը. հայկական արմատները յաճախ կ'երելին իր քերթողութեան մէջ:

Լեզուի հարցը կը շարունակէ մնալ բորբ, իր գլխաւոր երկու բաժիններով.

–Մայրենի լեզուին կարելորութիւնը անհատի կեանքին մէջ.

–Լեզուին պայմանական չըլլալը անհատի ինքնութիւնը սահմանելու մէջ:

Բայց ի վերջոյ մայրենի լեզուին տիրապետելու եւ զայն առօրեայի լեզուն դարձնելու հարց – գոնէ ընտանիքին մէջ – կը մնայ ընտրութեան հարց:

Միւթարականը այն է, որ այսօր շատ այլ ազգեր եւս, ստիպողաբար կամ ընտրութեամբ հեռացած իրենց հայրենիքէն, կը դիմագրաւեն ճիշդ այն հարցերը, որոնք մեզի, մանաւանդ սփոփուքահայերուս համար դարձած են հարց:

ՆԱԿԷՊԵԱՆ ԽՃԱՆԿԱՐ



Յալէպի նեղ փողոցները տաքուկ էին, երկյարկանի տուներով, որոնք կարծես շարունակութիւնն էին փողոցին, որովհետեւ բարեկամներ ազատ մուտք ունէին հոն. վարէն անցնող կին մը կրնար ձայն տալ, կանչել իր ընկերուհին, որ եթէ տունն էր, պատշգամ կը վազէր եւ կէս մէջքով վար կախուած, վեր, սուրճի կը հրաւիրէր զինք: Աւելի մտերիմները նոյնիսկ այդ հրաւերին պէտք չունէին, ուղղակի կը բարձրանային եւ դուռը համարձակօրէն կը թակէին. կրնային նոյնիսկ յանդիմանել տանտիկինը, որ ուշացեր էր դուռը բանալու՝ «Ոտքերս ցաւեցան կենալ-սպասելէն որ դուռը բանաս...»: Տանտիկինը կը ստիպուէր արդարանալ՝ «բաղնիքն էի, տիկին Ազնիւ, հազիւ վազեցի եկայ»:

Առաւօտները, երբ փողոցները կը լեցուէին շրջուն վաճառորդներով եւ ապրանքը գովաբանող անոնց կանչերով, պատշգամները լեցուն կ'ըլլային վերէն գնում ընող, ապա գնածը ճաշի համար պատրաստող կիներով, որոնք միաժամանակ կրնային քովի տան պատշգամը նստած դրացուհիին հետ շաղակրատել եւ բամբասել թաղին հասունցող, գեղեցկացող եւ արդէն աչքի զարնող աղջիկները:

– Ի՞նչ կ'եփես կոր այսօր:

– Մարդս երէկ կանաչ լուբիա բերեր էր:

– Յա, ես ալ այսօր գնեցի, տեսայ շատ աղուոր է: Զա տեսա՞ր Սիրանոյշին աղջիկը ինչ եղեր է:

– Տեսայ, տեսայ, աղուորցեր արեւ դարձեր է, Աստուած լաւ բախտ տայ իրեն. Կ'ըսեն՝ տգեղներուն բախտը աղուոր կ'ըլլայ... Է՛ի:

Կէսօրէն ետք այս ամբողջը կը հանդարտէր. լուացքները մաքուր եւ երջանիկ կ'օրօրուէին Յալէպի կիզիչ, բայց բարի արեւուն տակ, մինչ խանութներուն առջեւ մարդիկ, գոցելով նարտիներուն տուփերը, կ'երթային կէսօրուան ճաշին եւ մրափին տրուելու:

Անոնք, որոնց տունները հեռու էին, խանութին առջեւ նստած կը մրափէին, մինչեւ հազուադէպ յաճախորդ մը գար արթնցնել զիրենք:

Տարբեր էին իսլամական շրջանի թաղերը, մանաւանդ հին քաղաքին մէջ, ուր դռները ամուր-ամուր փակ կը մնային, իսկ յետմիջօրէններուն դրացուհիները իրարու հետ տանիքներէն կը զրուցէին, երբ առտնին աշխատանքները վերջացած կ'ըլլային, բայց տակաւին մէկ-երկու ազատ ժամ կը մնար, մինչեւ ամուսիններուն գործէն վերադառնալը:

Շատ կը սիրէի թափառիլ մանաւանդ Յալէպի հին քաղաքի նեղիկ թաղերուն մէջ, որոնք Ներսի շուկային կամ փակ շուկային շուրջն էին. որեւէ մուտքէ կրնայիր ելլել եւ ինքզինքդ կը գտնէիր այդ թաղերէն մէկն ու մէկուն մէջ, ուր նաեւ անպայման

հնագիտական անձանօթ վայրի մըն ալ կրնայիր հանդիպիլ, ինչպէս Արդուն ալ-Քամիլի Պիմարստանը (հոգեկան խանգարում ունեցողներու հիւանդանոց), կամ դափնիի օճառի «գործարանը»:

Գործարան բառը կը չակերտեմ, որովհետեւ օճառը այնտեղ ձեռքով եւ հին դարերու ձեւերով կը պատրաստուէր. գործարան ըլլալու համար գործիք չկար, կամ կային նախնական քանի մը կազմածներ, որոնց միջոցով շատ որակաւոր օճառ կը պատրաստուէր:

Իսկ Պիմարստանը ... իսկապէս գեղեցիկ վայր մըն էր թէ՛ իր ճարտարապետութեամբ, թէ՛ ալ տակաւին հոն կարծես հրաշքով թէ կախարդանքով պահուած մթնոլորտով: Աւազանը թէւ պարապ էր, ջուր չկար, բայց ներքին ականջներովդ կրնայիր լսել փոքրիկ շատրուանէն հանդարտօրէն թափող ջուրին խոխոջը, կրնայիր տեսնել երկաթապատ պատուհաններուն ետեւէն կարօտով դուրսի ազատ տարածքը դիտող տխուր, յուսաբեկ հիւանդները...

Այս հիւանդանոցը, կամ ինչպէս որ ժողովուրդը զայն պարզապէս Մարստան կը կոչէ, կը գտնուի Ներսի Շուկային հարաւի կողմը եւ կառուցուած է 1354 թուականին, Արդուն ալ-Քամիլիի օրերուն, որ Մամլուք սուլթանին ներկայացուցիչն էր Յալէպի մէջ:

Այս հիւանդանոցը իսլամական աշխարհի ամենէն կարեւորներէն մէկը կը համարուի եւ Յալէպի առողջապահական գլխաւոր կեդրոնը, որուն պետքերը՝ նիւթական, դեղորայք, գործիքներ թէ հետազօտութիւններ, օրուան սուլթանը կը հոգար:

Շէնքին ճարտարապետութիւնը բարդ է. հոն տարբեր բաժիններ եղած են, բուժումի տարբեր ծրագրերու համար: Գլխաւոր բաժինները կը բաղկանան մուտքէն – ուր երկու կողմի վրայ քարէ նստարաններ կան – քննութեան բաժինէն, հիւանդներուն յատկացուած սենեակներէն եւ առօրեայի կարեւոր բաժիններէ՝ խոհանոց, բաղնիք, շտեմարան, աշխատողներու համար յատուկ մուտք:

Մինչեւ պատերազմի սկիզբը, այս կառոյցը զբօսաշրջութեան այցելուներու կարեւոր կեդրոններէն մէկն էր, ուր տրուած բացատրութիւնները յաճախ այցելուները ափ ի բերան կը ձգէին, այդքան դարեր առաջ օգտագործուած միջոցներուն մասին լսելով:

Իսկ օճառի գործարանը, որ քեզ մի՛շտ կը դիմաւորէ դափնօճառին (հալէպցիներուն շատ սիրելի դար օճառը) զգլխիչ բոյրով, իրապէ՛ս կեանքի կարեւոր փորձառութիւններէն մէկը կը համարեմ, Ներսի Շուկային եւ շուկայի բաղնիք երթալու կողքին: Անոնք որոնք չեն ունեցած նման փորձառութիւն, կը կարծեմ

թէ իրենք զիրենք զրկեր են այնքան էկզոթիք այս հաճոյքներէն...

Յաճախ գացեր եմ ներսի թաղերը պտըտելու: Վերջին տարիներուն – պատերազմէն անմիջապէս առաջ – ներսի թաղերէն մէկուն մէջ գտնուող Շիպանի դպրոցին բակը երաժշտական, մանաւանդ ճագի գեղեցիկ համերգներ կ'ըլլային:

Առաջին անգամ, սակայն, այդ դպրոցին բակը օգտագործուեր է Հալէպի լուսանկարչութեան առաջին դպրոցի հիմնադիր, լուսանկարիչ Եսայի Թումայի կազմակերպած միջազգային ցուցահանդեսին համար:

Անունը լրիւ անծանօթ էր: Հրաւիրատոմսին վրայ փոքրիկ քարտէզ մը կար:

– Երթամ փնտռեմ-գտնեմ, – ըսի Գեորգին:

Համաձայն գտնուեցաւ, որովհետեւ բացումը շաբթուան կիսուն ըլլալուն, գործէն ուղղակի պիտի երթայինք, եւ եթէ ճիշդ տեղը չգտնէինք, փնտռելով պիտի ուշանայինք անշուշտ:

Հրաւիրատոմս-քարտէզը ձեռքս բաւական ճամբայ կտրեցի Ներսի Շուկային մէջէն, բայց երբ հասայ կողք կողքի գտնուող երկու նեղ թաղերու առջեւ, ստիպուած եղայ հարցնել:

Ի վերջոյ հասայ, միտքիս մէջ ամուր պահեցի ճամբան եւ սկսայ եկած ճամբես վերադառնալ:

Բայց... ինչո՞ւ նոյն, ծանօթ ճամբէն վերադառնայի. կրնայի հակառակ ուղղութեամբ քալել, նոր վայրեր յայտնաբերել եւ անպայման դուրս, պողոտայ մը պիտի գտնէի այս նեղ թաղերու լաբիրինթոսին ծայրը:

Քաջաբար սկսայ քալել հակառակ ուղղութեամբ:

Քանի կը յառաջանայի, թաղերը այնքան կը նեղնային եւ ամայի կը դառնային: Գրեթէ մարդ չկար: Փակ դռները սոսկում սկսան պատճառել: Ի՞նչ ապուշութիւն էր ըրածս ... Բայց վստահ էի քաղաքիս ժողովուրդի բարութեան: Կը վախնայի, միաժամանակ վստահ էի որ ելք մը պիտի գտնեմ, առանց փորձանքի հանդիպելու:

Բայց նեղ թաղերուն կծիկը չէր աւարտեր:

Դեմէս միջին տարիքի մարդ մը կու գար, զիս ուշադիր դիտելով: Երբ հասաւ ինձի, կեցաւ եւ հանդարտ ձայնով ըսաւ.

– Զոյրս, ո՞ւր կ'երթաս... Կը տեսնեմ որ զբօսաշրջիկ չես, բայց այս թաղերէն ալ չես... ո՞ւր կ'երթաս...

– Կ'ուզեմ պողոտայ ելլել եւ թաքսի մը առնել, – ըսի:

Մարդը բացատրեց: Շնորհակալութիւն յայտնեցի եւ զգացի թէ երկար ատեն կը դիտեր զիս: Վստահ եմ՝ կ'ուզէր վստահ ըլլալ, որ ճիշդ հասկցեր եմ իր բացատրութիւնը:

Անկէ ետք բազմաթիւ անգամներ գացինք Շիպանի դպրոց,

ներկայ ըլլալու տարբեր ձեռնարկներու: Միշտ ալ նոյն հաճոյքով կ'երթայինք, որովհետեւ Հալէպի այդ թաղերը տարբեր հմայք մը ունին: Ունէին...

Կար նաեւ ինծի շա՛տ սիրելի Դրամատուներու Վերելքը (Թալաաթ ալ-Պնուք): Կու գաս մինչեւ Պապ ալ-Ֆարաճի ժամացոյցը, որ ընդհանրապէս կեցած կ'ըլլար, կամ ալ՝ սխալ ժամ ցոյց կու տար, կը կենաս անոր ճարտարապետութիւնը վայելելու, յետոյ կը շարունակես յառաջանալ: Նախ՝ Հանրային Գրադարանը՝ գիրքերէն աւելի նշանաւոր իր սրահով, ուր յաճախ դաշնամուրի աշակերտական ելոյթներ տեղի կ'ունենային, ապա կը շարունակես, մինչեւ որ Հալէպի գլխաւոր դրամատան շէնքը փակեր ճանապարհը:

Պապ ալ-Ֆարաճի ժամացոյցը... որ նշանաւոր էր ոչ միայն իր հնութեամբ եւ ճարտարապետութեամբ, այլ մանաւանդ...

Հայաստանի անկախութենէն ետք, «ցրտի եւ մութի տարիներին», երբ Հայաստանէն շատ կիներ կու գային Հալէպէն ապրանք տանելու, խումբ մը իջեւաներ էր ժամացոյցին հանդիպակաց պանդոկը: Առաւօտ մը, շատ կանուխ, կ'երեւի ժամը վեցին, նոյն սենեակը քնացած երեք կիներէն մէկը, իրարանցումի ձայնէն արթնցած, կը մօտենայ պատուհանին, դուրս կը նայի եւ... հասակով մէկ գետին կը փռուի՝ մարած: Երկրորդ սենեկակիցը իյնալու ձայնէն կ'արթննայ, կը լսէ իրարանցումը, կը վազէ պատուհան, կը նայի եւ... ան ալ մարելով գետին կ'իյնայ: Երրորդ ընկերուհին կ'արթննայ եւ կը փորձէ մարած երկու ընկերուհիները արթնցնել, որոնք իրեն կցկտուր բառերով եւ սարսափահար կը պատմեն պատուհանէն դուրս երեւցող տեսարանը: Այս երրորդը իր կարգին պատուհան կը վազէ եւ... գիտէք շարունակութիւնը: Առաւօտեան ժամը հինգին կախուած մարդը դեռ կը ճօճուէր:

Կը շարունակես ճամբադ եւ ձախ կը դառնաս: Կ'անցնիս Եօթը Լճակներէն (Սապաա Պահրաթ), կը շարունակես դէպի աջ, կը հիանաս հեռուէն երեւցող Ումաուի մզկիթով եւ փողոցին հետ ձախ կը դառնաս, այն ատեն հրաշքի պէս բան մը տեղի կ'ունենայ...

Ճիշդ այնպէս, ինչպէս ամէն անգամ Արարատը տեսնելուս կը զգամ անոր վեհութիւնն ու պատմականութիւնը, ճիշդ նոյն ձեւով աչքերուս առջեւ կը բացուի Հալէպի բերդը, որ Միջին Արեւելքի մեծագոյնն է կ'ըսեն եւ որ շա՛տ սիրելի է ինծի նաեւ անոր համար, որ Օձերու Դարպասը իր վերեւ կը կրէ Տիգրան Մեծի յիշատակութեամբ արձանագրութիւն մը:

Ձախ կը դառնաս եւ պահ մը կը կենաս ըմբռնուելու բերդին

վեհուօթիւնը, պատմութեան ծանրութիւնն ու անկէ ծնած «սպիները» իր կողերուն: Տարուան չորս եղանակներուն, նոյնիսկ անձրեւուն տակ գեղեցիկ գտած եմ աչքերուս դեմ բացուող բերդը, որմէ անտեսանելի բայց խորապէս զգալի ուժ մը կարծես կը ծորեր երակներուս մէջ:

Դրամատուներու Վերելքի պողոտային դեպի ձախ գացող նեղ փողոցին վրայ կը գտնուէր Յալէպի առաջին ադամանդագործին՝ Սալիմ Ֆաթթալին խանութը:

Սալիմ Ֆաթթալ մօրաքոյրներուս եւ մօրս սերունդին գոհարավաճառն էր. իրենց բոլոր տարեկիցները ունէին նշանդրեքի նոյն կապոյտ քարով մատանին, յետոյ՝ նոյն սոլիթերը:

Կ'ըսեն թէ Սալիմ Ֆաթթալ ո՛չ թէ Արեւմտահայաստանէն, այլ՝ Երեւանէն Յալէպ եկեր է: Ո՞ր թուականին: Յստակ չէ: Յստակ չէ նաեւ, թէ ինչպե՛ս փոխուէր է ընտանիքին մականունը, որ վստահաբար եան մը ունենալու էր Երեւանի մէջ...

Չեմ գարմանար այդ կողմերէն Յալէպ գաղթողներով, որովհետեւ Գահիրէի մէջ եւս հանդիպեցայ շառաւիղներուն Ռուսիայէն Գահիրէ գաղթած ընտանիքի մը՝ Առաքելեաններուն, որոնց պապուն երկու մանչերը ձիու վաճառականութեան համար եկեր են այս կողմերը, եւ յետոյ կայք հաստատեր հոս՝ Գահիրէ: Անսովոր, բայց ոչ անկարելի, նման գաղթեր:

Սալիմ Ֆաթթալին տասնմէկ զաւակներէն առաջինը՝ Ճորճը – Մօրուքը – շարունակէր է հօր արհեստը, իսկ ամէնէն փոքրը՝ Սուրէնը, դարձեր է զարդեղէն ձեւաւորող, որուն աշխատանքը մեծ տարածում գտեր է ժամանակին: Ափսոս որ Սուրէնը կանուխ, հազիւ 48 տարեկան կը մահանայ, իսկ Սալիմ Ֆաթթալին թռռներէն ո՛չ մէկը կը հետեւի այդ արհեստին, որ խորքին մէջ արուեստ պէտք է համարել:

Երբ լսեր էի Ճորճ Ֆաթթալին ծածկանունը, միտքս գացեր էր «Կապոյտ Մօրուքը» հեքիաթին, եւ առանց զիսք տեսնելու սկսեր էի վախնալ իրմէ:

Դժբախտաբար առիթ չեմ ունեցած զիսք տեսնելու. կամ տեսեր եմ մանկութեանս, եւ վախս պատճառ դարձեր է, որ սրբօրի յիշողութենէս: Ափսոս որ մեծերէս ո՛չ մէկը մնացեր է այսօր, որպէսզի կարենամ ընտանեկան ճշդումներ կատարել, կամ բարեկամներու մասին հարցումներուս պատասխանները կարենամ գտնել:

Բայց տեսեր եմ Մօրուքին տիկինը՝ Արաքսին. ծայրայեղ ազնիւ կին մը, արեւմտահայ ազնուական կնոջ կերպար մը, որ ամուսնին մահէն ետք ի՛նք վերցուցեր էր խանութին հոգը:

– Ամա՛ն, աղջի՛կս, նոր հարս ես եւ «Ֆիրուզ» մը չունի՞ս վրադ...

չ'ըլլա՛ր... տե՛ս, կը տեսնե՛ս այս «Ֆիրուզ» օղերը, հարսանիքիս օրը դրեր եմ եւ ա՛լ վրայէս չեմ հաներ: Չէ, չէ, հարսերը անպայմա՛ն «Ֆիրուզ» մը կրելու են վրանին...

Այդպէս խրատեր էր տիկին Արաքսին...

Շա՛տ ափսոսացեր էի, որ Մօրուքը ա՛լ չկար: Գոնէ մէկ անգամ տեսած ըլլայի զինք, հասկնայի թէ ինչո՛ւ իրեն Մօրուք կ'ըսէին:

Այսօր Ֆաթթալ մեծ ընտանիքէն կը մնայ միայն իրենց հսկայ դամբարանը, Յալէպի Առաքելական գերեզմանատան մէջ: Շառաւիղները բոլորն ալ գաղթեր են...

Մօրուքին խանութին ճի՛շդ քովը «Օրօգտիպաք»-ն էր, մե՛ծ վաճառատուն մը, որ կ'ըսէն, թէ ատենին շատ շքեղ եղեր է: Մուտքի լայն աստիճանները այդ շքեղութեան փշրանքներն են կարծես:

Նեղ թաղը եթէ շարունակէիր, պիտի հասնէիր Ղազար Պետիկ Նշանաւոր կահագործներուն (երկու գործընկերներ), որոնք իրագործեր են Յալէպի գրեթէ բոլոր Նշանաւոր մարդոց տուններուն եւ մենատուններուն կահաւորումը:

Յալէպի փոքրիկ, նեղ թաղերէն մէկն էր ասիկա, որուն մէջ ամբողջ պատմական շրջան մը խտացեր էր, իր Նշանաւոր անձերով, որոնք թէւ համեստ մարդիկ, սակայն միասնաբար Յալէպի պատմութիւնը կերտողներէն եղեր են:

Տաս-քսան քայլ անդին կ'ըսեն թէ քաղաքին բ..անոցը եղեր է, որ յետոյ պետութեան կողմէ փակուեր է, բոլոր մայրերուն բարկութիւնը ծայրագոյնին հասցնելով.

– Ճանը՛մ, ինչո՛ւ փակեցին, հիմա ամբողջ քաղաքը բ..անոցի վերածուեցաւ, վրան ալ՝ բժշկական հսկողութիւն չկայ...


Թե՛ Դամասկոսի, թե՛ Իսթանպուլի մէջ փակ շուկաներ կան, որոնք սակայն չունին Յալէպի Ներսի Շուկային կամ Յալէպի հին թաղերուն հմայքը:

Նոյն այս հմայքը կը գտնէինք Ճիտէյտէի թաղերուն մէջ, մութ կամարներէն երբ կ'անցնէինք Ս. Քառասնից Մանկանց եկեղեցի կամ բուրդի շուկայ երթալու համար:

Այն օրերուն որո՞ւ միտքէն կ'անցներ, թէ փողոցներու մէջ քալելու ամենէն պարզ հաճոյքն անգամ պիտի կորսնցնենք, երբ մեր կորսնցուցածը սովորական փողոցներ չեն, այլ՝ Յալէպի հին ու նեղ, ֆրլլէներուն հոտով եւ արաբական երածշտութեամբ յագեցած խաղաղ եւ անգտանելի թաղերը...

Այսօր այդ բոլոր շրջանները քանդուեր են. բայց վերա-շինութիւնը սկսեր է կ'ըսեն:

Կը յուսանք, որ շինուող պատերուն հետ Յալէպի թաղերէն հեռացած տաքուկ մթնոլորտը վերադառնայ եւ կրկին շունչ տայ հին քաղաքին:



**ՆԱԷՊԻ
ՄԵՐ ԲԱՂՆԻՔՆԵՐԸ**



– Ես չեմ գացած, բայց եթե կ'ուզեք, զինք տարեք,– ըսած էր մայրս Կիւլպէնկեան մայրանոցի *նըրսերուն*, որոնք որոշեր էին իրենց գործէն ետք բաղնիք երթալ:

– Դո՛ւն ալ եկուր, տիկի՛ն Արուսեակ:

– Ես... կը գանիմ:

– Զապա աղջիկդ ինչպէ՞ս կը դրկես:

– Թող երթայ, տեսնէ եւ գիտնայ, թէ ի՞նչ է շուկայի բաղնիքը:

Կը կարծէի, թէ որոշ գաղափար մը ունիմ շուկայի բաղնիքին մասին, որովհետեւ երբեմն «վեր»-ի բաղնիքը կ'ելլէինք եւ հոն կը լոզնայինք:

«Վեր»-ը մայրանոցին տանիքն էր, ուր կը գտնուէր լուացքի մե՛ծ սենեակը եւ անոր կողքին բաւական փոքրիկ բաղնիք մը, որուն վառարանը երբ վառէր, բաղնիքը շատ-շատ տաք կ'ըլլար, շատ աւելի, քան մեր տունին բաղնիքը:

Տակաւին՝ Մարոշիկը, որ Մայրանոցին օգնական խոհարարուհին էր եւ շատ կապուած մօրս – ինչպէս էին մայրանոցի բոլոր աշխատողները, որոնց պաշտպան փաստաբանն էր մայրս եւ թերափիստը – քառորդ ժամ ետք կու գար, կամացուկ մը բաղնիքին դուռը կը թակէր եւ ներս կ'երկարէր պաղ թանով լեցուն սափոր մը եւ ստկուած ու ջարդուած նարինջ մը:

Ի՞նչ հաճելի էին պաղ թանն ու նարինջին բուրմունքը:

Կը կարծէի թէ նման բան մը պիտի ըլլար շուկայի բաղնիքը, հաւանաբար քիչ մը աւելի մեծ, ապա թէ ոչ ինչպէ՞ս պիտի բաւէինք հինգս՝ չորս նըրսերը եւ ես:

Այդ առաջին երթալուս մանրամասնութիւնները չեմ յիշեր, բայց տպաւորութիւնս դրական էր՝ հաճելի տեղ մըն էր սա շուկայի բաղնիք ըսուածը, մայրս ինչո՞ւ չէր սիրեր, չէի հասկցած:

Զայրս ալ շատ կը սիրէր բաղնիք երթալ. իր գացածը փակ շուկային պղնձագործներու թաղին մէջ գտնուող բաղնիքն էր – սու՛րը Նահիասին– որ գետնափոր տեղ մըն էր, դէպի վար գացող երկա՛ր աստիճաններով, եւ որ, ըստ հօրս պատմածին, շատ գեղեցիկ էր եւ մաքուր:

Զալէպը քանի մը բաղնիք ուներ, որոնք բոլորն ալ առաւօտեան ժամերը կիներուն յատկացուցեր էին, իսկ այրերը իրիկունը կ'երթային. շատեր նոյնիսկ կրնային հոն գիշերել, բայց ոչ Նահիասինի բաղնիքը, ուր կիներուն մուտքը բացարձակապէս արգիլուած էր:

Աւելի ուշ, երբ Զալէպի երկու բաղնիքները նորոգուեցան՝ «Եալպուղա»-ն եւ «Կարմիր Դուռ»-ը (Պապ ալ-Ահմար), հայ կիները

սկսան երթալ: Առաջին անգամուան համար, որքան կը յիշեմ, միութիւն մը որպէս ձեռնարկ-պտոյտ կազմակերպեր էր բաղնիքագնացութիւնը: Յետոյ գացողները սկսան իրենց ազգական-բարեկամ-ընկերուիները տանիլ...

Շատ կը սիրէի «Կարմիր Դուռ»-ը, որովհետեւ աւելի փոքր էր քան «Եալպուղա»-ն եւ աւելի ժողովրդային, մինչ «Եալպուղա»-ն արդէն յստակօրէն զբօսաշրջիկներուն համար պատրաստուած էր: Իսկապէս ալ, ամէն անգամ որ հոն երթայինք, անպայման կը հանդիպէինք ճափոնցի, չինացի, մանաւանդ իտալացի կամ ռուս կիներու, որոնց դէմքէն երջանկութիւն կը ճառագայթէր...

Որքա՛ն ազդած են արեւելեան այդ բաղնիքները մեր գրագետներուն վրայ, որոնք տողեր եւ էջեր նուիրեր են նկարագրելու անոնց ներքին խորշերը – երբ մանուկ, իրենց մայրերուն ընկերացեր են – բայց մանաւանդ խօսելու այդ բաղնիքներու մթնոլորտին եւ խորհրդաւորութեան մասին:

Լեւոն Չաւէն Սիւրմէլեանի I Ask You Ladies and Gentlemen գիրքի բաղնիքին նուիրուած գլուխը կարդալու է: Առաջին անգամ երբ կարդացի, թուեցաւ թէ մեր Յալէպի բաղնիքներէն մէկն էր նկարագրածը, այնքան յստակօրէն նման էր իր նկարագրած Պոլսոյ բաղնիքը մերինին:

Իսկ Վարուժանի «Արեւելեան Բաղնիք»-ը, օ՛... ուրիշ հաճոյք է, երբ կը մտաբերես քերթուածին տողերը, բաղնիքին տաք յատակին պառկած, ոտքերդ գուռէն վազող տաք ջուրին յանձնած եւ նայուածքդ վեր՝ ինկող կաթիլներուն, գմբէթներու գնդաձեւ ապակիներուն...

«Յանկարծակի կը սարսռան՝ երբ գմբէթէն կը կաթի

Յուրտ ցօղ մ'իրենց ծոծրակին հեշտագրգիռ փոսին մէջ»

Եւ ճիշդ ճամբորդութեան սկսելու նման, երբ կը նստիս ինքնաշարժը, պասը կամ օդանաւը, կը զգաս որ առօրեադ իր տաղտուկներով եւ հոգերով կը քակուի վրայէդ շերտ առ շերտ եւ կը մնաս թեթեւ, հանգիստ, նոր արկածախնդրութեան մը պատրաստ, ճիշդ նոյն ձեւով ալ երբ դէպի բաղնիք ճամբայ կ'ելլես, արդէն կը զգաս այդ թեթեւութիւնը, որովհետեւ տաք ջուրին յանձնուած ո՛չ միայն մարմնիդ կեղտերը շերտ առ շերտ կը թափին, այլ հոգիդ կը թեթեւնայ պահ մը հանգստացած, կը քակուի իր բազմաթիւ կնճիռներէն եւ կը դառնայ նոր ու փայլուն, պատրաստ նոր օրուան մը մարտահրաւերներուն: Յոգիի ճամբորդութեան տարբերակ մըն է արեւելեան բաղնիք երթալն ու այդ փորձառութեան լիովին յանձնուիլը...

Բայց նախ կեցե՛ք ներս մտնեք:

Լայն ու բարձր դարպասին առջեւ նստած է թխադեմ ու խոժոռ կին մը, որ խստորեն կը զննէ մտնողները, մանաւանդ փոքրիկները՝ մանչեր եւ աղջիկներ, որոնք կը կախուին իրենց մայրերուն փեշերէն. խուզարկու աչքերով կը չափէ մանչերը ու երբեմն կ'արգիլէ անոնց մուտքը ոչ թէ հասակին համեմատ, ինչպէս շատեր կը կարծեն, այլ... նայուածքին, ուր արթնութիւնը կը կայծկոտի:

Այն ատեն կը սկսի պոռչտուքով համեմուած սակարկութիւն մը, բայց պահակ կինը անկոտրում կը մնայ, որովհետեւ նուազագոյն սխալով ինք կրնայ գործը կորսնցնել:

Ի վերջոյ մենք, որ կեցած կը սպասենք իրենց, կը մտնենք երբ պահակ կինը կը բարկանայ.

– Ասդի՛ն կեցիր, սա տիկիներուն տե՛ղ տուր:

Մեզի տիկին կ'ըսէ, մինչ միւս կինը՝ իր նման լաջակաւոր, իր նման քաղաքին «ներսի թաղերէն», ինչպէս մենք կ'ըսենք, միայն կին է, նոյնիսկ՝ կնիկ իրեն համար:

Կը մտնենք եւ մեծ դարպասը կը փակուի մեր ետեւէն:

Կանուխ է, գրեթէ մարդ չկայ: Յալեպի նշանաւոր դեղին քարը կը պսպղայ, մինչ մենք խորապէս կը շնչենք դափնիի հոտը, Յալեպի նշանաւոր դար օճառէն բուրո՞ղ, որ լեցուեր է բաղնիքին «դուրսի» սրահը, հոն ուր քանի մը աստիճաններէն վար մեծ սրահն է, մեջտեղը անխուսափելի արաբական շատրուան-աւազանը, իսկ պատերուն տակ՝ թախթերը, ուր կը դնենք մեր ծանր պայուսակները եւ կը սկսինք հանուիլ:

Մարդ չկայ տակաւին. ըլլար իսկ, ոչ ոք կը դիտէ միւսները, բոլորն ալ կ'աճապարեն ներս, բաղնիքին ներսի սրահը նետուիլ, հոն ուր տաքն է, ջուրը, շոգին եւ... անոնցմէ ծնած հաճոյքը:

Ներսի սրահը աւելի փոքր է, ճիշդ մեջտեղը՝ սեւ կամ տաք քարը, որուն տակ է բաղնիքին մեծ հնոցը եւ ուր կը փռուին կիները քեսէյվելու համար, քեսէճիին խիղճին յանձնուած. եթէ պատահի, որ գանգատիս իր բրտութենէն, անմիջապէս աչքդ կը խոթէ «ֆիթիլները».

– Կը տեսնե՞ս կոր, մատա՛մ, աս ֆիթիլները, աս ամմէնը քեզմէ կ'ելլայ կոր, ասանկ չընեմ նէ աղտոտ կը մնաս աղտո՛տ... հապա՛:

Ճարահատ կը լռես եւ միտքեդ կ'աղօթես որ այս տառապանքը վերջ ունենայ, միաժամանակ ինքզինքդ այպանելով՝ կարելո՞ր էր քեսէյվիլդ...

Չորս կողմը փոքր սենեակներ են, ուր բազմանդամ ընտանիքներ կը հաւաքուին իրենց ուտելիքներու կապոցներով,

թմբուկներով, դափերով, անհատնում ծիծաղով եւ փոքրերուն ճիչերով. երբեմն այնքան մեծ կ'ըլլայ իրենց խրախճանքին աղմուկը, որ կողքի սենեակներէն շատեր կը շտապեն տեսնելու թէ ի՛նչ կայ:

– Զարսնցո՞ւ բերեր են,– կը հարցնեն իրարու եւ մերկ մարմիններով կը հրմշտկեն գիրար՝ հարսնցուն տեսնելու:

Ինչպէս ծովուն առջեւ, այստեղ ալ մարդիկ գրեթէ հաւասար են, ջուրի հոսքին տակ ջնջուած են կարծես ընկերային բոլոր դասակարգերը, եւ կիները իրենց բարձր տրամադրութեան մէջ կը դառնան իրարու բարեկամ, գրոյցը կը հոսի օտարներու միջեւ, յաճախ տեղացի կիները օտար զբօսաշրջիկներուն – իրենց գիտցած մէկ-երկու բառ անգլերէնով – հարցումներ կ'ուղղեն, կ'ուզեն հասկնալ թէ ինչպէ՛ս է կեանքը հոն, անոնց քաղաքին մէջ, եւ թէ արդեօ՞ք հաւնեցան մեր Զալէպը...

Օտար զբօսաշրջիկները բոլորն ալ հաւնած կ'ըլլային մեր Զալէպը այնքան, որ իրենց բարեկամներուն հետ կրկին կ'այցելէին:

Պատերազմի ընթացքին երեք բաղնիքներն ալ աւերակի վերածուեցան: Այսօր չեմ գիտեր թէ տրոգուեցա՞ն անոնք, որովհետեւ ո՞վ պիտի մտածէ հաճոյքի մասին – իսկ բաղնեգնացութիւնը արդէն հաճոյք դարձեր էր – երբ առօրեան իր հոգերով կը ստիպէ մարդոց այլ կողմ նայիլ:

Օր մը թերեւս կրկին իրենց դարպասները բանան Զալէպի բաղնիքները, իսկ կացութիւնը այնքան ապահով եւ բարօր ըլլայ, որ մարդիկ վերագտնեն իրենց կորսուած հաճոյքը:



ՆՈԳԵՏՈՒՆԸ



Կար ժամանակ, երբ Յոզեֆուսը Յալէպի տեսարժան վայրերէն մէկն էր, եւ կար ժամանակ ա՛յդ ժամանակէն առաջ, երբ Յոզեֆուսը կարեւոր կեդրոն մըն էր, ընդհանրապէս՝ հոգիի կեդրոն մը, որովհետեւ այնտեղ էին «Ոսկետառ» տպարանն ու Տիգրանակերտի Յայրենակցական Միութեան կեդրոնը, ուր պատսպարուած էր նաեւ գրադարանը:

Յոզեֆուսը երկու մուտք ուներ՝ մէկը Թիլէլէն, կամարածեւ մուտք մը եւ վրան հայերէն ու արաբերէն «Յոզեֆուս» գրուած, ուրկէ մտնելէ ետք քակի մը լայն ու ցած աստիճաններով կը հասնէինք բակը, որուն ճի՛շդ դիմացն էր տպարանը:

Աջին նեղ ու բարձր աստիճանները կը տանէին վեր՝ տիգրանակերտցիներուն գրադարանը:

Ամէն Կիրակի ժամը տասին բաց էր գրադարանը. արծուիկութենէն ելլող տիգրանակերտցի աղջնակներն ու աղջիկները դէպի տուն ճամբուն վրայ անպայման կ'այցելէին գրադարան, եթէ ոչ գիրք վարձելու – շաբաթական կարծեմ տասը դրուշ էր մէկ գիրք առնելը – գոնէ քիչ մը զբաղելու, քիչ մը երկարելու տունէն դուրս անցուած ժամանակը: Բայց գիրք ալ կ'առնէին, որովհետեւ այդ օրերուն մեր հաճելի զբաղումներէն էին կարդալն ու կարդացածին մասին կարծիքներ փոխանակելը:

Բայց այս բոլորէն շա՛տ առաջ, ըստ Յալէպի առաջնորդ Արտաւազդ Արք. Սիւրմեանին, Յոզեֆուսը իջեւանատուն մը եղած է Կիլիկիայէն եւ Փոքր Ասիոյ կողմերէն Երուսաղէմ գացողներուն համար:

«Յոզեֆուսն դարերէ ի վեր գոյութիւն ունեցած է պարզապէս իբր հոգեւոր պանդոկ, հանգիստ տալու վերէն կամ վարէն հոն հասնող ուխտաւորներուն»:

Յիշատակարան մը կ'ըսէ, թէ կառուցուած է 1624 թուականին, որպէս Սուրբ Յակոբայ Տուն, ապա գրեթէ հարիւր տարի ետք՝ 1721-ին կը նորոգուի, կը բարեգարդուի եւ անոր վրայ սենեակներ կ'աւելցուին:

1915-էն ետք այս եւ նման հոգետուներ գլխաւորաբար կը ծառայեն Արեւմտահայաստանէն հասնող գաղթական հայերուն որպէս բնակարան:

Յոզեֆուս ընդհանուր տարածութիւնը 450 ք.մ է, իսկ միայն բակը՝ 161 ք.մ.: Ունեցած է 23 սենեակ եւ հոր մը՝ բակին ճիշդ մէջտեղը:

Երբ աղջամուղջը իջներ, ամէնէն առաջ Յոզեֆուսը կը մթներ եւ հոնկէ անցնիլը սոսկում կը պատճառէր ինծի, թերեւս անկիւններուն մէջ կուտակուած շուքերուն եւ ամայութեան պատճառով, թէւս այդ ժամերուն բնաւ մինակ չէի ըլլար, հօրս կամ մօրս հետ կ'ըլլայի. որքան որ սիրելի էր Յոզեֆուսը Կիրակի առտունները, այնքան վախազդու էին իրիկունները:

Յոզեֆուսը կը կրճատէր ճամբան Ս. Քառասնից Մանկանց եկեղեցիէն մինչեւ Թիլէլ, որ կրնար համեմատաբար երկար ըլլալ, եթէ չըլլային Սալիպէի նեղ թաղերը, որոնք կը կապէին այդ շրջանը ոչ միայն Թիլէլին, այլ նաեւ Ճիտէյտէին, որ հալէպահայերուն գլխաւոր շուկան էր: Շաբթուան որեւէ օրուան առաւօտուն կարելի էր տեսնել իրար հանդիպած երկու բարեկամուհիներ կամ ազգականուհիներ, որոնք առանց ուշք դարձնելու կանաչեղէնի, պտուղի, հաւի կամ միսի ծանր տոպրակներուն,

կեցած կը գրուցէին իրարու հետ մե՛ծ ախորժակով:

– Լարա՛ւ, – կ’ըսէ մեծ մայրը աղջկաս, – շուկայ պիտի երթամ, կու գա՞ս հետս:

– Կու գամ միայն եթէ թաքսիով երթանք, – պայման կը դնէ աղջիկս:

– Հոսկէ ճիտէյտէ երկու քայլ է, ինչո՞ւ թաքսի, – կը զարմանայ մայրս:

Իրապէս ալ, նախկին հրշէջներու կեդրոնին դիմացի կողմը գտնուող մեր տունէն մինչեւ ճիտէյտէ տասը վայրկեանէն կարելի էր քալելով հասնիլ:

– Ճամբուն համար չե՛մ, – կ’ըսէ Լարան, – բայց ամէն քայլի մէկը կը կեցնէ քեզի՛ բարե՛ւ, տիկի՛ն Արուսեակ, ինչպէ՞ս ես, գիտե՞ս, տղան որ տուիր ինձի, հիմա ի՛նչ մեծ երիտասարդ դարձեր է... ամէն քայլի մէկը կը կեցնէ, կը ձանձրանամ սպասելէն... Եթէ թաքսիով կ’երթաս, կու գամ:

– Մի՛ գար ուրեմն, – կ’ըսէ մայրս եւ հարցը կը փակուի:

Վերջին տարիներուն Երեքշաբթի օրերը այլ տեսք կը ստանար ճիտէյտէն, որ կը լեցուէր շատ վայելչագեղ օրհորդներով եւ տիկիներով, որոնք Ս. Քառասնից Մանկանց եկեղեցի կը շտապէին, Ս. Մինասի նուիրուած պատարագին երթալու, անցնելով Փայտի հրապարակէն, ուր միշտ ալ քանի մը ծերունիներ կը գրուցէին եւ մեծ թիւով մանուկներ կը խաղային:

Այդ նեղ թաղերը կը տանէին նաեւ Թիլելի մէջտեղէն բաժնուող փողոցէն դէպի Ֆարհաթ անել հրապարակ, ուր դարերէ ի վեր Հալէպի քրիստոնէայ բնակչութեան կը հսկէին կարծես քովէ քով երեք եկեղեցիներ՝ Սրբոց Քառասնիցը (հրապարակէն քիչ մը ներս), Մարոնիթներու եւ Յոյն կաթողիկէներու եկեղեցիները: Հրապարակը կը կոչուի Գաբրիէլ Գերմանով Ֆարհաթ Արք. -ի անունով (1670-1732), որուն արձանը՝ թիկնաթռռի մը վրայ բազմած, կ’իշխէ հրապարակին: Այս արձանը վնասուած էր Հալէպի ռմբակոծման շրջանին, բայց այսօր նոյն վեհափառութեամբ կը շարունակէ հսկել բնակչութեան:

Այս շրջանին մէջ են նաեւ Ազգ. Հայկազեան երկու՝ աղջկանց եւ մանչերու վարժարանները. այս վերջինը տեղաւորուած էր հին եւ մեծ տան մը՝ Պէյթ Ղազալէի մէջ, որ յետոյ հնագիտութեան պատկանելուն, դադրեցաւ դպրոց ըլլալէ եւ դարձաւ Հալէպի ճարտարապետութիւնը ներկայացնող հնագիտական կարելոր տուն մը:

Երբ արծուիկ էի, մեր կիրակնօրեայ հաւաքները այդ տան մէջ կ’ըլլային. հոն երթալը նոյնքան կը խանդավառէր զիս, որքան արծուիկ ըլլալս, մանաւանդ որ ամէն Կիրակի սկառուտական տարագով կ’երթայինք, բան մը որ շատ կ’ուրախացներ մանուկ հոգիս եւ հպարտութեամբ կը լեցնէր զիս: Բակին շուրջի սենեակներէն պատուհաններ կը բացուէին, որոնց վրայ փորագրուած դրասանգերը երեւակայութիւնս կը լարէին, կը կարծէի գիտնալ, թէ այնտեղ փոքրիկ իշխանուհիներ ապրած են, որոնք երբեմն մառանները կամ խորերը գտնուող սենեակները դրուած են որպէս պատիժ, իրենց անհնազանդութեան համար:

Այդ խորունկ սենեակներուն մէջ, սակայն, դասարաններու վառարաններուն համար դրուած թիթեղներն էին, ուրկէ մագուղք մզեր էր յաճախ եւ աղտոտեր գետնի ճերմակ քարերը, բարկ հոտ մըն ալ տարածելով սենեակէն դուրս:

Բայց Պէյթ Ղազարի լիվա՛նը... տեսնելու էր հալեպեան տուներու այդ գեղեցկութիւններուն մէկ նմոյշը. աւելի ուշ, արաբական-սուրիական ֆիլմաշարերուն մէջ սկսան երեւիլ անոնք, հոն կամ նման տուներու մէջ նկարահանուելով:

Այս թաղերուն մէջ կ'ապրէին նաեւ ընկերուհիներէս եւ բարեկամուհիներէս շատեր, որոնք կը վայելէին Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հարեանութեան օրհնութիւնը:

Տարիներ ետք, երբ պատահեցաւ որ կրկին անցայ Զոգետունէն, պահ մը կեցայ Թիլէի մուտքի կամարին տակ, կասկածելով ըսի՝ արդեօ՞ք սխալ մուտքի մը առջեւ եմ... Տաճ ու լայն աստիճաններուն երկու կողմերը ծածկուեր էին աժան եւ անճաշակ հագուստեղէնով, իսկ բակին շուրջի բոլոր սենեակները վերածուեր էին խանութներու. խորհրդաւորութիւն չէր մնացեր, հորը ոչ իսկ կ'երեւեր. չէր երեւեր նաեւ տպարանը, արդեօք կը շարունակէ՞ր հոն ըլլալ, թէ ոչ... (Դիմատետրեան գրառումի մը մէջ վերջերս տեսայ, թէ տպարանը այնտեղ է եւ կը շարունակէ բանիլ):

Սիրոս տրոփ մը կորսնցուց, օրերուն եւ տարիներուն հետ ոչ միայն յիշատակները կը հեռանային, այլ անոնք կը կորսնցնէին իրենց գոյնը, հարազատութիւնը, վաւերականութիւնը, կարծես մանկութիւնս էր, որ կամաց-կամաց կը տժգունէր:

Պատերազմի թէժ օրերուն, երբ Սալիպէի շրջանը գլխաւոր թիրախներէն մէկն էր, շատ մեծ վարագոյր մը փակեր էր մուտքը դէպի ճիտէյտէ, արգիլելով՝ որ մարդիկ հոն մտնեն, թէ՞ ժողովուրդին աչքէն ծածկելու այն ահաւոր ատերակը, որ օրէ օր կ'աւելնար...

Կ'ըսուեր թէ պատերազմը ժողովուրդը «փրկելու» համար էր «բռնատէր պետութեան մը ճիրաններէն», բայց կարծես այդ «փրկարարներուն» համար աչքի փուշ դարձեր էր ազնուական եւ դարաւոր մեր քաղաքը իր հնագիտական վայրերով՝ Ներսի Շուկան, բաղնիքները, խաները եւ անշուշտ՝ քրիստոնէական թաղամասերը իրենց եկեղեցիներով, որոնք հետեւողականօրէն կը ռմբակոծուէին:

Այսօր, փառք Տիրոջ, հակառակ դժուարութիւններուն, Զալեպի հին շրջանը սկսած է վերագտնել իր երբեմնի դիմագիծը: Պիտի կարենա՞մ գտնել անոր նեղ թաղերուն մէջ պահուըտած մանկութիւնս:



ԶԷՅԹՈՒՆ ԽԱՆՆ

Հալեպի Նոր Գիւղի Կիւլպէնկեան մայրանոցին դիմացով, երկու թաղ վեր Չէյթուն Խանն էր: Կիսափուլ կամ կիսաշէն դղեակ մը, ուր բազմաթիւ ընտանիքներ կ'ապրէին, ամէն մէկը մէկ սենեակ առած: Յետոյ հասկցայ, որ այդ կիսաշէն կառոյցը դէպի Իրաք գացող շոգեկառքին կայարանը պիտի ըլլար, բայց շինութիւնը կիսատ մնացեր է, որովհետեւ շոգեկառքին գիծը ա՛յդ կողմէն չէ անցեր, կարծեմ դէպի Պաղտատ, չեմ գիտեր:

Քիչ մը թափառիլը սակայն համացանցին մէջ օգուտ տուաւ եւ յիշողութիւնս արթնցաւ, լսողական յիշողութիւնս, երբ կը լսէի մօրս եւ մօրաքոյրներուս զրոյցները, առանց շատ բան հասկնալու անոնցմէ. պարզապէս Մուսուլ բառը յիշեցի...

Ուրեմն 1903 թուականին կը սկսին աշխատանքները շոգեկառքի գիծի մը, գերմանական մեծագոյն դրամատան՝ Deutsche Bank-ին ծախսով եւ գերմանական-օսմանական ծրագիրով, սկսելով Գերմանիայէն եւ անցնելով Թուրքիա-Սուրիա-Իրաքէն հասնելու համար մինչեւ Պարսկաստան, ուր Գերմանիան կ'ուզէր նաւահանգիստ ունենալ: Համաշխարհային Ա. Պատերազմը սակայն արգելք եղեր է որ գիծերը ամբողջանան: Ահա թէ ինչո՛ւ Չէյթուն Խանի դղեակին շինութիւնը, - ներողութիւն՝ կայարանին պիտի ըսէի, - կէս մնացեր է...

Կիսաշէն այդ մեծ կառոյցը երեւակայութիւնս մինչեւ ծայր կը լարէր. ինծի համար իշխանական դղեակ մըն էր ատիկա իր մեծ դարպասով, որուն վրայ կը կամարուէր գեղեցիկ պատշգամ մը, որ բազրիք չունէր: Կը նախընտրէի երեւակայութեամբ հոն ապրիլ, քան Չէյթուն Խանի պզտիկներուն հետ այդ անբազրիք պատշգամին վրայ խաղալ: Ինչպէ՞ս չեն վախնար, կը զարմանայի ամէն անգամ որ իրենք խումբով հոն կը խաղային:

- Այսօր դպրոց չկայ, թող երթայ մերիկներուն հետ խաղայ, ի՞նչ պիտի ընէ հոս մնայ, - Մայրանոցին *նըրսերը*, որոնք գրեթէ բոլորն ալ Չէյթուն Խան կը բնակէին, կը համոզէին մայրս, որ ի վերջոյ կը համոզուէր ու կը դրկէր զիս պահակին՝ պարոն Պետրոսին հետ:

Ա՛խ այդ պարոն Պետրոսը, որ հոգեառ հրեշտակի կերպարանք առեր էր ինծի համար այն օրէն, երբ «Հինգ վայրկեան ետեւի թաղը երթամ» մտածեր էի եւ իր աչքին տակէն փախած, հասեր էի Մայրանոցին ետեւի անել թաղը, ուրկէ եկող տղոց խաղի աղմուկին չէի դիմացած եւ գացեր էի իրենց խաղին մասնակցելու:

Գացեր էի եւ ինքզինքս մոռցած, մնացեր էի չեմ գիտեր որքան, երբ յանկարծ պարոն Պետրոսը ցցուեցաւ աչքիս առջեւ եւ առանց

բառ մ'իսկ ըսելու, քաշեց ձեռքես եւ մէկ շունչով հասցուց Մայրանոց, ուր... պատիժը գիս կը սպասեր. ինչպէ՞ս առանց հրամանի դուրս ելեր էի...

Հաւանաբար պարոն Պետրոսը ինք եւս յանդիմանուեր էր՝ «Աչքդ ո՞ր էր, չտեսա՞ր դուրս ելլելը...», ըսած ըլլալու էր մայրս:

Մայրանոցին դիմացի նեղ թաղէն կը բարձրանայինք զառիվերը, քրտնելով, պարոն Պետրոսին ձեռքէն բռնած, հազիւ քայլերս յարմարցնելով իր քայլերուն, աւելի՛ վազելով, յոգնելով... յետոյ, մէկ անգամէն կ'երեւէր երկյարկանի մեծ կառոյցը, բլուրի մը վրայ նստած: Անմիջապէս կը մոռնայի յոգնութիւնս եւ հազիւ մտած դարպասէն ներս, կը սկսէր հեքիաթը:

Իրապէս ալ հեքիաթ էր ժամանակը Չէյթուն Խանի մէջ, որովհետեւ հակառակ անոր, որ բոլոր հոն ապրողները հազիւ իրենց օրապահիկը հանող մարդիկ էին, բայց այլ ուրախութիւն մը կար այնտեղ. կարծես մարդիկ ամէն օր կ'արթննային ուրախացած, որ արթնցեր են, փառք կու տային Աստուծոյ, եւ մոռցած ինչ որ տեսեր էին գաղթի ճամբաներուն վրայ, կ'ապրէին իրենց բաշխուած այս երկրորդ կեանքը. անոնցմէ շատ-շատերուն հարազատները ինկեր էին անապատի ճամբաներուն վրայ: Գոնէ անապատը ծաղկեր այդքան թափուած արիւնով... ո՛չ, կը մնար չոր, կը մնար բիրտ եւ աններող:

Բլուրին վրայ կեցած երկյարկանի Չէյթուն Խանին չորս կողմը հող էր, մարախի գոյն հող, որ ձմեռուան անձրեւներուն կը դառնար ցեխ:

Հերթապահ *Նըրս*երը կու գային, Մայրանոցի մեծ դրան առջեւ կը հանէին իրենց ցեխոտ կօշիկները եւ... շիտակ բաղնիք, լուալու եւ ձգելու որ չորնան: Երբ կ'աւարտէր իրենց հերթապահութիւնը, մէկ գանգատ կ'ունենային՝ «*Նորէն ցեխերուն մէջ պիտի լողանք*» կ'ըսէին:

Իսկ ամառները դղեակին շուրջ միշտ փոշիի ամպ մը կար բարձրացած, կարծես շրջապատի անտառները մշուշի մէջ ըլլային: Ոչ անտառ կար, ո՛չ մշուշ, մանր տղաքն էին միայն, որ գոռում-գոչումով կը խաղային եւ փոշին երկինք կը բարձրանար:

Հակառակ բոլոր դժուարութիւններուն նորգիւղցիները, ես ալ իրենց հետ, շատ հպարտ էինք մեր Չէյթուն Խանի դղեակով:

Ամառուան գոլ իրիկուններուն, իւրաքանչիւր կին կ'ամներ իր պզտիկ աթոռը եւ կը նստէր Չէյթուն Խանի պատին տակ. մէկը ձմերուկի կուտերը բոված-բերած կ'ըլլար, ուրիշ մը բովուած սիսեռ,- լեպլեպի,- կը բերէր եւ պատմութիւններն ու սրամտութիւնները

կը հոսէին, առուակի պէս զովացնելով մարդոց կիզիչ առօրեան եւ
ցօղելով անոնց յոգնութիւնը:

Կեանքը պարզ էր, մարդիկ գոհ էին իրենց օրերէն, իսկ օրերը
բարի էին մարդոց հանդէպ: Ի՞նչ եղաւ, ի՞նչը ինչպէ՞ս փոխուեցաւ...

Տարիներ ետք գրագետ բարեկամ մը, որ Զալէպ այցելէր էր,
ուզեց Ձեյթուն Խան երթալ: Յանձն առի զինք հոն ալ տանիլ,
Զալէպի այլ տեսարժան վայրերուն շարքին, ներքուստ խորապէս
ուրախանալով, որ տարիներ ետք կրկին պիտի տեսնեմ այն
կառոյցը, որուն շուրջ այնքա՛ն աղուոր երազներ կը հիւսէի, այնքա՛ն
ուրախ պահեր անցուցեր էի եւ այնքան թարմ մնացեր էր միտքիս
մէջ, որպէս մէկ կարեւոր մասը մանկութեանս:

Ճիշդ գիտցածիս պէս մտայ Մայրանոցին դիմացի նեղ թաղը.
շատ արագ կը քալէի, կ'ուզէի կրկին ապրիլ ուրախութիւնը նեղ
թաղէն դուրս բացուող դղեակի տեսքին, որ վեհապանծօրէն
կը նստեր փոքրիկ բլուրին վրայ:

Հասայ թաղին ծայրը... բայց ոչ մէկ դղեակ կամ դղեականման
կառոյց կ'երեւեր. փոքր, թափթփած խանութներու շարք մըն էր
միայն: Յետոյ փոքր անցք մը նշմարեցի. ա՛յդ ըլլալու էր կ'երեւի:

Մտանք հիւրերուն հետ. աչքերով փնտռեցի շքեղ պատշգամը,
որ բազրիք չունէր:

Նման բան չկար. իրար կռթնած, իրարու յեկած տնակներ էին.
ո՛վ ինչ գտեր էր, չորս պատ կազմեր էր ու վրան ալ ծածք մը՝
տախտակներէ, թիթեղէ, թէ...


Յուսախաբութենէս պիտի լայի. ի՞նչ եղեր էր. կառոյցին շուրջի
բաց, հողոտ տարածութիւնն իսկ չէր երեւեր...

Այդ օրն էր, որ մանկութիւնս կարծես կորսնցուց իր մէկ դրուագը՝
Ձեյթուն Խանի իմ դղեակը:

Յետոյ եկաւ պատերազմը, անոր յաջորդեց երկրաշարժը. ի՞նչ
եղան արդեօք այդ խարխուլ տուները, ո՞ր գացին հոն բնակողները,
որոնց մէջ ա՛լ հայեր չկային, մեծամասնութիւնը քիւրտեր էին,
ինչպէս ըսեր էին ինծի:

Բայց կը մնայ միտքիս մէջ Ձեյթուն Խանը իր կիսաշէն գեղեցիկ
կառոյցով, մանկութեանս շքեղ դղեակը՝ ամբօրէն նստած յուշերուս
բլուրին վրայ:





Պարտեզներու տունէն ետք – ուր ծներ եմ, բայց բնաւ չեմ յիշեր – կ’ապրէիք Զորին թաղը (Զարթըլ Ճըպ), ուր հազիւ երկու շէնքեր կային՝ մերը եւ կողքինը: Մնացեալը տուներ էին գետնայարկով եւ բախտաւոր պարագային՝ առաջին յարկով մը: Մեզի հետ այլ հայ ընտանիքներ եւս կ’ապրէին Զորի թաղին մէջ:

Թաղը բանուկ էր ոչ թէ ինքնաշարժներով, որոնց թիւը այնքա՛ն փոքր էր այդ հեռու օրերուն, այլ՝ եռուզեռով. ցերեկները շատ կանուխէն, իրենց ապրանքը գովել-գովաբանելով կը հասնէին իշապանները, եւ ամէն մէկը իր սովորական տեղը կը կառանէր: Թաղը կը լեցուէր զիւ ձայներով գնում ընող կիներուն, որոնք անպայմա՛ն սակարկութիւն պիտի ընէին պտուղ կամ բանջարեղէն գնելէ առաջ:

– Ում Սահակ, ամէ՛ն օր նոյն պատմութիւնը կ’ընես, դեռ չսորվեցա՞ր որ գոնէ քեզի իսկական գինը կ’ըսեմ, ե՛ս ալ չեմ յոգնիր, դո՛ւն ալ... առնո՞ղ ես, կշռեմ, թէ ոչ՝ այսօր ֆասուլիա մի՛ եփեր, դդում ըրէ, դդումը աւելի աժան է...

Կեսօր չեղած թաղը կը պարպուէր, իշապանները պարապ խուրջիներով կը հեռանային, կիները կը շտապէին կեսօրուան ճաշը հասցնել դպրոցէն եկող սոված զաւակներուն եւ գործէն ճաշի դադար առած ամուսնին համար:

Թաղը ամբողջ տարին չտեսած խճողումը Աւագ Ուրբաթ օրը կը տեսնէր, երբ կողքի թաղերէն շատ մեծ թիւով տղաք կը հաւաքուէին հաւկթախաղի մրցումներուն մասնակցելու համար: Նպարավաճառի մեծ խանութին տերը հարիւրաւոր հաւկիթներ խաշած-ներկած կ’ըլլար եւ զանոնք կը ծախէր այդ տղոց, յետոյ, մրցումները լրանալէն ետք, անոնցմէ ետ կը գներ կոտրած հաւկիթներ կէս թէ քառորդ գինով եւ... կը ծախէր տանտիկիներուն, որոնք այդ օրուան ընթրիքը սկիզբէն իսկ որոշած կ’ըլլային՝ թրիթ (Պոլսոյ բարբառ), հաւկիթով աղցան...

Նախակրթարանի իմ օրերուն դպրոցէն տուն կու գայինք ժամը 12:00-ին, արագ-արագ կը ճաշէինք, որովհետեւ ճիշդ ժամը 1:30-ին դասերը կը վերսկսէին, իսկ մենք տուն գալու համար շա՛տ ժամանակ վատներ էինք. ճամբուն վրայ հազար հետաքրքրական բան կար դիտելիք, փորձելիք, փոքրիկ կառքին վրայ խելօք շարուած եւ մեր խելքը գլուխէն տանող գունաւոր շաքարները, մանուշակ շաքարները, կարմիր ձուկ շաքարները... միշտ ալ մեզմէ մէկուն քով երկու ֆրանքնոց մը կ’ըլլար. կը գներ փոքրիկ տոպրակ մը շաքար, եւ հազար կռիւ-փաթըրթիով կը բաժնուէինք, ամէն մէկս մէկական շաքար առնելով, իսկ տոպրակին տիրոջը «ազնուաբար»

երկու հատ ձգելով...

Ժամը չորսին, երբ կրկին նոյն ճամբան կը բռնեինք Կիւլպէնկեան դպրոցէն տուն դառնալու համար, ճամբուն վրայ, Սիւլէյմանիէի պէնզինի կայանին կողքի փոքրիկ պարտեզ-սրճարանը կը մտնէինք պահ մը, Վիգէնը, Մանուէլը եւ ես (արդեօք ո՞ր է Մանուէլը եւ ի՞նչ կ'ընէ: Վիգէնը գիտե՛մ ուր է): Այդ ժամուն յաճախորդ չըլլալուն, սպասեակը բան չէր ըսեր, նոյնիսկ աթոռին վրայէն չէր ելլեր, ուր նստած կը մրափէր. արդէն սորվեր էր մեր ձայները, գիտեր որ մենք ենք, եւ քիչ մը վազվզելէ ետք փոքրիկ աւագանին շուրջ, պիտի ելլենք երկաթեայ դարպասէն դուրս եւ շարունակենք մեր ճամբան:

Աշնան իրիկուններուն սքանչելի էր ծիծեռնակներուն երամը, որ կարծես կը խաղար կապտա-նարնջագոյն երկնքին վրայ, մանուկներու խումբի մը պէս աղմկելով: Շատ կը սիրէի դիտել իրենց թռիչքը, մկրատածէ պոչերը. կը դիտէի եւ գեղեցիկ զգացում մը կը ներխուժէր ներսս, քաղցր ու տաք, մինչեւ Մանուէլը յիշեցներ.

– Զատէ՛, կ'ուշանանք կոր, մամադ կը բարկանայ...

Նման իրիկուն մըն էր, Երկուշաբթի յետմիջօրէ մը, որ սովորականէն աւելի կանուխ արձակուեր էինք, որովհետեւ «վեհափառը վախճանեցաւ» ըսուեր էր: Բայց մենք ո՛չ վեհափառին ով ըլլալը գիտէինք, ոչ ալ վախճա... ի՞նչ, բառին ծանօթ էինք, շատ դժուար բառ էր եւ... կարելոր ալ չէր: Կարելորը՝ մեր կանուխ արձակուիլն էր:

Նոյն գոռում-գոչումով – թերեւս ալ քիչ մը աւելի, որովհետեւ ուրախ էինք կանուխ արձակուած ըլլալնուս եւ կրնայինք մեր փոքրիկ պարտեզին մէջ աւելի երկար խաղալ – դպրոցէն ելանք եւ...

– Մեղք ունի, եւրոնս, մեղք ունի, մի՛ պոռաք, վեհափառը վախճաներ է,– ըսաւ նստած կիներէն մէկը: Տան դռան առջեւ նստած միւս կիներն ալ իրեն պէս տխուր էին, նոյնիսկ՝ թաց աչքերով:

Այդ անծանօթ կիներուն տխրութիւնը այնքա՛ն խորունկ էր եւ փոխանցիկ, որ չկրցանք վայելել կանուխ արձակուելուն քանի մը ժամերը: Անշուշտ պիտի տխրէին այդ կիները, ամբողջ Զալէպի գաղութը պիտի տխրէր, որովհետեւ նախքան Կիլիկիոյ կաթողիկոսական գահին բազմիլը, Չարեհ սրբազան եղած էր առաջնորդը Բերիոյ Զայոց Թեմին:

Տարիներ ետք գիտցայ, որ այս օրերուն պէս օր մըն էր՝ 18 Փետրուարին (1963), Կիլիկիոյ վեհափառ Չարեհ Ա. երջանկայիշատակ կաթողիկոսին վախճանումը: Բաւական ետք էր

Նաեւ, որ մօրս լուսանկարներուն մէջէն գտայ խմբանկարը Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի տիկնաց յանձնախումբին. կեդրոնը Նստեր Էր վեհափառ հայրապետը, որուն լուսաւոր միտքին եւ ազգասեր հոգիին իրականացած երազն է մեր Ճեմարանը, եւ ճիշդ իր ետին մայրս կանգներ Է: Ինչպիսի՛ հպարտութիւն Էր ինծի համար տեսնել այդ խմբանկարը եւ գուրգուրանքով պահել...

Ձմռան իրիկուններուն դժուար կը բաժնուէի ընկերներէս, որոնք պիտի երթային իրենց քոյր-եղբայրներուն աղմուկով տաքցած տունի մը ուրախութեան, մինչ մեր տունը մի՛շտ հանդարտ Էր, մի՛շտ կարգ-կանոնով, ամէն բան դասաւորուած:

Բայց կար վառարանին կողքին, դասագիրքը գրկած երագելու պահը, քնանալէն անմիջապէս առաջ:

Մեծ, քառակուսի վառարան մըն Էր՝ Արամքօ, Արամ Կեօվճեանին գործարանին արտադրութիւնը. յետոյ անոր աղջիկը՝ Արաքօն (Արաքսի), ինծի դասընկերուհի պիտի ըլլար, եւ որուն ըմբօստ կարմիր մագերն ու մի՛շտ ժպտուն դէմքը շա՛տ կը սիրէի. հապա բարձր քրքիջը, որ ամէնէն վատ պահերուն իսկ – գրաւորի մը ցած նիշ առնել կամ անկարգութեան համար ծնողքը դպրոց կանչուիլ – այնպէս կը տարածուէր դասարանին մէջ, որ բոլորս ալ կը հաւատայինք թէ եղածը *«պարապ բան է, վաղը մամադ դպրոց կու գայ, օրհորդ էլմաստը քիչ մը կը գանգատի, կը վերջանայ-կ'երթայ, ինչ այդքան վախցեր ես, պարապ բան է եղածը...»*:

Ամէնէն հաճելին սակայն անկողինիս մէջ քնանալն Էր, որովհետեւ անկողինիս վերելի պատուհանէն երկինքի մե՛ծ կտոր մը կ'երեւէր, ուր աստղերը ինծի կը սպասէին կարծես, կը սպասէին որ օրուան եւ տխրութիւններու մասին պատմեմ իրենց, ու յետոյ իրենք ինծի հեքիաթներ կը պատմէին, Յայկանոյշ Նէնէիս փոխարէն, որ նոր մեռեր Էր:

Երբ այս տունէն այլ տուն մը փոխադրուեցանք, երկա՛ր ատեն չէի կրնար հանգիստ քնանալ, որովհետեւ նոր տան ննջարանս չունէր երկինքին վրայ բացուող պատուհան մը, ուրկէ կարենայի աստղերուն հետ գրուցել:

Յորի թաղի մեր տունէն շատ բան մոռցեր եմ. բայց անկողինիս վրայի այդ պատուհանը, իր բոլոր մանրամասնութիւններով, գոյնով եւ չափով, եւ անկէ ծնած քաղցրագոյն ապրումներով կը յիշեմ տակաւին:



ՆԵՐՍԻ ՇՈՒԿԱՆ



Արեւելքի գրեթէ բոլոր հին քաղաքները այս շուկաներէն ունին, Համիտիէ՝ Ղամասկոսի մէջ, Խան Խալիլի՝ Գահիրէի մէջ, իսկ Հալէպի մէջ՝ Ներսի շուկայ, բերդին անմիջական հարեւանութեամբ:

Ներսի շուկայ, մութ շուկայ, գոց շուկայ... Պաշտօնական անունը սակայն՝ Քաղաքի շուկայ (սու՝ ըլ մըտինէ), հին քաղաքի շուկան: Ինծի համար՝ միշտ Ներսի շուկայ:

Բազմաթիւ մուտքերէն ինծի ծանօթ են կիներու շուկային մուտքը, համեմներու շուկային մուտքը, քաղցրեղէնի շուկային մուտքը եւ բուրդի շուկային մուտքը, որ բերդին դիմացէն է: Մնացեալ մուտքերը դէպի բերդ գացող ճամբուն վրայ են:

Առիթ չէի փախցնէր հոն երթալու, որովհետեւ բաղնիք երթալու նման, Ներսի շուկայ երթալն ալ քեզ կը հանէ առօրեայիդ հոգերէն եւ պահ մը քեզի կը պարզելէ քու քաղաքիդ մէջ զբօսաշրջիկ ըլլալու պերճանքը, բազում անգամ տեսածներդ նոր նայուածքով դիտելու ուրախութիւնը, մանաւանդ՝ նորութիւններ տեսնելու երջանկութիւնը, որովհետեւ որքան ալ տեսած ըլլաս դարպասներուն նախշերը կամ պատի մը վրայի արձանագրութիւնը, միշտ ալ նոր մանրամասնութիւն մը կրնաս գտնել հոն:

Թաքսիով կը հասնիմ Եօթ ծովակներու հրապարակը (Սապաս Պահրաթ) եւ հոն ալ կ'իջնեմ. Շուկան հոնկէ հեռու չէ՝ կէս քիլոմէթր եւ քիչ մը աւելի, բայց կը նախընտրեմ քալել, որովհետեւ ճամբուս վրայ ինչե՛ր կան:

Նախ այդ ճամբուն ճիշդ դեմը Օմայատ մզկիթն է, որուն մինարէն քառակուսի է, հակառակ իսլամական ընդունուած սովորութեան:

Կ'ըսուի թէ շատ հին՝ հելլենիստական շրջանին այստեղ գտնուէր Է ալկօրան՝ քաղաքին գլխաւոր հրապարակը, ապա, հռոմէական շրջանին այստեղ եղած են Սուրբ Հեղինէ եկեղեցւոյ պարտեզն ու գերեզմանատունը:

Ուրեմն քառակուսի մինարէն փաստօրէն Սուրբ Հեղինէ եկեղեցւոյ զանգակատունը եղեր է:

Կ'ըսուի նաեւ, որ այս մզկիթին մէջ կը պահուին Յովհաննէս Մկրտիչի հօր՝ Չաքարիայի աճիւնները, որոնց համար մզկիթը նաեւ ուխտատեղի կը համարուի:

Կը դիտեմ նուրբ զարդանախշերը, յետոյ կը դիտեմ վերջերը մշակուած գեղեցիկ պարտեզները, գոյն-գոյն ծաղիկներով: Ամիջապէս քովը Ներսի շուկային կիներու մուտքն է, բայց դեռ չեմ մտնէր: Կը շարունակեմ ճամբաս, անգամ մը եւս վայելելու համար Պիստակի մզկիթը (ճամբ՝ ըլ Ֆըստո)՝ իր շատ գեղեցիկ մեղրախորիսի կամարով (մոքարնասաթ) եւ կողքին՝ Խան ալ-Ուազիրի շքեղ մուտքը:

Աջին Պարսկական խոհանոցն է (Ալ-Մաթպախ ալ-Աճամի), Այլուպիներու մէկ պալատը, կառուցուած Աճամի ընտանիքին կողմէ, 13-րդ դարուն:

Կը դիտեմ հաճոյքով եւ կ'որոշեմ օր մը ժամանակ տրամադրել եւ այս

երկու կառույցները այցելել. յետոյ կը յիշեմ, որ տակաւին բաց չեն այցելուներու համար, նորոգութիւնները աւարտած չըլլալուն:

Արդէն շատ մօտ եմ բերդին. յստակօրէն կ'երեւին անոր կողերուն անձրեւաջուրի խորունկ հետքերը, կարծես հաստատելով իր մե՛ծ տարիքը, դարերու ընթացքին տեսած ծանր դէպքերն ու կրած յուզումները: Տակաւին չէի գիտեր, թէ ի՞նչ տեսնելիքներ ունեին ինքն ու քաղաքը...

Խան Ուազիրի մուտքէն կը մտնեմ եւ անմիջապէս աջ կը դառնամ, առանց մոռնալու կրկին հիանալ Օճառի Խանին (Խան Սապուն) նախշագարդ եւ շատ նուրբ դարպասով, հասնելու համար համեմունքներու շուկան եւ Ապու Սթեֆին, որմէ ծաղկեթուրմ գնելու եկեր եմ:

Այս անգամ սակայն ուրիշ «հետախուզութիւն» մըն ալ պետք է ընեմ՝ Եսայի Թուման, Յալէպի վերջին տարիներու արուեստագետ-լուսանկարիչն ու լուսանկարչական տարեկան ցուցահանդեսներուն հիմնադիրը, այս անգամ Մատրասաթ ալ-Շիպանիի մէջ ըրած է ցուցահանդէսը, համոզելով պատկան մարմինները, որ նորոգեն այդ լքուած կառույցը եւ օգտագործեն:

Ճամբան չէի գիտեր, ըսուած էր, որ պետք է Ներսի շուկային մէջէն անցնիլ հոն հասնելու համար (յետոյ այլ մուտք մը գտանք, որ բերդին դիմացէն ուղղակի Մատրասաթ ալ-Շիպանի կը տաներ):

Գնումս ընելէ ետք, Ապու Սթեֆէն ուղղութիւն հարցուցի եւ ըստ իր բացատրութեան, սկսայ երթալ:

Ճամբուս վրայ նախ դեմս ելաւ դափնիի՝ դար, օճառի գործարան մը.

– Կրնա՞մ մտնել եւ դիտել:

Ինչպէս միշտ, այս անգամ եւս, դրան վրայ կեցողը, որ պահակէ մը աւելի բարձր պաշտօն ուներ կարծես, սիրով ընդունեց զիս եւ հեռուէ հեռու սկսաւ հետեւիլ, թէեւ այնքան ալ մեծ չէր այդ գործարան ըսուածը, որ խորքին մէջ արաբական հին տուն մըն էր, մէկ սենեակին մէջ օճառի հեղուկին աւազանը, իսկ բակին մէկ կողմը գետինը փռուած էր օճառը, որ կտրտուելու կը սպասէր, միւս կողմը՝ արդէն կտրտուած եւ իրար վրայ շարուած օճառները, որոնք պետք է չորնան:

Մէկ անգամ ալ խորունկ շնչելէ ետք դար օճառին սքանչելի հոտը, շնորհակալութիւն կը յայտնեմ եւ դուրս կ'ելլեմ:

Քիչ մըն ալ կը քալեմ դարձդարձիկ նեղ թաղերէն, որոնք լաբիրինթոս մը կը կազմեն, եւ ի՞նչ տեսնեմ՝ փոքրիկ դարպաս մը, կամարին վրայ՝ Պիմարստան գրուած:

Լսեր էի այդ բառը, որ յիմարանց կը նշանակէ եւ ուր, շատ հին ժամանակներուն, հիւանդները ջուրին խոխոջով եւ երաժշտութեամբ կը դարմանեն եղեր:

Գեղեցիկ, գողտրիկ արաբական տուն մը, լիվանով եւ մէջտեղը աւազանով, այն տարբերութեամբ, որ աւազանէն փոքր առուններով ջուրը կը հոսի, բակին շրջանը կ'ընէ եւ յետոյ կ'երթայ դէպի ներս, հաւանաբար բաղնիքները:

Հանդարտութիւնը կը ծփայ աւազանին վրայ, ուր ջուր չկայ, բայց վանդակապատ պատուհանները տխուր պատկերներ կը հիւսեն աչքերուս առջեւ, կարծես կը լսէի ձայները հոն բանտարկուած խեղճերուն, որոնք ո՛վ գիտէ ինչ պայմաններու տակ կորսնցուցեր են իրենց հոգիին խաղաղութիւնը...

Դուրս կ'ելլեմ տխրութեամբ եւ կը շարունակեմ ուղիս մինչեւ Շիպանի, փորձելով մտապահել ճամբան:

– Բայց ինչո՞ւ նոյն ճամբէն վերադառնաս, – կ'ըսէ արկածախնդիր եսս, – շարունակէ՛, թերեւս ուրիշ հետաքրքրական տեղեր ալ գտնես..., – ըսաւ եւ համոզեց:

Շարունակեցի. բայց քանի կը խորանայի, թաղերը աւելի կը նեղնային, լռութիւնը աւելի կը շեշտուէր, եւ այն քանի մը անցորդները, որոնք պատին տակ քաշուելով ճամբայ կու տային, կասկածով կը դիտէին զիս:

Վախցայ: Երեւակայութիւնս թափ առաւ՝ եթէ դուռ մը կամացո՞ւկ մը բացուէր, զիս հանդարտօրէն ներս քաշէր ու փակուէր վրաս, ո՛վ պիտի իմանար... Ըստ հաշիւներուս, ուղղութիւնս դեպի մեծ պողոտայ պետք էր տանէր զիս, բայց պողոտային նշոյլն իսկ չկար, աղմուկը եւ ինքնաշարժներու շչակներուն ձայնն իսկ չկար:

Վերջ ի վերջոյ տարեց մարդ մը մօտեցաւ.

– Ո՞ւր կ'երթաս, քոյրս, – հարցուց:

– Կ'ուզեմ պողոտայ ելլել եւ թաքսի մը առնել, – ըսի:


– Գիտեմ որ այս կողմերէն չես, բայց նաեւ զբօսաշրջիկ չես..., – մարդը գլուխը շարժեց, ճամբան ցոյց տուաւ եւ սպասեց մինչեւ թաղին անկիւնը հասայ:

Այդքան վախցած չէի շա՛տ վաղուց, անկողինին տակի հրեշները նուաճելէս ի վեր:


Յետոյ յաճախ գացինք Շիպանի դպրոցը, ուր տեղի ունեցաւ նաեւ Հալէպի առաջին ճագ ֆէսթիվալը, շատ մեծ ոգեւորութիւն ստեղծելով:

Ներսի շուկան, արեւելեան բաղնիքներն ու մանաւանդ Բերդին շուրջ բուսած նորօրեայ սրճարանները քաղաքին այլ եռանդ տուէր էին, զբօսաշրջիկներուն թիւը շատ արագ մեծ աճ արձանագրեր էր եւ Հալէպը դարձեր էր թերեւս այն միակ քաղաքը, որ իր հնութիւններուն հետ կը պահէր եւ կը ցուցադրէր նաեւ մարդկային արդէն մոռցուած յատկանիշներ՝ բարութիւն եւ ազնուութիւն, իրարօգնութիւն, օտարին հանդէպ յարգանք եւ գուրգուրանք, որոնք զբօսաշրջիկներուն կողմէ կը գնահատուէին ճի՛շդ այնքան, որքան հնագիտական վայրերը:

Այսօր... որքան կ'իմանամ եւ կը տեսնեմ համացանցէն, արդէն նորոգուէր են շուկաները. բայց կը կարծեմ թէ ինձի պէս մարդոց համար, որոնք տարօրէն կապուած էին քաղաքին հին շրջանին, մի՛շտ ալ նորին տակ պիտի տեսնենք հինը, վաւերականը, որ կը շարունակէ ապրիլ մեր սրտերուն մէջ:



ՊԱՆԴՈՎ ՄԸ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ ՄԸ



Երբ քաղաքի մը պանդոկներուն մասին ուզես տեղեկութիւն ստանալ, չես կրնար նոյն քաղաքին բնակիչներուն հարցնել, որովհետեւ անոնք ընդհանրապէս պէտք չունին պանդոկներու մասին գիտնալու, պարզ այն պատճառով, որ պանդոկ երթալու պէտք չունին: Պանդոկի մը մասին պէտք է հարցնել զբօսաշրջիկներու կամ այդ քաղաքը այցելողներու:

Հալէայի եւրոպական չափանիշերով այս առաջին պանդոկին մասին երկու հալէպահայեր միայն գրած են՝ գրագետ Յակոբ Միքայէլեան («Ազգ», 21 Դեկտեմբեր 2018) բաւական երկար յօդուած մը նուիրել է Պարոն Պանդոկին, իսկ Մանուէլ Թէշիշեան (ողբացեալ) փոքրիկ հատուածով մը անդրադարձեր է անոր իր «Հալէպ՝ Հայկական Ամանոր» գրութեան մէջ: Անդրադարձեր է նաեւ լիբանանահայ դոկտ. Հրայր Ճէպէճեան:

Հալէայի Պարոն Պանդոկին մասին ամբողջ գիրք մը գրուած է ոչ թէ հալէպահայու մը կողմէ, այլ... երկու իտալացիներու՝ Ֆլավիա Ամապիլէի եւ Մարգո Թոսաթթիի, որոնք Պարոն Պանդոկին մասին գրելէ առաջ հեղինակած են այլ գիրք մը՝ «Սուսա Տաղ» խորագիրով, 2005 թուականին:

Պանդոկին նուիրուած գիրքը կը կոչուի «Հալէայի Պարոնները», գրուել է իտալերէնով եւ հրատարակուել 2009 թուականին, ապա 2015-ին թարգմանուել է թրքերէնի Ելտա Կիւրլեքի կողմէ եւ հրատարակուել՝ Պոլսոյ ԱՐԱՍ հրատարակչատունէն: Անդրադառնալով այս գիրքին թրքերէն թարգմանութեան, Ռոպեր Հատտէճեան՝ պոլսահայ ամենատարեց եւ ամենաբեղուն գրագետը, աղուոր յօդուած մը ստորագրել է անոր մասին, ուր կ'ըսէ.

«Երկու իտալացի լրագրողները շատ լաւ ուսումնասիրել են պանդոկին պատմութիւնն ու այդ շրջանի քաղաքական անցուդարձերը, ապա ստեղծել են հետաքրքրական ու բովանդակալից գիրք մը, որ կոչուել է «Հալէայի Պարոնները»: Գիրքը կը խօսի «Սուրիոյ մէջ պանդոկի մը, ընտանիքի մը եւ Միջին Արեւելքի վերջին հարիւր տարիներուն մասին»»:

Հատտէճեան կ'ըսէ նաեւ՝ գիրքը *«կը կարդացուի հաճոյքով, բայց երբեմն՝ սրտի ցաւով»:*

Պանդոկ մը կառուցելու գաղափարը յղացողը, կարգ մը աղբիւրներու մէջ, Մազլումեան ընտանիքին տիկիններէն մէկն է, այլ տեղեր՝ նոյն ընտանիքին պարոններէն մէկը, բայց անունը յստակ չի յիշուիր: Ապա Գրիգոր Մազլումեան սկսել է նախա-Պարոնեան պանդոկ մը կառուցել Հալէայի մէջ, Արարատ անունով: Գրիգորին երկու զաւակները՝ Օննիկ եւ Արմէն, կը հիմնեն Ազիզիէ

Փալաս եւ Ալեքիփո Փալաս պանդոկները:

1911-ին Օսնիկ կը սկսի կառուցել Պարոն Պանդոկը, որ այդպէս կոչուած է կառուցողին՝ Օսնիկին տրուած տիտղոսին՝ Պարոնի հիման վրայ:

Հալէպի եւ հալէպահայութեան պատմութիւնը ամփոփած այս պանդոկը իր շառաւիղներուն շիջումով (վերջինը կրտսեր Արմէն Մազլումեանը եղած է) գործելէ կը դադրի, մանաւանդ որ Սուրիոյ պատերազմը իր ակերը գործած էր նաեւ այս կառոյցին վրայ:

Իմ առաջին հանդիպումը Պարոն Պանդոկին հետ եղած է բաւական կանուխ, պատանութեանս, երբ հայրենի արուեստագետներ եկած էին ելոյթներու եւ իջեւանած Պարոն Պանդոկ:

Գացի հանդիպելու Յովհաննէս Պատալեանին, որուն երգերուն ծանօթ էի, բայց կենդանի ձայնը, որ առաջին անգամ կը լսէի, եւ իր ներկայութիւնը բեմին վրայ, առինքներ էին զիս:

Աստիճաններ. շա՛տ աստիճաններ. ահա թէ ի՛նչ կը յիշեմ այդ առաջին այցելութենէս. թէ՛ դուրսէն մինչեւ մուտք գացող աստիճաններ, թէ՛ ներսը, դէպի երկրորդ յարկ տանող աստիճաններ:

Եւ երկու հսկայ շուները Գօգօ Պարոնին. այդպէս ծանօթ էր Գրիգոր Մազլումեան, որ նաեւ ԶԲԸՄ-ի ատենապետն էր այդ օրերուն:

Եւ մուտքի սրահին կիսամութքը, անկիւններու լամբերով լուսաւորուած, որ պանդոկին մասին պատմուած խորհրդաւոր պատմութիւնները կը մարմնաւորէր կարծես:

Այդ խորհրդաւոր պատմութիւնները կը բեւեռուէին միջազգային շա՛տ նշանաւոր անուններու շուրջ, որոնց մասին երբ այսօր կը մտածեմ, կը տատամսիմ հաւատալու, որ անոնք հոն, մեր անշուք քաղաքը այցելած եւ հայկական պանդոկ մը իջեւանած են, մոռնալով որ դար մը առաջ Հալէպ կը ներկայացնէր մէկ կողմէ միջազգային կարեւոր հանդիպակետ մը, միւս կողմէ գաւառական անշուք քաղաք մըն էր:

Այդ անունները հաստատօրէն պատմութեան դասագիրքերուն կը պատկանէին, բայց ահա եկեր նստեր էին մեր Հալէպի Պարոն Պանդոկին բազկաթոռներուն վրայ, կարեւոր նիւթերու մասին զրուցելով, սիկառ ծխելով եւ քննեաք խմելով: Կ'ըսուի նոյնիսկ թէ Արաբիոյ Լորընսի (Laurence of Arabia) խմած քննեաքին չվճարուած (այո՛, չվճարուած) ստացագիրը պահուած է:

Օրինակ. Ակաթա Զրիսթին. Ակաթա Զրիսթին հո՞ւս, Պարոն Պանդոկին մէջ, իրապէ՞ս: Կամ Աթաթուրքը...

Երկու անուններ, որոնք ներսերս տեղ մը գիրար կը հրմշտկեն, մէկուն հանդէպ ունեցած մեծ համակրանքիս, իսկ միւսին հանդէպ ունեցած հակակրանքիս պատճառով, հակառակ անոր, որ Սաթենիկ Չագրը, քիչ մը տատամսելով եւ շա՛տ զարմանալով գրած է Աթաթուրքին հետ իր հանդիպումէն ստացած դրական տպաւորութեան մասին: Այս հանդիպումը տեղի ունեցած է 1936 թուականին «Կիներու Յամաշխարհային Զոնկրես»-ին առիթով Աթաթուրքին տուած անձնական հրաւերին ընթացքին: Սակայն բոլորս ալ կը ճանչնանք թուրքը – մենք՝ արիւնով, մեր մեծ հայրերը՝ առաջին ձեռքէ – եւ գիտենք թէ որքան բիրտ եւ արիւննուշտ, նոյնքան ալ դիւանագետ է եւ «Եւրոպական կրթութեամբ» կրնայ ինքզինք ցուցադրել, երբ ուզէ...

Պանդոկէն անմիջապէս ներս, կարծեմ աջ կողմի ընդունարանին պատերուն վրայ շրջանակներու մէջ գետեղուած եւ ցուցադրուած են այս բոլորին գրութիւնները՝ յիշատակի խօսք մը թէ չվճարուած ստացագիր, իրենց ստորագրութիւններով: Այսօր, երբ Պարոն Պանդոկը ա՛լ չկայ – թէեւ չեմ գիտեր թէ ի՞նչ եղած է, բայց որպէս պանդոկ չկայ – արդեօք ո՞ր մնացած են այդ նկարները, որոնք ամբողջ ժամանակաշրջան մը կը խտացնեն իրենց խունացած էջերուն վրայ:

Ճարտարագետ Կարպիս Մինասեան իր մէկ յօդուածին մէջ («Թորոնթոհայ», 29 Սեպտեմբեր 2017) այս պանդոկին կապուած շատ հետաքրքրական մանրամասնութիւններ կը յիշէ, ինչպէս օրինակ այն, թէ շէնքին ճարտարապետութիւնը վստահուեր է ֆրանսահայ ճարտարապետ Գասպար Նաֆիլեանին, (հաւանաբար յօդուածագիրը շփոթած է անունը. պէտք է ըլլայ Լեւոն Նաֆիլեան 1877-1937), որ ճարտարապետը եղած է նաեւ Փարիզի Ժան Կուժոն թաղամասի հայկական Ս. Յովհաննէս եկեղեցւոյ, ինչպէս եւ Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ (բարերար՝ Գրիգոր Եղիայեան): Պօղոս Փաշա Նուպար շատ հաւանած ըլլալով Փարիզի եկեղեցին, թելադրեր է, որ Գահիրէի եկեղեցւոյ ճարտարապետութիւնը վստահուի նոյն ճարտարապետին:

Կը մէջբերենք Կ. Մինասեանի յօդուածէն.

«Շամի երկիրներու պատմութեան մէջ յիշատակուած առաջին պանդոկն է... Գրիգորի գաւակները՝ Արմէն եւ Օննիկ Մազլումեաններ, մոռնալով իրենց ժամագործութեան արհեստը, արդիական հիւրանոցի մը անհրաժեշտութիւնը զգալով, երկու պանդոկներ կը հիմնեն Ազիզիէի շրջանին մէջ, ոստիկանատան մօտ:

Հալէպ այցելողներուն աճող քանակը, քաղաքին վաճառականական եռուզեռը, արեւմուտք - արեւելք երկաթուղագիծի ծրագիրը ու Հալէպի արեւելեան շունչը կը մղեն Մազլումեան եղբայրները 1909-ին Պոսթան-Զլէպի ամայի պարտէզներէն հողաշերտ մը գնելու, կառուցելու համար նոր, ժամանակակից եւ երոպական չափանիշերով հիւրանոց մը:

Շինարար վարպետները եւ շինանիւթը կը ներմուծուին Եգիպտոսէն, իսկ կահոյքը՝ Եւրոպայի գանազան երկիրներէ: Երկյարկանի պանդոկը կ'ունենայ 32 սենեակ, օժտուած պատշգամներով եւ 2 ընդհանուր բաղնիքով:

Պանդոկը յատկանշական էր իր արեւելեան կամարներով եւ արեւելեան ու հայկական խառն նախշերով:

Հիւրանոցի ոսկեմատեանի էջերուն վրայ բազմաթիւ են հռչակաւոր այցելուներու անունները, որոնցմէ կը յիշենք՝

Ֆէյսալ Թագաւոր... հիւրանոցի թիւ 215 սենեակը, որուն պատշգամէն թագաւորը արտասանեց Սուրիոյ Անկախութեան հռչակագիրը: Այս հիւրանոցին պատշգամէն էր, որ նախագահ Ճամալ Ապտ ալ-Նասէր ճառեր կ'արտասանէր: Նոյն պատշգամն էր նախագահ Հաֆէզ ալ-Ասատի նախագահական արշաւին նուիրուած ճառերուն հարթակը:

Հիւրանոցի թիւ 202 սենեակին մէջ օրեր շարունակ կ'աշխատէր Լորանս ալ-Արապ հռչակաւոր անգլիացի սպան ու կը կազմէր իր նենգ ծրագրերը:

Հիւրանոցի թիւ 213 սենեակին մէջ ոստիկանական վէպերու հանրածանօթ վարպետ Ակաթա Զրիսթի ներշնչուած կը գրէր իր նշանաւոր պատմուածքը՝ «Ռճիր Մը Արեւելեան Ճեպընթացին Մէջ» (Murder On The Orient Express):


Հիւրանոցի սրահին մէջ երգերով հանդէս եկած են Ում Բալսում, Ապտ ալ-Ուահապ, Ֆարիտ ալ-Աթրաշ եւ ուրիշներ:

Հիւրանոցի կամարներուն ներքեւ երգահան Բարսէղ Կանաչեան յօրինած է իր շատ գեղեցիկ «Օրօր»-ը, զայն նուիրելով իր ժողովուրդին:

Հիւրանոցը ընդունած է տիեզերագնացներ՝ Եուրի Կակարինն ու Վալենթինա Թերեշքովան:

Հիւրանոց հանգրուանած են նաեւ Գրիգոր Չոհրապ, Ուիլիըմ Սարոյեան, Յովհաննէս Պատալեան ու շարք մը հայ արուեստագետներ:

Հիւրանոցի այցելուներուն երկար ցանկը կը հաստատէ անոր կարեւորութիւնը: Ան լոկ կառոյց մը չէր, այլ պատմական վկայութիւնը տարածաշրջանի 100 տարուան պատմութեան:



ՎԵՐԺԻՆ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՅՐԱՆՈՅԸ

– Պարո՛ն, ինչո՞ւ մայրանոց կայ, բայց հայրանոց չկայ:

Հակառակ անոր, որ մանկութենես մօրս հետ մայրանոց կ'երթայի, սակայն ոչինչ կը հասկնայի մայրանոցին բնոյթէն. հաւանաբար հոնկէ կու գար հարցումը, զոր հարցուցեր եմ եղեր պարոն Վահէ ժամագործեանին, ինքն ալ ինդալով պատմեր է մերիններուն:

Երբ մայրանոց հասնէիք, մայրս կը մտնէր «դայեակներուն սենեակը» հագուստները փոխելու եւ ճերմակ շապիկը հագնելու. յետոյ կ'ելլէր, ու ես, մինչեւ ճաշի ժամը, ա՛լ չէի տեսներ զինք:

Լաւ կը յիշեմ Վերժին Կիւլպէնկեան մայրանոցի կառոյցին բոլոր մանրամասնութիւնները, որոնք տարիներուն հետ բաւական փոխուեցան, իսկ մայրանոցը ինք, Սուրիոյ պատերազմի տարիներուն վերածուեցաւ ծերանոցի, ուր փոխադրուեցան Հալէպի Հայ Ծերանոցի բնակիչները, որովհետեւ կառոյցը շատ վտանգաւոր շրջանի մը մէջ էր եւ ծանրօրէն վնասուած:

Մուտքի մեծ դարպասին ճիշդ դիմացը աստիճաններն էին, որոնք մայրանոցը պալատի մը կը վերածէին միտքիս մէջ: Աջին, բակին բաւական խորը կար գիշերային պահակին՝ տիկին Մաննիկին եւ իր բազմաթիւ կատուներուն տունը:

Ձախին պահակ պարոն Պետրոսին փոքրիկ տնակն էր, ետեւը՝ գեղեցիկ, ծաղկաւետ պարտեզը, ուր յաճախ կը խաղայի, բարկացնելով պարոն Պետրոսը, որ նաեւ այդ պարտեզը խնամողն էր. կը վախնար, որ կոխկռտեմ ծաղիկներուն վրայ եւ իր գործը փճացնեմ:

Աստիճանները բարձրանալէ ետք մեծ, տախտակեայ դարպասն էր, ուրկէ ներս կը բացուէր մայրանոցին գլխաւոր սրահը՝ մեծ, լուսաւոր, հաճելի, աջին ու ձախին բացուող դռներով:

Մուտքի դռնէն երբ կը մտնէք, ձեր ուշադրութիւնը կը գրաւէ դիմացի պատին ամրացուած մեծ դիմանկարը երիտասարդ եւ գեղեցիկ կնոջ մը՝ Վերժին Կիւլպէնկեանի: Այդ դիմանկարը երեւակայութիւնս կը լարէր, զինք կը դնէի կեանքի տարբեր պայմաններու մէջ, ըստ իր հագուածքին եւ մազերուն սանտրուածքին, նաեւ՝ ըստ տրամադրութեանս:

Բայց երբ իմացայ, թէ այս երիտասարդ եւ գեղեցիկ տիկինը մահացեր է զաւկին ծնունդ տալու ընթացքին, եւ այս մայրանոցը ի՛ր յիշատակին կառուցուեր է (պաշտօնական բացումը՝ 9 Փետրուար 1935), այնքան տխրեցայ, որ ա՛լ չփորձեցի երեւակայութեանս խաղը խաղալ: Ամենէն տխուր իրականութիւնը գիտէի հիմա՝ երիտասարդ մեռեր էր, 32 տարեկանին:

Որքա՛ն կ'ափսոսամ, որ այդ մեծ լուսանկարին պատճենն իսկ չկայ այսօր համացանցին մէջ, ուր շա՛տ բան կայ:

Չկան նաեւ այլ յիշատակելի բաներ, ինչպէս օրինակ «Երիտասարդ Հայուհի»-ի լրիւ, կազմուած հաւաքածոն, զոր մեծ ուրախութեամբ կը թերթատէի եւ հոն հրատարակուած հեքիաթները կը կարդայի: Չկայ նաեւ անկիւնաւոր նստարանը:

Մեծ սրահին ամենէն հետաքրքրականը ինծի համար ձախ անկիւնի

այդ նստարանն էր, որուն նմանին այլ տեղ բնաւ չեմ հանդիպած:

Պատի անկիւնին հետ դեպի դուրս անկիւն կազմած այդ նստարանը իմ սիրելի «խաղավայրս» դարձեր էր. յաճախ կը ցատկէի ներս եւ հոն նստած պատմութիւններ կը պատմէի ինքզինքիս. նստարանը զիս կը բաժներ շրջապատէն եւ ինքզինքիս կը վերադարձներ: Այս բոլորին չէի գիտակցեր անշուշտ, պարզապէս ուրախութիւն կը զգայի այդ փոքրիկ անկիւնին մէջ:

Օր մըն ալ, կ'երեւի հոն երկար մնացեր եմ, լսեցի որ մայրս իմ մասիս կը հարցներ *Նըրս* Արմիկին.

– Ո՛չ, տիկին Արուսեակ, չտեսայ...

Մայրս միւսներուն հարցուց, յետոյ խնդրեց, որ պարոն Պետրոսը «ետեւի թաղը» դրկեն:

Այդ թաղը փոքրերուն խաղավայրը դարձեր էր, միշտ գոռում-գոչումով լեցուն, ուր խաղցող փոքրերուն հմայքը այնքա՛ն մեծ կ'ըլլար երբեմն, որ փախուստ կու տայի հոն երթալու համար, ինքզինքիս խոստանալով՝ «մէկ վայրկեանէն ետ կու գամ», բայց անշուշտ իրենց հետ խաղով տարուած կը մոռնայի ինքզինքս:

Մայրս կարծեց թէ կրկին նման անհնազանդութիւն մը ըրեր եմ եւ առանց հրամանի ետեւի թաղը խաղալու գացեր եմ:

Այդ պահուն էր որ անդրադարձը, կրաֆիք նովելներուն զրոյցներու ամպին նման, լուսաւորեց միտքս՝ ուրեմն մամաս ամէն բան չի տեսներ... Բայց ինք միշտ կ'ըսեր ու ես համոզուեր էի, որ այո՛, մամաները ամէ՛ն բան կը լսեն եւ կը տեսնեն... Ուրեմն այդպէս չէ՛ր...

Շարունակեցի այդ անկիւնին մէջ պահուրդած մնալ, սպասելով թէ ե՛րբ եւ ինչպէ՛ս պիտի գտնեն զիս:

Յետոյ *Նըրս*երէն մէկը եկաւ նստարանին վրայ կողմնակի նստաւ եւ... տեսաւ զիս:

Գիտէի, որ պատիժս մեծ պիտի ըլլար:

Բայց չպատժուեցայ: Կ'երեւի մայրս իրապէ՛ս վախցեր էր վրաս...

Այդ նստարանէն անդին պատերը կը սեղմուէին ետեւը լայն անցք մը կազմելով, որուն ճիշդ դիմացը բարձր սեղանն էր, մեծ հեռաձայնը վրան:

Անցքի ձախին կը բացուեր մեծ սրահը, ուր քով քով շարուած անկողիներն էին անվճար տղացկաններուն, անոնց, որոնք չէին կրնար վճարել մայրանոցին ծախսերը: Այդ սրահը պարզապէս «սալոն» կը կոչուեր:

Աջին ծննդաբերութեան երկու սենեակներն էին, անոնց դիմաց՝ նորածիներուն սենեակը:

Մայրանոցը ինծի համար երկրորդ տուն մը դարձեր էր, որովհետեւ մօրս աշխատանքի ժամերը 12 էին՝ առաւօտեան 7:00-էն մինչեւ իրիկուան 7:00-ը, կամ իրիկուան 7:00-էն մինչեւ առաւօտ, երբ գիշերապահ ըլլար:

Ամէնէն սկիզբը, յուշերուս մէջ երկու, իրարմէ շատ տարբեր դայեակներ կային մօրս կողքին՝ մէկը տիկին Զաթրինն էր, անհաւատալիօրէն կապոյտ աչքով մը, որուն երկրորդ՝ կոյր աչքէն շատ

կը վախնայի, մանաւանդ որ իր անգլերէնով խառն թրքերէնէն շատ բան չէի հասկնար: Երկրորդը տիկին Անէթան էր. Անէթա ըսիր անցա՞ր... փարթամ մարմնով, մի՛շտ գեղեցիկ հագուածքով եւ սեւ ծարիրուած աչքերով տիկին Անէթան կարծես շատ ալ կապ չունէր տղացկան կիներու ճիչերուն եւ «ճմռթկուած» նորածիններուն հետ: Բայց կ'ըսէին, թէ գործին մէջ շատ լաւ է:

Եղաւ շրջան մը, երբ մայրանոցը երեք դայեակներ ունենալէ ետք, ունեցեր էր երկու: Բայց երբ այդ երկրորդն ալ հրաժարական տուաւ – կարծեմ տիկին Մարին էր, որ Պէյրուս փոխադրուեցաւ – մայրս սկսաւ մայրանոցը... բնակիլ:

Մայրանոցին մէջ կարելոր դեր ունէին – գոնէ ինծի համար – խոհարարուհին՝ տիկին Սիրանն ու իր փոխը՝ Մարին, որ բոլորին համար Մարոշիկ էր, կ'երեւի շատ կարճ հասակին եւ մանր մարմնին համար: Մարոշիկը այլ առեղծուած մըն ալ ունէր՝ չինացի էր. բայց թէ ուրկէ՛ եկեր Մայրանոց ինկեր էր այդ չինացին, չէի հասկնար:

– Մարոշիկը ինչպէ՞ս մայրանոց հասեր է, – հարցուցի օր մը:

– Եկեր է աշխատելու:

– Չինաստան գործ չկա՞ր:

– Չինաստա՞ն, – մայրս իրապէս զարմացեր էր:

– Չէ՞ որ չինացի է, Չինաստանէն եկած:

Մայրս պահ մը մտածեց, հասկցաւ ու ըսաւ.

– Յայ է, Կիւրիւնցիներուն հանը կ'ապրի, պարզապէս աչքերը շատ փոքր եւ նեղ են...

Շատ չհամոզուեցայ, բայց լռեցի:

Այնքա՛ն բարի եւ ծառայասէր էր Մարոշիկը, Չէյթուն հանի այն օրերու բոլոր բնակիչներուն պէս, որոնք կարծես մանկութեան Ջարդի արհաւիրքը ապրած, դարձեր էին աւելի բարի, աւելի խղճամիտ, աւելի իրարու վիճակէն հասկցող, իրարու օգնող:

Արդէն ճեմարանական էի: Ընկերուհիս Արշօն յաճախ կու գար եւ երկրորդ յարկի մօրս սենեակին լայն պատուհանին մէջ նստած, կը շաղակրատէիք: Մեր գրոյցները վերջ չունէին. խօսելիք շատ բան կար, շատ հարցադրումներ ունէիք եւ մեր հարցումներուն պատասխանողներ չունէիք: Ստիպուած էիք խելք խելքի տալ եւ ամենէն տրամաբանական պատասխանը ընտրել:

Աղուր օրեր էին, երբ մեր գլխաւոր մտահոգութիւնները քննութիւններն էին եւ... մեր դասընկերներն ու աւելի բարձր դասարաններու տղաքը: Կային ընկերուհիներ, որոնք արդէն «ընկեր» ունէին եւ տարիներ ետք ամուսնացեր էին՝ աղուր գոյգեր կազմելով:

Մայրանոցը շրջան մը երկրորդ տուն դարձեր էր ինծի համար, բայց ան ալ, ինչպէս գիրքերս եւ տետրերս, մնաց հոն, յուշերու աւելցող դէպին ամենէն տակը:



Դպրոցիս առաջին օրը չեմ յիշեր՝ ո՞վ տարաւ զիս, կամ ի՞նչ էին տպաւորութիւններս եւ ապրումներս:

Աւելի ուշ կը յիշեմ, որ զիս վար՝ ուսուցչարան կանչեցին եւ քանի մը ուսուցչուհիներ դեմս նստած սկսան հարցումներ ուղղել.

«Իրա՞ւ է որ Փարիզ գացեր ես մամայիդ եւ պապայիդ հետ»:

Յագիւ կրցայ «Այո» մը փսփսալ, որովհետեւ ուսուցչարան կանչուիլը զիս ահով լեցուցեր էր. այդ ահը կը յիշեմ, թէեւ չեմ գիտեր թէ ինչո՞ւ պետք էր ահով լեցուած ըլլայի, պարզապէս ուսուցչարան կանչուած ըլլալուս համար:

Յաւանաբար որովհետեւ ամէն անգամ որ մեկը ըսեր՝ *«Մամադ քեզի կ'ուզէ»*, ես ահ ու սարսափի կը մատնուէի, *«Նորէն ի՞նչ ըրեր եմ, որ պիտի յանդիմանուիմ»* մտածելով:

Իմ մանուկի խելքով մօրս բոլոր ըսածները կ'ընէի, բայց յաճախ կը յանդիմանուէի, ուրկէ բուսած սխալի մը համար, որուն սխալ ըլլալն իսկ գիտցած չէի ըլլար ընդհանրապէս:

Այս «կանչուելուն» սարսափը բաւական երկար ատեն մէջս մնաց:

Ուսուցչուհիները տարբեր հարցումներ կ'ուղղէին, որոնք ընդհանրապէս *«Ի՞նչ տեսար»* էին:

Բաւական բան կը յիշէի. օրինակ՝ երբ ինքնաշարժով Պուլոյնի անտառին մէջէն կ'անցնէիք, կարճ, ծաղկաւոր լայն փեշով աղջիկ մը կը քալէր երկու տղոց միջեւ. երբ տեսան, որ ես աչքերս շատ մեծ բացած զիրենք կը դիտեմ, երկու տղաքը, կարծես համաձայնած, դարձան եւ երկու կողմէն աղջկան այտերը համբուրեցին ու յետոյ ափերը շարժեցին խնդալով՝ «պայ-պայ», որովհետեւ ես ետեւ դարձած կը շարունակէի բաց բերանով զիրենք դիտել:

Կ'ուզէի ասիկա պատմել ուսուցչուհիներուս, բայց ամչցայ:

Կրնայի նաեւ պատմել թէ որքա՞ն բարձր էր Էյֆելի աշտարակը եւ որքա՞ն լայն էին սիւները եւ ամէնը երկաթով հիւսուած: Վստահ էի, որ օրիորդներս շատ պիտի գարմանային՝ *«Երկաթով հիւսուա՞ծ»* պիտի հարցնէին: Բայց հագիւ կը պատրաստուէի այս մասին խօսիլ, երբ կ'երեւի յուսահատ ու թերեւս ալ համոզուած, որ մեր Փարիզ գացած ըլլալը յերիւրանք մըն էր միայն, *«հատէ՛, գնա՛»* հրահանգեցին եւ իրենք դարձան իրենց շատախօսութեան:

Նախակրթարանի երեք տարիներու ընթացքին – անելի բարձր դասարաններ չկային տեղի նեղութեան պատճառով – Կիւլպէնկեան դպրոցը դարձաւ իմ երազած ընտանիքը՝ բազմամարդ եւ բազմադմուկ: Ի՞նչ լաւ էր, հիմա կը մտածեմ, որ այդ օրերուն մեր

դպրոցական օրը երկու բաժին ուներ՝ կեսօրե առաջ, որմէ ետք տուն, ճաշի կ'երթայինք ու ետ կու գայինք կեսօրե ետքի դասերուն համար: Ժամը չորսին կ'արձակուէինք եւ մինչեւ մեր քունի ժամը շատ լաւ դաս սորվելու ժամանակ ունէինք:

Հիմա ժամերը նեղցե՞ր են, որ կեսօրուան երկուքին արձակուող աշակերտները դաս սորվելու ժամանակ չունին եղեր, ինչպէս յաճախ կը լսեմ:

Օր մը ամենայն լրջութեամբ տղուս հարցուցի, թէ արդեօ՞ք վայրկեանին միջոցը, երկրագունդին դառնալներուն հետ, գիտական բացատրութեամբ մը նեղցեր է՝ ինչ որ այսօրուան մէկ վայրկեանն էր, մեր օրերուն մէկուկէսն էր թերեւս:

Այդ երեք տարիներէն բազմաթիւ յուշեր չունիմ, բայց ընդհանուր ուրախութեան մթնոլորտ մը կար, որ մինչեւ այսօր կը յամենայ մէջս:

Երբ առաջին դասարան եղայ, սկսանք աստիճաններէն վեր ելլել. մեծցեր էինք եւ մեծերուն երեք դասարանները վերի յարկն էին. պէտք էր բարձրանայինք հինգ աստիճան, յետոյ դէպի աջ շարունակէինք բաւական բարձր, մինչեւ դասարան հասնիլը: Ձախի աստիճաններէն հազուադէպ էր որ մէկը ելլեր, կարծեմ վերը տանիքն էր, ուր երբեմն ամավերջի հանդեսին փորձերը կ'ըլլային:

Մանկական քաղցրագոյն յուշերէս մէկն է «Պամպի» պատմութեան գիրքը, որ նուէր ստացեր էի գերագանց աշակերտ ըլլալու համար եւ որուն առաջին էջին վրայ շատ գեղեցիկ ձեռագիրով ձօն մը գրուած է:

Երբ տասնամեակներ ետք կորսուած կարծուած գիրքը ձեռքս ինկաւ, տարօրինակ յուզում մը եւ խորունկ ուրախութիւն մը ապրեցայ, թէեւ անոնց աղբիւրը յստակ չէ ինծի համար, բայց ընդհանուր մթնոլորտի մը՝ ուրախ եւ հանգիստ, քաղցր արձագանգն է հաւանաբար:

Օր մը, տակաւին ուսուցչուհին չէր մտած դասարան, իսկ աշակերտները կը շարունակէին զբօսանքի իրենց պոռչտուքը: Քանի մը անգամ փորձեցի ըսել, որ լռեն, որովհետեւ ահա կը տեսնեմ, որ մեր օրիորդը վեր կ'ելլէ եւ եթէ մեզ այս վիճակին մէջ գտնէ, հաւանաբար բոլորս ալ լաւ ծեծ մը ուտենք, որովհետեւ օրիորդ Անահիտը՝ մեր հայրենի ուսուցչուհին, շատ խոժոռ էր եւ խիստ: Յետոյ պիտի հաստատէի, դպրոցէն ետքի մեր բարեկամութեան ընթացքին, որ օրիորդ Անահիտին դէմքը պարզապէս ժպտուն չէր, բայց ինք շատ ազնիւ եւ համբերատար անձ մըն էր:

Երբ տեսայ, որ չեմ կրնար ձայնս իրենց հասցնել, բարձրացայ

Նստարանին, յետոյ գրասեղանին վրայ եւ ձայնս ձգած պոռացի.

«Լոտե՛ք... անիծեա՛լ ըլլաք...»

Վերջին երկու բառերս արտասանած ընթացքիս օրհորդ Անահիտը արդէն դասարանին դռան մէջ էր եւ աշակերտներուն ձայնը, դանակով կտրուածի պէս, դադրեր էր. իմ «Անիծեա՛լ ըլլաք»-ս յստակ ու շատ բարձր հնչեց, մինչ ես ալ կը նայէի օրհորդ Անահիտի դէմքին, որ տարօրինակ արտայայտութիւն մը ստացեր էր բառերս լսելով:

Սարսափահար, կամացուկ մը ետ վար իջայ նստարանէն, միտքովս ապրելով գալիք պատիժներս, որոնք հաստատապէս երկու պիտի ըլլային. նախ հիմա, հոս, ապա՝ տունը, մօրս շատ աւելի ծանր պատիժը: Չէի հասկնար, թէ ինչպէ՛ս այդքան արագ ամէն բան կը հասներ մօրս ականջին՝ հազիւ դպրոցէն տուն դառնայի, պատիժը կը սպասեր ինծի: Եւ ամէն օր տարբեր բաներու համար պատիժ ունեի՝ բարձր խօսեր էի, շատ վազվզեր էի, տասի փոխարէն իննուկէս ստացեր էի...

– Նստե՛ք...– ըսաւ օրհորդ Անահիտ:

Բոլորս նստանք. կը զգայի, որ բոլորն ալ իմ պատիժիս կը սպասեն:

– Բացե՛ք գիրքերը, նոր դաս...:


Այդ օր ո՛չ դպրոցը պատիժ ունեցայ, ոչ ալ տունը: Եւ մեծ ուրախութեամբ մոռցայ այդ բոլորը:

Տարիներ ետք, երբ մտաբերեցի այս դեպքը, նախ շատ զարմացայ՝ ուրկե՞ եկեր էր ինծի այդ խօսքը, ո՞ւր լսեր էի... Եւ յիշեցի, ո՛չ, չկրցայ յիշել, պարզապէս ենթադրեցի, որ «նէնէ» Յայկանոյշին պատմած հեքիաթներէն լսած ըլլալու եմ, եւ... կուշտ ու կուռ խնդացի, միտքես շնորհակալութիւն յայտնելով օրհորդ Անահիտին, որ հարցի չէր վերածած մանկական այդ պոռթկումս:

Երրորդ դասարանի տարին չէի ուզեր որ վերջանար. գիտէի որ յետոյ Յայկազեան պիտի երթայի: Յայկազեանը կը վախցներ զիս. վստահ էի որ Կիւլպէնկեանի ընտանեկան մթնոլորտը պիտի չգտնէի հոն: Ամբողջ տարուան ընթացքին այս վախը խաթարեց Կիւլպէնկեանէն ծնած ամէնօրեայ ուրախութիւնս:

Այսօր սակայն այս դպրոցս կը յիշեմ մեծ-մամայի մը տունին քաղցրութեամբ եւ յիշատակներով:





Ս. ԲԱՌԱՄՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ

Շաբաթ կեսօրէ ետքերու անխուսափելի եկեղեցին: Պետք էր անշարժ նստել չոր նստարանին վրայ: Զովս *Մարթիալո** Նուարդն է, որ ցած ձայնով կը մասնակցի թէ՛ շարականներուն, թէ՛ աղօթքներուն, ամբողջ ժամերգութեան ընթացքին: Ո՛չ աջ կը նայի, ո՛չ ձախ. ու երբ ծանօթ տիկին մը բարեւ՝ «*Տիկին Նուարդ, ինչպէ՛ս ես*», ինք միայն գլուխը կը շարժէ առանց անոր կողմը նայելու եւ կը շարունակէ ցած ձայնով աղօթել:

Միշտ նոյն տեղը կը նստինք՝ ետեւի բաժինին առաջին նստարանին վրայ: Աջ կողմէս, փոքրիկ դռնէն կը լսուի դուրսը՝ բակին մէջ խաղցող փոքրերուն աղմուկը:

Առաջին անգամ, որ *Մարթիալո* Նուարդին հետ եկեղեցի գացի, տեսնելով դուրսի խաղցողները, ըսի.

– Երթամ խաղա՞մ իրենց հետ:

– Ո՛չ, – շատ խիստ, – նստե՛ք եւ ժամերգութիւնը մտիկ ըրե՛ք:

Հինգ տարեկան էի, ժամերգութեան ի՛նչ ըլլալը չէի գիտեր. բայց նստայ եւ փորձեցի բան մը հասկնալ:

Շարականները այնքան քաղցր էին, որ անոնց օրօրով սկսայ մրափել. խունկի հոտը կ'այրեր ռունգերս եւ կը զգայի, որ եթէ շարունակեմ աչքերս գոցել, պիտի փսխեմ, այնքան ծանր էր ծուխը:

Յետոյ կը քնանայի, բայց միշտ ալ *Մարթիալո* Նուարդը կը միտեր կողս եւ կ'արթնցներ գիս:

– Դիտե՛ք Քառասուն մանուկը, Դժոխք-դրախտը, շարականները մտիկ ըրե՛ք, որ բան սորվիս:

Յետոյ Քառասուն մանկանց եւ Դժոխք-դրախտի հսկայ սրբանկարները կը լարէին երեւակայութիւնս. մանո՞ւկ, բայց ասոնք մեծ մարդիկ են, կը մտածէի, ինչո՞ւ մանուկ կ'ըսեն, եւ ո՞ր կը փախչի այդ մէկը դռնէն ներս...

Դժոխք-դրախտը շատ աւելի բարդ էր եւ վախազդու. կրակին ոլորուող հսկայ բոցը, մարդոց դեմքերուն արտայայտութիւնը ուղղակի սարսափ կը պատճառէին. կը նախընտրէի աչքերս փակել, խունկին հոտէն խեղդուիլ, բայց չտեսնել այդ դժոխքը, ուր հաւանաբար ես ալ երթայի, որովհետեւ երկու օր առաջ *Մարթիալո* Նուարդին սեղանի պզտիկ կարմիր ժամացոյցը, որ շատ կը սիրէի, ամեր գրպանս դրեր էի:

Յաջորդ շաբաթ կրկին եկեղեցի, տառապելու համար խունկի ծուխին մէջ, քառասուն մանուկներուն հետ, դժոխքին պատկերներուն տակ. դրախտը շա՛տ բարձր էր եւ նստած տեղէս լաւ չէի տեսներ անոր մանրամասնութիւնները:

Այսպէս էր որ մեր այնքան քաղցր շարականները մտան երակներուս մէջ եւ սկսան հոն, ինձմէ անկախ թափառիլ, մինչեւ որ օր մը մե՛ծ զարմանքով անդրադարձայ թէ բոլորը... գոց գիտեմ արդէն:

Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ իմ յուշերուս մէջ մեծ տեղ կը գրաւէ... խավաւը, այն պարթեւահասակ եւ փալապէս ծերունին, որուն գաւազանին ձայնէն կը սարսափէի, բայց նաեւ տարօրէն հմայուած էի իր տարագով եւ դեմքին խիստ, միաժամանակ բարի արտայայտութեամբ:

Շալվարը, մեջքի գունաւոր, հաստ գօտին եւ կարմիր ֆէսը, որոնց հետ կարծես կապ չունէր, հագած երրոպական ժաքէթը, բայց որ կը շեշտէր իր պարթեւ հասակը: Սարսափի եւ հմայքի մէջ բռնուած կ'ըլլայի ամէն անգամ, որ պատահմամբ հանդիպէի իրեն:

Կը յիշեմ մէկ, միայն մէկ անգամ տեսած ըլլալս երկու խավասներ միասին. երկրորդը պարզապէս ուրուագիծ մըն է հիմա: Յետոյ միայն մէկը մնաց ոչ միայն Առաջնորդ Սրբազանին առջեւէն քալող եւ գաւազանին գետնին տրուած հարուածներով ճամբայ բացող, – թէւ Առաջնորդ Սրբազանին կտրելիք ճամբան միայն Առաջնորդարանէն եկեղեցի էր, – մէկը մնաց նաեւ յուշերուս մէջ, մնաց յստակ, տպաւորիչ, ամբողջ կորսուած աշխարհի մը խտացումը որպէս:

Մարթիալօ Նուարդը, մօրս մեծ քեռիին՝ Արմէն Գասպարեանին կինը վաղուց չկայ արդէն, բայց Զալէպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցին կը շարունակէ իր երթը, կը մնայ հալէպահայերուս ոչ միայն ամէնէն սիրելի եկեղեցին, մայր եկեղեցին, այլ՝ մեր լինելութեան գրաւականը:

Պատերազմը խոցեց զինք եւս: Բարեբախտաբար այսօր կը շարունակուի իր հին կամարներուն տակ թրթռացումը շարականներուն, հայութիւնը կը շարունակէ մեծ երկիւղածութեամբ մտնել անոր փոքր դռնէն ներս, ոտքի մատներուն վրայ քալել դէպի ձախ եւ կանգնիլ սրբանկարներէն իւրաքանչիւրին առջեւ:

Սիւներէն մէկուն վրայէն վար կը նայի վերածնունդի Աստուածածինը իր խաժ, բարի նայուածքով, մինչ իր արեւմտեան կանտնաւոր, գեղեցիկ դիմագիծերը երկնային գոլ մը կը պարզելէն արելելէն այս տաճարին:

Անոնք, որոնք մաս կազմած են եկեղեցւոյ տիկիններու երգչախումբին, մեծ հպարտութեամբ կը պատմեն իրենց ծառայութիւնը եկեղեցւոյ:

Կ'ըսուի թէ 5-րդ թէ 6-րդ դարերուն արդէն գոյութիւն ունեցած է այս եկեղեցին, գոնէ իր գետնափոր բաժինով, որ մինչեւ այսօր ալ կայ տակաւին. թէւ մէկ անգամ առիթ պիտի ունենայի հոն իջնելու, բայց երբեք չեմ տեսած զայն: Տեսած եմ անոր լուսանկարները, որոնք ցոյց կու տան գետնափոր սրահ մը, որ փորուած է մեծ հաւատքով, ճիշդ Գեղարդի վանքին նման: Այդ ի՛նչ հաւատք ունեցած են մեր նախնիքը, նման տաժանակիր աշխատանք տանելու եւ քարէն ժանեակ հիւսելու համար:

Այսօր, իր նորոգութենէն ետք, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցին շատ աւելի խորհրդաւոր կը թուի, կարծես կրած տառապանքը եւ գաւակ կորսնցուցած մայրերուն արցունքները աւելի սրբացուցած ըլլան իր քարերը:

***Արաբերէն, քեռկին, քեռիի կին: Զալէպի հին հայերը արդէն սկսեր էին իրենց անուններն ու նման բառեր արաբերէն ըսել:**



ՏԻԿԻՆ ՔԱԹՐԻՆԸ

Ճերմակ մազերը ետև սանտրուած ու ծոծրակին վրայ ամփոփուած, ինք՝ երկարահասակ ու թիկնեղ, դեմքը կնճիռներով լեցուն եւ աչքը՝ կապոյտ, կաս-կապոյտ, այնքան կապոյտ, որ ամեն նայելուս կը յիշէի «Աստուածաշնչական Պատմութիւններ»-ուն մէջ իմ կարդացած «Լոյսի Կաթիլը» պատմուածքը, որ նոր կարդացեր էի: Աչքը կ'ըսեմ, որովհետեւ տիկին Զաթրինը միակնի էր, միւսին կոպերը փակ էին, չեմ գիտեր ի ծնէ՞ թէ արկածի մը հետեւանքով:

Տիկին Զաթրին, Զալէպի Վերժին Կիւլպէնկեան մայրանոցի գլխաւոր մանկաբարձուհին, վկայեալ էր Պէյրութի Ամերիկեան Զամալսարանէն (AUB):

Ասկէ գրեթէ դար մը առաջ, ուրեմն եղած են տիկ. Զաթրինին պէս օրիորդներ, որոնք իրենց ընտանիքը ձգած, գացեր են Պէյրութ, համալսարանական ուսումի:

Տիկ. Զաթրին, հակառակ իր միակնի ըլլալուն, կը հմայեր զիս իր մէկ աչքին խենթանալիք կապոյտով՝ յստակ, թափանցիկ կապոյտ մը, որ նոյնքան վախ կը պատճառէր ինձի, որքան հմայք, սարսափելի հմայք:

Եւ ծերութեամբ: Շատ ծեր էր ու ես կը զարմանայի թէ ինչպէ՛ս կ'աշխատի, ինչպէ՛ս կրնայ նոր ծնած *պէպէք*ները իր ճմռթկուած ձեռքերուն մէջ պահել: Չէի տեսած որ ձեռքերը կը դողան, բայց կարդացեր էի եւ աւելի առաջ ալ տպաւորուեր էի Զայկանոյշ նենէիս հեքիաթներէն, որ բոլոր ծերերուն ձեռքերը կը դողան: Տիկին Զաթրինին ձեռքերը չէին դողար եւ հակառակ շատ ճմռթկուած ըլլալուն, շատ ուժեղ ձեռքեր էին, ճի՛շդ ձայնին պէս, երբ կը բարկանար սխալ մը ըրած *նըրսի* մը կամ աշխատաւորի մը վրայ, բերնէն թրքախառն հայերէնին հետ թուրքեր ալ թափելով:

Տիկին Զաթրին հայերէնէն աւելի թրքերէն գիտեր ու կը խօսէր, նոյնիսկ երբ ժողովարան կ'երթար աղօթելու իր հոգեւոր քոյրերուն հետ, բոլորն ալ իր նման ծեր ու ճմռթկուած կիներ, որոնց հոտը չեմ կրնար մոռնալ:

Կը նստէի մայրանոցին պէպէքներու սենեակի պատուհանին մէջ, որ դէպի ետեւի թաղի ժողովարանը կը նայեր ու մտիկ կ'ընէի իրենց թրքերէն երգերը, որոնք թէեւ աղօթքներ են, կ'ըսէին, բայց ոչ մէկ կապ ունէին մեր եկեղեցւոյ շարականներուն հետ, որոնք կը շոյէին քունքերս ամեն Շաբաթ կէսօրէ ետքերը, երբ մօրս քեռկինին՝ *Մարթիալօ* Նուարդին հետ եկեղեցի կ'երթայի: Շարականներն ու խունկը կը շոյէին ունկս, քունքս ու այտերս եւ աչքաբաց երազանքի երանութիւն կու տային: Մարթիալօն թոյլ չէր տար որ աչքերս փակեմ. կուշտս կը մխտեր եւ շշուկով կ'ըսէր՝ «*Չետեւի՛ր աղօթքներուն, որ սորվիս*»:

Յինգ տարեկան էի:

Պատուհանին մէջ նստած, մտիկ ընելով այդ ծեր ու հոտած կիներուն բաղաձայն երգը, կը փորձէի հասկնալ թէ ինչո՛ւ թրքերէն կ'երգեն, կը խօսին ու մանաւանդ թրքերէն կ'աղօթեն, եթէ հայ են, ու յետոյ՝ ինչո՛ւ այսպէս տհաճ են իրենց երգերը եւ ԲՆԱԿ չեն նմանիր մեր եկեղեցւոյ քաղցր շարականներուն:

Նստած կը մնայի երկար ժամանակ, այս հարցումներուն պատասխան փնտռելով, որովհետեւ չկար մէկը որուն հարցնէի. շուրջս գտնուող բոլոր մեծերը կա՛մ շատ զբաղած էին, կամ ալ չէին գիտեր հարցումներու պատասխանները.

- Է հայերէն չեն գիտեր, - կ'ըսէր մայրանոցի խոհարարուհին՝

Մարօշիկը, որուն նեղ աչքերն ու կարճ հասակը մտածել տուած էին որ չիւնացի կին մըն է, բախտի գարմանալի մէկ խաղով Հալէպի Նոր Գիւղի Կիւլպէնկեան մայրանոցը ինկած, որպէս խոհարարուհի:

Հակառակ խորշանքիս, – շատ զօրաւոր էր աղօթարանէն փչող հին մարմինի եւ աղտոտ լաթերու հոտը, – ամէն Կիրակի առաւօտ կը վազէի պէպէքներու սենեակին պատուհանը, հանգիստ կը տեղաւորուէի եւ լրջօրէն մտիկ կ'ընէի այդ բաղաձայն երգերը:

Ինչո՞ւ: Չեմ գիտեր:

Մայրս կ'ըսէր թէ Վերժին Կիւլպէնկեան մայրանոցը ամբողջ Սփիւռքի միակ մայրանոցն է, որ հիւանդանոց չէ եւ նուիրուած է միայն ու միայն ծննդաբերող մայրերու բարօրութեան:

Մայրանոցը հիմնուած է 1935 թուականին, հանրածանօթ Գալուստ Կիւլպէնկեանի Սերովբէ հօրեղբօր որդւոյն՝ Պատրիկի կողմէ, ի յիշատակ իր վաղամեռիկ կնոջ՝ Վերժինի, որ զաւկին ծնունդի ընթացքին կը մահանայ, միայն 32 տարեկան:

Հալէպի մէջ Կիւլպէնկեան անունով նախակրթարան մըն ալ կար՝ Ազգային Պօղոս Կիւլպէնկեան վարժարան, որուն բարերարը՝ նոյն Պատրիկ Կիւլպէնկեան իր մահացած երախային՝ Պօղոսիկի անունով կոչած է դպրոցը: Հալէպի մէջ հիմնած է նաեւ «Եփրատ» օրաթերթը, երկու տարի ինք ըլլալով խմբագիրը:

Այս մայրանոցին գլխաւոր մանկաբարձուհին էր տիկին Զաթրին, որմէ բոլորը, բառացիօրէն բոլորը՝ մայրանոցի աշխատողներէն եւ *սըրուտ*էն մինչեւ ծննդկան մայրերը կը սարսափէին: Այդ սարսափը կարծես իր բարերար ազդեցութիւնը կ'ունենար, որովհետեւ անգամ մը որ տիկին Զաթրին իր որոտացող ձայնով պոռար՝ «Հրէ՛ տետիմ, հատէ հրէ՛», ցաւերու մէջ ինքզինք մոռցած մայրը հպատակելէ զատ ուրիշ բան չէր կրնար ընել: Եւ զաւակը անմիջապէս կը ծնէր, շնորհիւ տիկին Զաթրինի հմտութեան եւ անշուշտ՝ որոտացող ձայնին:

Սովորական մահկանացուներուն հետ տիկին Զաթրին թրքերէն կը խօսէր, կամ հայերէն, թրքերէն բառերով, իսկ մնացեալին հետ՝ բժիշկներուն եւ իր յարգանքը վայելողներուն հետ՝ անգլերէն: Շատ լաւ անգլերէն գիտէր անշուշտ, Ամերիկեան Համալսարանը ուսանած օրերէն, ինչպէս եւ բողոքական կրօնական երգերէն, որոնք հիմնականին մէջ Ամերիկայէն ներմուծուած կ'ըլլային եւ տեղական ուժերով գէշ աղէկ հայերէնի կամ թրքերէնի թարգմանուած:

Յետոյ օր մըն ալ տիկին Զաթրին ա՛լ չեկաւ Կիւլպէնկեան Մայրանոց. ըսին թէ Ամերիկա գացեր է, թոռնուհիին քով, որովհետեւ «հոս ա՛լ հարազատ մէկը չունի»:

Մինչեւ այսօր կը յիշեմ Տիկին Զաթրինի կապոյտ աչքն ու կը լսեմ որոտացող ձայնը. դժբախտաբար սակայն չեմ յիշեր իր մականունը, պարզապէս որովհետեւ բնա՛ւ չեմ լսած զայն: Ինք պարզապէս Տիկին Զաթրին էր բոլորին համար:



ՄԵՐ ՊԱՐՏԷԶՆԵՐԸ

Աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ մեր ակումբներուն պարտեզները: Ակումբը եթէ կուսակցական որոշ երանգ մը ունի, պարտեզները զուտ ընկերային հաւաքատեղիներ են: Պետք չէ մոռնալ սակայն, որ Յալէպի մէջ ոչ միայն իւրաքանչիւր ակումբ արդէն իր պարտեզը ունի՝ ՅՍԸՄ-ի պարտեզ, ՅԵԸ-ի պարտեզ, այլ միութիւններն ու դպրոցներն ալ ունին իրենց պարտեզները, ինչպէս Կրթասիրաց Միութեան պարտեզ, Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի պարտեզ, Բեթել Եկեղեցւոյ կամ դպրոցի պարտեզ եւ այլն...

Որքան կը յիշեմ մօրս պատմածներէն, յիսուն տարի առաջ միայն ՅՍԸՄ-ի պարտեզը կար իր պասքեթի, թենիսի եւ ֆութպոլի դաշտերով ու բարձր ծառերուն տակ ցրուած սեղան-աթոռներով: Կար նաեւ ՅԵԸ-ի փոքրիկ պարտեզը, որ իրապէս պարտեզ էր, ծառերու խիտ տերեւներուն տակ կորսուած...

Ինծի կը թուէր թէ այս պարտեզները, եկեղեցի-դպրոց-ակումբ եռոտանիին վրայ աւելցուած չորրորդ կարեւոր կողմ մըն էին, եւ բոլոր գաղութներն ալ ունէին. հապա ո՞ր պիտի երթար ժողովուրդը ամառուան տաք ցերեկներէն ետք իրիկուան զովութիւնը վայելելու, աշխատանքին յոգնութիւնը թօթափելու, ընկերներու հանդիպելու. ո՞ր պիտի երթային մեր մանր տղաքը իրենց եռանդը վատնելու... Բայց այդպէս չէր իրականութիւնը:

Երբ մեր ընկերներն ու բարեկամները Պէյրութէն կու գային, անպայմանօրէն պարտեզ կ'երթայինք միասին, զիրենք ճաշարան կամ սրճարան հրաւիրելէ առաջ: Բոլորն ալ երանի կու տային մեզի՝ հալէպահայերուս, որ ունինք նման պարտեզներ, շա՛տ հաճելի հաւաքատեղիներ, ուր առանց ընտանիքին նիւթական հաւասարակշռութիւնը խախտելու, կրնայինք աղուոր ժամանակ անցընել:

«Գիտէք որ Պէյրութ ամէն բան շատ սուղ է, - կ'ըսէին - ամէն մարդ չէ որ կրնայ ամէն օր սրճարան-ճաշարան երթալ: Դժբախտաբար մեր ակումբները նման պարտեզներ չունին. դուք, կարծեմ, կրնաք պարտեզ երթալ, առանց անպայման բան մը ուտել-խմելու պարտաւորութեան: Երանի ձեզի»:

Պարտեզ երթալու նպատակը անշուշտ որ բնաւ ուտել-խմելը չէր այնքան, որքան իրարու հանդիպիլն ու զրուցելը:

Ես կը յիշեմ, որ այն օրերուն, երբ խումբ մը ընկերներով «Օշական» պարբերաթերթը կը խմբագրէինք, մեր ժողովները յաճախ ՅՍԸՄ-ի պարտեզը կ'ընէինք՝ Յայր Արարատը, Կորիւն

Շահիկները (վաղամեռիկ բանաստեղծը), Արմիկ Նալպաստեանը եւ ես. հիկեթորոդ ընկեր մըն ալ ունէինք, ո՞վ էր արդեօք, արդէն չեմ յիշեր:

Ուրիշ յանձնախումբեր եւս սովորութիւն ըրած էին ժողովները պարտեզէն ներս ընել, որովհետեւ Հալէպի տաք ցերեկէն ետք անտանելի պիտի ըլլար հովասուն գիշերն ալ սենեակի մը մէջ բանտարկուած անցընելը:

Հապա երեքշաբթիներու նշանաւոր կնոջական հաւաքները, երբ ընկերուհիներ կամ բարեկամուհիներ քով-քովի կու գային ոչ միայն հաճելի ժամանակ անցընելու համար, այլ նաեւ գտած էին փոքրիկ խնայողութիւն մը ընելու կերպը՝ ամէն շաբաթ կամ երկու շաբաթը անգամ մը փոքր գումար մը հաւաքել, եւ հերթով, - ըստ նախապէս վիճակով որոշուած հերթականութեան, - տալ մէկուն: Այդ հաւաքներուն մասնակիցները սկիզբէն իսկ որոշած կ'ըլլային ընդհանրապէս, թէ ինչ նպատակի համար պիտի օգտագործէին այդ գումարը: Յաճախ՝ շատ կարելոր կ'ըլլային այդ նպատակները:

Իսկ Հինգշաբթիներու ընթրիքի երեկոները... Այլ հաճոյք եւ ուրախութիւն էին այդ Հինգշաբթիները, որոնք կը սկսէին հերիսայով, եւ, որքան կը յիշեմ, աշնան վերջ կը գտնէին դաւուրմայով:

Ալֆորվիլի մէջ (Ֆրանսա), որ Փարիզի արուարձաններէն հայահոծ շրջան մըն է, նշանաւոր սրճարան մը կար, ուր հայերը կը հաւաքուէին. ընդհանրապէս՝ ծեր այրեր. այնտեղ ո՛չ փոքրիկներուն ուրախ ճիչերը, ոչ ալ երիտասարդներուն տաք վեճերը կային: Աւելի շատ տխուր երեւոյթ մը կը պարզեր այդ սրճարանը:

Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ ալ կը գործէ պարտեզներուն դրութիւնը. հոս սակայն ո՛չ ակումբ կայ, ոչ ալ պարտեզ. կան «սրահ»-ներ. «Վաղը սրահ պիտի գա՞ս», կը հարցնեն իրարու: Ուրկէ՞ եկեր է այս անուանումը ակումբ-պարտեզներուն, չեմ գիտեր. հաւանաբար Կոկանեան Սրահին անուանումէն, որովհետեւ այս պարագային սրահը ածական չէ, այլ ձեւով մը՝ մականուն:

Ինչ ալ ըլլայ անունը, կարելորը վայրն է՝ ծառաշատ, հաճելի եւ... մանուկներով լեցուն: Մանուկները կու գան անշուշտ իրենց ծնողներով. երբեմն կու գան նաեւ առանց ծնողներու, որովհետեւ Հալէպի, Գահիրէի թէ Աղեքսանդրիոյ այս պարտեզները խիստ ապահով վայրեր են, ուր ամէն մարդ ամէն մարդու ծանօթ է, կամ

գրեթե ծանօթ, ուր բոլորին սիրտն ու հոգին փոքրիկներուն վրայ է եւ ուր երիտասարդները մեծ հոգածութեամբ կը վերաբերին փոքրերուն, կը զբաղեցնեն, կը զրուցեն անոնց հետ, այսպիսով անուղղակի կերպով սորվեցնելով անոնց հաղորդակցելու ոճերն ու կարելորութիւնը:

Սեղաններուն շուրջ նստած տարեցները երանութեամբ կը դիտեն խաղցող փոքրիկները, կը նշմարեն մեկուն մեծցած ըլլալը, միւսին տակաւին հասակ նետած չըլլալը, աղջիկներուն աղուորութիւնը... Կը զգաս որ յոյսը կը ծփայ իրենց շուրջ, մանաւանդ հիմա, երբ Միջին Արեւելքի գաղութները ծանր շրջաններ կը բոլորեն՝ ապահովութենէն մինչեւ տնտեսական ճգնաժամ:

Եթէ նկատի առնենք նաեւ կրկին թափ առած գաղթը, պիտի հասկնանք թէ ինչո՞ւ երեցները ուղղակի կ'ոգելորուին ակումբներուն պարտեզները աղմուկ-աղաղակով լեցնող փոքրիկներուն ի տես:

- Ի՞նչ պիտի ըլլային մեր փոքրիկները, եթէ չըլլային այս պարտեզները, ո՞ր պիտի երթային, ո՞ր արաքնոցը...,- կ'ըսեն իրարու, գլուխները օրօրելով:

Այս կամ նման խօսքերը կը հաստատեն մօտիկ անցեալի մեր դեկադարներուն պայծառատեսութիւնը, կարելորն ու կարելորագոյնը ճշդելու իրենց հոտառութիւնը եւ անխոնջ աշխատանքը, իրականացուցած ըլլալու այն բոլորը, զորս մենք կը վայելենք այսօր:


Ի՞նչ սերեր ծաղկեր են պարտեզներէն ներս, ծառերուն հովանիին տակ, ու երբեմն մեծերուն օրհնութեամբ: Ահա մեր պարտեզներուն մէկ այլ շատ կարելոր դերը՝ խթանել մեր տղոց կապը իրարու հետ, քաջալերել անոնց ծաղկող սերը, որ պատուար է յաճախ օտար ամուսնութիւններու դէմ:

Այո՛, հոսքը շատ զօրաւոր է, բայց մեծ է նաեւ մեր պարտեզներուն «խորհուրդը»:

Դժբախտաբար նման պարտեզներ չկան արեւմտեան կողմն աշխարհի ծաղկած մեր գաղութներուն մէջ, ուր հեռաւորութիւնները, աշխատանքային օրուան երկարութիւնն ու ծանրութիւնը արգելք կը դառնան պարտեզային հաւաքներուն: Եթէ կարելի ըլլար նման պարտեզներ պահել, թերեւս կարգ մը երեւոյթներ տարբեր ըլլային:

Ափսոս:

ՃԵՄԱՐԱՆՍ



Առաջին հանդիպումս Ճեմարանին հետ իր կապոյտ պասին ընդմէջէն էր: Նախակրթարանի վերջին դասարանն էի: Յոն, ուր կը սպասէի Հայկազեան դպրոցին պասը, կը սպասէին նաեւ Ճեմարանի աշակերտները՝ Սիւլէյմանիէ պողոտայի իջուածքին վրայ:

Անոնց հետ կը սպասէր նաեւ օրդ. Սեդա Ինճեանը, որ նոր վերադարձեր էր Պէյրութէն, ուր կ'ուսանէր Ամերիկեան համալսարանէն ներս, կարծեմ անգլերէն գրականութիւն:

Օրդ. Ինճեանն ու Ճեմարանի կապոյտ պասը երազ դարձեր էին, երազ, որուն պիտի հասնէի անշուշտ տարի մը ետք. բայց շա՛տ անհամբեր էի եւ սիրտիս խորերէն երանի կու տայի արդէն ճեմարանական այդ աղջիկներուն, որոնք հետոս պասը կը սպասէին:

Չէի խօսեր իրենց հետ, բայց մտերմութիւն մը ստեղծուեր էր մեր միջեւ: Վստահ չեմ, որ մեր միջեւ էր այդ մտերմութիւնը. պարզապէս ինձմէ դէպի իրենց ծորող զգացում մըն էր ատիկա:

Յետոյ ես ալ իմ կարգին դարձայ աշակերտ Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի եւ քանի մը տարի ետք ալ՝ պարոն Սկրտիչեանի:

Այդ օրերուն ուրիշ էր Ճեմարանին բակը, ուր կը շարուեր աշակերտութիւնը առաւօտներուն եւ ամէն զբօսանքէ ետք:

Կողք-կողքի զետեղուած պասքէթի երկու կողովներ կային. տղաք փորձեր կ'ընէին եւ փորձ-մրցումներ կը խաղային մէկ կողովի շուրջ: Բակին կողքին եւ նոյն չափերով ունէինք թենիսի ու ֆութպոլի դաշտերը: Այս վերջին երկուքը փոքր ծառուղիով մը կը բաժնուէին իրարմէ:

Թէեւ փոքր, բայց մեր բակին իրապէս տարբեր շունչ կու տար այդ ծառուղին, ուր յաճախ նկատելի էին ռոմանթիկ լռութեամբ նստած զոյգեր, որոնցմէ մաս մը հետագային ամուսնացաւ եւ ընտանիքներ կազմեց:

Սակայն այլ խորհրդաւորութիւն ուներ «տետի պարտեզը», ուր կը կանգներ Ճեմարանի հիմնադիր եւ այդ օրերու Հալէպի Առաջնորդ երջանկայիշատակ Չարեհ Սրբազանի կիսանդրին (աւելի ուշ՝ Չարեհ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, 1915-1963):

Երբեմն դասապահերէն կը փախչէինք եւ կաթողիկոսին կիսանդրիին տակ նստած կը զրուցէինք: Բայց ամէն անգամ, որ կը տեսնէի կիսանդրին, կը յիշէի, թէ ինչպէ՛ս 18 Փետրուար 1963-ին, Երկուշաբթի օրուան մը յետմիջօրէին մեզ դպրոցէն կանուխ արձակեցին, առանց ըսելու թէ ինչո՛ւ: Ուրախ ճռուողելով տուն կ'երթայինք, երբ դռներուն առջեւ նստած կիներ սաստեցին մեզ.

– Ամօթ է, տղա՛ք, կաթողիկոսը վախճաներ է, մի՛ պոռաք...

Անշուշտ չէինք գիտեր թէ ո՛վ էր կաթողիկոսը եւ թէ ի՛նչ կը նշանակեր վախճանիլ բառը, բայց կիներուն արցունքոտ աչքերէն ազդուած լռեցինք եւ իւրաքանչիւրս արագ-արագ տուն գնաց:

Երջանկայիշատակ Չարեհ Ա.-ի կեանքին եւ մահուան մանրամասնութիւնները շատ անելի ուշ պիտի իմանայի եւ հասկնայի այդ կիներուն չհոսած արցունքը, որ ժողովուրդին, գոնէ հալէպահայերուն սիրոյ եւ յարգանքի անկեղծ արտայայտութիւնն էր այդ օր:

Ճեմարանը տարբեր էր Կիւլպենկեանէն, մանաւանդ Յայկազեան դպրոցէն. հակառակ որ աշակերտութեան թիւը այդ երկու դպրոցներուն համեմատ բաւական մեծ էր, բայց մտերմութեան մթնոլորտ մը կար, որ կարծեմ բոլոր ուսուցիչներուն վերաբերմունքէն կու գար:

Նախ կար, ինչպէս ըսի, օրդ. Սեդա Ինճեանը: Երկարահասակ, բարեճեւ, շատ վայելուչ եւ գեղեցիկ հագուկապով եւ կարճ մազերով օրդ. Ինճեանը մեր բոլորին, մանաւանդ աղջիկներուն իտեալը դարձեր էր: Կը սիրէր կարգ-կանոնը, կը սիրէր գեղեցկութիւնը: Իր շարժումներն իսկ վայելուչ էր, ազնուական: Շատ կը սիրէինք զինք:

Յետոյ գնաց: Զգիտցանք ո՞ր եւ ինչո՞ւ: Տարիք մըն էինք, երբ ժամանակը արագ-արագ կը թաւալէր, ու մենք հեւ ի հեւ կը փորձէինք հասնիլ ու բռնել բան մը, որ կը զգայինք թէ մեզմէ խոյս կու տար: Ժամանակ չունէինք ինչուներով զբաղելու:

Միջնակարգի հայերէնի մեր ուսուցչուհին օրդ. Գաթրճեանն էր, օրդ. Ալիս Գաթրճեանը, այն ճան ու ճիկեր ուսուցչուհին, որ աշակերտներուն խենթ ու խելառ կեցուածքներուն առջեւ տխրութեամբ կը լռեր եւ համբերութեամբ կը սպասէր, որ ի վերջոյ զգաստանանք, լռենք եւ ինք դասի սկսի, իր ցած ու հանդարտ ձայնով:

Այլ հաճելի յուշեր ժառանգ ձգած ուսուցիչ մըն էր արաբերէն պատմութեան եւ աշխարհագրութեան ուսթեզ Տապպաղը, – կարծեմ պետական այլ դպրոցի մը տնօրէնը, – որ երբ աղմուկը անտանելի դառնար, հանդարտօրէն կ’ըսէր ամպիոնին բարձրութենէն.

– Մարդո՛ւ գաւակներ, հանդարտեցէ՛ք...

Իրապէ՛ս շատ սիրուած, թերեւս պարոն Սկրտիչեանին չափ սիրուած (բայց պարոն Սկրտիչեանը մի՛շտ անելի անշուշտ) ուսուցիչ էր արաբերէնի դասատու ուսթեզ Տիմիթի Յաթեմը, որ երբեմն նաեւ իր շքեղ արաբերէնով բացման խօսք կ’արտասանէր կարելոր ձեռնարկներուն եւ յետոյ հաճոյքով կը պատմէր.

– Ինճի մօտեցան եւ հարցուցին՝ դուք իսլամ էք, ես ալ ըսի՝ այո՛, կաթոլիկ իսլամ եմ ...

Արաբերէն գրականութեան եւ թղթակցութեան բաժիններէն վկայեալ ուսթեզ Յաթեմը մեզի հետ սկսաւ ճեմարանէն ներս դասաւանդել, եւ մեզի հետ ալ տարուէ տարի դասարան բարձրացաւ, մինչեւ դարձաւ ու երկար տարիներ մնաց ճեմարանի միջնակարգի եւ երկրորդականի վերջին տարիներու՝ պրովէի եւ պաքալորիայի արաբերէնի անփոխարինելի ուսուցիչը:

Իր պատճառով շատ շատեր սկսան մտածել համալսարանէն ներս արաբերէն գրականութիւն ուսանելու մասին:

Բայց երբ շատ տարուած ըլլայինք բանաստեղծութեամբ եւ արաբերէն լեզուի հարստութեամբ, ինք յստակօրէն կ'ըսէր. «Յիշեցէ՛ք, որ նաեւ Զուրան եւ շարիաա ստիպուած էք սորվիլ»: Այդքանը կը բաւէր որ ետ կենայինք մեր որոշումէն...

Կը յիշեմ օր մը փորձի մը համար ճեմարան գացեր էի եւ կը վայելէի բակին հանդարտութիւնն ու ծառուղիին գեղեցկութիւնը, երբ նշմարեցի տիկին մը, որ դնէն ներս մտած, կը դիտէր գլխաւոր շէնքը: Կարծես այցելու մըն էր:

– Կրնա՞մ օգտակար ըլլալ,– հարցուցի:

– Դուն ճեմարանակա՞ն ես,– ըսաւ բարկացած:

– Այո,– ըսի ժպիտով, թէւ բնաւ չհասկցայ իր բարկութիւնը:

– Ե՛ս ալ ճեմարանական եղած եմ,– ըսաւ,– բայց իմ ճեմարանը տարբեր էր, ուրիշ էր... ասիկա տգեղ արաբական շէնք մըն է...

Նայեցայ շէնքին. արաբական չէր, տգեղ ալ չէր. կրկին չհասկցայ իր նեղութիւնը:

– Իմ ատենը այստեղ երեք հիւղեր կային, ծուռ կտուրներով...

Յիշեցի հին լուսանկարներու մէջ տեսած ըլլալս այդ հին կառոյցները:

– Վեհափառի կիսանդրին կայ ետեւի պարտեզին մէջ,– ըսի, յուսալով իրեն ծանօթ բան մը ցոյց տալ:

– Ո՛չ,– ըսաւ վերջնական ոճով եւ դուրս ելաւ փոքր դնէն:

Այսօր երբ կը վերյիշեմ այս դէպքը, կրնամ հասկնալ նախկին ճեմարանական այդ տիկնոջ բարկութիւնը, որ աւելի տխրութենէն կու գար, փնտռածը գտած չըլլալու տխրութենէն: Իրաւունք ունէր:

Երբ այս պատահարը կը յիշէի, անդրադարձայ, որ ճեմարանը կրցեր է ժամանակին հետ քայլ պահել, փոխուիլ, դառնալ աւելին. բնական է, որ աշակերտութեան թիւի յաւելումին հետ, կառոյցները եւս պիտի փոխուէին: Բնական է, որ նախկին աշակերտները, արդէն շրջանաւարտ, համալսարաններէ վկայուած, մագիստրոսական եւ վարդապետական աստիճաններու տիրացած, պիտի վերադառնային իրենց սիրելի տունը, իրենց ճեմարանը, դասաւանդելու կամ վարչական պաշտօններ առնելու:

Ճեմարանը, որ նախապէս եղած էր այրիանոց, ու յետոյ՝ կեանքի համեմատական բարելաւումին հետ դարձեր էր երկրորդական վարժարան, այսօր, կեանքի ամենէն ծանր պայմաններուն մէջ իսկ կը շարունակէ իր առաքելութիւնը, նոր սերունդը կը զինէ ո՛չ միայն գիտելիքով, այլեւ շատ աւելի եականով՝ ոգիով:

Մեր երկրորդ տունը: Զարէն Եփփէ Ազգային ճեմարանը: Ճեմարանս:



ՊԱՐՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆԸ



Երեք բաներ զիս տարօրէն հպարտութեամբ կը լեցնեն՝ հայ ըլլալս, հայերէն լեզուն եւ Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի սան ըլլալս: Այս երեքը սրբութիւններ են:

Չորրորդ մըն ալ կայ, որ աւելի երրորդին կը կապուի՝ պարոն Մկրտիչեանին աշակերտած ըլլալս:

Գիտէի թէ պարոն Մկրտիչեան Երուսաղէմի Ժառանգաւորացէն ներս աշակերտած է Յակոբ Օշականի. հետեւաբար իրեն աշակերտելով ես ալ կ'ըլլամ՝ Յակոբ Օշականի աշակերտին աշակերտը ... Իրաւունք չունի՞մ հպարտ զգալու:

Պարոն Մկրտիչ Մկրտիչեան... Եռանկիւն գլուխ մը եւ մտածող նայուածք, աւելի՛ քեզ պրպտող նայուածք, մանաւանդ երբ աշակերտ ես, նոր Ճեմարան մտած ես եւ տակաւին միջնակարգի առաջին կարգի աշակերտ ես:

Ինչե՛ր կը պատմէին իր մասին, իր տուած դասերուն մասին, պատմածներուն մասին, ու մանաւանդ այն իրողութեան մասին, որ ինք եղած է աշակերտը մեծն Յակոբ Օշականի, Երուսաղէմի Ժառանգաւորացէն ներս:

Այս վերջին իրողութիւնը շատ կը խանդավառէր զիս, միաժամանակ ակնածանք մը պարտադրելով պարոն Մկրտիչեանին հանդէպ:

Տակաւին մեզի չէր դասաւանդէր, ինք միայն երկրորդականի երեք դասարաններուն հայերէնի եւ հայ գրականութեան դասատուն էր. մենք դեռ երեք տարի կ'ուզէինք վայելելու համար իր այնքա՛ն գովաբանուած դասապահերը:

Բայց երեք տարին երկար էր, շա՛տ երկար ինծի համար, որ նոյնիսկ պարոն Մկրտիչեանին ձայնը չէի լսած տակաւին:

Եւ օր մը, երբ տետրերը թելին տակ սեղմած, մէկ ձեռքին սիկարէթը, գլուխը ձախի վրայ ծռած մանր քայլերով դէպի ուսուցչարան կ'ուղղուէր, ամբողջ քաջութիւնս հաւաքած մօտեցայ իրեն եւ ըսի.

– Կրնա՞մ ձեզի բան մը հարցնել:

Պահ մը կեցաւ, նայեցաւ՝ իր աշակերտներէն մէկը չէի, չէր ճանչնար զիս, հաւանաբար չէր իսկ նշմարած, բայց ըսաւ.

– Այո, անշո՛ւշտ:

– Ի՞նչ կը կոչուի հին եգիպտացիներուն, այսինքն փարաւոններուն խօսած լեզուն...

Ուրկե՞ մտածեր էի այս հարցումը, չեմ գիտեր. ուրիշ բան հարցնել միտքէս չէր անցած: Պարոն Մկրտիչեան ինք ալ կարծես զարմացաւ եւ պահ մը լռեց:

– Փարաւոններէ՞ն, – հարցուցի:

Վստահ եմ որ պատասխան մը տուաւ այդ օրը ինծի, բայց չեմ յիշեր թէ ի՞նչ էր իր պատասխանը իմ այնքան... անճարակ հարցումիս:

Կարելորդ՝ լսեցի պարոն Մկրտիչեանի ձայնը:

Յետոյ շա՛տ պիտի լսէի այդ ձայնը, երբ գրատախտակին առջեւ կեցած եւ ձեռքերը շարժելով բան մը կը բացատրէր. այնքա՛ն լաւ կը բացատրէր, այնքան ճիգ կը թափէր, որ իր ունեցած սերը հայ լեզուին եւ գրականութեան հանդէպ մեզի փոխանցէր...

Բայց տղաքը կը ձանձրանային եւ անշուշտ՝ չէին համարձակեր ընել այն, ինչ որ կ'ընէին այլ ուսուցիչներու դասապահերուն, օրինակ ափ մը մանր

մետաղադրամները, իբր թե անուշադրութեամբ, մեծ թափով գետին թափել, իրար վրայ գնդակուած թուղթեր նետել, աղջիկներուն մագերը քաշել, կամ «հետաքրքրական» նկարներով անոնց ուշադրութիւնը շեղել եւ այլ մանկական խաղեր ընել:

Նոյնիսկ եթէ դասին չհետեւէին, հայերէնի դասապահերուն գոնէ լուռ կը մնային. երբեմն նաեւ բաց աչքերով կը քնանային:

Բայց պարոն Մկրտիչեանին աչքերէն – թէեւ անոնք իրարու հակառակ ուղղութիւններով կը նայէին կարծես – բան չէր փախեր.

– Ետալեան, կը քնանա՞ս:

Եւ Ետալեանը թափով արթնցած, հագիւ կրնար «ո՛չ, պարոն, ձեր ըսածին կը հետեւիմ» ըսել:

– Ըսէ նայինք ըսածես որքա՞ն բան հասկցար:

Խեղճ տղան ի գուր մատով կը հրմշտկէր իր առջեւ նստած Չարուկին կռակը. քիչ առաջ մագերը այնքան ուժգին քաշեր էր, որ Չարուկը խռոված, յամառօրէն կը լռէր:

– Գիտեմ քու լսելդ. նստե՛ եւ դասին հետեւե՛:

Միայն շարադրութեան դասերուն էր, որ տղաքը խանդավառութեամբ իրենց խելապատիկէն ելածները կը գրէին եւ անհամբեր կը սպասէին պարոնին ըսելիքներուն:

– Ետալեան, այս անգամ ո՞վ գրեր է շարադրութիւնդ:

Եւ Ետալեանը, իր ամենէն լուրջ դեմքով կ'ըսէր.

– Մամաս, պարոն, – կապկելով մանուկներուն ձեւը:

Եւ դասարանը կը բռնուէր ինդուքի վարակէ մը:

Օր մը դասարան մտաւ պարոն Մկրտիչեանը եւ ուղղակի Կորիւնը կանչեց կարդալու իր շարադրութիւնը:

Կորիւնը, որ մեր դասարանին եւ կարծեմ ամբողջ Ճեմարանին բանաստեղծն էր եւ որպէս այդպիսին, յատուկ խորհրդաւորութիւն մը կը պահէր իր մտածկոտ լռութեան տակ – յետոյ, շա՛տ ուշ պիտի իմանայի, որ սրտին ցաւէն էր հանդարտութիւնը – գնաց կեցաւ դասարանին առջեւ, դանդաղ-դանդաղ բացաւ տետրակը, պահ մը լռեց ու յետոյ սկսաւ կարդալ.

«Ծով պիտի գաս հեշտանքով,

Ծով հեշտանքով, անխռով,

երազներուս մէջ խռով,

մշտահոլով գորովով»:

Եւ այսպէս յանգաւորուած, չափ ու կշռոյթով քանի մը համար կարդաց ու սպասեց:

Դասարանը լուռ կը սպասէր: Գիտէինք, որ Կորիւնին քերթուածները սկսեր էին երեւիլ «Բագին» ամսագիրին մէջ, բան մը որ մեզ շատ կը տպաւորէր, սակայն տակաւին չէինք լսած կամ կարդացած իր գրածները:

Տպաւորուէր էինք յանգերով եւ կարճ ու արագ կշռոյթով. բոլորս ալ կարծես հաւներ էինք Կորիւնին գրածը:

– Այո... մշտահոլով գորովով... Ծով պիտի գաս հեշտանքով, մշտահոլով գորովով... այո՛, շատ լաւ է...

Ետեւի տղաքը սկսան ծափահարել, սուլել, «բանաստեղծ-մանաստեղծ» կանչել, դասարանը իրար անցաւ, Կորիւնը նախ կարմրեցաւ, ապա սկսաւ ինք ալ խնդալ, մինչ պարոն Մկրտիչեան խիստ լարուած աչքերով կը դիտէր մեզ:

Ի վերջոյ հանդարտեցանք, լռեցինք:

– Պարոն, «շատ լաւ» մը պիտի դնէք Կորիւնին, չէ՞, – ըսաւ Ետալեան իր սովորական համարձակութեամբ:

– Ո՛չ:

– Ինչո՞ւ պարոն...

– Որովհետեւ ասիկա շարադրութիւն չէ՛...

– Բայց բանաստեղծութի՛ն է, – ըսաւ համարձակ Անդօն, – ասիկա գրելը անելի դժուար է, կարծեմ... չէ՞...

– Եթէ այդքանը չես գիտեր, ինչո՞ւ կարծիք կը յայտնես:

– Պարոն, Կորիւնը մեր դասընկերն է, պէտք չէ՞ իր «շատ լաւ»-ը ապահովենք:

– Նախ դուն քու յաջողութեանդ նիշը ապահովէ, – ըսաւ պարոն Մկրտիչեանը եւ դառնալով Կորիւնին, անելցուց, – շատ լաւ է, տղա՛ս, բայց յաջորդին տուած նիւթով շարադրութիւն գրէ՛:

Երբ տրամադրութիւնը լաւ ըլլար, պարոն Մկրտիչեան երբեմն մեզի յուշեր կը պատմէր.

– Կեանքիս մէջ մէկ անգամ միայն լման նիշ դրեր եմ հայերէնի քննութեան, – պատմեց, – Արա Ռոբերեանին. բացառիկ աշակերտ էր. անոնց ամբողջ դասարանը բացառիկ էր. ճեմարանը անգամս ալ չունեցաւ նման դասարան...

Յայերէնի քննութիւններուն ո՛չ միայն հարցումներուն պէտք էր լրիւ ճիշդ պատասխանած ըլլայինք, այլ պէտք էր մեր ուղղագրութիւնը անսխալ ըլլար. այսօր այդպէս չէ դժբախտաբար. *«Պատմութեան քննութեան ինչո՞ւ պէտք է ուղղագրական սխալները նկատի առնուին եւ նիշը պակսի անոնց համար»* յաճախ կը գանգատին ծնողք կամ բարձր դասարանի աշակերտներ:

– Յայրս երեք անգամ սրբագրեց քննութեանդ թուղթը, ես ալ գլխուն վրայ կեցած կը հետեւէի. *«Դի՛ր սա քառասունը, տեսար որ անսխալ է»*, – ըսի: Չդրաւ. *«Անկարելի է, – ըսաւ, – անպայման սխալ մը ըլլալու է»* եւ կրկին սկսաւ սրբագրել թուղթո՞ւ ծայրէ ծայր: Երեք անգամ: Ի վերջոյ, ճարահատ, դրաւ քառասունը, – պատմեց Սեւակ, պարոն Մկրտիչեանին տղան, որ ինձմէ երկու դասարան վար էր: Գիտնալու մի՛ գար, – թելադրեց, – բայց ուրախացար, չէ՞...

Ինչ որ ըսեր, կը հետեւէի, լի ու լի կը կատարէի: Մէկ խրատ միայն, որուն դժբախտաբար չհետեւեցայ եւ շա՛տ ուշ անդրադարձայ, որ սխալեր էի չհետեւելով. թելադրեր էր, որ անգլերէն գրականութեան հետեւիմ...

Այսօր քանի՞ հոգի կը յիշէ մեր սքանչելի պարոն Մկրտիչեանը, որուն վերջին աշակերտները չեմ յիշեր ո՞ր թուականին շրջանաւարտ եղան ճեմարանէն: Պարոն Մկրտիչեան գաղթեց, մօտ ըլլալու համար զաւակներուն, որոնք Ամերիկա գացեր էին: Վստահ եմ, անոր բոլոր աշակերտածները կը կարօտնային զինք, որքան ես:

Լոյսերու մէջ մնայ:

ՊԻՍՏԱԿԻ ՆԱՄԱՇԽԱՐՆԱՅԻՆ ՕՐ



Թեեւ յաճախ կը գանգատինք համացանցին վնասներէն, որոնց առաջինը մեզ մուլի դարձնելն է, իսկ երկրորդը՝ մեր ժամանակը բառացիօրէն ուտելը, հակառակ ասոր, նաեւ մեզմէ անկախ շատ բան կ'իմանանք ու կը սորվինք:

Այլ հարց է, թէ այդ մեր իմացածներն ու սորվածները որքանով օգտակար են մեզի, որքա՞ն կը հարստացնեն մեր ընդհանուր զարգացումը, կամ որքա՞ն կը նպաստեն մեր զարգացման...

Նման նորութիւն մըն էր այն, թէ այսօր՝ 26 Փետրուարը «պիստակի համաշխարհային օր»-ն է: Անշուշտ համաշխարհային այս օրը զանց կ'առնէ յիշել Յալէպը պիստակին կողքին՝ Յալէպի պիստակ, բան մը, որ ամբողջ աշխարհին ծանօթ է որպէս այդ:

Կա՛ն անշուշտ այլ տեսակի պիստակներ, ինչպէս պարսկականը, ամերիկեանը եւ այլն, բայց լաւագոյնն ու համեղը կը մնայ անշուշտ Յալէպի պիստակը, որուն պարտեզները կը գտնուէին Յալէպի շուրջ, յաճախ ձիթենիներուն հետ դրացնութեամբ:

Ի՞նչ եղան արդեօք այդ հին ծառերը, զանո՞նք ալ ձիթենիներուն նման մեր «բարեացակամ դրացիները» առին տարին եւ իրենց հողերուն վրայ վերստին տնկեցին...

Առաջին հանդիպումս պիստակին հետ քեռիս տունն էր, ուր երկու մեծ պարկերով պիստակը եկաւ եւ պատշգամ դրուեցաւ մէկ օր.

– Ինչո՞ւ, մե՛ծ մամ, ինչո՞ւ այդպէս ձգեցիր առանց բանալու:

– Թող քիչ մը կեղեւը կակուղնայ, որ յետոյ մաքրենք:

Յետոյի մաքրելն էր որ շատ զարմացուցեր էր զիս. պարկերը դեռ փակ, ես եւ քեռիս տղաքը ոտքերով, բոպիկ ոտքերով ցատկոտեր-կոխկոտեր էինք պարկը, մինչեւ որ մեծ մամաս «կը բաւէ» պոռացեր էր երրորդ անգամ, երբ առաջին երկուքին չէինք անսացեր:

Յետոյ պարկը բացեր էր եւ ըսեր.

– Յիմա մաքրեցէ՛ք:

Այդ մաքրելը չէինք սիրած. մէկիկ-մէկիկ պիտի զատէինք պիստակները իրենց կարմիր կեղեւներէն. մատներս սկսեր էին ցաւիլ ու սեւնալ. ցաւէն աւելի սեւցած մատներս չէի սիրեր ու մտահոգ էի.

– Մե՛ծ մամ, աս սեւը կ'անցնի՞:

– Է քանի մը օրէն կ'անցնի:

Յետոյ մեծ մամաս աղ-ջուրը պատրաստեր էր, մաքրուած

պիստակները մեջը դրեր էր եւ յաջորդ օրը բաց մեծ ափսեւներով շարեր էր պատշգամը:

Եթէ հաճելի ըլլար այդ աղի եւ խոնաւ պիստակը ուտել, կարծեմ միւս ցեղացիները բան պիտի չմտային. բայց համով չէր, թէ՛ շատ աղի էր, թէ՛ շատ թաց:

Երբ Փարիզ, հօրեղբօրս գացեր էի գարնան մը, հետս թարմ պիստակ տարեր էի: Որքան յուզուեր էր այդ կարմիր կեղեւով պիստակները տեսնելով.

- Գիտե՞ս քանի տարի է չեմ տեսած կեղեւով պիստակ:

Յետոյ մեծ թռչան կը բացատրէր.

- Տե՛ս ինչ հրաշք բան է՝ վրան այս կարմիր կեղեւը կայ, որուն տակ կարծր, փայտե կեղեւն է. անոր մէջ պիստակն է, որուն վրայ բարակ մութ կարմիր մաշկ մը կայ, զոր երբ կեղուես, այն ատեն կը հասնիս պիստակին...

- Ես ալ կը մտածէի թէ այս կարմիրը ինչպէ՞ս կրնայ պիստակին փխթաշ գոյնը ըլլալ,- ըսաւ հօրեղբօրս թռչանկը,- իրապէ՛ս հրաշք է:

Տակաւին Յալէպի պիստակին համը, կարծես արեւը դեռ իր վրայ ինկած է, քաղցրաւուն երանգը համին եւ իւղոտութիւնը: Միւս ուրիշ տեսակներ կը կռնծին չորնալով, Յալէպի պիստակը արտաքին չորութեան տակ կը շարունակէ պահել ներքին թարմութիւնը:

Ամերիկացիները, որոնք շատ կը սիրեն ամէն առիթի փինոքիոյութիւն խաղալ (երկար քիթը ամէն բանի մէջ մտցնել), հոս ալ իրենց խօսքը ըսեր են: Եղեր ժամանակին ԱՄՆ-ի մէջ ծախուած պիստակը փոխանակ իր բնական գոյնին, կարմիր ներկուած կը ծախուեր, որպէսզի գայն քաղելու ընթացքին կրած վնասները յստակօրէն տեսանելի չըլլային գնորդներուն համար. Աստուած գիտէ թէ ի՞նչ ձեւերով կը քաղէին, որ այդքան կը վնասուեր փայտեայ կեղեւը:

Նոյնիսկ միութիւն մըն ալ կայ ԱՄՆ-ի մէջ՝ American Pistachio Growers, որ 1980-էն ետք սկսեր է պիստակի ցանքին. այդ թուականէն առաջ Պարսկաստանէն եւ «Միջին Արեւելեան ուրիշ երկրէ մը», չըսելու համար Սուրիայէն... կը ներմուծէին եղեր:

Սուրիոյ նոյնիսկ անունը կ'ուզեն վերցնել, երբ ամբողջ աշխարհին համար այդ պիստակը «Յալէպի պիստակ» է ու կը մնայ անառարկելիօրէն:

ՍՈՒՐՃ



Կար ժամանակ, երբ աչքերս կը բանայի եփուող սուրճի հոտին խտղտումեն. պատրաստողը օտար մարդ չէր, հեռաւոր Փարիզի մէջ զարմուհիս էր՝ հօրեղբօրս աղջիկը, որուն առաջին գործը արթննալէն ետք, սուրճը դնելն էր. ճիշդ հօրս պէս:

Հայրս սուրճ շատ կը սիրէր, բոլորին նման. եւ կը խմէր *առ-ռիհա*, արաբերէն՝ հոտին վրայ, այսինքն շաքարը հազիւ կայ-չկայի չափով. անշուշտ կային մազպուլթը, սուքքար զիյատան եւ սատան, բայց հայրս իր սուրճը կ'ուզէր ճշգրիտ *առ-ռիհա*. Ինչպէ՞ս կրնաս սակայն *առ-ռիհան* ընել ճշգրիտ, ինչպէ՞ս կրնաս հոտին վրայ զգացուող համ մը ճշգրիտ կերպով չափել. եւ մօրս եփած սուրճը կ'ըլլար միշտ անհամ՝ «*շաքարին չափը փախցուցեր ես*», այսինքն՝ շաքարը շատ է, կամ «*նորէն անպակ ըրեր ես*» այսինքն քիչ է:

Հայրս այնքան դժգոհութիւն յայտնեց, որ օր մըն ալ մայրս ըմբոստացած որոշեց.

– Ասկէ ետք դո՛ւն քու սուրճդ պատրաստէ՛, ինչպէս որ կ'ուզես. ես սուրճ եփել չեմ գիտեր:

Որքան որ ետ երթամ յիշողութիւններուս մէջ, միշտ հայրս էր մեր տան սուրճը պատրաստողը. ամէն խմող կը գովէր:

– Քու սուրճդ իրաւ տարբեր է, փեսայ՝ Յովհաննէս, – կ'ըսէր մօրս քեռկինը:

Հայրս յատուկ ծիսակատարութիւն ունէր սուրճ պատրաստելու. կը դնէր ջուրը սրճեփին մէջ, մե՛ծ ուշադրութեամբ կը չափէր նախ շաքարը, կարծես շաքարին հատիկները համրելով, խնամքով կը չափէր սուրճը իր յատուկ դգալով, կը դնէր սրճեփը կրակին ու կը սպասէր մինչեւ եռալը: Երբ սուրճը սկսէր եռալ, կը մեղմացներ կրակը եւ որոշ ռիթմով մը կը քալէր խոհանոցէն մինչեւ պատշգամ: Յետոյ ետ կը դառնար մինչեւ խոհանոց, կը մարէր սուրճին տակը, կը լեցնէր ի՛ր բաժակին մէջ եւ ետ կ'երթար մինչեւ պատշգամ, այս անգամ քանի մը քայլին կենալով եւ ֆրթըցնելով ու երբ հասներ պատշգամ... սուրճը գրեթէ վերջացած կ'ըլլար: Բայց կը նստէր, մինչեւ մրուրը կը խմէր սուրճը այնպիսի երջանկութեամբ, որ կը հաւատայի թէ «*առաւօտեան սուրճը տարբեր է*»:

Տարիներ ետք հայրս շաքարախտ ունեցաւ, սկսաւ սուրճը *սատա* խմել, բայց շարունակեց ինք պատրաստել իր սուրճը, այս անգամ շաքարին փոխարէն աւելի ուշադրութեամբ չափելով եռալու պահը:

Երբ պսակուեցայ, առաջին առաւօտը կանուխ ելայ եւ սուրճ պատրաստեցի. սուրճի զոյգ մը գեղեցիկ գաւաթ ունէի,

գաւաթակալներով, սրճեփով եւ ափսեով, ճիշդ նորապսակներու յարմար բան:

- Ելի՛ր սուրճ խմենք,- քնքշանքով ըսի նոր ամուսինիս, որ տակաւին կը քնանար:

Կ'երեւի պետք չէր արթնցնելի զինք. կամ սպասէի, որ ինք խնդրեր ու յետոյ պատրաստէի, որովհետեւ սուրճն ալ, ուրիշ շատ բաներու նման, երբ կը հրամցուի, անարժէք կը դառնայ, պետք է մէկը ուզէ, փափաքի, ցանկայ եւ յետոյ միայն ստանայ...

Նոր ամուսինս մէկ աչքը բացաւ եւ պարզօրէն ըսաւ.

- Ես առտուները սուրճ չեմ խմեր:

Է ես ալ չէի խմեր, մայրս ալ առտուները սուրճ չէր խմեր. բայց ընկերուհիներես եւ շատ հալէպցիներէ լսեր էի, որ *«առտուան սուրճը ուրիշ է. պալգոնը կը նստիս զով օդին, ալլա՛, սուրճին հոտը... մինչեւ իրիկուն տասը սուրճ կը խմեմ, բայց չէ՛, առտուան սուրճը ուրիշ է»*: Ես ալ կ'ուզէի առաւօտեան սուրճի աւանդոյթ մը ստեղծել եւ զով օդով վայելել՝ ալլա՛...

Չեղաւ: Չախողեցայ:

Այսօր ամբողջ աշխարհի վրայ մարդիկ սուրճ կը խմեն. բայց ամէն երկիր, քաղաք, նոյնիսկ ամէն գիւղ սուրճի իր աւանդութիւնները ունի:

Հալէպի մէջ սուրճը ո՛չ թէ պատրաստելու, այլ խմելու յատուկ ձեւ կայ, մանաւանդ կիներուն համար: Սուրճը կը հրամցուի փոքրիկ գաւաթներով, որոնք իրենց տակի պնակները ունին. հալէպցի կինը կրնայ մէկ ձեռքով բռնել թէ՛ սուրճին ամանը, թէ՛ գաւաթը՝ ամանը կը հանգչեցնէ մատնեմատին եւ միջնեմատին միջեւ, իսկ գաւաթը կը բռնէ ականջիկէն բթամատով եւ ցուցամատով:

Հայաստանի անկախութենէն ետք, երբ հայաստանցի կիներ սկսան Հալէպ գալ ապրանք գնել-տանիլ ծախելու համար, ապշած էին խմելու այդ ձեւը դիտելով. շատեր նոյնիսկ փորձած էին.

- Քանի քանի՛ անգամ տաք սուրճը վրաս լցրել եմ, որովհետեւ փորձում էի եղպես պահել գաւաթն ու ափսեւ...

Ուրիշ տեղ չեմ հանդիպած նման ձեւով սուրճի գաւաթ բռնելուն:

Հալէպցի կիները հաւատացած են նաեւ, որ սուրճը շատ օգտակար է մանուկներուն, թէեւ ոչ ոք կրցած է ըսել, թէ ի՛նչ է այդ օգտակարութիւնը. յաճախ կը լեցնէին սուրճը ամանին մէջ, որ «տաք չըլլայ, չոճուխին բերանը չայրի» եւ կը խմցնէին երկու-երեք տարեկան իրենց թոռներուն:

- Ճանըմ, համով իսկ չէ,- կ'ըսեր սուրճ չսիրող մայրս:

- Չէ քա, տիկին՝ն Արուսեակ, չոճուխը շատ կը սիրէ...

Մեծ քեռկինը՝ մարթխալօ Նուարդը, որուն յաճախ կ'երթայինք, մէկ անգամ կարծեմ այդ ձեւով ինծի ալ սուրճ խմցուց. պղտոր կերպով կը յիշեմ, որ մայրս սաստեց տարիքով իրմէ բաւական մեծ կինը եւ խստօրէն արգիլեց նման բան ընել:

- Լաւ, լաւ, չեմ տար,- ըսաւ մարթխալօ Նուարդը:

Կը յիշեմ գլանաձեւ սեփ-սեւ բովիչը, որուն լայն կողմը դռնակ մը կար, ուրկէ կը լեցուէին սուրճին հատիկները, իսկ հատուածին կողմէն երկաթեայ բռնակ մը, որ կը դարձներ երկու ոտքերու վրայ հանգչած ու կրակին դրուած գլանը. հատիկներուն ձայնը ու մանաւանդ անոնց բոյրը շատ խորհրդաւոր կը թուէին ինծի, ու կը հասկնայի թէ ինչո՞ւ կ'ինէրը այդքան շատ կը սիրեն սուրճը:

- Առտուն եթէ սուրճ չխմեմ, խելքս գլուխս չի գար,- կ'ըսէին:

Սուրճի փոքր գաւաթներուն շուրջ կը փսփսացուէին ամենէն վտանգաւոր գաղտնիքները, կը պատմուէին ամենէն ծանր ցաւերը, եւ կը լռէին ամենէն խորունկ լռութիւններով: Սուրճը կարծես իր բոյրով այնպիսի մթնոլորտ մը կը ստեղծէր, որ կը ստիպէր քեզ ըլլալ անկեղծ, մտերիմ եւ քիչ մըն ալ շատախօս:

Սուրճը կարելի չէ միևնակ խմել:

Տակաւին մենք, մասնագետ սուրճ խմող հալեացիներս, քանի մը տեսակ սուրճ ունինք՝ «բարի եկաքի սուրճ»-ը, որ բոլոր հիւրասիրութիւններէն առաջ կը հրամցուի, «երթաք բարիի սուրճ»-ը, որ կը հրամցուի՝ մարսելու համար բոլոր կերուածները, յետմիջօրէի մրափէն ետքի սուրճը եւ անշուշտ՝ առաւօտեան առաջին սուրճը, որ անփոխարինելի է: Սովորական երեւոյթ է ըսել՝ «Սուրճը դի՛ր, կու գամ կոր»...

Կը յիշեմ Չապել Եսայեանի «Սիլիհտարի Պարտեզները», ուր կը խօսի մարդոց, հովերու եւ սուրճի մասին:

«Բացի հայրիկէս, որ օրուան ամէն ժամերուն եւ նոյնիսկ ծանր հոգերուն տակ ճնշուած միշտ լաւ տրամադրութեան մէջ էր, մեր տնեցիները թիրեաքի էին: Սա այնպիսի ախտ մըն էր, որ անխուսափելիօրէն կը յայտնուէր ամէն առաւօտ ոչ միայն մեր տան մէջ, այլեւ բոլոր այն տունները, ուր տարեց մարդիկ կային: Մեծ մայրս, մօրաքոյրերս եւ մօրեղբայրներս առաւօտ կանուխ իրենց անկողիներէն կ'ելլէին խոժոռ եւ սրտնեղած դէմքերով, կարծես վշտացած էին կամ մխրճուած անյարթելի տխրութեան մէջ: Անոնք անխօս, յօնքերը պոստած կը խմէին իրենց առաջին քաֆէն, առանց շաքարի եւ հացի: Եթէ այդ միջոցին մէկը իրենց խօսք ուղղէր,

սրտնեղութիւնը կը հասներ ծայրայեղ աստիճանի: Երկրորդ սատե քաֆէն յետոյ է միայն որ մօրաքոյրերս, միշտ խոժոռ դէմքերով, կը փոխանակէին միավանկեր: Մօրեղբայրներս տունէն դուրս կը սպրդէին սրդողած մարդոց պէս, իսկ մեծ մայրս իր երրորդ քաֆէն կը խմէր, այս անգամ շաքարով եւ պատառ մը հացով, որմէ յետոյ կը հագուէր, գլուխը կը ծածկէր սեւ շալով եւ կ'երթար եկեղեցի, ուր իր մունջ շրթները կը բացուէին առաջին անգամ աղօթելու համար խորանին առաջ»:

«Բայց եթէ լոտոս (հարաւային քամի) ըլլար, այդ վատ տրամադրութիւնը կ'երկարաձգուէր օրուան մէջ: Երկարատեն չես կրցած հասկնալ, թէ ի՞նչպէս այս կամ այն կողմէն փչող քամին կրնայ այդքան խոր կերպով ազդել մարդոց տրամադրութեան վրայ: Երբ մէկն ու մէկը կ'ըսէր տհաճ ձայնով «այսօր լոտոս է», ինձ համար յոյսի բոլոր դռները կը փակուէին, տունը կ'ըլլար խորթ եւ անհիւրընկալ, ինձ սիրելի եւ ընտանի դէմքերը կը դառնային օտար եւ անճանաչելի եւ այլեւս չէի գիտեր ո՞ր անկիւնը ապաստանիլ իմ մէջ եւ ինձմով գտնելու համար սփոփանք՝ գալիք ծանր ժամերուն դէմ»:

Ինչպէ՞ս կրնայ այսքան պարզ ըմպելի մը այսքան տարողունակ ըլլալ, այսքան մեծ տեղ գրաւել մարդոց առօրեային մէջ:

Գաւաթը փոքր է, այսինքն շատ ժամանակ պիտի չխլէ զայն խմելը, հետեւաբար այդ կարճ միջոցին մէջ կարելի է ամբողջութեամբ թօթափել հոգերը եւ, գոնէ փոքր պահ մը, կատարեալ հանգիստ վայելել, գործի տաղտուկէն ձերբազատուած. անշուշտ՝ սուրճին օգնութեամբ:

Աշխատանքի ընթացքին սուրճի դադարներու երկարելուն հետ, սուրճի գաւաթներն ալ մեծցան եւ սուրճը ինք տարբեր զգեստներ սկսաւ հագնիլ՝ կաթով, տարբեր համերու յաւելումներով եւ դադրեցաւ... սուրճ ըլլալէ, եղաւ՝ *քոֆէ*:

Կ'ըսեն թէ գինին ընկերային խմիչք է, իսկ թէյը՝ առանձնութեան խմիչք: Հապա սո՞ւրճը...

Սուրճը այն մոգական խմիչքն է, որ կրնայ ինքզինք յարմարեցնել տրամադրութեանդ, ուրա՞խ ես՝ «նախ սուրճ մը խմենք այս ուրախութիւնը մարսելու համար», տխո՞ւր ես՝ «սուրճ մը դիր տէ ինքզինքս գտնեմ», տագնապահա՞ր ես՝ «սուրճ մը խմեմ, թերեւս հանգստանամ», անճրկե՞ր ես՝ «սուրճ մը խմէ, խելքդ կը սկսի աշխատիլ» եւ անշուշտ՝ առաւօտեան անփոխարինելի, «սրբացած» սուրճը՝ «նախ սուրճս խմեմ, որ օրս լաւ սկսի»:



**ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ
ՄԵՐ ՔԱՂԱՔԷՆ
ՌՈՒՔԷՆ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ**

Մեծ թիւով դիմանկարներ գրած եմ, նախ Հալէպէն, ապա՝
Գահիրէէն, որովհետեւ համոզուած եմ, որ կա՛ն մարդիկ, որոնք
կարելոք մէկ գոյնը կամ գիծը կը կազմեն գաղութի մը. զանոնք
բացայայտելը, անոնց դիմանկարները բառերով ուրուագծելը
մանրամասնութիւն մը կ'աւելցնէ գաղութի մը դիմագիծին վրայ:
Այդպէս են Թորոս Թորանեանը, Ռուբէն Պարսումեանը եւ անշուշտ՝
Տիկին Փառանձեմը:

ՊԱՐՈՆ ՌՈՒԲԵՆԸ

Կար ժամանակ, երբ պարոն Ռուբէն մեր քաղաքի երկու
բեմադրիչներէն մէկն էր. թերեւս ալ կարճ (արդեօ՞ք երկար) ժամանակի մը
համար՝ միակը. եւ ոչ միայն բեմադրիչ. ունէր ի՛ր խումբը եւ կը բեմադրէր
ի՛ր հաւնած, սիրած, գնահատած եւ պաշտած միակ հեղինակը՝
Պարոնեան, Յակոբ Պարոնեան:

Եւ այնքան հաւնած, սիրած, գնահատած ու պաշտած է Պարոնեանը,
որ ուսումնասիրութիւն մըն ալ նուիրած է անոր:

Սակայն պարոն Ռուբէն ինչի՛ ալ նուիրուի, կը նուիրուի անմնացորդ.
Եւ ինչպէս բոլոր անոնք, որոնք հիմնական կրթութեան պակասի մը ցաւը
միշտ կ'ապրին, պարոն Ռուբէն ինք եւս կ'երթայ մինչեւ ծայրը իր սիրած
եւ ընտրած նիւթին:

Այդ նիւթը ժամանակին թատրոնն էր եւ Պարոնեանը, Յակոբ
Պարոնեանը:

Այսօր ուրիշ է պարոն Ռուբէնին սիրոյն եւ գուրգուրանքին առարկան,
որ վերջին տարիներուն գրաւեր է իր միտքը, հոգին եւ... գրպանը:

Սքանչելի հաւաքածոյ մը ունի հայկական հին պղնձեղէնի՝ կոնքեր,
թասեր, ճաշամաններ, բաղնիքի ամաններ, սուրեր, թանաքամաններ,
զանգակներ եւ... պղնձագործներու գործիքներ:

– Հինգ սերունդ պղնձագործ եղեր ենք, այո՛,– կ'ըսէ շատ յստակ
հպարտութեամբ,– մեծ մայրս պղնձագործներու երրորդ սերունդի դուստր
եղած է. յետոյ արհեստը անցած է հօրս՝ Աւետիսեաններու փեսայ Վարդաթ
Պարսումեանին, այո՛...:

Եւ այնպիսի մանրամասնութիւններ կը պատմէ որ...:

Պղնձագործութիւնը ուսումնասիրող դոկտորականի թեկնածու մը
պիտի չկարենար հաւաքած ըլլալ այսքան տեղեկութիւն, այսքան իր ու
գործիք, պիտի չգիտնար արհեստէն այսքան գաղտնիք:

Քաղաքս այցելող ամէն նշանաւոր հայ անպայմա՛ն պիտի այցելէ
պարոն Պարսումեանի տունն ու խանութը: Եթէ ժամանակ չունի՝ գոնէ
միայն տունը:

Տո՛ւն է, թանգարա՞ն, թե՞ գրադարան:

Տան բոլոր սենեակները գիրքերով նուաճուած են. նստասենեակին եւ
հիւրասենեակին մէջ՝ գրադարաններ, ննջարաններուն մէջ,
անկողիներուն տակ սնտուկներով գիրքեր, իսկ խոհանոցը,
պահարաններուն վրայ նոյնքան սնտուկներով գիրքեր:

– Անշուշտ ամեն մեկ գիրքին տեղը գոց գիտեմ, այո՛...

Փնտռած մեկ գիրքդ յաճախ պարոն Ռուբենին քովեն կը գտնես. սիրայօժար կը տրամադրե, անշուշտ եթէ վստահ ըլլայ, որ պիտի... չգողնաս:

Սուրճ մը խմելէ ետք, պարոն Ռուբեն կը սկսի իր գանձերը մեկիկ-մեկիկ ցուցադրել, իւրաքանչիւրին մասին լայն ու երկայն տեղեկութիւններ տալ եւ յետոյ անմիջապէս անցնիլ զայն ձեռք ձգելու պատմութեան:

Այս բոլորին մէջ դուն միայն շունչ կ'առնես, պարոն Ռուբեն միայն կը խօսի. դուն միայն մտիկ կ'ընես, պարոն Ռուբեն միայն կը խօսի. նոյնիսկ գնահատանքդ արտայայտելու բառ չես գտներ, որովհետեւ բոլոր բառերը պարոն Ռուբեն ինք գործածեր է արդէն:

Յետոյ տունէն դուրս կ'ելլես ու կը զգաս, որ կուրծքդ սեղմուեր էր, բոլոր գիրքերն ու պղինձները թոքերուդ չոքած, շունչդ առեր են, որ իրենք շնչեն գոնէ կարճ պահ մը, երբ դուրս եկեր են իրենց պահստոցներէն:

Երբ բարկացած է, աչքերը շա՛տ լայն կը բանայ, ամեն վայրկեան խօսակիցը alert վիճակի մէջ պահելով՝ որպէսզի եթէ յանկարծ ակնագունդերը դուրս թռին, անմիջապէս բռնէ զանոնք, կամ՝ ետ տեղը հրէ...

Երբ խանդավառ է, դարձեալ աչքերը շա՛տ լայն կը բանայ, այնքան, որ խօսակիցը պահ մը, երկա՛ր պահ մը կը կարծէ թէ... բարկացեր է.

– Այո՛. այդ կինը եկաւ, բերած վզնոցին 150 ոսկի տուի, չտուաւ, գնաց: Յետոյ այնպէ՛ս նեղուեցայ, որ քիչ մը անելի չէի տուած...

Կես կը ձգէ պատմութիւնը, կը վազէ ներս, կը բերէ մետաղեայ կլոր, հին տուփ մը, գուրգուրանքով կը բանայ եւ կը հանէ վզնոցը՝ կապոյտ ուլունքներու շարոց մը, երեք տեղ ընդմիջուած:

– Ահա՛, ասիկա ձեռք մըն է կապոյտ քարը վրան. ասիկա՝ գայլի ակռայ, մէջտեղէն արծաթեայ գօտի մը կայ ու տակը՝ տերեւիկներ. այս ալ՝ կոտոշաւոր օծի գլուխ: Այո՛: Գնաց: Աղօթեցի: Այո՛, ե՛ս, աղօթեցի որ ետ գայ: Երկու շաբաթ ետք եկաւ, «քիչ մը անւելցո՛ւր» ըսաւ: Աւելցուցի, առի, այո, ահա՛...

Գայլի ակռան եւ կոտոշաւոր օծի գլուխը (թէեւ հազիւ 1 սմ. լայնքով եւ 2 սմ. հասակով) հետաքրքրութեամբ եւ ահով կը լեցնեն լսող-դիտողները: Պարոն Ռուբենին հրճուանքը կ'անելնայ:

Դեռ յագեցուցած չենք ըլլար մեր հետաքրքրութիւնը, երբ պարոն Ռուբեն կրկին ներս կը վազէ եւ կը բերէ մետաղէ (պղի՞նձ, անա՞գ) թաս մը.

«Ո՞վ կ'ըսէ թէ այս թասը մետաղի մեկ շերտով շինուած է. վարպետը նախ այս ութանկիւնը կազմած է, յետոյ զայն կամաց-կամաց հաւաքած մինչեւ այս մեկ սանթիմը. դիւրին գործ չէ. այս թասը մինչեւ ասարտիլը հարիւր անգամ կրակը մտած ըլլալու է: Այո՛, կը տեսնե՞ք այս համաչափութիւնը...»:

Առաջին անգամ տեսնողը կարծեք մենք չենք, այլ ինք, այնքան մեծ է

հիացումը թասը շինող վարպետին, յափշտակութիւնը անոր համաչափութեամբ եւ գեղեցկութեամբ:

– Այո՛: Այս բաները եթէ չըսեսք ու չպատմեսք երիտասարդներուն, կը մոռցուին, պատմող չըլլար: Զիմա որ այդ գիրքս լոյս պիտի տեսնէ, այո՛, բաւական բան փրկուած կ'ըլլայ. հազար էջէ կը բաղկանայ, եւ երեքհարիւր լուսանկար կ'ընդգրկէ:

Կրկին ներս կը վազէ (բայց արդէն քիչ մը աւելի դանդաղ) եւ կը բերէ նկարներուն ալպոմը.

– Ահա՛ այդ թասը շինող վարպետը՝ Յարութիւն Պերպերեան... կը տեսնէ՞ք այս ջրամանը, նախշուն ափսէ մը շինուած է...

– Բայց ինչո՞ւ որեւէ մէկը պիտի ուզէ նախշուն ափսէ մը ջրամանի վերածել... եւ ինչպէ՞ս նախշերը չեն աւրուած...

– Չեն աւրուած, անշուշտ, փայտէ մուրճերով, թոխմախներով աշխատուած ըլլալուն, վարպետութեան ցուցադրութիւն, այո՛... կը տեսնէ՞ս, երեք հազար տոլար տուին, չտուի, թէեւ շատ նեղն էի...

– Մէյ մը որ այդ գիրքը հրատարակուի, ա՛լ կրնաք ամբողջ ձեր հաւաքածոն ծախել, չէ՞...

Զարցումս չի լսեր. սիրտը տրոփ մը փախցուցած ըլլալու է: Ընտանիքին անդամները երեսս կը նային ու լուռ կը խնդրեն՝ համոզէ՛ զինք, համոզէ՛...

Բայց պարոն Ռուբէն չի լսեր. կը դարձնէ ալպոմին էջերը, կանգ կ'առնէ կրակարաններու նկարներուն էջին (մանդալ չէ՞ն), ցոյց կու տայ անսովոր ձեւով հատ մը եւ կ'ըսէ.

– Կը տեսնէ՞ք այս մէկը. երկու օր առաջ ասկէ շա՛տ աւելի գեղեցիկ հատ մը ձեռքս անցաւ. երեսուն հազարի գնեցի:

– Գնեցի՞ր, – պարոն Ռուբէնին մեղմաձայն ու քաղցրախօս կիներ՝ տիկին Մարին կը տագնապի:

– Այո՛, – չի նայիր իսկ կնոջ կողմը, – իսկ այս մէկը...

Տիկին Մարին տագնապով կը դառնայ աղջկան.

– Դուն լուր ունեի՞ր ասկէ:

– Ո՛չ:

– Դո՞ւն, – կը դառնայ տղուն:

– Ո՛չ:

Ծանր, անհամ լռութիւնը մեր շնչառութիւնը կը նեղէ: Բայց պարոն Ռուբէն եռանդով կը շարունակէ.

– Տեսէ՛ք այս դոյլերը, իրարմէ այնքա՛ն տարբեր. ամէն գաւառ ի՛րը ունէր, ասիկա Այնթապի դոյլն է, այս՝ Ուրֆայի...

Կնոջ դէմքը կը փակուի բարկութեա՞մբ թէ ձանձրոյթով. քանի՛ անգամ լսած ըլլալու է այս նոյն պատմութիւնները:

– Մէյ մը որ ձեր գիրքը հրատարակուի, – կ'ըսեմ եւ կը սպասեմ, որ ծախելու մասին խօսք մը ըսէ, բայց պարոն Ռուբէն լուռ կը մնայ:

– Գիտեմ, ասուք ծախելը եղունգները քաշել-հանելու պես բան մըն է, չէ՞...

Դարձեալ լուռ կը մնայ: Ճարահատ նիւթը կը փոխեմ:

– Այն ատեն կ’անցնիք «Յալէպահայ թատրոնի պատմութիւն»-ը գրելու, չէ՞:

– Անկէ առաջ ուրիշ գործ մը ունիմ. չորս հարիւր էջ, «Պաղտասար Աղբար»-ին նուիրուած, որ արդէն ընդունուած բան է Հայաստանի մէջ: Երբ Հախվերտեանց եկաւ, ըսի-պատմեցի իրեն: Մարդը մտիկ ըրա՛ւ, գլուխը շարժե՛ց, յետոյ ըսաւ, – Դու գիտե՛ս թէ ինչ ես անում, – Ի՞նչ, պարոն Հախվերտեան, – Դու լեփ-լեցուն մի գաւաթ դեռ լցնում ես, – Ի՞նչ կայ որ, ըսի, շուրջը մոմ քաշէ, – դարձաւ իրեններուն, – Տեսա՞ք թէ ի՛նչ մակագրութեամբ գիրք ստացայ, – եւ վերջին գիրքս, զոր մակագրեր էի իրեն, երկարեց տղուն:

– Նախ գիրքը տեսնեմ, յետոյ՝ մակագրութիւնը, – տղան միշտ en garde, միշտ անգլիացիի պէս զուսպ, – հայրիկս ալ նման մակագրութիւններով կ’ուրախանայ, տուր տեսնեմ..., – եւ կարդաց՝ *«Սիրելի պարոն Ռուբէնին, որ ո՛չ միայն մեր ժողովրդային մշակոյթին պահապաններէն մէկն է, այլ նաեւ Հալէպիս համ ու հոտ տուողներէն մին»:*

– Անշո՛ւշտ կ’ուրախանայ, ի վերջոյ մակագրութիւն մը իր գործին ձեւով մը անցագիր տուող խօսք է...

Պարոն Ռուբէն, հաւանաբար իր գործին բերումով, շատ իրապաշտ մարդ է, շատ գործնական (– Երանի՛ տան հարցերուն մէջ իրապաշտ ու գործնական ըլլար, – կը փսփսայ կիւնը): Երբ Եկաւեան գրադարանը անպաշտօն կերպով բացուեցաւ (բացումը այնքա՛ն պաշտօնական պիտի ըլլայ, որ բացման արարողութիւններուն ծրագրումը դեռ չէ վերջացած), պարոն Ռուբէն ի սրտէ ավստասեք ապրեցաւ, որ այդ շքեղ գրադարանը մարդ չի մտներ-ելլեր (անշուշտ միակ պաշտօնեան «մարդ» չի համարուիր, չէ՞... քաւ լիցի, ըսել կ’ուզեմ՝ մտնող-ելլող մարդ...) եւ երկար-բարակ մտմտութե տոք, բան մը խորհեցաւ՝ շաբաթական հանդիպումներ կազմակերպել այնտեղ, մտաւորականներ հրաւիրել եւ կառոյցին իմաստ ու աշխոյժ ներարկել: Մարդ հարցնէ՝ բայց պարոն Ռուբէն, քեզի ուրկէ՞ այսքան եռանդ եւ աշխուժութիւն:

Այս խնդիրը սակայն գլուխ չէլաւ. իրաւ մտաւորականները ուզեցին որ իրենց «անձնական» իրաւեր հասնի, «անթեթաւոր» թուղթի վրայ, եւ որովհետեւ այդ թուղթերը դեռ պատրաստ չէին ու հրաւերները ուշացան, այդ «իրաւ» մտաւորականները չգացին հաւաքներուն: Իսկ «ան-իրաւ» մտաւորականները, անիրաւ են, չէ՞...

Պարոն Ռուբէն, որ յուսահատութեան ի՛նչ ըլլալը չէ գիտցած ամբողջ կեանքին ընթացքին, այս անգամ ալ չյուսահատեցաւ. դարձաւ դէպի երիտասարդները, որոնց քով իրաւի-անիրաւի հարցեր դեռ չկան: Եւ հիմա իր ամբողջ եռանդը ի գործ դրած, երիտասարդ անդամներ կը հաւաքէ

այդ շաբաթական հանդիպումներուն համար:

Ի՞նչ պիտի ընեն... դեռ չէ մտածած, բայց անպայման կ'ընեն, անպայման բա՛ն մը կ'ընեն. կարելորդ՝ երիտասարդներ են, անոնք են մեր ապագան...

– Տարիներու այս աշխատանքս հիացումի արդիւնք է, – կ'ըսէ պրն. Պարսումեան, – հիացում հայերուն եւ անոնց աշխատանքներուն հանդէպ...:

Այս վիզը տակը մնալիք հիացումն է արդէն գինք քանդողը.

– Անոնք կ'առնէ կը ծախէ՞, – կը հարցնէ պրն. Պարսումեանին նոր ծանօթացած Յրակը:

– Չէ, – կ'ըսեմ, – չի ծախեր, միայն ինքզինք կը համոզէ, որ օր մը պիտի ծախէ: Իսկ տիկին Մարիին համոզեր է, որ երբ գիրքը տպուի, բոլորը պիտի ծախէ, մէկ հատ իսկ պիտի չծագէ, այն ատեն գնա՛ ուզածիդ պէս տունը մաքրէ՛, – կ'ըսէ գանգատող տիկ. Մարիին:


Պրն. Պարսումեան ընդհանրապէս չի խօսիր իր չորս հազար գիրքերուն մասին, որովհետեւ տարուած կ'ըլլայ իր պղնձեղէնով, եւ որքան տարուի, այնքան եռանդուն կը դառնայ խօսքը, այնքան կը բորբոքի յիշողութիւնը՝ անուններ, թուականներ, մէջ ընդ մէջ նաեւ «ես այսքան անուն հաւաքած եմ», «ես այնքան կնիք հաւաքած եմ», կ'ըսէ:

Պրն. Պարսումեանին կիրքի համազօր այս սերը տխուր երանգ մըն ալ ունի՝ սորվելու մարմաջը, կամ՝ այդ մարմաջին անկատար մնացած ըլլալու իրողութիւնը: Բայց այդ տխրութիւնը ինքնակեղեքումի չէ տարած, այլ ճիշդ հակառակը՝ աւելի ու աւելի սորվելու, իր սիրած մասնագիտութեան մէջ աւելի ու աւելի խորանալու մղած է գինք:


Բոլոր անոնք, եւ շեշտը «բոլոր»-ին վրայ, որոնք առաջին անգամ կը մտնեն պարոն Ռուբէնի տունը, վկայական ամենելու պէս գոյգ մը մետալ կը ստանան, «որպէս յիշատակ»: Խորհրդային Յայաստանի թողարկած գանազան մետալներէն՝ Մայր Յայաստան, Ը. Ազնաւուր եւ այլն: Միշտ ալ ինծի համար հարց դարձած է, թէ պարոն Ռուբէն որքա՞ն մեծ թիւ մը ունի այդ մետալներէն... որ կը նուիրէ՛, կը նուիրէ՛, բայց անոնք չեն վերջանար:

Պարոն Պարսումեան միտքիս մէջ անջնջելիօրէն կը մնայ որպէս վաւերական տիպար մը հալէպցիի՝ դժուար ճամբաներով հասած ու բարձրացած այնպիսի փուլի մը, ուր քիչեր պիտի կարենային հասնիլ եւ ուր հասնելու համար պէտք է ունենալ պարոն Ռուբէնի անհատնում հիացումը ժողովրդային արուեստներուն, իր անկոտրում կամքն ու աշխատասիրութիւնը եւ անխախտելի հաւատքը իր գործին հանդէպ, ճիշդ խաչքար տաշողի մը նման, որուն գործը քար տաշելը չէ, այլ՝ խաչքար ստեղծելը:

Պարոն Ռուբէն արեւմտահայ պղնձագործութեան խաչքարագործն էր եւ կը շարունակէ մնալ, նոյնիսկ յետ մահու:



**ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ
ՄԵՐ ՔԱՂԱՔԷՆ
ԹՈՐՆԱՏՕ ԹՈՐԱՆԵԱՆ**



- Հալեալէ՞ն ես ըսիր, մէկը կայ հոն՝ Թորանեան, կը ճանչնա՞ս:
- Թորո՞ս Թորանեան, անշուշտ կը ճանչնամ, կա՞յ մարդ որ զինք չի ճանչնար:

Փարիզի Նուպարեան Մատենադարանի պրն. Զարտաշեանին հետ է գրոյցս: Ըսածս ճիշդ է՝ կա՞յ մարդ, որ չի ճանչնար Թորոս Թորանեանը, եթէ ոչ անձնապէս, գոնէ անունով: Եւ ասիկա հաւասարապէս ճիշդ է թէ՛ Սփիւռքի, թէ՛ Հայաստանի համար, ուր քիչ թէ շատ անուանի մարդիկ՝ գրողներ, նկարիչներ, արուեստագետներ, զինք անձնապէս կը ճանչնան, իսկ ժողովուրդին մեծամասնութիւնը՝ լսել է իր անունը, կարդացել իր յօդուած-նշմար-պատմուածք-բանաստեղծութիւնները եւ տեսել իր լուսանկարները, կամ տեսել է զինք՝ հեռատեսիլէն:

Իսկապէս քսաներորդ դարու մարդն է ան, մանաւանդ՝ քսաներորդ դարու է իր գիրը՝ արագ, տեղեկատուական, հաճելի: Լրագրութեան եւ թղթակցութեան միջեւ բան մը (եթէ անշուշտ տարբերութիւն մը կայ այս երկուքին միջեւ): Ո՛չ պատմուածք, ոչ էսսէ, ոչ բանաստեղծութիւն: Բայց մարդիկ մեծ հաճոյքով կը կարդան զանոնք:

Յաճախ, կողմնակի թէ ուղղակի, մարդիկ, աւելի շատ «ծանր» գրողներ (կարելի՞ է ծանր ու թեթեւ ընել գրողները...) յորդորել են զինք գրել նուազ, գրել առանց զառաժեյլու եւ գրել ինամուած: Բայց ինք ունի իր բացատրութիւնը, ունի իր համոզիչ պատճառաբանութիւնը.

- Երբ տեղը գայ, թէկուզ լայն փակագիծեր բանալու կամ զառաժեյլու գնով, պէ՛տք է պատմել նաեւ այդ միւս պատմութիւնը, որովհետեւ ո՞վ գիտէ՝ ե՞րբ այդ մասին կարելի պիտի ըլլայ խօսիլ, պատմել, գրել: Եթէ չբռնեմ պահը եւ ըսելիքս չըսեմ, ուրիշ առիթ կրնամ չունենալ, մինչդեռ կա՛ն բաներ, որոնք ամէն գնով պէ՛տք է ըսուին ու գրուին:

Այդ ամէն գնով ըսուելիք եւ գրուելիք բաները բոլորն ալ կը կապուին հայութեան, մանաւանդ՝ սփիւռքահայ կեանքին, ուր ուժացումի եւ նահանջի կողքին (ի՛նչ գոյնի ալ ըլլայ այդ նահանջը, ըլլայ ձայնաւոր թէ անձայն) կան կամքի, հայօրէն ապրելու այնպիսի օրինակներ, զորս պէտք է լուսարձակի տակ ամնել եւ ցոյց տալ: Այդպիսով թերեւս հաւասարակշռուին նահանջի եւ յարձակումի, լուծուելու եւ մնալու նժարները:

Այս բոլորը կ'ըսուին ու կը գրուին այնպիսի հեղեղային ու յորդ ձեւով, որ կը ձգեն թաւշեայ ծալ-ծալ ու ծանր վարագոյրի մը տպաւորութիւնը (երիտասարդներուն համար՝ նաեւ հին ու փոշոտ), որուն ծալքերուն մէջ յաճախ շատ բան կը կորսուի:

Չեմ գիտեր, թէ Սփիւռքի կամ Հայաստանի մէջ հայ գրողներու ակումբ կա՞յ: Հաւանաբար չկայ: Ինչպէ՞ս ըլլայ, երբ ակումբը

վարչութիւն կ'ենթադրէ, վարչութիւնը՝ ատենապետ, ատենապետը՝ աթոռ: Ու եթէ նկատի առնենք, որ աթոռը մէկ է, նստողները՝ բազմաթիւ...

Մեր քաղաքին մէջ մենք ունինք գրողներու ակումբ, մէկ գրողով՝ Թորոս Թորանեանով, որ այնքան լաւ կը վարէ այդ ակումբը, մաքրութենէն մինչեւ վարչական գործեր: Այսինքն՝ այս մարդը իր ակումբին հոգիով ու մարմնով նուիրուած մարդ է: Անշուշտ որ բազմազան է այդ ակումբին գործունեութիւնը, որ կը բեւեռուի մէկ առանցքի՝ հայ գիրքին շուրջ: Այդ գործունեութեան հայ մարդու վայել կիրքով փարած է Թորոս Թորանեան. ինք կ'ընտրէ սիրւոյ, կը գրէ գիրքը ծայրէ ծայր, կամ եթէ գրուած է՝ կը խմբագրէ, կը շարէ, կը տպէ, կը ցրուէ, կը ծախէ, կը գրախօսէ... մէկ շունչով, այնպիսի հարուածային արագութեամբ, որ մենք, մահկանացու ընթերցողներս, հազիւ քայլ պահենք իր հետ: Թերեւս ալ՝ չպահենք:

Տակաւին պարոն Թորանեան կը հրաւիրուի բացման եւ փակման խօսքեր արտասանելու: Տարուան մէջ քանի մը անգամ ալ տարբեր գաղութներէ (Թայլանտէն Զանատա եւ Չինաստանէն Հայաստան) կը հրաւիրուի դասախօսելու:

Մարդիկ սովորութիւն ըրած են իրենց ժամացոյցներուն նայիլ երբ Թորանեան քուլիսներէն բեմ մտնէ: Ինք ալ ի՞ր ժամացոյցին կը նայի ու կը խոստանայ շատ չերկարել խօսքը: Երբեմն նաեւ կը յարգէ խոստումը: Խօսքը լսել հաճելի է, միայն շատ չխանդավառուի, շատ չպոռայ: Այդ պարագային ունկնդիրները այնքա՛ն կը մտահոգուին իր առողջութեամբ, որ անզգալաբար կը սկսին մտիկ չընել ըսածները, եւ միայն կ'աղօթեն, որ «բան մը չեղած» մարդը վար իջնէ բեմէն:

Միշտ նոր դիպուածներ ունի պատմելիք: Եւ այնքան շատ են ու այնքան զարմանալի այդ դիպուածները, որ մարդ կը մղուի մտածելու՝ արդեօք չի՞ յերիւրեր... Դիպուածները իր ոտքը կու գան, իր շուրջ կը հաւաքուին, իր քաշողականութեան ցանցը կ'իյնան: Նախ ինք կը վայելէ զանոնք, այդ դիպուածը իր ամբողջութեանը մէջ կրկին ու կրկին կ'ապրի, առնչութիւններ կը գտնէ այդ պահուն եւ եղած կամ ըլլալիք այլ պահերու միջեւ, յետոյ կը սկսի պատմել զանոնք նոյն խանդավառութեամբ, նոյն ապրումով, եւ չի հանգչիր, մինչեւ թուղթին չյանձնէ զանոնք:

Թուղթին յանձնուածները ոչինչ են սակայն չյանձնուածներուն քով, պարզ այն պատճառով, որ Թորանեան չի հասնիր բոլորը գրի առնել, այնքան զբաղած է... պատմելով:

Ծանօթ է եւ բարեկամ բոլոր, այո՛, տառացիօրէն բոլոր հայ գրողներուն, նկարիչներուն, արուեստագետներուն, խմբավարներուն, երաժիշտներուն, բեմադրիչներուն, ֆիզիկոսներուն: Կա՞յ մէկը որ վատ բան ըսէ իր մասին: Միակ վատը այն է,

որ բոլորն ալ... կը նախանձին իր անսպառ եռանդին, հաւատքին ու լաւատեսութեան:

Հայաստանէն գրո՞ղ մը կու գայ, ինք օդակայանն է դիմաւորելու: Այդ գրողը տանի՞լ պէտք է Տէր Չօր կամ Քեսապ, ինք իր օթոյով պատրաստ է: Առաքումնե՞ր պէտք է ըլլան, ինք գրաքննութեան գրասենեակէն մինչեւ նամակատուն տասն անգամ կ'երթայ կու գայ.

- Ի՞նչ ընենք,- կ'ըսէ,- մէկը պէ՛տք է ընէ, մե՛նք կ'ընենք:

Եթէ ճիշդ գիտէ իր գրած կամ խմբագրած գիրքերուն թիւը (վստահ է եւ նախանձախնդիր, որ ոչ ոք կտրած է այդ score-ը մինչեւ հիմա), վստահ եմ որ չի գիտեր իր գրած յօդուածներուն թիւը:

Հայաստանը իրեն համար հայրենիք չէ, տուն է: Հակառակ որ ժամանակ մը համայնավար եղած է, ուրիշ ժամանակ մը համայնավար չէ եղած, եւ ներկայ ժամանակով չեմ գիտեր թէ ի՞նչ է, բայց Հայաստանը իր տունն է: Ամէն երթալուն նոր առիթ մը կը գտնէ հին ծանօթներուն ոչ միայն հանդիպելու, այլեւ զանոնք խօսեցնելու օրուան ամէնէն հրատապ հարցերուն մասին եւ յետոյ այդ բոլորը գիրի վերածելու. օրինակ՝ «Հանդիպումներ Քառասուն Մարդոց Հետ». թէ ինչո՞ւ ճիշդ քառասուն, յստակ չէ (միտքս կը զառածի եւ կ'երթայ «Ալի Պապան Ու 40 Գողերը» հեքիաթին. ա՛խ այս միտք ըսուած փորձանքը...):

Սկիզբէն այսպէս էր: Օրերը շատ բան չեն փոխած իր եութենէն: Պարզապէս աճապարանքը աւելցած է, թերեւս անոր համար որ աւագին վարի բլրակը արագ-արագ կ'աւելնայ, եւ վերինը կը պակսի:

- Եթէ միայն չաճապարէ..., - կ'ափսոսան շատեր ցոյց տալով երեսուն տարի առաջ «Նայիրի»-ի առաջին էջերուն երեւցած իր յօդուածները:

Այնքան ըսելիք ունի, որ միւս բաժինները՝ վերլուծել, խոկալ կամ ապրիլ, կը ձգէ մեզի՝ ընթերցողներու:

Ընթերցողները կ'ընթերցեն եւ հարց կու տան.

- Բայց սա մարդը ի՞նչ կ'աշխատի, ի՞նչ կ'ուտէ,- մոռցած անշուշտ, որ արհեստով բժիշկ է, անեսթեզիստ, որովհետեւ համեստօրէն երբեք չէ յոխորտացած իր բժիշկի հանգամանքով, հակառակ ուրիշներու:

Մեծամասնութիւնը իր հաւանական ընթերցողներուն պէտք չի զգար մամուլին մէջ լոյս տեսած իր յօդուածները կարդալու, որովհետեւ ինք առաջին առիթին իսկ գրածը ծայրէ ծայր... կ'արտասանէ:

- Գրական Թերթի խմբագրուիին յօդուած մը խնդրեց ինձմէ: Տեղն ու տեղը նստայ գրեցի եւ ըսի.

«Յոյսն ու յուսահատութիւնը ձեռք ձեռքի դէմս ելան երեւանի

մէջ: Իւրաքանչիւրը գիտ իր կողմը կ'ուզէր գրաւել: Բայց ես աչառուօթիւն ըրի եւ ձեռքս յոյսին տուի, ու ըսի՝ ահա մենք եղանք երկու, եւ ուրեմն յաղթանակը մե՛րն է: Կորչի՛ յուսահատութիւնը Յայաստանիս տարածքէն»: Այսպէս գրեցի, այսպէս ըսի...

Թորնատոյի մը չափ արագ եւ փոթորկոտ Թորոս Թորանեան. այլ խօսքով՝ Թորնատո Թորանեան = Թօ.Թօ.

Համոզուած էի, որ այս գիրս կրնայ բնաւ աւարտին չհասնիլ այնքան ատեն որ հերոսս կայ, եւ ըլլալով, միշտ ալ գրելիք կը հայթայթէ ոչ միայն ինքն իրեն, այլեւ... ինծի:

Օր մըն ալ յայտարարուեցաւ, որ Թորանեանին նուիրուած յոբելինական մը պիտի ըլլայ եղեր: Ինչ լաւ, մտածեցի, ահա գեղեցիկ վերջաբան մը գրութեանս համար:

Հինգ տարի տեւեց մինչեւ գլուխ ելաւ այս յոբելինականը, որ ծննդեան 70-ամեակին փոխարէն, եղաւ 75-ամեակի յիշատակում. կ'երեւի կազմակերպիչները հազիւ կրցան քայլ պահել իր սրընթաց եռանդին հետ:

Մեր այդ սրահը վաղուց այդքան ծաղիկ եւ այդքան լուռ հանդիսատես չէր ունեցած: Ի վերջոյ Թորանեանն էր, *«մարդ մը հայու տիպարով, սասունցիի նկարագրով, այնթապցիի հաւասարակշռութեամբ, երեւանցիի պերճախօսութեամբ, հալէպցիի կենցաղավարքով եւ համաշխարհային քաղաքացիի հայեացքով»:* Հապա՞:


Ինչ որ օրուան բանախօսը՝ Ժիրայր Դանիէլեան ըրաւ, Թորանեանին «գրականութեան» մասին խօսելու փոխարէն, անոր հրատարակած գիրքերը թուելն էր, կարծեք այդ 180 հեղինակուած-խմբագրուած-հրատարակուած անունները բան մը նշանակէին: «Քանակը որակ կը բերէ» պիտի ըսեր ժողովրդական առածը, եթէ հարցնէինք իրեն, Թորանեանին: Չեմ գիտեր: Բայց վստահ եմ, որ ա՛յս քանակը... շիփ-շիտակ քանակ է:

Երկու բանախօսներ: Եւ խօսեցան բաւական երկար, ու մոռցան իր կեանքին պատմութիւնը ընել: Թորանեանին սրտին խիստ դպած ըլլալու է այս մոռացութիւնը, որովհետեւ երբ բեմ ելաւ, ինքն ալ իր կարգին մոռցաւ «սրտի խօսք» ըսել, եւ սկսաւ իր կեանքին պատմութեան, ծնունդէն մինչեւ դպրոց, դասարան առ դասարան...

Հիմա այս բոլորը պարապ խօսքեր են: Կարելորդ այն է, որ ժողովուրդին մէջ Թորանեան ոչ միայն կը գործէ, այլ՝ կ'ապրի ինչպէս վայել է գիրի մարդուն, կ'ապրի որպէս «հայրենիքի շրջուն դեսպան», որպէս «քալող բարոյախօս», որպէս «արհեստավարժ գիրք վաճառող», եւ որպէս «հայկական պտուտահողմ», այսինքն՝ «հայկական թորնատո» կամ՝ «Թորնատո Թորանեան», այսինքն՝ անգամ մը եւս՝ Թօ.Թօ.:

Նոյնիսկ մահէն ետք:

Պատի՛ւ արժանաւորին:



ՈԳԵՂԷՆ ԿԱՌՈՅՑՆԵՐ

Համացանցէն իմացած էի, որ «Օրերս Բերիոյ Թեմի նուիրեալ սրբազանին բարձր կարգադրութեամբ, հալէպահայ մեր հայրենակիցները մեկնած են Տէր Զօր, մօտէն ծանօթանալու համար Հայ ժողովուրդի յարութեան վկայարան հանդիսացող՝ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ ընդհանուր իրավիճակին: Եւ անշուշտ այցը պէտք է դիտարկել եկեղեցին հիմնապէս նորոգելու միտուած ընդհանուր ճիգերու նախապատրաստութեան իբրեւ առաջին քայլ»:

«Նշեմ նաեւ, որ Սրբոց Նահատակաց եւ առհասարակ Տէր Զօր այցելած էր Մեծի Տանն Կիլիկիոյ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսը»:

«Տէր Զօրը միայն եկեղեցի, Աստուծոյ տուն կամ սոսկական կոթող մը չէ, աւելին է, ոգի է ու պէտք է պահել այդ կրակը...»:

Ասիկա մեզի կը յիշեցնէ այն օրերը, երբ ամբողջ սփիւռքահայութիւնը մեծ խանդավառութեամբ մասնակցեր էր Տէր Զօրի մէջ յիշատակի կառոյց-մատուռ մը շինելու համար եղած նուիրատուութիւններուն, որմէ ետք ճարտարապետ Սարգիս Պալմանուկեանի գեղեցիկ եւ խորհրդանշական յղացումով կառուցուած էր եկեղեցին, որուն տակ, գետնայարկը վերածուեր էր թանգարանի (ծեւաւորում եւ իրագործում՝ ճարտարապետ Գեորգ Երամեանի):

Կառոյցին ամբողջացումէն ետք մեծ շուքով կատարուեցան անոր օծումն ու բացումը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Երջանկայիշատակ Գարեգին Բ. Կաթողիկոսին կողմէ, 3-4 Մայիս 1991-ին, հոժ բազմութեան մը ներկայութեամբ:

Յուշահամալիրը բաղկացած է եկեղեցիէ, թանգարանէ, յուշարձանէ, արխիւային կեդրոնէ եւ ցուցադրութեան սրահէ:

21 Սեպտեմբեր 2014-ին յուշահամալիրը «Իրաքի եւ Լեւանտի Իսլամական պետութիւն» ահաբեկչական խմբաւորման կողմէ պայթեցուած է:

Այսօր, վերստին պիտի ձեռնարկենք անոր նորոգութեան, ինչպէս ուրիշ շահտ կառոյցներու վերանորոգումին Հալէպի մէջ, Սուրիոյ տարածքին, թէ Պէյրութի (Լիբանան) մէջ, կրկին ահագին գումար պիտի ծախսուի եւ թերեւս կրկին... Աստուած մի արասցէ:

Բայց չեմ կրնար նաեւ այլ երկու լուրեր չդնել այս լուրին կողքին եւ երկա՛ր-երկա՛ր չմտորել անոնց հաստատած երեւոյթին մասին.

Վերանորոգում Տէր Զօրի յուշահամալիրին,

Փակում Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցին (անհիմն տարածայնութի՞ն արդեօք. հաւանաբար շէնքը այլ նպատակի համար օգտագործելու):

Երկու լուրերն ալ լուր են տակաւին, բայց «չկայ ծուխ առանց կրակի» կ'ըսէ ժողովուրդը. հաւանական կրակը արդէն սկսած է խանձել եւութիւնս:

Ըսեր են արդէն – թէւ տակաւին չեմ գիտեր՝ շուկո՞վ թէ բարձրաձայն – որ յոռետես մըն եմ եւ միշտ ժխտականը կը տեսնեմ երեւոյթներուն ետին: Ասիկա բնաւ հարց չէ, որովհետեւ յստակ է շփոթը յոռետեսութեան եւ

իրապաշտութեան միջեւ շատերու միտքին մէջ:

Սակայն կա՞յ արդեօք որեւէ դրական կետ այս երկու լուրերուն մէջ:

Եւ եթէ չկայ, եթէ եղածը միայն ժխտական է, պետք չէ՞ այդ մասին մտածել, իրապաշտօրէն, առանց անօգուտ եւ ապարդիւն գեղումներու կամ հռետորութեան, առիթ չտալու համար որ անցեալի սխալները կրկնուին:

Ա՞յս ալ յոռետեսութիւն պիտի համարէք: Բայց դուք չէ՞ք գիտեր, թէ՞ միայն չէք ընդունիր, որ ունեցեր ենք սխալներ, շատ սխալներ, անցեալին: Չանոնք հերքելը եթէ պիտի օգնէ մեր գալիքը դրականի վերածելու, ե՛ս ալ ձեզի հետ կը հերքեմ այդ բոլորը եւ կը լծուիմ քաղցր երազանքի:

Բայց թոյլ տուէք շարունակել:

Կը մտածեմ՝ կա՞յ ձեւ մը նման քարեղէն կառոյցները ոգեղէն կառոյցներով փոխարինելու:

Թերեւս ոգեղէն եւ կառոյց բառերը երբե՛ք չեն ներդաշնակուիր, իրարու հակառակ իմաստներ պարփակելու պատճառով:

Ոգեղէն՝ հոգեկան, աննիւթական, անմարմին:

Կառոյց՝ շինուածք, կազմուածք, շէնք:

Ի՞նչ կրնան ըլլալ մեզի համար ոգեղէն կառոյցները:

Յաւանաբար հայկական մշակոյթը՝ իր բոլոր արտայայտութիւններով, հայկական արուեստները, հայ գրականութիւնը:

Կը մոռնանք սակայն այս թուարկումին մէջ յիշելու նոր սերունդը. ան որ հոս է այսօր եւ ան որ պիտի գա՛յ անպայման, որպէս դրօշակիր, որպէս ժառանգորդ, եւ իր կարգին՝ որպէս ժառանգը փոխանցող ներուժ:

Ինչպէ՞ս կարելի է հասնող սերունդները վերածել ոգեղէն կառոյցներու: Ահա՛ գլխաւոր հարցը, որուն ուսումնասիրութեան նուիրուիլը կրնայ շա՛տ դրական, թերեւս անսպասելի արդիւնքներ տալ մեզի:

Ինչպէ՞ս: Նախ՝ փաստագրելով մեր անձնական կեանքը, որովհետեւ մեզմէ իւրաքանչիւրը կարելոր մէկ մասնիկն է գաղութին, եւ ի՛ր կեանքը փաստագրելով, փաստագրած կ'ըլլայ գաղութին կեանքէն մաս մը:

Վերջերս օրինակ Գահիրէի մէջ տեղի ունեցաւ Յամա-ՅՄԸՄ-ական խմբապետական Թ. համագումարը, որուն տարբեր գաղութներէ բազմաթիւ երիտասարդ-երիտասարդուհիներ մասնակցեր էին: Շատ հաւանաբար այդ մասին պաշտօնական զեկուցում մը կատարուեցաւ, ինչպէս նաեւ, թերեւս, թղթակցութիւն մը: Սակայն որքա՞ն լաւ պիտի ըլլար, որ մասնակիցներէն մէկ քանին իրենց տպաւորութիւններն ու յուշերը գրէին. այդ պարագային պիտի նշէին երեւոյթներ, որոնց բնականաբար անդրադարձած պիտի չըլլար պաշտօնական զեկոյցը:

Երկրորդ՝ ճիշդ նոյնը կարելի է ըսել ընտանիքներու պարագային: Եթէ ընտանիքի մը մէջ նշանաւոր դէմք մը կայ, անոր մասին կրնան պատմել իր եղբայր-քոյրերը, ծնողքը, կամ անմիջական բարեկամները: Ինչ որ կը պահուի որպէս յուշ, կրնայ կարելոր դեր ունենալ ապագային մէջ: Պահ մը եթէ մտածենք, թէ մեր նահատակ գրագետներէն իւրաքանչիւրը օրագրութիւն պահած ըլլար, կամ յուշեր գրած ըլլար, որքա՞ն

հարստացած պիտի ըլլայինք իմանալով անոնց մտորումներն ու կարողալով յուշերը:

Դասական ուսումնական և անոնց հմտութիւններ ձեռք բերելու պէտք է մղել մեր երիտասարդները. ճիշդ է, որ այսօր ամեն բան մասնագետներու ձեռքով կը կատարուի մեր գաղութներէն ներս, սակայն կա՛ն տակաւին այնպիսի տարածքներ, ուր տարբեր տեսակի հմտութիւններ կը պահանջուին:


Ներշնչել երիտասարդները, որ իրենց գաղութներուն մէջ՝ ակումբներու թէ բարեսիրական հաստատութիւններէ ներս, գործունեութիւն մշակեն:

Երիտասարդ առաջնորդներ պատրաստել (leaders). Ինչպէ՞ս. նախ իրենց առիթ տալով, որ առաջնորդեն: Ընդհանրապէս այս գաղափարը հաւանութեան չ'արժանանար, որովհետեւ երիտասարդները «տակաւին անփորձ են»: Սակայն ասիկա իր ժխտական երեսը ունի՝ եթէ սպասենք, որ կարողութիւն ունեցող երիտասարդները փորձառու դառնան, օր մըն ալ պիտի տեսնենք, որ հեռացեր են եւ մենք կորսնցուցեր ենք զիրենք եւ իրենց կարողութիւնները հաւաքականութեան սպաս դնելու առիթը: Բայց եթէ իրենց առիթ տանք, առանց պաշտօնականութեան, անոնք պիտի կարենան իրենք զիրենք մարզել (թերեւս նաեւ սխալելով), եւ երբ ժամանակը գայ, պատրաստ պիտի ըլլան լրջօրէն կատարելու իրենց վստահուած դերը: Այսպէս է, որ կրնանք ունենալ պատրաստուած ատենապետներ, ատենադպիրներ եւ վարչութեան անդամներ, որոնք գիտեն ժողով վարել, օրակարգ պատրաստել եւ թելադրանքներ ընել աշխատանքը կատարելու համար:

Եւ ի վերջոյ յստակօրէն ըսել երիտասարդներուն, թէ ի՛նչ կը սպասուի իրենցմէ տուեալ աշխատանքի մը մէջ: Միայն այդպէս է, որ սխալներէն կը խուսափին եւ կրնան լաւապէս կատարել իրենց վստահուած աշխատանքը:

Արեւելքի մեր գաղութներուն մէջ այս բոլոր նշուածները բնական ձեւով կը կատարուին, հեզասահ ընթացքով երեցներէն երիտասարդներուն անցընելով ջահը: Կը կատարուին մանաւա՛նդ հայերէնով, ինչ որ դժբախտաբար, կարելի չ'է ըսել այլ գաղութներու պարագային:

Այս ոգեղէն կառոյցներու պատրաստութեան ընթացքին ամենէն կարեւորը իմանալն է, թէ ժամանակը կը փոխուի, հետեւաբար երեցներն ալ պէտք է փոխուին, ճիշդ ինչպէս որ հին կառոյցները կը սորոգենք, նոյնպէս ալ երիտասարդներուն մոիկ ընելով կրնանք մենք մեզ սորոգել եւ վստահ ըլլալ, թէ մեր այս ոգեղէն կառոյցները – որոնք անհամեմատօրէն աւելի էական եւ կարեւոր են – առողջ հիմերու վրայ դրեր ենք:



ՆԻԷՐԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ

Մենք՝ հայերս, մանաանդ հալեպահայերս միշտ նշանաւոր եղած ենք մեր հիւրընկալ հոգիով, դուրսէն եկած որեւէ հիւրի հանդէպ մեր պարտականութիւնը մեծ սիրով կատարելով. եւ անշուշտ երբեք չենք տեսած նոյն տեսակի եւ նոյն չափի հիւրընկալութիւն այլ գաղութներու, քաղաքներու կամ երկիրներու մէջ: Արդեօ՞ք ասիկա կու գայ «Հիւրը Աստուծոյ օրհնութիւնն է» համոզումէն, թե՞ կու գայ մեր գիտակցութենէն, արիւնով մեզի հասած մեր յիշատակներէն, թէ որքան թանկագին է օտար քաղաքի մը մէջ հիւրի մը հանդէպ ցուցաբերուած հիւրընկալութիւնը:

Ի՞նչ ալ որ ըլլայ պատճառը, հիւրը հալեպահայուն համար սրբութիւն եղած է միշտ, «տաք» թէ «պաղ» օրերուն, առատութեան թէ սակաւութեան մէջ:

Այս բոլորին մասին կը մտածէի, երբ մանկութեանս յիշողութիւնները խուժեցին վրաս, ժպիտ բերելով կարօտ հոգիիս:

Հիւրասիրութիւնը միշտ նոյն ձեւով չէ եղած Հալեպի մէջ: Սկիզբը սուրճն էր եւ սուրճին հետ հրամցուած տունը պատրաստուած անխուսափելի անուշը՝ սմբուկի, ընկոյզի, դդումի, սերկելիլի, թուզի կամ եղանակի որեւէ պտուղի անոյշը, որ կը հրամցուէր յատուկ ամանով եւ որուն կ'ընկերանար գոյգ աչքերով այլ աման մը (ընդհանրապէս տան փոքր աղջիկը կ'ըլլար այդ ամանը բռնողը), որուն մէկ աչքին մէջ կ'ըլլային անոյշին պատառաքաղները, միւսին մէջ՝ ջուր: Հիւրը կ'առներ պատառաքաղ մը, կը վերցնէր անոյշի կտոր մը եւ ճաշակելէ ետք գայն կը դնէր ջուրով լեցուն կողմը:

Եւ ասիկա կ'ըլլար ամբողջ հիւրասիրութիւնը: Կ'երեւի յիսունական թուականներն էին:

Անկէ ետքի շրջանին կիները սկսան տան մէջ քաղցրաւենիք պատրաստել եւ սուրճին հետ հրամցնել, իսկ անոյշը մնաց որպէս սուրճէն ետքի հրամցուելիք:

Մէկ կողմէն հայերուն տնտեսական վիճակը սկսած էր բարելաւուիլ, միւս կողմէն տակաւին ոչ ոք հեռաձայն ունէր տան մէջ, կամ քիչերն էին որոնք ունէին. հետեւաբար հալեպցիները լաւ ձեւ մը գտեր էին յաճախ այցելութեան երթալու իրարու, առանց «անակնկալ հիւր»-ի տիպա՞ զգացողութիւն տալու տանտէրերուն. ստեղծուէր էր «օր»-ը:

Իրաքանչիւր ընտանիք ամսուան մէջ իր օրը ունէր: Տանտիկինը այդ օր նախ աղուոր մաքրութիւն մը կ'ընէր տան մէջ, ապա կը լծուէր քանի մը տեսակ քաղցրաւենիք պատրաստելու: Այդ օրուան ճաշը կա՛մ երեկուանէն մնացածը կ'ըլլար, կա՛մ ոտքի վրայ պատրաստուած բան մը:

Թէ ովքե՛ր եւ քանի՛ հոգի պիտի գային այդ օր, անակնկալ կ'ըլլար. բայց որովհետեւ տանտիկինը կազմ ու պատրաստ էր հիւր ընդունելու, անակնկալը կը դառնար հաճելի:

Հազիւ մէկ-երկու տեսակ քաղցրաւենիք կը պատրաստուէր եւ

անշուշտ՝ անխուսափելի սուրճը, որ կրնար կրկնուիլ երեկոյի ավարտին, երբ հիւրերեն մէկը ըսեր.

– «Երթաք բարի»-ի սուրճ մըն ալ տուէ՛ք, որ երթանք...

Սուրճի շատ հետաքրքրական պատմութիւն մը ունի մայրս. օր մը քոյրերն ու զարմուհիները կու գան անակնկալ կերպով, մինչ ինք երկու ժամ ետք պէտք էր գործի հասներ: Բայց երկու ժամ ունէր իր տանտիկինի պարտականութիւնը կատարելու համար:

– Բոլոր հիւրասիրութիւնները ըրի, տունը ի՛նչ որ ունէի հրամցուցի. բայց այս մարդիկը չէին երթար: Սկսայ մտածել թէ ուրիշ ի՞նչ կրնամ հրամցնել. ինչ որ հրամցուցի, դեռ իրենք կը շարունակէին նստիլ: Յետոյ ելան գացին, ես ալ շատ արագ, ամէն բան ձգած գործի վազեցի: Երբ վերադարձայ, սկսայ պնակները լուալ, բայց սուրճի գաւաթ-պնակ չկար: «Մամա՛, – ըսի կեսրոջս, – սուրճի գաւաթները դո՞ւն լուացիր», թէեւ չէի հասկնար, թէ կոյր կետուրս ինչպէ՞ս լուացած պիտի ըլլար սուրճի գաւաթները: Բայց կետուրս կշտամբանքով ըսաւ՝ «Օղո՛ւլ, դուն սուրճ հրամցուցի՞ր, որ ես ալ գաւաթները լուայի...»: Այն ատեն հասկցայ, թէ ի՛նչ կը սպասէին հիւրերս... Մարդ Աստուծոյ, ըսէիք որ սուրճ կ'ուզէք: Ամբողջովին մոռցեր էի սուրճը...

Յետոյ հիւրասիրութիւնները ճոխացան, մանաւանդ երբ կիները յետմիջօրէին սկսան իրարու երթալ. ալ թապալուլէ, ալ ֆաթթուշ, ալ պէտրէկի տեսակներ, վրայէն ալ անշուշտ քաղցրեղէն:

Եկաւ ատեն մը, երբ հիւրընկալութիւնը ընթրիք կը նշանակէր, խմիչքով եւ բազմատեսակ ուտեստներով: Հալէպահայ կիներ գրեթէ իրարու հետ կը մրցէին իրենց նոր համադամներով, որոնց խոհագրերը շատեր նոյնիսկ գաղտնի կը պահէին:

Պէտք է խոստովանիլ, թէ որքան որ Հալէպ նշանաւոր է իր խոհանոցով, հալէպահայ կիներ նոյնքան նշանաւոր են իրենց խոհանոցային հմտութեամբ, իրենց քիմքին նրբութեամբ եւ մատներուն ճարտարութեամբ:

Սուրիական պատերազմի օրերը փաստեցին այս հմտութիւնը, նոր «նուաճում»-ներու տանելով հալէպահայ տիկիները: Ի պատիւ իրենց պէտք է խոստովանիլ, որ ոչ մէկ ծեր եւ ոչ մէկ մանուկ անօթի կամ անպատասպար մնաց այդ օրերուն, որոնք շատ ծանր էին, կրնամ հաստատել ականատեսի վկայութեամբ: Հայ Ծերանոցի եւ Ազգային Պատասպարանի տաքուն յարկերուն տակ մանուկներն ու ծերերը սառնամանիքի այդ օրերուն զիրենք հոգացող ձեռքեր գտած էին:

Ճիշդ է որ օրերը փոխուած են, օրերը բնաւ բարի չեն այս օրերուն, բայց մեր հիւրընկալութեան ոգին, կը կարծեմ, չէ փոխուած:

Ծնողքիս տան մէջ ընդունելութեան օրը ամէն ամսուն 28-ին էր: Բարի օր ձեզի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ.....	1
<u>ԱԿՆԱՐԿՆԵՐ.....</u>	<u>2</u>
ԱՌՕՐԵԱՅ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ.....	3
ԱՐՈՒԵՍ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄ.....	7
ԱՄԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ.....	10
ԳԱՂԹԱԿԱՆԸ.....	13
ԴԱՍԸՆԿԵՐՍ ՏԻԳՐԱՆԸ.....	16
ԴԱՍԸՆԿԵՐՍ ՉԷՐ.....	21
«ՅՈՒՇԵՐՍ» ԱՆԱՅԻՍ, Ե. ԱԼԵՏԻՍԵԱՆ.....	25
ԴԻՄԱՏԵՏՐԻ ՄԱՍԻՆ՝ ԱՆԿԵՂԾՕՐԷՆ.....	31
ԹՈՒՂԹԵՐՈՒՆ ԿԱՐԵՒՐՈՒԹԻՒՆԸ.....	36
Ի՞ՆՉ ԿՐՆԱՆՔ ԸՆԵԼ.....	40
ԼԵԶՈՒՆ ԵՒ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ.....	44
ԽԱՌՆ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆՆԵՐ.....	48
ԽԵՆԹՈՒԹԵԱՆ ԵԶՐԻՆ.....	54
ԿԱՌՈՒՑՈՂ ԵՒ ՔԱՆԴՈՂ ՑԵՂԵՐ.....	58
ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԵՐ.....	62
ՄԵՆՔ ԵՒ ԻՐԵՆՔ.....	67
ՄԵՐ ԽՈՂԱՆՈՑԸ.....	70
ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ	74
ՅՈՅՍԻ ԵՒ ԻՐԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ.....	78
ՅՈՒՇ, ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ, ՀԱՆԴԻՊՈՒՄ (Տոբթ. Մ. Տարազճեան արուեստագետին հետ).....	81
ՇԱՐՈՒՆԱԿՈՒՐ ԱՂԵՏՆԵՐ.....	86
ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ.....	89
ՈՐՈՒՎ ՎՍՏԱՀԻԼ.....	93

ՉԱՐԸ ԵՒ ՄԵՆՔ.....	97
ՊԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆ.....	101
ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ.....	106
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ.....	109
ՍՓԻՌՔԷՆ ՁԱՅՆ ՄԸ.....	113
ԿՐՆԱՊՍ ՄԱՅՐԵՆԻԴ ԿՈՐՍԵՑՆԵԼ.....	116
<u>ՀԱԼԷՊԵԱՆ ԽՃԱՆԿԱՐ.....</u>	120
ՀԱԼԷՊԻ ՀԻՆ ԹԱՂԵՐԸ.....	121
ՀԱԼԷՊԻ ՄԵՐ ԲԱՂՆԻՔՆԵՐԸ.....	128
ՀՈԳԵՏՈՒՆԸ.....	133
ՉԷՅԹՈՒՆ ԽԱՆ.....	137
ՀՈՐԻՆ ԹԱՂԸ.....	141
ՆԵՐՍԻ ՇՈՒԿԱՆ.....	145
ՊԱՆԴՈԿ ՄԸ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ ՄԸ.....	149
ՎԵՐԺԻՆ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՅՐԱՆՈՅԸ.....	154
ԻՄ ԿԻԼՊԷՆԿԵԱՆՍ.....	158
ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ.....	162
ՏԻԿԻՆ ՔԱԹՐԻՆԸ.....	165
ՄԵՐ ՊԱՐՏԷՉՆԵՐԸ.....	168
ՃԵՄԱՐԱՆՍ.....	172
ՊԱՐՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆԸ.....	176
ՊԻՍՏԱԿԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ.....	180
ՍՈՒՐՃ.....	183
ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ ՄԵՐ ՔԱՂԱՔԷՆ ՌՈՒԲԷՆ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ.....	188
ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ ՄԵՐ ՔԱՂԱՔԷՆ ԹՈՐՆԱՏՕ ԹՈՐԱՆԵԱՆ.....	194
ՈԳԵՂԷՆ ԿԱՌՈՅՑՆԵՐ.....	199
ՀԻՐԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ.....	203

**Վերստուգող սրբագրիչներ՝
Չարմիկ Չիլ Աբօշեան-Պողիկեան
Անի Թոփալեան-Սարուխան**

**Կողքի պատրաստութիւն եւ գիրքի ձեւաւորում՝
Յովսէփ Չալօղլեան**

**Տպարան՝
«Արեւելք»
Arevelk Printing House**

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ



Գեղանկարը գործն է
Արփի Ճինպաշեան-Գրիգորեանի

Մարուշ Գագանճեան - Երամեան: Ծնած է Հալեպ:

Աւարտած է Հալեպի Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանը:

Աւարտած է Պէյրութի Պետական Բարձրագոյն երաժշտանոցի դաշնամուրային բաժինը եւ վկայուած Քաշանի (Ֆրանսա) պետական երաժշտանոցին:

Բանասիրական գիտութիւններու թեկնածու դարձած է, Երեւանի Մանուկ Արեղեան ինստիտուտին մէջ «Ուրուագիծ Սփիւոքահայ Բանաստեղծութեան. 1965-1995» նիւթը պաշտպանելով, 2002 թուականին:

Հրատարակած է քերթողական եօթը գիրքեր.

«Հում Բառերս Կը Բերեմ Դիմակներու Հանդէսին», Հալեպ, 1991

«Տարբերակներ», Հալեպ, 1995

«Հալոց», Հալեպ, 1998

«Գիշերներ», Հալեպ, 2001

«Հին Քերթուածներ», Երեւան, 2004

«Գաղտնագրութիւն», Երեւան, 2014

«Տարփանք», Գահիրէ, 2024

Ունի պատմուածքներու չորս հատոր՝

«Սօր Գոգնոցը» 2003, Գ. Մելիտինեցի մրցանակին (թիւ 52) հրատարակութեամբ, Անթիլիաս

«Տաճարացում», Երեւան, 2007

«Մենք ու Մերոնք», Գահիրէ, 2024

«Իրաւ ու Սուտ, Սուտ ու Իրաւ Զրոյցներ», Գահիրէ, 2025

«Ուրուագիծ Սփիւոքահայ Բանաստեղծութեան. 1965-1995» աշխատասիրութիւնը լոյս տեսած է որպէս «Չահակիր» թերթի յաւելում, Գահիրէ, 2018 թուականին:

Հալեպի Համազգայինի Հայագիտական Հիմնարկի Սփիւոքահայ գրականութեան դասախօս եղած է 2000-2014:

Խմբագիրներէն մէկն է «Բանաստեղծութիւն» պարբերագիրքին, «Մաշտոց» մատենաշարին եւ «Բագին» հանդէսին:

Ունի սփիւոքահայ եւ հայրենի թերթերուն մէջ ցրուած բազմաթիւ յօդուածներ (Բագին, Գանձասար, Հորիզոն, Յառաջ, Առաւօտ, Գարուն, Գրական Թերթ եւ այլն):

2018-էն ի վեր պատասխանատուն է Գահիրէի ՀԲԸ Միութեան արխիւներուն, Երուանդ Աղաթօն գրադարանին եւ Խմբագիրն է «Տեղեկատու» պարբերաթերթին: